


ՌՈՒԲԵՐՏ ԹԱԹՈՅԱՆ

ԿԻՒԿԻԱՎԱՅՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ



Հորս' Արամայիս Թաթոյանին



ARMENIAN GENOCIDE MUSEUM-INSTITUTE FOUNDATION

ROBERT TATOYAN

**THE NUMBER OF CILICIA ARMENIANS ON THE
EVE OF THE ARMENIAN GENOCIDE**

AGMI PUBLISHING HOUSE

Yerevan – 2021

FONDATION MUSÉE-INSTITUT DU GÉNOCIDE ARMÉNIEN

ROBERT TATOYAN

**LE NOMBRE D'ARMÉNIENS DE CILICIE À LA
VEILLE DU GÉNOCIDE DES ARMÉNIENS**

MAISON D'ÉDITION DU MIGA

Erevan – 2021

ФОНД “МУЗЕЙ-ИНСТИТУТ ГЕНОЦИДА АРМЯН”

ՐՈԲԵՐՏ ԿԱՏՕՅԱՆ

**ЧИСЛЕННОСТЬ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ
КИЛИКИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН**

ИЗДАТЕЛЬСТВО МИГА

Ереван – 2021

947.925^{հՏՊ} V

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՅԻ
108748 + *1096000000*

ՈՒՔԵՐՏ ԹԱԹՈՅԱՆ

ԿԻԼԻԿԻԱ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ



ՀՅԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Երևան - 2021

ՀՏԴ 94(479.25):314

ԳՄԴ 63.3(5Հ)+60.7

Թ 153

Տպագրվում է Հայոց ցեղասպանության թանգարան- ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Թ-աթոյան Ռ-դբերտ

Թ 153 Կիլիկիահայության թիվը Հայոց ցեղասպանության նախօրյակին / Ռ-
Թ-աթոյան. – Երևան: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստի-
տուտ» հիմնադրամ, 2021. - 240 էջ+սերդիլի քարտեզ:

Մենագրությունը նվիրված է Հայոց ցեղասպանության նախօրյակին արևմտա-
հայության հատվածներից մեկի՝ կիլիկիահայության թվի, Կիլիկիայի տարածքում
բնակվող այլ ազգությունների թվաքանակի և ընդհանուր ազգաբնակչության
մեջ հայ բնակչության տեսակարար կշռի հարցերի ուսումնասիրությանը:

Օսմանյան, հայկական և արևմտյան սկզբնաղբյուրների, ինչպես նաև օժանդակ
աղբյուրների հաղորդած վիճակագրական տվյալների համեմատական
վերլուծության հիման վրա կատարվում է Հայոց ցեղասպանության նախօրյակի
դրությամբ կիլիկիահայության թվաքանակի հաշվարկ:

Անդրադարձ է կատարվում նաև 1909 թ. կիլիկիահայության կոտորածների
ժողովրդագրական հետևանքների, Հայոց ցեղասպանության արդյունքում
կիլիկիահայության կրած մարդկային կորուստների, վերապարածների, Առաջին
աշխարհամարտից հետո Կիլիկիա վերադարձածների թվաքանակի հարցերին:
Աշխատությունը հասցեագրված է պատմաբաններին, պատմական ժո-
ղովրդագրությամբ հետաքրքրվողներին, ինչպես նաև ըմթերցողների լայն
շրջանակներին:

ՀՏԴ 94(479.25):314

ԳՄԴ 63.3(5Հ)+60.7

*Շապիկի ձևավորման մեջ օգտագործվել է «Միսուն. Կիլիկիա հին և
նոր» քարտեզը Ղևոնդ Ալիշանի «Միսուն: Համագրութիւն Հայկական
Կիլիկիոյ և Լևոն Մեծագործ» գրքից (Վենետիկ, Ս. Ղազար, 1885):*

ISBN 978-9939-822-93-8

© «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, 2021

© Թ-աթոյան Ռ-դբերտ, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Աշխատանքի նպատակը և խնդիրները. XIX դարի վերջերին – XX դարի սկզբներին կիլիկիահայության թերհաշվառումը պայմանավորած գործոնները.....	6
II. Կիլիկիայի տարածքի օսմանյան վարչական և հայկական եկեղեցական-թեմական բաժանումները (XIX դարի երկրորդ կես – 1914 թ.).....	21
III. Կիլիկիայի տարածքում բնակվող այլ ազգությունների թվաքանակի և ընդհանուր ազգաբնակչության մեջ հայերի մասնաբաժնի հարցը.....	31
IV. 1909 թ. Ադանայի կոտորածների ժողովրդագրական հետևանքները....	40
V. Կիլիկիահայության թվաքանակի հաշվարկի մեթոդաբանությունը.....	59
VI. Կիլիկիահայության թվաքանակի հաշվարկ ըստ առանձին վարչատարածքային միավորների.....	72
1. Ադանայի նահանգի Ադանայի գավառ.....	72
2. Ադանայի նահանգի Կոզանի գավառ.....	79
3. Ադանայի նահանգի Ջերբեղ-Բերեքեթի գավառ.....	93
4. Ադանայի նահանգի Մերսինի գավառ.....	113
5. Մարաշի գավառ.....	117
6. Հալեպի նահանգի Այնթապի գավառ.....	135
7. Հալեպի նահանգի Հալեպի գավառի Աստիորի, Ջիսր-ի Շուդուրի, Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակներ.....	144
VII. Կիլիկիահայության թվաքանակի հաշվարկի ամփոփում և եզրակացություններ.....	158
VIII. Ցեղասպանության հետևանքով կիլիկիահայության կրած մարդկային կորուստները. գոհերի և վերապրածների թիվ (վերջաբանի փոխարեն).....	172
Summary.....	179
Sommaire.....	190
Резюме.....	203
Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ.....	215
Տեղանունների ցանկ.....	231

I. Աշխատանքի նպատակը և խնդիրները. XIX դարի վերջերին – XX դարի սկզբներին կիլիկիահայության թերհաշվառումը պայմանավորած գործոնները¹

Հայոց ցեղասպանության նախօրյակին արևմտահայության, նրա տարբեր հատվածների, այդ թվում՝ կիլիկիահայության թվաքանակի, Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի տարածքում այլ ազգությունների նկատմամբ հայերի հարաբերակցության հարցերը շարունակում են մնալ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության առարկա առավել կնճռոտ հարցերից մեկը:

«Հայաբնակ մարզերում» բարենորոգումներ իրականացնելով՝ 1878 թ. Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով նախատեսված պարտավորության կատարումից խուսափելու նպատակով օսմանյան իշխանությունները, ասպարեզ հանելով նորանոր վիճակագրական տվյալներ, հայտարարում էին, որ հայերը Արևմտյան Հայաստանի նահանգներում փոքրամասնություն են կազմում: Իր հերթին, ի պաշտոնե օսմանյան իշխանությունների առջև արևմտահայության շահերը ներկայացնող կառույցը՝ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանը, ինչպես նաև Հայկական հարցի լուծումը հետապնդող հայկական հասարակական-քաղաքական կառույցներն ու գործիչները հակադարձում էին այդ պնդումներին՝ հրապարակելով արևմտահայության թվաքանակի, Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ազգաբնակչության էթնիկական կազմի սեփական հաշվարկներ:

Արևմտահայության թվաքանակի հարցի շուրջ ընթացող այս «վիճակագրական պատերազմը» դրսևորվել է Հայկական հարցի արծարծման բոլոր առանցքային հանգրվաններում (1878-80,

¹ Հեղինակը խորին շնորհակալություն է հայտնում Ֆրանսահայ ուսումնասիրող, ՀՅԹԻ հոգաբարձուների խորհրդի նախագահ Ռ-յանն (Հարություն) Գևորգյանին, ԵՊՀ Պատմության ֆակուլտետի դեկանի տեղակալ, պատմական գիտությունների թեկնածու Միրայել Սալսապանին և Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Հուշագրությունների, վավերագրերի և մամուլի ուսումնասիրության բաժնի վարիչ Միրան Մինասյանին՝ աշխատանքի բարելավմանն ուղղված բազմաթիվ արժեքավոր առաջարկությունների և դիտողությունների համար:

1894-96, 1912-1914, 1919-22 թթ.): Միջազգային դիվանագիտության օրակարգից Հայկական հարցի հանվելուց հետո Օսմանյան Թուրքիայում հայ բնակչության թվաքանակի հարցը շարունակել է պահպանել իր կարևորությունը՝ շաղկապվելով ցեղասպանության գոհ գնացած հայերի թվի շուրջ ընթացող գիտական և քաղաքական բանավեճին, որը պայմանավորված է արդեն հանրապետական Թուրքիայի իշխանությունների և նրանց կողմից հրահանգավորվող թուրքական պատմագիտության որոշ ներկայացուցիչների՝ Հայոց ցեղասպանության եղելությունը նաև ժողովրդագրական «փաստարկներով» ժխտելուն ուղղված կեցվածքով²:

Սույն աշխատանքի նպատակն է հիմնական օսմանյան, հայկական և արևմտյան սկզբնաղբյուրների, ինչպես նաև օժանդակ աղբյուրների հաղորդած վիճակագրական տվյալների համեմատական վերլուծության հիման վրա կատարել Հայոց ցեղասպանության նախօրյակին արևմտահայության հատվածներից մեկի՝ կիլիկիահայության թվաքանակի հաշվարկ³:

Վերոնշյալ նպատակից բխել են հետազոտական հետևյալ հիմնական խնդիրները և հարակից հարցերը.

1. Տալ XIX դարի երկրորդ կեսից առ 1914 թ. Կիլիկիայի պատմաաշխարհագրական տարածքի՝ օսմանյան վարչատարածքային և հայկական եկեղեցական-թեմական բաժանումների փոփոխությունների պատմության ընդհանուր ուրվագիծը⁴,

² Դրա մասին մանրամասն տե՛ս Ռոբերտ Թաթոյան, «Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թվաքանակի խնդիրը թուրքական պատմագրության մեջ», *Հայոց ցեղասպանության պատմություն և պատմագրության հարցեր* 5, (2002), 116-125:

³ Առանձնացված սկզբնաղբյուրների և հաշվարկի մեթոդաբանության մասին մանրամասն տե՛ս աշխատանքի «Կիլիկիահայության թվաքանակի հաշվարկի մեթոդաբանությունը» բաժնում:

⁴ Նշված խնդրի պարզաբանումը նաև թույլ է տալիս լույս սփռել առանձին վիճակագրություններում առկա անհամապատասխանությունների և հակասությունների վրա, որոնք պայմանավորված են վարչական սահմանների փոփոխության հանգամանքով:

2. Անդրադառնալ Կիլիկիայի տարածքում բնակվող այլ ազգությունների թվաքանակի և ընդհանուր ազգաբնակչության մեջ հայ ազգաբնակչության տեսակարար կշռի հարցերին,
3. Անդրադառնալ 1909 թ. կիլիկիահայության կոտորածների ժողովրդագրական հետևանքների հարցին,
4. Առանձնացնել Հայոց ցեղասպանության նախօրյակին կիլիկիահայության թվաքանակի վերաբերյալ ամբողջական տվյալներ հաղորդող օսմանյան, հայկական և արևմտյան հիմնական սկզբնաղբյուրները, տալ դրանց աղբյուրագիտական բնութագիրը,
5. Ըստ օսմանյան մանր վարչատարածքային միավորների՝ կազաների, խմբավորել, համադրել և համեմատական վերլուծության ենթարկել հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ մեր առանձնացրած օսմանյան, հայկական և արևմտյան հիմնական սկզբնաղբյուրների տվյալները՝ ներգրավելով տվյալ վարչատարածքային միավորի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ այլ աղբյուրների վիճակագրական տվյալներ, վերոնշյալ բոլոր տվյալների համեմատական վերլուծության միջոցով գալ տվյալ վարչական միավորի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ սեփական եզրահանգմանը,
6. Համադրել կիլիկիահայության թվաքանակի մեր հաշվարկի արդյունքներն ըստ Կիլիկիայի բնակավայրերի հաշվարկ կատարած այլ ուսումնասիրողների արդյունքների, ինչպես նաև մեր կողմից առանձնացված հիմնական սկզբնաղբյուրների տվյալների հետ,
7. Անդրադարձ կատարել Հայոց ցեղասպանության հետևանքով կիլիկիահայության կրած մարդկային կորուստների, վերապրածների, Կիլիկիա վերադարձածների թվաքանակի հարցերին:

Մի շարք գործոններ, որոնք հանգեցրել են XIX դարի վերջին և XX դարի սկզբին Օսմանյան կայսրության պետական կառույցների՝ երկրի հայ բնակչության թերհաշվառմանը և այդ թերհաշվառման՝

օսմանյան պաշտոնական, և դրա միջոցով նաև այլ՝ հայկական և արևմտյան վիճակագրական աղբյուրների մեջ արտացոլմանը, առավել կամ նվազ չափով իրենց զգացնել են տվել նաև կիլիկիահայության հաշվառման պարագայում: Այսպես, Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով նախատեսված բարեփոխումների իրականացումից խուսափելու նպատակից ելնելով՝ օսմանյան իշխանությունները շահագրգռված են եղել իրականից ցածր ցույց տալու հատկապես Լեռնային Կիլիկիայի շրջանների (Հաճըն, Մարաշ, Ջեյթուն և այլն) հայ բնակչության թիվը, քանի որ այնտեղ հայերը շոշափելի մասնաբաժին, իսկ որոշ շրջաններում նույնիսկ մեծամասնություն են կազմել իսլամադավան ազգաբնակչության նկատմամբ: (1878-1880 թվականներին Հայկական հարցի շուրջ ընթացող բանակցությունների շրջանակներում Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանն անգամ դիտարկել է Մարաշի գավառը որպես բարեփոխումների ենթակա «Օսմանյան Հայաստանի» շրջաններից մեկը, իսկ Առաջին աշխարհամարտի ավարտից հետո հայկական դիվանագիտությունը պայքարել է Կիլիկիայի որոշ շրջաններ միացյալ հայկական պետության կազմում ընդգրկելու համար⁵):

Օսմանյան իշխանությունները պատմական Կիլիկիայի տարածքը բաժանել էին վարչական երկու միավորների՝ Ադանայի և Հալեպի վիլայեթների միջև, ընդ որում, երբ 1860-ական թթ. կեսերին Թանզիմաթի վարչական բարեփոխումների շրջանակ-

⁵ Օսմանյան իշխանությունների՝ Հայկական հարցի համատեքստում արևմտահայության թերահաշվառման մասին մանրամասն տես Ռոբերտ Թաթոյան. *Արևմտահայության թվաբանակի հարցը 1878-1914 թվականներին* (Երևան, ՀՅԹԻ, 2015), 35-60: Խնդրին այլ ուսումնասիրողների անդրադարձներից տես Աշոտ Մելրոնյան, «Պատմական ժողովրդագրությունը հայագիտության կարևոր բնագավառ», *Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները (միջազգային համաժողով, Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003)*, *Ջեկուցումների ժողովածու* (Երևան, 2004), 237-242, Գեղամ Բաղդյան, «Մուլթանական կառավարության վարչաժողովրդագրական քաղաքականությունը», *Հայոց պատմություն, հատոր III. Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918)*, գիրք ստաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ) (Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010), 448-455: Տես նաև Raymond Kévorkian, *The Armenian Genocide. A Complete History* (I.B.Tauris & Co Ltd, 2011) մենագրության “The Armenian Population of the Empire on the Eve of the War: The Demographic Issue” գլուխը (265-278):

ներում էլյալեթները վերակազմավորվեցին վիլայեթների⁶, հոծ հայ բնակչություն ունեցող Մարաշի սանջակը (Ջեյթունը ներառյալ), որը աշխարհագրական և պատմական առումներով պատկանում էր Լեոնային Կիլիկիային և նախկինում մտնում էր Ադանայի էյալեթի կազմի մեջ, ընդգրկվեց Հալեայի վիլայեթի կազմում (1866 թ.)⁷: Վարչական նման բաժանման մեջ ակնհայտ ժողովրդագրական միտումն արձանագրել է հարցին անդրադարձած ուսումնասիրող Միքայել Ցիցիկյանը դեռևս 1913 թ. «Այդտեղ (Կիլիկիայում – Ռ.Թ.) ինչպես և բուն Հայաստանի վարչական բաժանումը ծրագրելիս ու իրականացնելիս իր ծրագրածը, տաճիկ կառավարությունը ի նկատի է ունեցել մի բան միայն, այն, որ հայերը հնարաորոթեան չստի կից լինեն ուրիշ ազգություններին կամ խառը նրանց հետ ու այդպիսով բացարձակ մեծամասնություն չը կազմեն ոչ մի վիլայեթում, նոյն իսկ ոչ մի սանջակում»⁸:

⁶ 20-րդ դարի սկզբներին Օսմանյան կայսրության տարածքը տրոհված էր վարչատարածքային հետևյալ միավորների (ըստ հեթոթականության՝ խոշորից մանր)՝ *վիլայեթ* (նախքան 1860-ական թթ. Թանզիմաթի բարեփոխումները՝ *էյալեթ*)՝ պատմագիտական գրականության մեջ հայերեն համարժեք եզրույթը՝ նահանգ, *սանջակ* (գավառ), *կազա* (գավառակ), *նահիե* (գյուղախումբ), *քարիա* (գյուղ)։ Յուրաբանչյուր վիլայեթ ուներ ընդհանուր կառավարիչ (*վալի*), որի նստավայրն էր վիլայեթի գլխավոր քաղաքը։ Սանջակը կառավարում էր *մյութեսարիֆը* (գավառապետ), կազայի կառավարիչն էր *կայմակամը* (գավառապետի փոխանորդ), նահիեի կառավարիչը՝ *մյուդիրը* (վերակացու), իսկ գյուղի գլխավորը՝ *մուխարրն* էր (գյուղապետ)։ Վալիին, մյութեսարիֆին, կայմակամին, մյուդիրին նշանակում էր կենտրոնական կամ նահանգային իշխանությունը, իսկ մուխարրին ընտրում էին տվյալ գյուղի բնակիչները։ Վերոհիշյալ վարչատարածքային միավորների թուրքերեն անունները մենք գործածում ենք աշխատանքի՝ Կիլիկիայի տարածքի օսմանյան վարչատարածքային բաժանման պատմությունը լուսարանող բաժնում, այլ տեղերում օգտագործում ենք հայերեն համարժեքները։

⁷ Տե՛ս Andreas Birken, *Die Provinzen des Osmanischen Reiches* (Wiesbaden, 1976), 138, տե՛ս նաև Abel Pavet de Courteille, *État présent de l'empire ottoman* (Paris, J. Dumaine, 1876), 96)։ Մարաշը Ադանայի էյալեթի կազմի մեջ էր գտնվում 1848-1865 թթ. (տե՛ս Tahir Sezen, *Osmanlı Yer Adlari* (Ankara, 2017), 400)։ 1919-1920 թթ. Կիլիկիայում ֆրանսիական վարչական վերահսկողության ղեկավար Է. Բրենոնի տվյալներով Մարաշը միացվել է Հալեայի վիլայեթին 1880 թ., ինչը սխալ է (տե՛ս Է. Պրեմոս, *Կիլիկիա՝ 1919-1920-ին* (Պոստոն, 1921), 6)։

⁸ Մ. Ցիցիկեան, «Հայերը Կիլիկիայում (Նորերս շրջագայածի դատողության արդիւնը)», *Նոր Հուանք, գրական, գիտական, հասարակական և քաղաքական ամսագիր* (Թիֆլիս), Ա. տարի, օգոստոս, 1913, №6, 1107։ Օսմանյան իշխանությունների կողմից հայաբնակ շրջանների վարչական սահմանների վերաձևման քաղաքականության

Դրա հետ մեկտեղ, Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության այլ շրջանների հայ բնակչության օրինակով, կիլիկիահայությունը ևս ձգտել է խուսափել վիճակագրական հաշվառումից՝ հարկերից խուսափելու, մասնավորապես՝ զինվորական տուրքը (*բեդել-ի ասքերիե*) հնարավորինս նվազ չափով վճարելու նպատակից ելնելով (որպես կանոն, զինվորական տուրքը գանձվում էր ընդհանուր համայնքից՝ ըստ տվյալ բնակավայրում հաշվառված տղամարդկանց ընդհանուր թվի):

Այսպես, Կիլիկիայի շրջաններից մեկի՝ Մարաշի հայ բնակչության թվաքանակի հարցին անդրադառնալիս, սիյուրքահայ ուսումնասիրող Գրիգոր Գալուստյանը արձանագրում է հետևյալը. «*Հայոց մէջ ալ, զինուորական տուրքէ խուսափելու համար յաճախ, մանասանդ արու ծնունդներ կան բնաւ չէին արձանագրուել եւ կամ ուշ կ'արձանագրուէին պետական տոմարներուն մէջ: Ասոր կ'ըսուէր քէթմ ի նուֆուս: Այս պատճառաւ Մարաշի [հայ] բնակչութեան ճշգրիտ թինն ալ գտնել կարելի չէ»⁹:*

Հայերի թերհաշվառմանը նպաստող նույն հանգամանքն է մատնանշում նաև «Միս-Մատեան» աշխատության հեղինակ Միսաք Բելեշյանը: Ըստ ուսումնասիրողի՝ Միս քաղաքում «*հարիւրաւոր տուներ և հազարաւոր անձեր պետական տոմարէն կը բացակային հասկընալի պատճառներով, այսինքն շէնքերու և անձերու համար սահմանուած տուրքերէն ազատ մնալու համար, և կառավարութիւնը չէր հետաքրքրուեր այդ հարցով*»¹⁰:

մասին մանրամասն տես Թ-աթոյան, *Արևմտահայության թվաքանակի հարցը*, 52-57: Կիլիկիայի վարչական բաժանումների հարցում օսմանյան իշխանությունների քաղաքականության մասին մանրամասն տես Սալբի Սաղտըճեան, «Կիլիկիոյ վարչական բաժանումները 19-րդ դարու վերջաւորութեան և 20-րդ դարու սկիզբը», *Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)*, №11, Երևան, 2010, 130-138: Տես նաև Ռ. Հ. Գասպարյան, «Կիլիկիայի հայ ազգաբնակչությունը և վարչական բաժանումը XIX դարի վերջին և XX դարի սկզբին», *Լրաբեր հասարակական գիտությունների*, 2011, № 1-2, 20-29:

⁹ Գր. Հ. Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ և Հերոս Զեյթուն* (Բ. Հրատարակութիւն, Լոնկ Այլընտ Միթի, Ն.Ե., 1988 (առաջին հրատարակությունը՝ 1934 թ.)), 242: Հարկերից խուսափելու նպատակով արևմտահայության՝ հաշվառումից խուսափելու մասին մանրամասն տես Թ-աթոյան, *Արևմտահայության թվաքանակի հարցը*, 64-70:

¹⁰ Տես Միսաք Բելեշեան, *Միս-Մատեան. պատմական, բանասիրական, տեղե-*

Ինչպես արդեն նշել էինք, ի պատասխան օսմանյան իշխանությունների կողմից արևմտահայության թերհաշվառմանը Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը Հայկական հարցի արծարծման առանցքային հանգրվաններում (1878-1880 թթ., 1912-1914 թթ., 1919-1922 թթ.) հանդես է եկել սեփական վիճակագրական հաշվարկներով՝ հիմնված ինչպես օսմանյան վիճակագրական տվյալների, այնպես էլ Օսմանյան կայսրության եկեղեցական-թեմական տարածքային կառույցների՝ առաջնորդարանների իրականացրած՝ հայ բնակչության հաշվառման տվյալների վրա: Կիլիկիահայության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալներ հայթայթելու գործում Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանը սերտորեն համագործակցել է Կիլիկիո Հայոց կաթողիկոսության հետ, որի անմիջական եկեղեցական-վարչական իրավասության տակ է գտնվել Կիլիկիայի պատմաաշխարհագրական տարածքը¹¹:

Կիլիկիայի, ինչպես և Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության այլ շրջանների հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ հիմնական երկու խումբ վիճակագրական սկզբնաղբյուրների՝ մի կողմից՝ օսմանյան կառավարության և մյուս կողմից՝ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի-Կիլիկիո կաթողիկոսարանի վիճակագրությունների միջև բավականին մեծ անհամապատասխանություններ կան: Առանձին շրջանների և ենթաշրջանների պարագայում հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ հայկական սկզբնաղբյուրները օսմանյանի համեմատ երկու և ավելի անգամ բարձր թիվ են հաղորդում:

Դրա հետ մեկտեղ, շատ դեպքերում զերծ չեն թերություններից և խնդրահարույց են նաև կիլիկիահայության թվաքանակի վերաբերյալ հայկական սկզբնաղբյուրների հաղորդած վիճակագրական տվյալները: Այսպես, որոշակի շփոթի է հանգեցրել Կիլիկիայի պատմաաշխարհագրական սահմաններից դուրս՝ Անգորայի, Սեբաստիա-

կագրական, սզգագրական և յարակից պարագաներ (Պեյրութ, տպարան «Հայ ճեմարանի», 1949), 183:

¹¹ Նախքան Հայոց ցեղասպանությունը Կիլիկիո կաթողիկոսության նստավայրը Սսի մայրավանքն էր. ինչի պատճառով գրականության մեջ այն հիշատակվում է նաև *Սսի կաթողիկոսություն, Սսի կաթողիկոսարան* անուններով:

յի և Խարբերդի նահանգների տարածքում Կիլիկիո կաթողիկոսության իրավասության տակ գտնվող թեմերի գոյությունը¹²: Նշված հանգամանքի բերումով՝ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի և Կիլիկիո կաթողիկոսարանի կազմած վիճակագրությունները, որոնք, որպես կանոն, արտացոլում են Կիլիկիո կաթողիկոսարանի իրավասության տակ գտնվող ամբողջ, այդ թվում՝ նաև բուն Կիլիկիա երկրամասից դուրս տարածքների հայ բնակչության թվաքանակը, որոշ աղբյուրներ և ուսումնասիրողներ ներկայացրել են որպես Կիլիկիայի բնակչության թիվ: Դրանով շրջանառության մեջ են դրվել թվեր, որոնք աղերս չունեն Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի և Կիլիկիո կաթողիկոսարանի սկզբնաղբյուր վիճակագրություններում բուն Կիլիկիա երկրամասի տարածքի (Ադանայի նահանգ, Մարաշի գավառ, Հալեպի նահանգի որոշ շրջաններ) հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ հաղորդվող տվյալներին¹³:

Այս շփոթը, մասնավորապես, առկա է Գրիգոր Ջոհրապի հեղինակած և 1913 թ. Փարիզում ֆրանսերենով հրատարակած «Հայկական հարցը փաստաթղթերի լույսի տակ» պրակում, որտեղ 1912 թ. դրությամբ որպես Կիլիկիայի հայ բնակչության թիվ նշված է 407000-ը¹⁴ (թիվը հիմնված է Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանին

¹² Դրա մասին մանրամասն տե՛ս աշխատանքի երկրորդ բաժինը, որը նվիրված է Կիլիկիայի պատմաաշխարհագրական տարածքի օսմանյան վարչական և հայկական եկեղեցական-թեմական բաժանումներին:

¹³ Հայ ուսումնասիրողներից այս հանգամանքի վրա ուշադրություն է դարձրել Անի Ոսկանյանը (տե՛ս Անի Ոսկանյան, *Աղմուկի նահանգի հայերի տնտեսական վիճակը. 1909 թ. ունեգրվում (Գիրք Ա)* (Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017), 23, 26-27):

¹⁴ Տե՛ս Marcel Léart, *La Question Arménienne à la Lumière des Documents* (Paris, 1913), 62: Հետաքրքիր է, որ հեղինակը համեմատության համար ներկայացնում է 1882 թ. հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրությունը, համաձայն որի Ադանայի նահանգում կար 280000 և Հալեպի նահանգի Մարաշի, Այնթապի, Ուրֆայի և Բիլիսի շրջաններում 100000 հայ բնակչություն: Այնուհետև համադրելով 1882 և 1912 թթ. վիճակագրությունները՝ Գ. Ջոհրապը գալիս է այն եզրակացության, որ Կիլիկիայի հայ բնակչությունը 30 տարվա ընթացքում աճել է 27000-ով (սույն տեղում): Միևնույն ժամանակ, եթե 1882 և 1912 թթ. տվյալները բաշխենք ըստ օսմանյան վարչական բաժանման՝ նահանգների, ապա կպարզվի, որ ըստ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրության՝ Կիլիկիայի համապատասխան տարածքում ևս հայ բնակչությունը 1882-1912 թթ. ընթացքում

կից ստեղծված Ապահովության հանձնաժողովի՝ 1912 թ. վերջերին Հայկական հարցի վերարժարժման կապակցությամբ կազմած վիճակագրական տվյալների վրա և իր մեջ ընդգրկում է Կիլիկիո կաթողիկոսության եկեղեցական-թեմական իրավասության տակ գտնվող ամբողջ տարածքը): Նույն՝ 407000 թիվն արտացոլել է Հայկական միացյալ պատվիրակությունը՝ 1919-1920 թթ. կազմած և Փարիզի խաղաղության վեհաժողովին ներկայացրած որոշ տեղեկագրերում¹⁵, այնուհետև այն անցել է տարբեր ուսումնասիրողների աշխատություններ¹⁶:

Մինևույն ժամանակ, Հայկական պատվիրակության՝ Փարիզի խաղաղության վեհաժողովի ուշադրությանը ներկայացրած հիմնական հուշագրում (թվագրված է 1919 թ. փետրվարի 12-ով) 1914 թ. դրությամբ Ադանայի նահանգի և Մարաշի գավառի հայ բնակչության թիվը նշվում է 205000-ը¹⁷: Այս թիվը նույնպես բխում է Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի-Ապահովության հանձնաժողովի՝

նվագել է (1912 թ. վիճակագրությունը Ադանայի նահանգի, Մարաշի գավառի, Հալեայի նահանգի՝ Կիլիկիայի պատմաաշխարհագրական տարածքին պատկանող հատվածների համար հաղորդում է 259000 շունչ հայ բնակչություն): Դրա հետ մեկտեղ, կարծում ենք, 1882 թ. համար Ադանայի նահանգում 280000 հայ բնակչություն հաշվելն ըստ երևույթին նույնպես շփոթմունքի արդյունք չսփազանցություն է. իրականության մոտ թիվը, մեր կարծիքով, գուցե, պետք է մոտ 2-2,5 անգամ ցածր լինի:

¹⁵ Տես Poghos Nubar, *Population de la Cilicie avant la guerre* (Paris, 1920), 6, անգլերեն՝ Poghos Nubar, *The Pre-War Population of Cilicia* (Paris, 1920), 3, տես նաև *La Question de Cilicie. Discours prononcé le 24 Décembre 1920 à la Chambre des Députés Par M. Bellet*, Extrait du Journal Officiel annoté et suivi d'une Notice sur la Cilicie par M. S. David-Beg (Paris, 1921), 108, Գեորգ Մեսրոպ, «Հայկական Կիլիկիոյ բնակչութիւնը», *Ճակատամարտ, օրաթերթ* (Կ.Պոլիս), 1920, 7 ապրիլ, №423 (2244) և այլն:

¹⁶ Տես, օրինակ, Krikor Hagop Basmadjian, *La Cilicie. Son passe et son avenir* (Paris, 1919), 6, Ռ. Գ. Սահակյան, *Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ.* (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1970), 109 և այլն: Նշված վիճակագրական շփոթի հիման վրա որոշ հեղինակներ Կիլիկիայի ընդհանուր հայ բնակչության թիվը անգամ հասցրել են մինչև 500000-ի (տես օրինակ Չիթունի, *Ասուխու Հայաստանի* (Կ.Պոլիս, տպ. Կ. Քէշիշեան որդի, 1920), 110-111, տես նաև Գրիգոր Գ. Գուռույլեան, «Հայուն Կիլիկիան», *Արև, ազգային շահերու օրկան* (Աղերքանդիլիա), . 1918, նոյեմբերի 15, թիւ 80 (545)):

¹⁷ Տես *La Question Armenienne Devant la Conférence de la Paix* (Paris, Dupont, 1919), 12, տես նաև նույն տեղում Կիլիկիայի ազգաբնակչության համեմատական աղյուսակը (Annexe №2):

1912 թ. վիճակագրության տվյալներից և տեղ է գտել տարբեր ուսումնասիրություններում, որոնցում արծարծվում է Կիլիկիայի հայ բնակչության թվաքանակի հարցը¹⁸:

Հարցի ուսումնասիրությունը բարդացնող էական գործոններից մեկը XIX դ. վերջին – XX դ. սկզբին Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի-Կիլիկիո կաթողիկոսարանի՝ կիլիկիահայության թվաքանակի վերաբերյալ կազմած վիճակագրությունների ելակետային տվյալների՝ ըստ հայաբնակ բնակավայրերի հայ բնակչության բաշխումը պարունակող վիճակագրական ցուցակների բացակայությունն է:

Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանը արևմտահայության համընդհանուր հաշվառում-«մարդահամար» է նախաձեռնել Հայկական հարցի արծարծման երկու հանգրվաններում՝ 1878-ին և 1913-ին, բացի դրանից՝ Օսմանյան կայսրության բոլոր հայկական եկեղեցական թեմերին ուղղված՝ տվյալ թեմի վիճակը ներկայացնող տեղեկագիր պատրաստելու հրահանգ է իջեցրել 1902-ին Կ.Պոլսի Հայոց պատրիարք Մաղաթիա Օրմանյանը: Ինչպես արդեն նշել էինք, 1912-ին Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանին կից ստեղծված Ապահովության հանձնաժողովը պատրաստել է 1882 և 1912 թթ. դրությամբ Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Օսմանյան կայսրության այլ շրջանների հայ բնակչության երկու վիճակագրություններ: Դրա հետ մեկտեղ, կիլիկիահայության առանձին հաշվառումներ է իրականացրել Կիլիկիո կաթողիկոսարանը՝ հայտնի են նման հաշվառումների տվյալների հիման վրա կազմած միայն Կիլիկիայի եկեղեցական-թեմական տարածքն ընդգրկող վիճակագրություններ: Արդ, ինչպես արևմտահայությունն ամբողջությամբ, այնպես էլ միայն կիլիկիահայությունն ընդգրկող վերոնշյալ բոլոր հաշվառում-«մարդահամարներից» կիլիկիահայության մասով մեզ են հասել միայն համագումար տվյալները, որոնք պարունակում են հայ բնակչության թվաքանակի բաշխումն ըստ եկեղեցական թեմերի, լավագույն դեպքում՝ ըստ ենթաթեմերի և ենթաշրջանների, բայց

¹⁸ Տե՛ս օրինակ Վ. Մ. Քիրքճեան, *Հայկական Կիլիկիա* (Նիւ Եորք, «Կոչակ»ի Հրատարակչական Ընկերութիւն, 1919), 31-32, Գրիգոր Գ. Գոտուլեան, *Կիլիկեան աշխարհագրութիւն պատկերազարդ և քարտիսատր* (Կ.Պոլիս, տպագ. Պ. Պալըքճեան, 1922), 72, Ջոն Կիրակոսյան, *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը : 1914-1916 թ.թ.* (Երևան, Հայաստան, 1965), 325 և այլն:

ոչ երբեք ըստ բնակավայրերի: Վերոնշյալ վիճակագրությունների՝ միևնույն թեմի/վարչական միավորի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ հաղորդած տվյալների միջև որոշ դեպքերում բավականին շոշափելի տարբերություն կա, և դրանց ելակետային տվյալների՝ ըստ բնակավայրերի հայ բնակչության բաշխումը պարունակող ցուցակների բացակայությունը էսպես դժվարացնում է տվյալների համեմատական վերլուծությունը:

Ցավոք, 1913 թ. Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից իրականացված արևմտահայության հաշվառման՝ կիլիկիահայությանը վերաբերող տվյալները, մասնավորապես՝ ըստ բնակավայրերի բնակչության բաշխումը պարունակող լրացված հարցաթերթերը գտնելու մեր բոլոր պրպտումները ապարդյուն էին: Ըստ երևույթին, եթե նշված տվյալներն անգամ գոյություն են ունեցել, ապա 1919-1920 թթ. դրությամբ դրանք արդեն կորսված էին, քանի որ բացակայում են ՀԲԼՄ Փարիզի Նուբարյան գրադարանի արխիվում, որտեղ ներկայումս պահվում է Օսմանյան կայսրության հայկական թեմերից ստացված «1913 թ. վիճակացոյց»ի հարցաթերթերի հիմնական մասը¹⁹: Չի կարելի բացառել, որ Կիլիկիայի տարածքում Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913 թ. հաշվառման–«մարդահամարի» շրջանակներում աշխատանքներ չեն իրականացվել և «1913 թ. վիճակացոյց»ի լրացված թերթեր Կիլիկիո թեմերից Կ.Պոլիս չեն ուղարկվել²⁰:

¹⁹ Սրա մասին մանրամասն տե՛ս Ռոբերտ Թաթոյան, «Մեծ եղեռնի ընթացքում արևմտահայության կրած մարդկային և նյութական կորուստները վիճակագրելու Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի փորձերը 1919-1920 թվականներին (ըստ Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի արխիվի նյութերի) (Մաս 1)», *Էջմիածին, պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածին* (Ս. Էջմիածին), 2019, ապրիլ, 78, տե՛ս նաև սույն աշխատանքի՝ «Կիլիկիահայության թվաքանակի հաշվարկի մեթոդաբանությունը» բաժինը:

Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1913 թ. հաշվառման՝ կիլիկիահայությանը վերաբերող գյուղացուցակները հայտնի չեն նաև կիլիկիահայության թվաքանակի հարցին իրենց ուսումնասիրություններում անդրադարձած և տվյալներ հավաքելու նպատակով տարբեր, այդ թվում ՀԲԼՄ Նուբարյան գրադարանի, Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության, ինչպես նաև Հալեպի առաջնորդարանի արխիվները պրպտած հետազոտողներ Ռայմոն (Հարություն) Գևորգյանին և Միհրան Միսասյանին (աղբյուր՝ հեղինակի՝ Ռ. Գևորգյանին և Մ. Միսասյանին ուղղած հարցումների պատասխանները):

²⁰ Կիլիկիայի վերաբերյալ տվյալներ չի պարունակում նաև Թեոդոկի «Գողգոթա հայ

Վերոնշյալը հաստատելու է գալիս Ադանայի քաղաքական ժողովի²¹ 1914 թ. հունվարի 17-ի նիստի ընթացքում մարդահամարի խնդրին անդրադարձը, որի ժամանակ ժողովի անդամները առաջնորդական փոխանորդից տեղեկացել են, որ «այդ կարևոր գործը տակաին չէ կատարուած»՝ համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով (Ադանայի թաղական խորհուրդը չէր հատկացրել մարդահամարի անցկացման համար անհրաժեշտ 30 ոսկին)²²:

Այստեղ կարևոր ենք համարում նշել, որ ներկա դրությամբ բացակայում են նաև 1914 թ. օսմանյան վիճակագրության կամ դրան նախորդող որևէ այլ օսմանյան վիճակագրական հաշվառման՝ բնակչության ըստ բնակավայրերի բաշխումը պարունակող ցուցակները: Եթե անգամ օսմանյան «մարդահամար»-հաշվառումների գյուղացուցակները պահպանվել են թուրքական արխիվներում, ապա առ այսօր դրանք չեն դրվել գիտական շրջանառության մեջ և հայտնի չեն անգամ օսմանյան վիճակագրությամբ զբաղվող և օսմանյան արխիվներում նյութերի հետ աշխատած թուրք և արևմտյան ուսումնասիրողներին (Սթենֆորդ Շոու, Քեմալ Կարպատ, Ջասթին Մրք-Քարթի և այլք): Մասնավորապես, Օսմանյան կայսրության ժողովրդագրության հետազոտող, Հայոց ցեղասպանությունը ժխտող հայացքների համար քննադատության արժանացած²³ ամերիկացի


հոգեուրականութեան եւ իր հօտին աղետալի 1915 տարիին» գիրքը (պատրաստվել է հրատարակության 1920-21 թթ.), որտեղ հեղինակը, լայնորեն օգտագործելով է Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913 թ. «վիճակացույց»-ի տվյալները, նահանգ առ նահանգ ըստ բնակավայրերի ներկայացնում է հայ հոգևորականության և հայ բնակչության եղեռնը (տե՛ս Թեղդիկ, *Գողգոթա հայ հոգևորականութեան և իր հօտին աղետալի 1915 տարիին* (Նիւ Եորք, 1985):

²¹ Քաղաքային ժողովները առաջնորդարաններին կից գործող մարմիններ էին, որոնց իրավասության տակ էին գտնվում արևմտահայերի կրոնահամայնքային ներքին կյանքի ընդհանուր բնույթի տարբեր հարցեր:

²² Տե՛ս Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվ. Ադանայի Հայոց առաջնորդարանի ֆոնդ, Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ Ատանայի, սկիզբ՝ 2 մարտ 1905, վերջ՝ 10 ապրիլ 1915, թերթ 118: Քաղաքական ժողովի 1914 թ. մարտի 14-ի նիստին ընթերցվում է Թաղական խորհրդի նամակը, որով այդ մարմինը տեղեկացնում էր, որ ի վիճակի չէ հատկացնել մարդահամարի անցկացման համար նախատեսված 30 ոսկին (տույն տեղում, թերթ 121):

²³ Տե՛ս մասնավորապես Richard G. Hovannisian, "Denial of the Armenian Genocide in

845801



ուսումնասիրող Ջ. ՄըքՔարթին հաղորդում է, որ թուրքական արխիվներում տեսել է ըստ շնչերի և տների ոչ իսլամադավան ազգաբնակչության հաշվառման տվյալներ, սակայն ի վիճակի չի եղել դրանցից օգտվելու. քանի որ այդ նյութերն իբր «դասակարգված չէին»²⁴:

Որպես վերոնշյալ բոլոր գործոնների հետևանք՝ հրապարակի վրա հակասական, հաճախ իրարից շոշափելիորեն տարբերվող վիճակագրական տվյալների առկայությունը թույլ չի տվել կիլիկիահայության թվաքանակի հարցին մինչ այժմ անդրադարձած ուսումնասիրողներին (նշենք, որ նման անդրադարձները առավել կամ նվազ չափով ընդհանուր և հպանցիկ են՝ հարցի վերաբերյալ որևէ հատուկ ուսումնասիրություն գոյություն չունի) հանգել համոզիչ և սպառիչ եզրակացությունների:

Այսպես, կիլիկիահայության թվաքանակի հարցին է անդրադարձել և Կիլիկիայի հայ և ընդհանուր ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ հրապարակի վրա առկա վիճակագրական տվյալների վերլուծություն է կատարել «Մշակ» թերթի խմբագրապետ Համբարձում Առաքելյանը՝ դեռևս 1895 թ. ընթացքում նշված պարբերականում հրատարակված և հետագայում մի քանի հավելումներով որպես առանձին գրքույկ լույս տեսած իր «Ջեյթուն» հոդվածաշարում²⁵:

Խորհրդային և հետխորհրդային տարիներին կիլիկիահայության թվաքանակի հարցին անդրադարձած ուսումնասիրողներից կարող ենք առանձնացնել Ռուբեն Սահակյանին²⁶, Շմավոն Թորոսյանին²⁷,

Comparison with Holocaust Denial" in *Remembrance and Denial: The Case of the Armenian Genocide*, Richard G. Hovannisian (ed.) (Detroit, Wayne State University Press, 1999), 210:

²⁴ Տես McCarthy J., *Muslims and Minorities. The Population of Ottoman Anatolia and the End of the Empire* (N.Y. University Press, 1983), 84:

²⁵ Տես Համբարձում Առաքելյան, *Ջեյթուն: Տեղագրական, ազգագրական և վարչական տեսություն* (Թիֆլիզ, տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1896), 45-53:

²⁶ Տես Սահակյան, *Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ.*, 108-112:

²⁷ Տես Ը. Թ. Թորոսյան, *Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920 թթ.* (Երևան, 1987), 17-18):

Ռուբեն Գասապրյանին²⁸, Հրաչիկ Սիմոնյանին²⁹, Անի Ոսկանյանին³⁰, Գեղամ Բաղայանին³¹, սփյուռքահայ ուսումնասիրողներից՝ Բյուզանդ Եղիայանին³², Ավետիս Յափունձյանին³³, Հայկազն Ղազարյանին³⁴:

Հայկական եկեղեցական–թեմական վիճակագրության, ինչպես նաև տարբեր հեղինակների կողմից հաղորդվող վիճակագրական տվյալների հիման վրա Օսմանյան կայսրության (ներառյալ Կիլիկիան)՝ ըստ նահանգների հայ բնակչության թվաքանակի հաշվարկ են կատարել ֆրանսահայ ուսումնասիրողներ Ռայմոն (Հարություն) Գևորգյանը և Փոլ (Պոլոս) Փաբուջյանը «Օսմանյան

²⁸ Տե՛ս Ռ. Հ. Գասապրյան, «Կիլիկիայի հայ ազգաբնակչությունը և վարչական բաժանումը XIX դարի վերջին և XX դարի սկզբին», *Լրաբեր Հասարակական Գիտությունների*, 2011, № 1-2, 20-29:

²⁹ Տե՛ս Հրաչիկ Սիմոնյան, *Հայերի գանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ)* (Երևան, ԵԴՀ հրատարակչություն, 2009), 18-22:

³⁰ Տե՛ս Անի Ոսկանյան, *Արևմտյան նահանգի հայերի սնտոնական վիճակը. 1909 թ. ունեզրկում (Գիրք Ա)* (Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017), 23-27:

³¹ Տե՛ս Գեղամ Բաղայան, «Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի վարչատնտեսագրական պատկերը», *Հայոց պատմություն, հատոր III. Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918), գիրք երկրորդ (1901-1918 թթ., հայ գաղթականները, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին)* (Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, «Չանգակ» հրատ., 2015), 52-64, նույնի՝ «Հայ բնակչությունն Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս տարածաշրջաններում Առաջին աշխարհամարտի նախօրեին», ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, *Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կորուսանները և հատուցման կառուցվարգերի մեթոդաբանական հիմքերը* (Երևան, Տիր հրատարակչություն, 2019), 42-64:

³² Տե՛ս Բիզանդ Եղիայան, *Առանձին Հայոց պատմություն* (Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1970), 146-151, նույնի՝ *Ժամանակակից պատմություն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914 -1972* (Անթիլիաս, 1975), 82-83, 893:

³³ Տե՛ս Աւետիս Եափունձեան, *Հայ ժողովուրդին անկախութեան պայքարը Կիլիկիոյ մէջ 1919-1921 թթ.* (Գահիրէ, 1977), 250-259:

³⁴ Տե՛ս Հայկազն Գ. Ղազարեան, *Ցեղասպանութեան թուրքը* (Պէյրոս, տպարան «Համազգային», 1968)՝ «Ցեղասպանութիւնը Առանձին նահանգի մէջ» գլուխը, 165-186, տե՛ս նաև նույն հեղինակի «Թուրք պետական դատադրութիւնը ինչպէս և երբ սկսաւ Առանձին նահանգին մէջ», *Հայրենիք, օրաթերթ ազգային, գրական, քաղաքական և հասարակագիտական* (Բոստոն), 1966, օգոստոսի 14, №16488, նույնի՝ «Թրքական ցեղասպանութիւնը Հայկի նահանգին մէջ», *Հայրենիք, օրաթերթ ազգային, գրական, քաղաքական և հասարակագիտական* (Բոստոն), 1968, հուլիսի 7, №17037):

կայսրության հայերը ցեղասպանության նախօրյակին» վերնագիրը կրող ուսումնասիրությունում³⁵:

Հրատարակված աղբյուրների հիման վրա (կիլիկիահայության տարբեր շրջանների հայերից կազմված հայրենակցական միությունների «հուշամատյան»-հրատարակություններ, հուշագրություններ, այլ ուսումնասիրություններ) Օսմանյան կայսրության, այդ թվում՝ Կիլիկիայի հայ բնակչության՝ ըստ բնակավայրերի թվաքանակի հաշվարկ է պարունակում Սարգիս Կարայանի «Հայերը Օսմանյան Թուրքիայում, 1914. Աշխարհագրական և Ժողովրդագրական տեղեկատու» աշխատությունը³⁶ (Ռ. Գևորգյանի և Փ. Փարուջյանի և Ս. Կարայանի հաշվարկներին առավել մանրամասն կանդրադառնանք հաջորդիվ):

Ժամանակակից արևմտյան ուսումնասիրողներից «Օսմանյան Անատոլիայի» ընդհանուր հայ ազգաբնակչության թվաքանակը հաշվարկելու համատեքստում Կիլիկիայի նահանգների հայ բնակչության թվաքանակի հաշվարկ է կատարել արդեն հիշատակված ամերիկացի ուսումնասիրող Ջասթին Մըք-Զարթին³⁷:

Կիլիկիայի առանձին շրջանների հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ և հաշվարկներ են պարունակում հուշամատյանները և հայրենակցական միությունների այլ հրատարակությունները, ցեղասպանությունը վերապրածների հուշագրությունները, այլ ուսումնասիրությունները, որոնց մենք կանդրադառնանք աշխատանքի համապատասխան բաժիններում:

³⁵ Տե՛ս Raymond H. Kevorkian, Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'Empire ottoman a la veille du Génocide* (Paris, ARHIS, 1992): Ադանայի նահանգի տվյալները՝ նույն տեղում, 265-304, Հալեպի (ներառյալ Մարաշ) նահանգի տվյալները՝ 305-352), նույն տվյալները տե՛ս նաև Raymond H. Kevorkian, *La Cilicie (1909-1921) de Massacres d'Adana au mandat français* (Paris, Revue d'histoire arménienne contemporaine, 1999), 24-44:

³⁶ Տե՛ս Sarkis Y. Karayan, *Armenians in Ottoman Turkey, 1914. A Geographic And Demographic Gazetteer* (London, Gonidas Institute, 2018), 91-112 (Ադանայի նահանգի տվյալներ), 113-146 (Հալեպի նահանգի տվյալներ):

³⁷ Տե՛ս McCarthy, *Muslims and Minorities*, 78-79 (ուսումնասիրողի հաշվարկի արդյունքները կներկայացվեն հաջորդիվ):

II. Կիլիկիայի տարածքի օսմանյան վարչական և հայկական եկեղեցական-թեմական բաժանումները (XIX դարի երկրորդ կես – 1914 թ.)

XIX դարի վերջին - XX դարի սկզբին Կիլիկիայի պատմա-աշխարհագրական տարածքը բաժանված էր Ադանայի և Հալեպի վիլայեթների միջև: Ադանայի վիլայեթը կազմավորվել էր 1869-70 թթ.¹ (իսլամական օրացույցի² 1286 թ.): 1880-ական թթ. կեսերին այն բաժանված էր չորս սանջակների և 19 կազանների.

1. Ադանայի սանջակ: Կազաներ (4)՝ Ադանա, Կարայիսալի, Մերսին, Տարսոն:
2. Ջերեկ-Բերեքեթի սանջակ: Կազաներ (6)՝ Ջերեկ-Բերեքեթ (վարչական կենտրոնը՝ Յարփուզ), Իսլահիե, Փայաս (Դորթ-Յոլ), Օսմանիե, Հասսա, Բախչե (Բուլանըղ):
3. Կոզանի սանջակ: Կազաներ (4)՝ Կոզան (Սիս), Կարս-Բազար, Հաճըն, Ֆեքե (Վահկա):
4. Իչելի (Իչիլ, Սելևկիա) սանջակ: Կազաներ (5)՝ Իչել, Էրմենակ, Մութ, Գյուլնար, Անամուր³:

1887-88 թթ. (իսլամական օրացույցի 1305 թ.) Մերսինի կազան առանձնացվում է որպես Ադանայի վիլայեթի սանջակ՝ իր կազմի մեջ առելով Տարսոնի գավառակը⁴: 1894 թ. Ադանայի սանջակի կազայի

¹ Ստեփան Աստուրյանը որպես վիլայեթի կազմավորման տարեթիվ նշում է 1869 թ. մայիսը (սե՛ն Stephan H. Astourian, "The Silence of the Land: Agrarian Relations, Ethnicity, and Power," *A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire*, Edited by Ronald Grigor Suny; Fatma Muge Goccek, Norman M. Naimark (Oxford University Press, 2011), 67), թուրք ուսումնասիրող Տահիր Սեզենը՝ 1870 թվականը (սե՛ն Sezen, *Osmanli Yer Adlari*, 7): 1840-1866 թթ. Ադանասն առանձին էյալեթ էր, 1866-69 թթ.՝ սանջակ Հալեպի վիլայեթի կազմում (սե՛ն տեղում):

² Իսլամական կամ Հիջրի օրացույցը (թուրքերեն՝ Hicri takvim) լուսնային տոմար է, որի տարին բաղկացած է 354 կամ 355 օրից: Տոմարի հաշվարկը սկսվում է 622 թվականի հուլիսի 16-ից, երբ իսլամի հիմնադիր Մուհամեդը և նրա կողմակիցները տեղափոխվեցին Մեկկա քաղաքից Մեդինա:

³ Տե՛ս Justin McCarthy, *The Arab World, Turkey, and the Balkans (1878-1914): A Handbook of Historical Statistics* (Boston: G. K. Hall and Co., 1982), 13:

⁴ Տե՛ս Mesrob K. Krikorian, *Armenians in the Service of the Ottoman Empire 1860-1908* (London, Routledge & Kegan Paul Ltd, 1977), 63: Այլ տվյալներով Մերսինի սանջակը

կարգավիճակ է ստանում Համիդիեն (Ջեյհան), որը մինչ այդ նահիե էր⁵:

1900-ական թթ. սկզբներին Ադանայի վիլայեթը բաղկացած էր հինգ սանջակներից և քսան կազաններից.

1. Ադանայի սանջակ: Կազաներ (3)՝ Ադանա, Կարասը (Կարայիսսուլի), Համիդիե:
2. Ջեբել-Բերեքթեթի սանջակ: Կազաներ (6)՝ Ջեբել-Բերեքթեթ (կենտրոնը՝ Յարփուզ), Օսմանիե, Փայաս (Դորթ-Յուլ), Իսլահիե, Բախչե (Բուլանըղ), Հասսա:
3. Կոզանի սանջակ: Կազաներ (4)՝ Կոզան (Սիս), Կարս-Բազար, Հաճըն, Ֆեբե (Վահկա):
4. Մերսինի սանջակ: Կազաներ (2)՝ Մերսին, Տարսոն:
5. Իչելի սանջակ: Կազաներ (5)՝ Իչել, Էրմենակ, Մուրթ, Գյուլնար, Անամուր:

Նշված ժամանակաշրջանում Ադանայի վիլայեթի տարածությունը մոտ 39900 քառ. կմ էր⁶:

Հալեպի վիլայեթը կազմավորվել է 1866 թ. մարտին⁷:

1900-ական թթ. սկզբներին այն բաղկացած էր երեք սանջակներից և քսաներեք կազաններից.

1. Հալեպի սանջակ: Կազաներ (14)՝ Հալեպ, Այնթապ, Քիլիս, Բեյլան, Իսկենդերուն, Անթաքիա, Հարեմ, Ջիսր-ի Շուդուր, Իդլիբ, Մաարա, Բաբ, Մեմբիջ, Ջեբել-Սամաան, Ռաքքա:
2. Ուրֆայի սանջակ: Կազաներ (4)՝ Ուրֆա, Ռումկալե (Հոռմկլա), Սուրում, Բիրեջիկ:
3. Մարաշի սանջակ: Կազաներ (5)՝ Մարաշ, Ջեյթուն, Ալբիստան, Գյոքսուն (Կոկիսոն) և Բազարջըղ):

կազմավորվել է 1889 թ. (Sezen, *Osmanli Yer Adlari*, 548):

⁵ Sezen, *Osmanli Yer Adlari*, 154:

⁶ Տե՛ս 1903 *Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան Հիանդանցի Հայոց* (Կ.Պոլիս, տպ. Յ. Մառթնուեան, 1902), 191: Այլ տվյալներով՝ Ադանայի նահանգի տարածությունը մոտ 45000 քառ կմ էր (տե՛ս Եղիայեան, *Առանայի Հայոց պատմություն*, 139, 146):

⁷ Տե՛ս Astourian, "The Silence of the Land," 67, տե՛ս նաև Sezen, *Osmanli Yer Adlari*, 323:

4. Նշված ժամանակաշրջանում վիլայեթի տարածությունը մոտ
86600 քառ. կմ էր⁸:

1908 թ. իշխանության գալուց հետո, երիտթուրքերը փոփոխու-
թյուններ կատարեցին Օսմանյան կայսրության վարչատարածքային
բաժանման մեջ, որոնց հետևանքով, ի թիվս մյուսների, 1911 թ. (այլ
տվյալներով՝ 1912-1913 թթ. (իսլամական օրացույցի 1331 թ.)) Մարաշի
սանջակն առանձնացվեց Հալեպի վիլայեթի կազմից, սակայն ոչ թե
ընդգրկվեց Ադանայի վիլայեթի կազմի մեջ, այլ դարձավ առանձին՝
ինքնուրույն⁹ գավառ¹⁰:

Երիտթուրքական իշխանությունների վարչական վերաձևումների
հետևանքով նույն 1911 թ. Ադանայի վիլայեթի կազմից հանվեց և
ինքնուրույն սանջակի կարգավիճակ ստացավ Իչելը (տարածությու-
նը մոտ 9000 քառ. կմ)¹¹, իսկ Հալեպի վիլայեթի կազմից նույնպես
ինքնուրույն սանջակի կարգավիճակով դուրս բերվեց Ուրֆայի սան-
ջակը՝ մոտ 16000 քառ. կմ տարածությամբ¹² և հինգ կազաններով
(Ուրֆա, Բիրեջիկ, Ռաքքա, Սուրուճ, Խառան)¹³:

⁸ XIX դարի վերջերի - XX դարի սկզբների Ադանայի և Հալեպի վիլայեթների
վարչատարածքային բաժանման համար տե՛ս օրինակ «1903 Ընդարձակ Օրացույց Ս.
Փրկչեան Հիանդանոցի Հայոց», 191-192, ինչպես նաև այլ տարիների համար (1900-
1910 թթ.) «Ընդարձակ օրացույց»-ի համապատասխան բաժինները: Տե՛ս նաև Հրանտ
Խանճեան, *Աշխարհագրություն Օսմանյան պետության (Բարձրագույն դասընթացը)*,
Կ.Պոլիս, տպ. Յ. Մառթեղոսեան, 1912, 136 (Ադանա), 139 (Հալեպ), տե՛ս նաև Ա.
Պիպլեոճեան, *Օսմանյան պետություն* (Կ.Պոլիս, տպ. Արշակ Կարօեան, 1913), 7-8
(Ադանա), 14 (Հալեպ):

⁹ «Ինքնուրույն» կամ «անկախ» (թուրքերեն՝ *müstakil*) գավառները ենթարկվում էին
անմիջականորեն Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարությանը:

¹⁰ 1911-ը որպես Մարաշի գավառի՝ Հալեպի նահանգի կազմից առանձնացման
թվական նշում է հայ ուսումնասիրող Միհրան Մինասյանը (տե՛ս Միհրան Մինասեան,
«Աստիպ փաստաթուղթեր Կիլիկեան կոտորածներու օրերուն Մարաշի հայության
իրավիճակին մասին», *Համդէս ամսօրուայ, հայագիտական ուսումնասիրութ* (Վիեննա-
Երևան), 2017, յունուար-դեկտեմբեր, թիւ 1-12, 306, տե՛ս նաև Sezen, *Osmanli Yer Adlari*,
400), 1912-1913 թթ. (իսլամական օրացույցի 1331 թ.)՝ ամերիկացի ուսումնասիրող
Ջասթին Մըք-Քարթին (տե՛ս Justin McCarthy, *Muslims and Minorities*, 30):

¹¹ Տե՛ս Justin McCarthy, *The Arab World, Turkey, and the Balkans*, 23, Sezen, *Osmanli Yer Adlari*,
368, Karayan, *Armenians in Ottoman Turkey, 1914*, 111:

¹² Տե՛ս Պիպլեոճեան, *Օսմանյան պետություն*, 18:

¹³ Տե՛ս McCarthy, *The Arab World, Turkey, and the Balkans*, 22, Sezen, *Osmanli Yer Adlari*,

Օսմանյան իշխանությունները շարունակական փոփոխությունների էին ենթարկում նաև Ադանայի և Հալեպի վիլայեթների առանձին սանջակների և կազաների ներքին սահմանները: Մասնավորապես, XX դարի սկզբներին փոփոխություններ են կատարվում Ադանայի վիլայեթի Ջերեթ-Բերեքեթի սանջակի վարչական բաժանման մեջ. 1906 թ. սանջակի կենտրոնը Յարփուզ քաղաքից տեղափոխվում է Էրզին բնակավայր, Յարփուզի և Օսմանիեի կազաների տարածքները միացվում են իրար՝ Օսմանիե կենտրոնով: Համապատասխանաբար՝ Ջերեթ-Բերեքեթի սանջակի վարչական բաժանումը ստանում է հետևյալ տեսքը՝ Էրզին (կենտրոնական), Օսմանիե, Իսլահիե, Փայաս, Հասսա, Բուլանըղ (Բայսչե) կազաներ¹⁴:

1909 թ. դեկտեմբերին սանջակը ենթարկվում է նոր վարչական փոփոխությունների. վարչական կենտրոնը Էրզինից տեղափոխվում է Օսմանիե¹⁵, 1909 թ. Փայասի կազայի կենտրոնը Փայասից տեղափոխվում է հարևան Դորթ-Յոլ (Չորթ-Մարգպան) բնակավայր և գավառակը սկսվում է կոչվել իր կենտրոնի անունով, Փայասը նահիեի կարգավիճակով կցվում է Դորթ-Յոլին¹⁶: 1914 թ. Ջերեթ-Բերեքեթի սանջակի Դորթ-Յոլի կազայի կազմից դուրս է բերվում և առանձին կազայի կարգավիճակ է ստանում Յունուրթալիկի (Այաս) նահիեի տարածքը¹⁷:

713. տես նաև Karpat, *Ottoman population 1830-1914*, 182:

¹⁴ Տես Յ. Թեբեքան, *Ասունայի կեսաքը* (Կ.Պոլիս, 1909), 47:

¹⁵ Տես Mikail Kolutek, "Cebel-i Bereket sancak merkezinin erzin'den osmaniye'ye taşınmasına yapılan itirazlar." *Tokat Gaziosmanpaşa Üniversitesi Sosyal Bilimler Araştırmaları Dergisi. Sonbahar Özel Sayı* (2020), October, 149:

¹⁶ Տես Ebru Güher, "Arşiv belgeleriyle Cebel-i Bereket sancagi'nda 1915 yılındaki ermeni tehciri." *Avrasya Uluslararası Araştırmalar Dergisi* (November 2018), 242:

¹⁷ Տես Sezen, *Osmanlı Yer Adlari*, 822: 1914 թ. օսմանյան վիճակագրական ցուցակով Յունուրթալիկը կազայի կարգավիճակով ընդկրկված է Ադանայի սանջակի կազմում (տես *Tableaux indiquant le nombre des divers éléments de la population dans l'Empire Ottoman au 1er mars 1330 (14 mars 1914)* (Constantinople, 1919), 5): Յունուրթալիկը Ադանայի սանջակի կազմում է ներկայացված նաև Բ. Եղիայանի մոտ, որը որպես աղբյուր վկայակոչում է Է. Բրենոնի «Կիլիկիան 1919-1920 թթ.» ("La Cilicie 1919-1920") գրքին կից քարտեզի ցուցակը (տես Եղիայան, *Ասունայի Հայոց պատմություն*, 145): Կիլիկիահայության թվաքանակի մեր հաշվարկում մենք առաջնորդվել ենք 1914 թ. օսմանյան վիճակագրական ցուցակում առկա վարչական բաժանմամբ՝ Յունուրթալիկի սոլյախները ներառելով Ադանայի գավառի հաշվարկի մեջ:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության նախօրյակին Կիլիկիայի պատմաաշխարհագրական տարածքը բաժանված էր երեք առանձին վարչատարածքային միավորների՝ Ադանայի ու Հալեայի վիլայեթների և Մարաշի ինքնուրույն սանջակի միջև: Ադանայի վիլայեթը զբաղեցնում էր մոտ 30000 քառ. կմ տարածություն, բաժանված էր չորս սանջակների և տասնվեց կազանների.

1. Ադանայի սանջակ: Կազաներ (3)՝ Ադանա (կենտրոնական) (նահիեններ՝ Մնիս, Կարասնթը, Թուոլա, Կարաթաշ), Կարայիսալի (նահիեններ՝ Բոզանթը, Ղամըշլը, Չաթ-Ալան), Ջեյհան (Համիդիե) (նահիե՝ Սիրքենդ) (տարածությունը՝ 8000 քառ. կմ),
2. Կոզանի սանջակ: Կազաներ (4)՝ Կոզան (Սիս) (կենտրոնական) (նահիե՝ Սարքանթ), Հաճըն (նահիե՝ Մաղարա, Տափան), Ֆեքե (Վահկա) (նահիե՝ Ռում), Կարս-Բազար (նահիե՝ Չոխախ) (տարածությունը՝ 7000 քառ. կմ),
3. Ջերել-Բերեքեթի սանջակ: Կազաներ (6)՝ Ջերել-Բերեքեթ (Օսմանիե) (նահիեններ՝ Թեչիլի, Գայփակ, Յարփուզ), Դորթ-Յոլ (Չորք-Մարզպան) (նահիեններ՝ Էրզին, Փայաս), Իսլահիե (նահիե՝ Քեֆերթիս), Բախչե (Բուլանըղ) (նահիե՝ Հարունիե (Իսանի)), Հասսա, Յումուրթալիկ (Այաս) (տարածությունը՝ 7000 քառ. կմ),
4. Մերսինի սանջակ: Կազաներ (2)՝ Մերսին (կենտրոնական) (նահիեններ՝ Էրչել, Էֆրենկ, Էլվանլը), Տարսոն (նահիեններ՝ Չամալար, Նամրոն (Լամբրոն)) (տարածությունը՝ 8000 քառ. կմ)¹⁸:

Հալեայի վիլայեթը զբաղեցնում էր մոտ 44200 քառ. կմ տարածություն, բաժանված էր երեք սանջակների և տասնչորս կազանների.

¹⁸ Մեծ եղենի նախօրյակին Ադանայի վիլայեթի վարչական բաժանման համար տես McCarthy, *The Arab World, Turkey, and the Balkans*, 21, տես նաև Kemal H. Karpat, *Ottoman population 1830-1914: Demographic and Social Characteristics* (Wisconsin, The University of Wisconsin Press, 1985), 172: Գյուղականներն ըստ Եղիայեան, *Ասանայի Հայոց պատմութիւն*, 145, տարածություններն ըստ Karayan, *Armenians in Ottoman Turkey, 1914*, 95-112:

1. Հալեպի սանջակ: Կազաներ (8)՝ Հալեպ (կենտրոնական),
Բեյլան, Իսկենդերուն (Ալեքսանդրեթ), Անթաքիա (Անտիոք),
Ջիսր-ի Շուդուր, Իդլիբ, Բաբ, Հարեմ,
2. Այնթապի սանջակ: Կազաներ (3)՝ Այնթապ (կենտրոնական),
Քիլիս, Ռումկալե (Հոռմկլա),
3. Ջերբել Սամասնի սանջակ: Կազաներ (3)՝ Ջերբել Սամասն
(կենտրոնական), Մուարաթը-ինաման, Մեմբիջ¹⁹:


Մարաշի սանջակը զբաղեցնում էր մոտ 18400 քառ. կմ տա-
րածություն²⁰ և բաժանված էր հինգ կազաների՝

1. Մարաշ (կենտրոնական),
2. Ջեյթուն,
3. Ալբիստան,
4. Գյոքսուն (Կոկիսուն, Աստրուն)
5. Բազարջըղ²¹:

¹⁹ Մեծ եղեռնի նախօրյակին Հալեպի նահանգի վարչական բաժանման համար տես
McCarthy. *The Arab World, Turkey, and the Balkans*, 21. տես Karpas. *Ottoman population
1830-1914*, 172, Գալուստեան, *Մարաշ*, 30-31:

²⁰ Գալուստեան, *Մարաշ*, 35:

²¹ Նույն տեղում 31:



Քարտեզ Աղանայի վիլայեթի վարչական սահմանները 1900-ական թվականների սկզբների (Աղբյուր՝ Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 1. Ա-Արգինա (Երևան, 1974), էջ 69)

II. Կիրիլիայի տարածքի օստանյան վարչագիտական և նոսրիկական կիրիլիայական-թեմական բաժնատնաները (XIX դարի երկրորդ կես - 1914 թ.)

Ինչպես արդեն նշել էինք, XIX դարի վերջերին - XX դարի սկզբներին Ադանայի և Հալեպի նահանգների տարածքում գործող հայկական եկեղեցական թեմերը գտնվում էին Կիլիկիո կամ Սսի կաթողիկոսական աթոռի իրավասության տակ: Նշված տարածքի հայկական եկեղեցական-թեմական բաժանումը խայտաբղետ էր և շարունակական փոփոխությունների էր ենթարկվում: Մեծ եղեռնի նախօրյակին այն ուներ հետևյալ պատկերը.

1. Սսի կաթողիկոսական վիճակ (ընդգրկում էր Կոզանի գավառի Կոզան (Սիս) (կենտրոնական), Ֆեքե (Վահկա), Կարս-Բազար գավառակների տարածքը),

2. Ադանայի արքեպիսկոպոսական վիճակ (ընդգրկում էր Ադանայի նահանգի Ադանայի, Մերսինի և Իչելի գավառների տարածքը),

3. Փայասի (Բերեքեթ) եպիսկոպոսական վիճակ (ընդգրկում էր Ադանայի նահանգի Ջերել-Բերեքեթի գավառի տարածքը)²²,

4. Հաճընի եպիսկոպոսական վիճակ (ընդգրկում էր Ադանայի նահանգի Կոզանի գավառի Հաճընի գավառակի տարածքը),

5. Բերիայի եպիսկոպոսական վիճակ (պարունակում էր Հալեպի նահանգի Հալեպի գավառի Հալեպի, Իսկենդերունի և Բեյլանի գավառակների տարածքը)²³,

²² Նախքան 1904 թ. Ջերել-Բերեքեթի գավառի տարածքը և թեմը գտնվել է Ադանայի թեմի առաջնորդի իրավասության ներքո՝ որպես հարակից վիճակ, համապատասխանաբար՝ թեմը հիշատակվել է որպես Ադանա-Բերեքեթ (տես օրինակ *1900 Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի Հայոց* (Կ.Պոլիս, տպ. Յ. Մատթոսեան, 1899), 354): 1904 թ. Սահակ կաթողիկոսը որոշում է կայացրել փոփոխություն կատարել Ադանայի թեմի վարչական բաժանման մեջ՝ առանձնացնելով Բերեքեթը որպես եպիսկոպոսական վիճակ և այն ուղղակի դնելով Սսի մայրավանքի իրավասության տակ (տես Ա. Ալպոյանեան, «Առաջնորդական վիճակներ», *1908 Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի Հայոց* (Կ.Պոլիս, 1907), 334), սակայն նշված որոշումը որոշ ժամանակ գործնականում կյանքի չի կոչվել, ինչի պատճառով Ադանայի թեմը շարունակել է հիշատակվել որպես Ադանա-Բերեքեթի թեմ (տես *1905 Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի Հայոց* (Կ.Պոլիս, տպ. Յ. Մատթոսեան, 1904), 304, *1908 Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի Հայոց* (Կ.Պոլիս, տպ. Յ. Մատթոսեան, 1907), 253 և այլն): Ջերել-Բերեքեթի թեմում առանձնացվում էին Եփեսոս-Յարփուզը, Չորր-Մարգպանն իր գյուղերով և Հայ լեռն իր գյուղերով (Ամանոսի լեռնաշղթայի՝ Բախչե-Բուլանըղի և Մուսա լեռի հայաբնակ գյուղերը):

²³ XIX դարի վերջերի - XX դարի սկզբների որոշ ժամանակաշրջաններում թեմի իրավասության տակ է գտնվել նաև Քիլիսը, ինչի պատճառով թեմը աղբյուրներում

6. Գերմանիկեի²⁴ կամ Մարաշի արքեպիսկոպոսական վիճակ (պարունակում էր Մարաշի գավառի Մարաշի, Ալբիստանի և Բա-գարջըղի գավառակների տարածքները),

7. Ուլնիայի (Ջեյթուն) եպիսկոպոսական վիճակ (պարունակում էր Մարաշի գավառի Ջեյթունի գավառակը, բացառությամբ Ֆոնուսի),

8. Ֆոնուսի վանական թեմ (հարակից էր Ուլնիայի եպիսկոպոսական վիճակին, պարունակում էր Ջեյթունի գավառակի Ֆոնուսի գյուղախմբի, ինչպես նաև և Աստրունի (Կոկիսոն) գավառակի տարածքը)²⁵,

9. Այնթապի եպիսկոպոսական վիճակ (պարունակում էր Հալեպի նահանգի Այնթապի գավառի Այնթապի և Քիլիսի գավառակների տարածքը)²⁶,

10. Աստիոքի (Անթաքիա) եպիսկոպոսական վիճակ (ընդգրկում էր Հալեպի նահանգի Հալեպի գավառի Անթաքիայի, Ջիսր-ի Շուդուրի, ինչպես նաև Սահյունի²⁷ գավառակների տարածքը):

Բացի վերոնշյալ թեմերից՝ Կիլիկիո կաթողիկոսությանն էին ենթակա Մալաթիայի եպիսկոպոսական վիճակը (պարունակում էր Խարբերդի նահանգի Մալաթիայի գավառի տարածքը), Յոզղաթի եպիսկոպոսական վիճակը (Անգորայի նահանգի Յոզղաթի գավառ), Կյուրինի եպիսկոպոսական վիճակը (Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառի Կյուրինի, Թոնուսի և Ղանդալի գավառակներ), Տիվրիկի եպիսկոպոսական վիճակը (Սեբաստիայի

հիշատակվում է որպես Հալեպ-Իսկենդերուն-Քիլիսի թեմ (տե՛ս Ա. Ալաոյանեան, «Առաջնորդական վիճակներ», 1908 *Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան հիսամյակոնցի Հայոց* (Կ. Պոլիս, 1907), 335-336):

²⁴ Գերմանիկը (Germanicia Caesarea) Մարաշի հին հռոմեական անունն է՝ տրված ի պատիվ հռոմեական զորավար Հուլիոս Գերմանիկոսի (մ.թ.ա 15 թ. – մ.թ. 19 թ.):

²⁵ 1880-90-ական թթ. թեմի իրավասության տակ էին գտնվում հետևյալ հայաբնակ բնակավայրերը՝ Ֆոնուս, Պարոնենք, Պուդուրենք, Խուզուզենք, Կենչի (Ջեյթունի գավառակի տարածքում), Պունտուխ (Պունտուգ), Կապան, Կոկիսոն, Տեքիր-մենդերե (Դեիրմենդերե), Դաշուլք, Քիբեջ, Գյուլփունար, Շիվիլի (Աստրունի գավառակ), Ենիճեկալե (Մարաշի գավառակ) (տե՛ս Առաքելեան, *Ջեյթուն*, 49):

²⁶ Այլ տվյալներով՝ 1903 թ. և հետո Քիլիսը հիշատակվում է որպես Բերիայի (Հալեպ) թեմի միացված (տե՛ս օրինակ 1903 *Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան հիսամյակոնցի Հայոց* (Կ. Պոլիս, տպ. Յ. Մարթեմեսեան, 1902), 353):

²⁷ Գավառակ Բեյրութի նահանգի Լաթաքիայի գավառի կազմում:

նահանգի Սեբաստիայի գավառի նույնանուն գավառակ), Տարենտեի վանական թեմը (հարակից Կյուրինի եպիսկոպոսական վիճակին, պարունակում էր Սեբաստիայի գավառի Տարենտեի գավառակի տարածքը)²⁸: Կիլիկիայի պատմաաշխարհագրական տարածքից դուրս Կիլիկիո կաթողիկոսությանը ենթակա թեմերի գոյության հանգամանքը հանգեցրել է որոշակի վիճակագրական շփոթի, որին մենք արդեն անդրադարձել ենք նախորդիվ:

²⁸ Կիլիկիայի կաթողիկոսության իրավասության տակ գտնվող տարածքների թեմական բաժանման մասին տե՛ս Մաղաթիա Արք. Օրմանեան, *Հայոց եկեղեցին և իր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, գրականությունը ու ներկայ կացությունը* (Կ.Պոլիս, հրատարակիչը՝ Վ. Է. և Հ. Տեր-Ներսիսեան, 1911), 263-264: Կիլիկիո կաթողիկոսության առանձին թեմերի պատմությունը տե՛ս Ալպոյաճեան, «Առաջնորդական վիճակներ», *1908 Ընդարձակ Օրացոյց*, 324-344:

Կիլիկիո կաթողիկոսության իրավասության տակ գտնվող թեմերի առաջնորդներն ընտրվում էին նույն սահմանված կարգով, ինչ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի թեմերի առաջնորդները՝ Գավառական ժողովների կողմից՝ Կիլիկիո կաթողիկոսարանի հաստատմամբ և Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի վավերացմամբ: Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանը հոգ էր տանում նաև օսմանյան իշխանություններից թեմի առաջնորդի ընտրությունը հաստատող համապատասխան փաստաթղթի (բերաթ) ստացման համար (նույն տեղում, 332):

III. Կիլիկիայի տարածքում բնակվող այլ ազգությունների թվաքանակի և ընդհանուր ազգաբնակչության մեջ հայերի մասնաբաժնի հարցը

Հայոց ցեղասպանության նախօրյակին Կիլիկիայի տարածքում բացի հայերից բնակվում էին քրիստոնյա հույներ, ասորիներ, մուսուլման թուրքեր, արաբներ, քրդեր, չերքեզներ և այլն¹: Նշված էթնիկական խմբերի թվաքանակը հաշվարկելու հարցում մենք բախվում ենք տարբեր դժվարությունների, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Օսմանյան իշխանությունները հաշվառել են կայսրության բնակչությունը ոչ թե ըստ ազգությունների, այլ ըստ իրենց կողմից ճանաչված՝ որոշակի կարգավիճակով օժտված կրոնական համայնք-«միլեթ»ների: Դրա արդյունքում, թուրքերը, քրդերը, արաբները և այլ իսլամադավան ազգությունները

¹ 1896 թ. «Լուսն» գրական հանդեսում Կիլիկիայի մասին ակնարկի հեղինակ Բակ.-ը հաղորդում է, որ «Լեյժմ Կիլիկիա ունի հայ, յոյն, հրևայ, թուրք, թխորսէն, քիւրտ, արաբ (թէ մայիման և թէ նուասարի կամ նասայիրի ըստած), չերքեզ, բոշայ (չինկեանէ) և այլն ազգերէ խառնուող մը. ասոնց վրայ պէտք է աւելցնել ֆրանկներ (փրանկ՝ սյսիւնքն Երուսաղցի) մանասանդ ամերիկացիներ (միսիծնարներ), որ ոչ թէ իբր տեղացի, այլ տեղին մէջ իբր ծանրակշիռ դեր և դիրք ունեցող ոյժ մը» (տե՛ս Բակ., «Կիլիկիա», Լուսնայ, գրական հանդէս, գիրք Ա. (Տփղիս), 1896, յունուար, 89:

«Մշակ» թերթի խմբագրապետ Հ. Առաքելյանն իր «Ձեյթուն» ուսումնասիրության մեջ (1896 թ.) բաժանում է Կիլիկիայի տարածքում բնակվող ազգությունները «բնիկների» և «եկվորների»: Հեղինակը «բնիկ» է համարում հայերին, հույներին, քրդերին, հայուկ քրդերին (քրդացած հայեր), հայկական ծագում ունեցող պոզան ցեղին: «Եկվոր» տարր են կազմում, ըստ ուսումնասիրողի, թուրքմենները, ավշարները, թուրք-օսմանները, անսարի կամ նասայիրի արաբները, չերքեզները, նասարանիները («աղանդավոր» ասորիներ) և ղզլբաշները: Հ. Առաքելյանը նաև տալիս է հակիրճ տեղեկություններ նշված ազգությունների և էթնիկական խմբերի Կիլիկիայում հաստատման, բնակության տարածքի և թվաքանակի վերաբերյալ (տե՛ս Առաքելյան, *Ձեյթուն*, 40-44):

Հայ ուսումնասիրող Գրիգոր Գուտուլյանը որպես Կիլիկիայի տարածքում բնակվող ազգություններ նշում է հայերին, հույներին, թուրքերին, թուրքմեններին, քրդերին, չերքեզներին, պարսիկներին, ասորիներին և գնչուներին, հավելելով, որ մուսուլմանական բնակչության մեջ ամենախոշոր թիվն են կազմում թուրքմենները, որոնցից վարչազներ, յորյորներ, աֆշարներ, պոզան և հայուկ ցեղերը հայկական ծագում ունեն (տե՛ս Գրիգոր Գ. Գուտուլյան, *Կիլիկիան աշխարհագրութիւն պատկերազարդ և բարոխիստոր* (Կ.Պոլիս, տպագ. Պ. Պալըքճեան, 1922), 29):

օսմանյան վիճակագրության մեջ չեն առանձնացվել միմյանցից, ներկայացվել են «մուսուլմաններ» ընդհանուր անվան տակ (համեմատության համար՝ հայ ազգաբնակչության պարագայում օսմանյան վիճակագրությունը ներկայացրել է առաքելական, կաթոլիկ և բողոքական հայերի թիվն առանձին)²:

2. Հայկական վիճակագրական սկզբնաղբյուրները՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի և Կիլիկիո Հայոց կաթողիկոսարանի վիճակագրությունները, Կիլիկիայի պարագայում պարունակում են որպես կանոն միայն հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ՝ որևէ տեղեկություն չհաղորդելով այլ ազգությունների վերաբերյալ: Որոշակի բացառություն է կազմում Հայկական հարցի շուրջ ընթացող բանակցությունների համատեքստում Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից 1880 թ. սեպտեմբերի 7-ին մեծ տերությունների ուշադրությանը ներկայացված վիճակագրական աղյուսակը, որտեղ Արևմտյան Հայաստանի՝ բարեփոխումների ենթակա տարածքի մեջ ընդգրկված է նաև Մարաշի գավառը (Հալեպի նահանգ) և տրված է դրա ազգաբնակչության վիճակագրությունն ըստ առանձին ազգությունների³, ինչպես նաև Միացյալ հայկական պատվիրակության 1919-20 թթ. հուշագրերում և այլ գրություններում ներկայացված՝ ըստ առանձին ազգությունների Կիլիկիայի ազգաբնակչության վիճակագրությունները:
3. Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանը և Կիլիկիո Հայոց կաթողիկոսարանը իրականացրել են միայն հայ բնակ-

² Տե՛ս նաև Թաթոյան, *Արևմտահայության թվաքանակի հարցը*, 48-52:

³ Աղյուսակը տե՛ս Gustave Rolin-Jaequemyns, *Armenia, the Armenians, and the Treaties* (London, John Heywood, 1, Paternoster Buildings, E.C., 1891), 104, տե՛ս նաև *Turkey №1 (1896). Correspondence respecting the introduction of reforms in the Armenian Provinces of Asiatic Turkey* (London, 1896), 6): Վիճակագրությունը կազմվել է Բեռլինի պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից 1878-1880 թթ. կազմակերպված արևմտահայության հաշվառման արդյունքների հիման վրա (մանրամասն տե՛ս Թաթոյան, *Արևմտահայության թվաքանակի հարցը*, 78-87):

չության հաշվառում, հետևաբար՝ այդ կառույցների կազմած վիճակագրություններում (1880 թ. Մարաշի գավառ, 1919-1920 թթ. հուշագրեր) Կիլիկիայի տարածքում բնակվող այլ ազգությունների վերաբերյալ տվյալները վերցված են օսմանյան և դրանից սերվող արևմտյան վիճակագրություններից, հատկապես՝ հայտնի վիճակագրական սկզբնաղբյուրի՝ ֆրանսիացի վիճակագիր Վիթալ Բինեի «Ասիական Թուրքիա» աշխատությունից⁴: Ընդ որում, հայկական աղբյուրների և հեղինակների վերաբերմունքը Վ. Բինեի տվյալների նկատմամբ երկակի է. նրանք արդարացի քննադատության են ենթարկում ֆրանսիացի վիճակագրի՝

⁴ Ֆրանսիացի վիճակագիր Վիթալ Բինեի «Ասիական Թուրքիա» աշխատությունը XIX դարի վերջերին - XX դարի սկզբների Կիլիկիայի տարածքում բնակվող տարբեր ազգությունների մասին վիճակագրական տեղեկությունների հիմնական աղբյուր է, որից օգտվել են հայ և արևմտյան հեղինակները: Ուսումնասիրողը օսմանյան կառավարության հանձնարարությամբ 1880-ական թթ. շրջել է Փոքր Ասիայի և Արևմտյան Հայաստանի տարածքով՝ զբաղվելով բնակչության թվաքանակի և սոցիալ-տնտեսական վիճակին վերաբերող վիճակագրական տվյալների հավաքմամբ: Իր պրպտումների արդյունքները Վ. Բինեն ամփոփել է 1891-1894 թթ. հաջորդաբար հրատարակված բառահատոր «Ասիական Թուրքիա» աշխատության մեջ (տես Vital Cuinet, *La Turquie D'Asie: Géographie Administrative, Statistique, Descriptive Et Raisonnée De Chaque Province De L'Asie-mineure*, tome 1-4 (Paris, Ernest Leroux, 1890-1894): Ադանայի և Հալեայի նահանգին վերաբերող տվյալները ներկայացվում են աշխատության երկրորդ հատորում (1891, 1-107 (Ադանայի նահանգ), 108-301 (Հալեայի նահանգ)): Վ. Բինեն իր հաշվարկներում հիմնվում է օսմանյան կառավարությունից, տեղական իշխանություններից և կրոնական համայնքների ներկայացուցիչներից ստացված, ինչպես նաև օսմանյան տարեգրքերից (սալնամե) քաղված տվյալների վրա (տես Cuinet, *La Turquie D'Asie*, tome 2, 6-10 (Ադանայի նահանգում բնակվող էթնոկրոնական խմբեր), 115-131 (Հալեայի նահանգում բնակվող էթնոկրոնական խմբեր)):

Վ. Բինեյի տվյալները քննության են ենթարկվել հայ ուսումնասիրողներ Հայկազուն Գալստյանի և Սարգիս Կարայանի կողմից, որոնք կոնկրետ փաստերի վրա ցույց են տվել, որ ֆրանսիացի վիճակագիրը իրականից ցածր է ցույց տալիս հայերի թիվը (տես Հ.Հ. Գալստյան, «Արևմտյան Հայաստանի բնակչության ազգային կազմը ըստ Վիթալ Բինեի վիճակագրության», *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ*, XII, *Թուրքիա* (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985), 59-79 (Հայկազուն Գալստյանի կողմից Մարաշի, Ալբիստանի և Այնթապի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ Վիթալ Բինեի վիճակագրական տվյալների քննությունը տևեց նույն տեղում, 64-65), տես Sarkis Y. Karayan, "Vital Cuinet's La Turquie d'Asie: A Critical Evaluation of Cuinet's Information about Armenians", *Journal of the Society for Armenian Studies*, Volume 11, 2000, 53-63):

կիլիկիահայության թվաքանակի վերաբերյալ տվյալները, սակայն այլ՝ ավելի արժանահավատ աղբյուրների բացակայության պայմաններում ստիպված են ապավինել նրա վիճակագրությանը Կիլիկիայի տարածքում բնակվող այլ էթնոկրոնական խմբերի թվաքանակը ներկայացնելիս⁵:

4. Օսմանյան կայսրության ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ արևմտյան աղբյուրների վիճակագրական տվյալները որպես կանոն նույնպես սերվում են օսմանյան պաշտոնական և դրան ածանցյալ Վ. Քինեի տվյալներից: Կիլիկիայի իսլամադավան և կրոնական այլ համայնքներին պատկանող ազգաբնակչության պարագայում կախվածությունը օսմանյան վիճակագրությունից գրեթե բացարձակ է:

Վ. Քինեի և օսմանյան պաշտոնական վիճակագրական տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ օսմանյան վիճակագրությունը թերհաշվառել է ոչ միայն հայերին, այլ նաև Կիլիկիայի և Օսմանյան կայսրության այլ տարածքներում ապրող քրիստոնյա այլ հարանվանությունների ներկայացուցիչներին ևս: Ստորև ներկայացնում ենք Ադանայի նահանգի ընդհանուր ազգաբնակչության պատկերն ըստ 1881/82-1893 թթ. ընթացքում օսմանյան իշխանությունների կողմից անցկացված մարդահամարի և ֆրանսիացի վիճակագրի տվյալների (տե՛ս Աղյուսակ 1):

⁵ Տե՛ս օրինակ հայկական պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի 1920 թ. հունվարի 14-ով թվագրված «Կիլիկիայի նախապատերազմյան բնակչությունը» փոքրածավալ պամֆլետը, որտեղ նա քննադատության է ենթարկում Մարաշի և Չեյթունի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ ֆրանսիացի ուսումնասիրողի վիճակագրությունը՝ մինևույն ժամանակ օգտագործելով Կիլիկիայի տարածքում բնակվող այլ ազգությունների թվաքանակի վերաբերյալ Քինեի տվյալները (Nubar, *The Pre-War Population of Cilicia*, 3):

**Աղյուսակ 1. Ադանայի նահանգի բնակչությունն էթնոկրոնական
կազմն ըստ 1881/82-1893 թթ. օսմանյան մարդահամարի և
Ֆրանսիացի վիճակագիր Վիթալ Բինեի (1891 թ.) տվյալների**

		1881/82-1893 օսմանյան մարդահամար ⁶	1891 Բինե ⁷
Իսլամադավաններ	Օսմանցի թուրքեր	341376	93200
	Չերքեզներ		13200
	Քրդեր և թուրքմեններ		39600
	Ասորիներ և արաբներ		12000
	Այլ (պարսիկներ, աֆղանցիներ և այլն)		4400
Այլ կրոններ	Գնչուներ		16050
	Ֆելահներ, անասրիներ և այլ վաչկատուն ցեղեր		56 000
Քրիստոնյաներ	Ասորիներ	115	20900
	Առաբելական հայեր	44799	69300
	Կաթոլիկ հայեր	1653	11550
	Բողոքական հայեր	2144	16600
	Հույներ	6262	46200
	Մարոնիներ	-	4539
	Ընդհանուր գումար	396349	403539

Ինչպես կարող ենք տեսնել վերը բերված աղյուսակից՝ եթե
Ադանայի նահանգի ընդհանուր ազգաբնակչության թիվը երկու
սկզբնաղբյուրների մոտ գրեթե նույնն է (օսմանյան մարդահամար՝

⁶ Karpat, *Ottoman population 1830-1914*, 126-127:

⁷ Cuinet, *La Turquie D'asie*, tome 2, 5:

396349, Վ. Քինե՝ 403539), ապա առանձին էթնոկրոնական խմբերի թվաքանակի վերաբերյալ տվյալները էապես տարբերվում են: Այսպես, Վ. Քինեն Ադանայի նահանգի ազգաբնակչության իր հաշվարկում ներառում է 13 էթնոկրոնական խումբ, դրա համեմատ՝ օսմանյան վիճակագրությունը նշում է միայն 6 խումբ: Առանձին էթնոկրոնական խմբեր, որոնք ըստ ֆրանսիացի վիճակագրի ներկայություն ունեին Ադանայի նահանգում, ընդհանրապես դուրս են մնացել օսմանյան վիճակագրությունից (մարոնիներ, գնչուներ և այլն), այլ էթնոկրոնական խմբերի թվաքանակի վերաբերյալ (ասորիներ, հույներ, կաթոլիկ և բողոքական հայեր և այլն) օսմանյան և Վ. Քինեի տվյալների միջև տարբերությունը տասնապատիկ, անգամ հարյուրապատիկ է⁶:

Ֆրանսիացի ուսումնասիրողը վաչկատուն ցեղերին չի ներառում իսլամադավանների մեջ, ինչի արդյունքում Ադանայի նահանգում մուսուլմանները և քրիստոնյաները գրեթե հավասար թիվ են կազմում՝ համապատասխանաբար՝ 162400 և 169089 շունչ, մինչդեռ, օսմանյան վիճակագրության մեջ թուրքերը և մուսուլման այլ ազգությունները չեն առանձնացված միմյանցից և ներկայացված են որպես բացարձակ մեծամասնություն (մուսուլմաններ՝ 341376, քրիստոնյաներ՝ 54973):

Արժանահիշատակ է, որ համաձայն ֆրանսիացի ուսումնասիրողի վիճակագրության՝ էթնիկ (օսմանցի) թուրքերը կազմում են Ադանայի նահանգի ընդհանուր ազգաբնակչության մոտ մեկ չորրորդից պակաս թիվ, իսկ բոլոր հարանվանություններին պատկա-

⁶ Արժանահիշատակ է, որ ըստ հույն հեղինակների՝ Ադանայի նահանգի հույն ազգաբնակչության թիվն Առաջին աշխարհամարտի նախօրկային անգամ ֆրանսիացի վիճակագրի հաղորդածից ավել էր: Ըստ 1919 թ. Փարիզի խաղաղության վեհաժողովին հունական պատվիրակության կողմից ներկայացված ուսումնասիրության՝ այն մոտ 70000 էր (այս տվյալի համար աղբյուրը Կ.Պոլսի հունական պատրիարքարանի տվյալներն էին) (տես George Soteriadis, *An Ethnological Map Illustrating Hellenism in the Balkan Peninsula and Asia Minor* (London, Edward Stanford, Ltd., 1918), 15), ֆրանսիացի ուսումնասիրող Պիեռ Ռեդանը 1921 թ. լույս տեսած «Կիլիկիան և օսմանյան խնդիրը» գրքում Կիլիկիայում հույների թիվը հաշվում է 28000 (տես Pierre Redan, *La Cilicie et le problème ottoman* (Paris, 1921), 31), մինչդեռ ըստ 1914 թ. օսմանյան վիճակագրության՝ նահանգի տարածքում բնակվում էր ընդամենը 8537 հույն (տես Karpas, *Ottoman Population 1830-1914*, 172-173):

նող հայերը համեմատական մեծամասնություն են թուրքերի նկատմամբ (համապատասխանաբար՝ 97450 և 93200 շունչ)⁹:

Օսմանյան պաշտոնական վիճակագրության կողմից հայերի և քրիստոնյա այլ ազգությունների թերհաշվառման փաստը երևում է նաև Մարաշի գավառի ազգաբնակչության՝ 1914 թ. վերաբերող երկու աղբյուրների՝ օսմանյան կառավարության և ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խմբի¹⁰ պատրաստած վիճակագրությունների համեմատությունից (տե՛ս Աղյուսակ 2): Եթե ըստ օսմանյան վիճակագրության՝ Մարաշի գավառում քրիստոնյաներն ու այլ տարրերը միասին կազմում են ընդհանուր ազգաբնակչության մոտ 20%-ը, ապա ըստ ԱՄՆ փորձագիտական խմբի տվյալների՝ մոտ 30%-ը: Բացի դրանից, ըստ ԱՄՆ փորձագետների՝ թուրքերը Մարաշի գավառում միայն համեմատական մեծամասնություն են՝ կազմելով ընդհանուր ազգաբնակչության մոտ 39%-ը (համեմատության համար՝ հայերը՝ մոտ 26%):

Աղյուսակ 2. Մարաշի գավառի ազգաբնակչությունը 1914 թ. ըստ օսմանյան պաշտոնական և ԱՄՆ փորձագիտական խմբի վիճակագրական տվյալների

	1914 օսմանյան վիճակագրություն ¹¹	1914 ԱՄՆ փորձագիտական խումբ ¹²
Թուրքեր	152645	82000
Բողեր		56000
Մուսուլման արաբներ		8000

⁹ Ըստ Վ. Քինեի և այլ ուսումնասիրողների տվյալների՝ XIX դարի վերջերին - XX դարի սկզբներին Կիլիկիայի տարածքում բնակվող առանձին էթնոկրոնական խմբերի մասին տեղեկություններ տե՛ս նաև Կիլիկիա: Փորձ աշխարհագրության արդի կիլիկիոյ (Պետերբուրգ, տպ. Ի. Լիբերմանի, 1894), 39-49:

¹⁰ Կառույցի մասին ավելի մանրամասն կխոսվի հաջորդիվ:

¹¹ Տե՛ս Karpat, *Ottoman population 1830-1914*, 188:

¹² Տե՛ս Zamir, "Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919," 104:

III. Կիլիկիայի տարածքում բնակվող այլ ազգությունների թվաքանակի և ընդհանուր ազգաբնակչության մեջ հայերի մասնաբաժնի հարցը

Հույներ	34	1000
Հայեր	38433	55000
Մարոնիներ և կաթոլիկներ	1189	1000
Նեստորականներ և այլ քրիստոնյաներ	-	1000
Հրեաներ, գնչուներ և այլն	254	6000
Ընդհանուր գումար	192555	210000

Ինչպես արդեն նշել էինք՝ հայկական աղբյուրները հայերից բացի Կիլիկիայի տարածքում բնակվող այլ ազգությունների հաշվարկներում հիմնվում են Վ. Քինեի տվյալների վրա: Այսպես, Հայկական միացյալ պատվիրակության կողմից Փարիզի հաշտության վեհաժողովի ուշադրությանը ներկայացված հուշագրում հայկական ապագա պետությանը փոխանցման ենթակա Կիլիկիայի տարածքում (Ադանայի, Կոզանի, Ջերեկ-Բերեքեթի գավառներ, Մարաշի գավառ) հայերից բացի բնակվող այլ ազգությունների թվաքանակի վերաբերյալ տվյալների աղբյուրը նույնպես Վ. Քինեն է: Համաձայն հուշագրի՝ նշված տարածքում ընդհանուր ազգաբնակչության թիվը 490000 էր, որից հայեր՝ 205050, հույներ՝ 40000, ասորիներ՝ 41000, թուրքեր՝ 78000, քրդեր՝ 58000, լազեր, չերքեզներ, արաբներ՝ 20000, ղլբաշներ, եզդիներ, ֆելահներ՝ 48000¹³:

Կիլիկիայի (Ադանայի նահանգն ամբողջությամբ, Մարաշի գավառ, Հալեպի նահանգի Այնթապի գավառ) ազգաբնակչության թվաքանակի համար Պողոս Նուբարի «Կիլիկիայի նախապատերազմյան բնակչությունը» պրակում ներկայացված հաշվարկն է՝ օսմանյան թուրքեր՝ 131534, քրդեր և թուրքմեններ՝ 92512, չերքեզներ՝ 13200, արաբներ՝ 57516, ընդամենը մուսուլմաններ՝ 294762: Հույներ՝ 41370, քրիստոնյա ասորիներ՝ 29813, մարոնիներ, լատինադավաններ, քաղդեացիներ՝ 30090, հայեր (համաձայն Կ.Պոլսի

¹³ Տե՛ս *La Question Armenienne Devant la Conférence de la Paix, Annexe №2*:

Հայոց պատրիարքարանի 1912 թ. տվյալների՝ 407000, ընդամենը քրիստոնյաներ՝ 508273¹⁴:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ստիպված ենք փաստելու, որ մեզ հասու սկզբնաղբյուրները հնարավորություն չեն ընձեռում հանդես գալու Հայոց ցեղասպանության նախօրյակին հայերից բացի Կիլիկիայի տարածքում բնակվող այլ՝ հատկապես իսլամադավան առանձին էթնոկրոնական խմբերի թվաքանակի սեփական հաշվարկով: Դրա հետ մեկտեղ, հայ բնակչությունը Կիլիկիայի ընդհանուր ազգաբնակչության համատեքստում դիտարկելու, ընդհանուր ազգաբնակչության մեջ հայերի մոտավոր մասնաբաժնի մասին պատկերացում կազմելու համար տվյալ վարչական միավորի հայ ազգաբնակչության՝ մեր հաշվարկի արդյունքները ներկայացնելուց հետո առանձնացնում և ներկայացնում ենք նույն միավորում մուսուլմանների և այլ խոշոր էթնոկրոնական խմբերի թվաքանակի վերաբերյալ 1914 թ. օսմանյան վիճակագրության, առանձին դեպքերում նաև այլ կարևոր սկզբնաղբյուրներից (ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խումբ, Վ. Քինե) քաղված տվյալներ, որից հետո հայ բնակչության՝ մեր ստացած թվի և այլ ազգությունների համար՝ 1914 թ. օսմանյան վիճակագրության տվյալների գումարման միջոցով որոշվում է տվյալ վարչական միավորի ընդհանուր ազգաբնակչության թիվը և հաշվարկվում տվյալ վարչական միավորում հայերի մասնաբաժինը¹⁵:

¹⁴ Տեն Նուբար, *The Pre-War Population of Cilicia*, 3:

¹⁵ Անշուշտ, մենք գիտակցում ենք, որ նման մեթոդով կատարված հաշվարկը խոցելի է, բանի որ դրանով մենք կանխակալ (ապրիորի) ստիպված ենք ընդունել, որ հայերից բացի այլ էթնոկրոնական խմբերի համար 1914 թ. օսմանյան վիճակագրության տվյալները թիչ թե շատ մոտ են իրականությանը:

IV. 1909 թ. Ադանայի կոտորածների ժողովրդագրական հետևանքները

Հայոց ցեղասպանության նախօրյակին կիլիկիահայության թվաքանակի հարցի ուսումնասիրության համատեքստում անհնարին է շրջանցել 1909 թ. Ադանայի կոտորածների ժողովրդագրական հետևանքների հարցը: Նշված նպատակով, նախ, անհրաժեշտ է անդրադառնալ կոտորածներին զոհ գնացած հայերի թվաքանակի և ըստ Կիլիկիայի շրջանների զոհերի բաշխման հարցերին:

Ըստ Կիլիկիայի շրջանների՝ կոտորածներին զոհ գնացած հայերի վիճակագրություն է ներկայացված Օսմանյան խորհրդարանի պատգամավոր, խորհրդարանի կողմից Ադանայի կոտորածները հետաքննելու համար ստեղծված հանձնախմբի անդամ Հակոբ Պասիկյանի տեղեկագրում (1909 թ.)¹, գրող, հրապարակախոս Հակոբ Թերզյանի «Կիլիկիո աղետը» ուսումնասիրությունում (1912 թ.)², ինչպես նաև հայ ուսումնասիրող Բյուզանդ Եղիայանի «Ատանայի Հայոց պատմութիւն» աշխատությունում³: Ղոհերի թվաքանակի սեփական հաշվարկ է կատարել հայ հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ կուսակցության անդամ Աբրահամ Գյուլյանյանյանն իր «Ադանայի ջարդերը» հոդվածաշարում (հրատարակել է «Հորիզոն» թերթում (Թիֆլիս) 1910 թ. ընթացքում, հեղինակը հանդես է գալիս Erminio ծածկանունով)⁴: Նախքան 1909 թ. աղետը և դրանից հետո Կիլիկիայի մի շարք հայաբնակ բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ խիստ ուշագրավ տե-

¹ Տես Ատանայի եղեռնը. Տեղեկագիր Յակոբ Պասիկյանի (Օսմանեան երեսփոխան Էտիքնի), հայացուց՝ Յակոբ Սարգիսեան (Կ.Պոլիս, «Կիլիկիա» գրատուն, 1919), 48:

² Տես Յակոբ Յ. Թերզեան, Կիլիկիոյ աղետը. ականատեսի նկարագրութիւններ, 5 հատորով, (պատկերազարդ) (Կ.Պոլիս, 1912): Մենք օգտվել ենք գրքի՝ 1964 թ. վերահրատարակությունից (Յակոբ Յ. Թերզեան, Կիլիկիոյ աղետը (պատկերազարդ) (Պեյրոթ, 1964), 243-245:

³ Տես Եղիայեան, Ատանայի Հայոց պատմութիւն, 268:

⁴ Աբրահամ Գյուլյանյանի հոդվածաշարն ամբողջությամբ՝ Erminio, «Ադանայի ջարդերը», Հորիզոն (Թիֆլիս), 1910, №№ 22, 24, 27, 33, 39, 40, 42, 45, 47, 52, 54, 55, 56, 64, 66, 72, 73, հեղինակի՝ զոհերի թվի հարցին անդրադարձը՝ №№: 64, 66, 72, 73-ում:

ղեկություններ է պարունակում «Այրիախնամ հանձնաժողովի» քննիչ-պատվիրակ Ժակ Սայապալյանի տեղեկագիրը (1911 թ.)⁵:

Հ. Պապիկյանի և Հ. Թերզյանի վիճակագրություններն ունեն ընդհանրություններ, թեև Հ. Թերզյանը, որպես աղբյուր նշում է կոտորածները հետաքննելու նպատակով Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի Ազգային Վարչության կողմից ստեղծված Քննիչ Մասնախմբի տեղեկագիրը (այդ փաստաթուղթը մեզ գտնել չի հաջողվել)⁶: Բ. Եղիայանի վիճակագրությունը կազմված է վերոնշյալ երկուսի և այլ սկզբնաղբյուրների տվյալների հիման վրա (ցավոք, հեղինակը չի նշում իր կողմից օգտագործված աղբյուրները): Ա. Գյուլխանդանյանի հաշվարկն ինքնուրույն է՝ հիմնված մամուլից քաղված տարբեր տեղեկությունների վրա:

Ստորև ներկայացնում ենք Հ. Պապիկյանի, Հ. Թերզյանի, Ա. Գյուլխանդանյանի և Բ. Եղիայանի տվյալները համեմատական աղյուսակի տեսքով (Աղյուսակ 3):

⁵ Տե՛ս *Տեղեկագիր այրիախնամ Յանձնաժողովի. 1910 սևպո. 11- 1912 սևպո. 11: Յանկուած տեղեկագիր, քննիչ- պատուիրակ Պ. Ժագ Սայապալեանի (Ղալաթիա, տպարան «Շանթ», 1912):*

⁶ Տե՛ս Թերզեան, *Կիլիկիոյ սղէտը*, 243: Նշված տվյալները տարածում են ստացել Լան արևմտյան հեղինակների մոտ (տե՛ս օրինակ *Turkish Atrocities. The Young Turks and the Truth about Holocaust at Adana in Asia Minor, during april 1909. Written and compiled in April, 1911 by Ferriman Duckett* (London, 1913, Yerevan, 2009 (2nd edition)), 57):

Աղյուսակ 3. 1909 թ. Աղանայի կոտորածներին զոհ գնացած հայերի թիվն ըստ տարբեր հեղինակների հաշվարկների

	Վարչական միավոր	Պապիկյան ⁷	Թերգյան ⁸	Գյուլխանդանյան ⁹	Եղիայան ¹⁰
1	Աղանայի գավառ				
1.1	Աղանա քաղաք և շրջակա ագարակներ	9780	9780	6682 ¹¹	13913 ¹²
1.2	Թանկրը Վերդի	1280	1280		
1.3	Մսիս, Արդոլու, Սայ Կեչիտ	850	850		850
1.4	Կարայիսայի, Համիդիե, Կարաթաշ, Նալ-գուլագ, Իսա-Հանըլը	1558	1558		1558
	Ընդամենը Աղանայի գավառ	13468	13468	6682	16321

⁷ Առանայի եղեռնը. Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի, 48:

⁸ Թերգեան, Կիլիկիոյ աղէտը, 243-245:

⁹ Ermínio, «Աղանայի ջարդերը», Հորիզոն, 1910, №73:

¹⁰ Եղիայեան, Առանայի Հայոց պատմութիւն, 268:

¹¹ Այդ թվում տեղացիներ՝ 4825, դրսեցիներ՝ 1857:

¹² Այդ թվում Աղանայի թաղերի մեջ՝ 9780, խաների մեջ՝ 2762, շրջակայքի հայաբնակ գյուղեր՝ 1371:

IV. 1909 թ. Արամայի կոտորածների ժողովրդագրական հետևանքները

2	Ջերել Բերեքերի գավառ				
2.1	Օսմանիեի շրջանակ (Օսմանիե, Էրզին, Չորը- Մարգպան, Օճագլը, Յոզերլի, Նաճարլը)	1111	1171	5800 ¹³	1171
2.2	Էրբեզ- Էյնթիլիի շրջանակ (Հասսայի և Իսլահիեի գավառակների հայաբնակ բնակավայրեր)	1277	1577		1577
2.3	Քուրտլարի (Հասսաբեյլի- Բախչե) շրջանակ	3623	2623		2623
	Ընդամենը Ջերել- Բերեքերի գավառ	6011	5371	5800	5371
3	Տարսոնի գավառ	-	-	-	642
4	Կոզանի գավառ	-	-	967 ¹⁴	-

¹³ Այդ թվում՝ 4542 տեղացի, 1258 դրսեցի:

¹⁴ Այդ թվում՝ 488 տեղացի, 479 դրսից եկած հայ:

5	Մարաշի գավառ	-		777 ¹⁵	783
6	Անտիոքի. Բեյլանի (Գըրըզ խան) և Ջիսր է Շուդուրի գավառակներ		1151	1650 ¹⁶	368
	Ընդհանուր գումար	19479	19990	15876 ¹⁷	23485

Այսպիսով, համաձայն Ադյուսակ 2-ում ներկայացված աղբյուրների՝ 1909 թ. Ադանայի կոտորածներին զոհ է գնացել շուրջ 16000 (Ա. Գյուլխանդանյան), 20000 (Հ. Պապիկյան, Հ. Թերզյան) կամ 24000 (Բ. Եղիայան) հայ: Առավել մեծ թվով մարդկային կորուստներն արձանագրվել են Ադանա քաղաքում և Ադանայի գավառի հայաբնակ բնակավայրերում՝ (Հ. Պապիկյան, Հ. Թերզյան՝ 13468 մարդ (զոհերի ընդհանուր թվի 67-69%), Ա. Գյուլխանդանյան՝ 6682 մարդ (42%), Բ. Եղիայան՝ 16321 մարդ (69%): Չոհերի թվով հաջորդը Ջերել-Բերեքթեթի գավառն է (Հ. Պապիկյան՝ 6011 մարդ (31%), Հ. Թերզյան՝ 5371 մարդ (27%), Ա. Գյուլխանդանյան՝ 5800 մարդ (36,5%), Բ. Եղիայան՝ 5371 մարդ (23%)): Ընդամենը զոհերի մոտ 95%-ը (19,479 (Հ. Պապիկյան), 18839 (Հ. Թերզյան), 12482 (Ա. Գյուլխանդանյան) և 21692 (Բ. Եղիայան) բաժին է ընկնում Ադանայի նահանգին: Վերոնշյալ տվյալներից հետևում է, որ ջարդերի ժողովրդագրական հետևանքները իր վրա առավելապես կրել է կամ պետք է առավելապես կրեր Ադանայի նահանգի Ադանայի և Ջերել-Բերեքթեթի գավառների հայ բնակչությունը:

¹⁵ Այդ թվում՝ 443 տեղացիներ. 334-ը դրսից եկած աշխատավորներ:

¹⁶ Այդ թվում՝ 1150-ը տեղացիներ, 500-ը դրսից եկածներ:

¹⁷ Այդ թվում՝ 4428-ը դրսից: Չոհերի թիվը Ա. Գյուլխանդանյանը կլորացնում է մինչև 15000-ի. ավելացնում դրան մոտ 8000 զոհ ջարդերից հետո սովից, հիվանդություններից և անօթևան վիճակից, ինչպես նաև մոտ 500 հոգի առևանգված, իսկամ ընդունած և/կամ անհայտ կորած՝ հասցնելով Ադանայի կոտորածների զոհերի համագումար թիվը 23500-ի:

Կոտորածներին զոհ գնացածների թվաքանակի հարցում մենք նույնպես բախվում ենք նույն խնդրին, ինչ կիլիկիահայության թվաքանակի հարցի պարագայում, որն է՝ օսմանյան և հայկական վիճակագրական տվյալների միջև առկա տարբերությունը: Հայկական տվյալների համեմատ, օսմանյան իշխանությունների կողմից հաղորդվող զոհերի թիվը շուրջ 4-5 անգամ ցածր է: Այսպես, Հ. Պապիկյանի զեկուցագրում ներկայացվող տվյալների համաձայն՝ երիտթուրքական կառավարությունը պաշտոնապես հայտարարել էր 6000 զոհի մասին, ներառյալ 1900 իսլամադավաններ¹⁸:

Համաձայն 1909 թ. օգոստոսին շրջանառության մեջ դրված օսմանյան պաշտոնական ցուցակի՝ կոտորածին զոհ էր գնացել 5243 քրիստոնյա, այդ թվում Ադանա քաղաքում՝ 2740, որից 2093-ը հայ, գավառի այլ շրջաններում՝ 422 (Համիդիե՝ 378, Կարայիսալի՝ 44), Ջերեկ-Բերեքեթի գավառում՝ 1415 (Բալսչե՝ 752, Օսմանիե՝ 372, Էրզին՝ 208, Իսլահիե՝ 50, Հասսա՝ 33), Մերսինի գավառում՝ 476 (Տարսուն՝ 463, Էլվանլը՝ 13), Կոզանի գավառում՝ 190 (Սիս՝ 114, Հաճըն՝ 14, Կարս Բազար՝ 60, Ֆեքե (Վահկա)՝ 2)¹⁹:

Ըստ մեկ այլ օսմանյան խորհրդարանական քննիչ հանձնաժողովի տվյալների՝ օսմանյան պաշտոնական գրանցամատյաններում արձանագրվել էր կոտորածների ընթացքում զոհված 4196 քրիստոնյայի և 1487 իսլամադավանի (ներառյալ ոստիկաններ և զինվորներ) անուն²⁰: Մամուլում նաև շրջանառվում էր օսմանյան կառավարության կողմից հրապարակված մեկ այլ տվյալ՝ 5538 սպանված, որից 3502 քրիստոնյա, 2036 մուսուլման²¹: Այսպիսով, ըստ օսմանյան տվյալների՝ ջարդերի հետևանքով հայերի մարդկային կորուստները կազմում էին առավելագույնը շուրջ 5000 շունչ, զոհերի առավել մեծ թիվը նույնպես բաժին էր ընկնում Ադանայի և Ջերեկ-Բերեքեթի գավառներին:

¹⁸ Տե՛ս Պապիկյան, *Ասումայի եղևուղ*, 17:

¹⁹ Տե՛ս Raymond H. Kévorkian, *La Cilicie (1909-1921) de Massacres d'Adana au mandat français* (Paris, Revue d'histoire arménienne contemporaine, 1999), 100:

²⁰ Տե՛ս Fuat Dundar, *Crime of numbers: The Role of Statistics in the Armenian Question (1878-1918)* (Transaction Publishers, 2010), 144:

²¹ Տե՛ս Erminio, «Ադանայի ջարդերը», *Հորիզոն*, 1910, № 64:

Հատկանշական է, որ օսմանյան իշխանությունները փորձում էին հիմնավորել կոտորածին զոհ գնացած հայերի սեփական ցածր թվերը նաև ընդհանուր ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ օսմանյան վիճակագրության վկայակոչմամբ. ըստ օսմանյան պաշտոնյաների՝ հայ և օտար լրագրերում շրջանառվող 20000-30000 կորուստների թիվը երևակայական է, քանի որ Ադանայի նահանգի ամբողջ հայ բնակչության թիվը 48000, նույնիսկ ավելի ցածր՝ 40000 էր²²:

Հակադարձելով նշված պնդումներին և հիմնավորելով զոհերի ավելի բարձր թիվը՝ Ա. Գյուլխանդանյանը մատնանշում է հետևյալ հինգ հանգամանքները.

1. Օսմանյան կայսրությունում վիճակագրության հավաքման համակարգի անկատարությունը և զոհերի ցածր թիվ ցույց տալու հարցում օսմանյան իշխանությունների շահագրգռվածությունը՝ ընդգծելով, որ *«նամանաանդ այս դեպքում կառավարության ձգտումները տրամագծորեն հակառակ են ճշմարտությանը որոնողների ցանկության»*,
2. Չոհերի մեծ մասի՝ առանց եկեղեցական ծեսերի թաղվելը և դրա հետևանքով եկեղեցական գրանցամատյաններում նրանց չգրանցելը և չցուցակագրելը,
3. Շատ հայերի սպանվելն ու գերեզման գտնելը բնակավայրերից դուրս՝ *«դաշտերում, ձորերում, անտառների խորքերում, ծովի գրկում, գետի յատակին, մոխրակոյտների և անյայտության մեջ»*,
4. Ջարդերից հետո բազմաթիվ վերապրած հայերի փախուստը այլ շրջաններ և այդ փախստականներից շատերին սպանվածների կամ անհայտ կորածների թվում հաշվելը,
5. Ադանայի ջարդի օրերին Օսմանյան կայսրության այլ շրջաններից բազմաթիվ պանդուխտների Կիլիկիայում՝ հատկապես Ադանայի նահանգի տարածքում գտնվելը և կոտորածների ընթացքում այդ *«անտուն-անտէր բանտրների»* ջարդարարների հիմնական թիրախ լինելը²³:

²² Տե՛ս Միմոնյան, *Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում*, 202:

²³ Տե՛ս Erminio, «Ադանայի ջարդերը», Հորիզոն, 1910, № 64: Դրա հետ մեկտեղ, նշված

Հ. Պապիկյանը հակադարձում է օսմանյան պաշտոնական տվյալներին երկու հիմնական փաստարկների միջոցով. առաջինը՝ զոհերի պաշտոնական հաշվարկը հիմնված է օսմանյան տոմարների տվյալների վրա, որոնք «չէն կրնար ներկայսմանսլ իբրև հաստ ընծայուելիք սղբիւրներ», նամանավանդ այն պարագայում, երբ իշխանություններն ուղղակի շահագրգռված էին և ամեն տեսակ միջոցների դիմեցին՝ քրիստոնյա զոհերի իրական թիվը թաքցնելու համար, և, երկրորդը, պաշտոնական հաշվարկը չի ներառել Ադանա նահանգում աշխատող պանդուխտ հայերն:

Հեղինակը արձանագրում է, որ ջարդերը տեղի են ունեցել գարնանը, այսինքն՝ «աշխատանքի և առուտորի ամենէն կողմը շրջանին», երբ Ադանա քաղաքում և նահանգում է հավաքվում Փոքր Ասիայի և Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգներից, անգամ՝ Մուշից և Մոսուլից եկած օրավարձով աշխատող մոտ 40-50 հազար պանդուխտ բանվորներ, ինչպես նաև արհեստավորներ և վաճառականներ, որոնցից առնվազն կեսը հայեր էին²⁴:

Չարգացնելով իր այս փաստարկը՝ Հ. Պապիկյանը վկայակոչում է ջարդերից անմիջապես հետո Ադանայի կուսակալի պաշտոնում նշանակված Ջիհնի փաշայի հետ խոսակցությունը: Օսմանյան պաշտոնյան սկզբում պնդում էր, թե անկարելի է ընդունել, որ Ադանա քաղաքում հայ զոհերի թիվը կարող է հասնել 15000-ի, քանի

հանգամանքները, ըստ Ա. Գյուլյանդանյանի, մասամբ չեզոքացվել են և զոհերի թվաքանակի քիչ թեշատ իրականությանը մոտ հաշվարկի հնարավորություն է ստեղծվել Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի, տարբեր մարդասիրական նպաստամատույց ընկերությունների կողմից Կիլիկիա ուղարկված հանձնաժողովների, տեղական կրոնական կառույցների կողմից հավաքված տվյալների, ինչպես նաև մամուլում լույս տեսած բազմաթիվ «*chaun ni khotur*» տեղեկությունների միջոցով (նույն տեղում):

²⁴ Պապիկյան, *Ասումայի եղունք*, 18: Միայն Ադանայի գավառը ամեն տարի ընդունում էր 12000-ից 15000 պանդուխտի, որոնք գրադվում էին բամբակը կլպելու և մաքրելու գործով (տես «Ատանա», *Տամանակ, ժողովրդական օրաթերթ* (Կ.Պոլս), 1909, 10/23 ապրիլ, Ա. Տարի, թիւ 147): Հ. Թերզյանը հաղորդում է Ադանայի գավառ եկած պանդուխտների թիվը փոփոխական էր տարվա եղանակի համեմատ և միջին հաշվով 20000 էր կազմում: Այս թիվը ձմռան ամիսներին ավելանում էր Կիլիկիայի այլ շրջաններից և հարակից տեղերից (Հաճըն, Մարաշ, Կեսարիա և այլն) եկած արհեստավորներով ու մանրավաճառներով, և գարնանն էլ ավելի կավելանար Արևմտյան Հայաստանից (Խարբերդ, Տիգրանակերտ, Դիարբեքիր), Մուշ, Էրզրում և այլ շրջաններ) եկած հայ և քուրդ մշակներով (տես Թերզյան, *Ասումայի կեսնք*, 6):

որ, ըստ օսմանյան պաշտոնական վիճակագրության, Ադանա քաղաքում 13000-ից ավել հայ չէր ապրում, սակայն նա տեղի է տալիս, երբ օսմանյան խորհրդարանի հայազգի պատգամավորը հիշացնում է, որ ավելի վաղ կուսակալը որպես հաջողություն էր ներկայացնում կոտորածները վերապրած և Ադանա քաղաքի երկաթուղային կայարանի մոտ վրաններում ծվարած մոտ 10000 հայ պանդուխտներին տուն ճամփելը²⁵:

Ա. Գլուխանդանյանը հաղորդում է 1909 թ. ջարդերի նախօրյակին Ադանայի նահանգի տարածքում 20000-30000 հայ պանդուխտների առկայության մասին՝ ավելացնելով, որ դաշտային աշխատանքների օրերին ամենահեռավոր վայրերից՝ մինչև անզամ Մուշի շրջանից եկվոր բանվորները աշխատում էին թե հայ հարուստ գյուղացիների և թե մուսուլման կավածատերերի չիֆթլիկ-ագարակներում²⁶:

1909 թ. Ադանայի եղեռնի ականատես Համբարձում Աշճյանս իր հուշերում նույնպես վկայում է, որ ամեն տարի գարնանը Թուրքիայի տարբեր նահանգներից Ադանա էին գալիս շուրջ 40000-50000 մշակներ, ինչի պատճառով ջարդերից առաջ Ադանա քաղաքում և գավառի տարածքում 100000-ից ավելի հայ կար (ներառյալ մշտական հայ բնակչությունը): Ըստ հեղինակի՝ կորուստն էլ նույն համեմատությամբ է եղել՝ վնասելով նաև ուրիշ նահանգների հայ բնակչությանը²⁷:

Ադանա քաղաքում ջարդերի առաջին ալիքի ժամանակ (1909 թ. ապրիլի 1(14) - 4(18)) ջարդարարների առաջնային թիրախներից մեկը շուկաներն ու պանդոկ-խաներ-իջևանատներն էին (Աճեմ-խան, Դուզ-խան, Հայդաչ-Օղլու-խան, Դելի-Մեհմեդ-խան և այլն), որտեղ բնակվում էին դրսից եկած հայ վաճառականներն ու արհեստավորները: Ըստ հայկական քննիչ հանձնաժողովներից մեկի վիճակագրության՝ խաներում սպանվածների թիվը 2762 էր (համեմատության համար՝ ըստ նույն վիճակագրության, Ադանա

²⁵ Պապիկեան, *Ասումայի եղեռնը*, 18:

²⁶ Տեն Էրմինյո, «Ադանայի ջարդերը», *Հորիզոն*, 1910, № 64:

²⁷ Տեն Համբարձում Աշճեան, *Ասումայի եղեռնը և Գոնիսպե յուշեր (պատմության համար)* (Միո Եորթ, «Կոնսակ» տպարան, 1950), 15:

քաղաքի մշտական հայ բնակչությունից զոհվել էր 3974 շունչ, այսինքն՝ զոհվածների մոտ 41%-ը պանդուխտներ էին)²⁸:

Պանդուխտները գերակշիռ մաս էին կազմում նաև Ադանայի գավառի գյուղական բնակավայրերում ջարդերին զոհ գնացած հայերի թվի մեջ (ըստ տարբեր հաշվարկների՝ այն 1280²⁹ կամ 1371³⁰ էր): Այսպես, սպանվել էին Ադանա քաղաքից մոտ 3 ժամ (15 կմ) հեռավորության վրա գտնվող ագարակներում աշխատող մոտ 200 հայ բանվորներից 194-ը, 66 տուն մշտական հայ բնակչություն ունեցող Աբդոլու գյուղում սպանվել էր 180 տեղացի և 242 դրսեցի հայ, 60 տուն մշտական հայ բնակչություն ունեցող Շեյխ Մուրադ բնակավայրում սպանվել էր մոտավորապես 200 հոգի, ամբողջությամբ կոտորվել էին Գաթը-քոյ մուսուլմանաբնակ գյուղում բնակվող և աշխատող 10-15 տուն պանդուխտ հայերը, Ադանայի շրջակա ագարակներից Ամիր-Թաթմանում աշխատող 188 պանդուխտներից (20 հույն և 168 հայ), սպանվել էր 180-ը և այլն³¹:

Ընդհանուր առմամբ, համաձայն հայ ուսումնասիրողների տարբեր հաշվարկների՝ Ադանայի ջարդերի ընթացքում սպանվել էր 5000-ից 10000 հայ պանդուխտ: Այսպես, ըստ Ա. Գյուլսանդանյանի հաշվարկի՝ Կիլիկիայի տարածքում 1909 թ. տեղի ունեցած կոտորածներին զոհ էր գնացել մոտ 15000 հայ, որից մոտ 4500-5000-ը, այսինքն՝ սպանվածների ընդհանուր թվից մոտ մեկ երրորդը դրսից եկած հայեր էին³²:

Ըստ Հ. Պապիկյանի՝ կոտորվել էր այլ շրջաններից Ադանայի նահանգ եկած մոտ 20-25 հազար հայերի մեծ մասը (մոտ 10000)³³:

Ըստ Հ. Շահպազյանի հաշվարկի՝ Ադանայի գավառում կո-

²⁸ Տեն Յ. Շահպազեան, «Ինքնապաշտպանութիւնը Կիլիկեան աղէտին մէջ», *Ազատամարտ*, օրթերթ (Կ.Պոլիս), 1910, 2/15 ապրիլ, №249: Հետագայում այս տվյալներն օգտագործել է Յ. Թերզյանը և այլ հեղինակներ (տե՛ս Թերզեան, *Կիլիկիոյ աղէտը*, 137, տե՛ս նաև Եղիայեան, *Ասամայի Հայոց պատմութիւն*, 232):

²⁹ Տեն Շահպազեան, «Ինքնապաշտպանութիւնը Կիլիկեան աղէտին մէջ»:

³⁰ Տեն Թերզեան, *Կիլիկիոյ աղէտը*, 137:

³¹ Տեն Ermínio, «Ադանայի ջարդերը», *Հորիզոն*, 1910, № 64:

³² Տեն Ermínio, «Ադանայի ջարդերը», *Հորիզոն*, 1910, № 73:

³³ Տեն Պապիկեան, *Ասամայի եղևույթ*, 18:

տորածներին զոհ էր գնացել 8147 հայ, որից մոտ 3500-ը պանդուխտներ: Հեղինակը նաև հաղորդում է, որ Աղանայի նահանգի այլ շրջաններում զոհվել է 10293 հայ, ծանոթագրության մեջ արձանագրելով, որ սպանվածների ճշտող մեծամասնությունը պանդուխտներ էին. «Տաճկաքնակ գիողերը և ուրիշ տեղերը սպաննուած հայ պանդուխտները կորսուած են 254 գիողերու մէջ...: Այս ջարդուածները բոլոր մշակներ և նուազ մասով արուեստարուներ են. Հաճընցի, Խարքերդցի, Կապանցի, Ֆրնուզցի, Կարնեցի, Էվերեկցի, Երեւ-պագանցի, Անտիոքցի, Կեափուր-Տաղցի, Կէմերեկցի, Սվազցի, Ատիամանցի, Պէննիցի, Մալաթիացի, Սղերդցի, Ուրֆացի, Մուշցի, Ալպիստանցի, Տիվրիկցի, Ուրֆացի ևն»³⁴:

Հայկական պատմագրության մեջ 1909 թ. կոտորածներին զոհ գնացած հայերի թիվն ընդունված է ներկայացնել 25000-30000-ի սահմաններում, նույնիսկ ավել³⁵, ինչը, մեր կարծիքով, չափազանցություն է՝ հիմնված սկզբնաղբյուրների սխալ մեկնաբանման արդյունքների վրա: Այսպես, Ա. Համբարյանը ճշմարտության մոտ է համարում մեր կողմից արդեն հիշատակված Հայոց ազգային վարչության քննիչ մասնախմբի տեղեկությունները, որոնց համաձայն զոհերի թիվը 22512 է, այդ թվում՝ 18839 հայ, 1250 հույն, 850 ասորի և 422 քաղղեացի: Սակայն ուսումնասիրողը պնդում է, որ այս վիճակագրության մեջ հաշվված չեն հայ պանդուխտ-մշակները կամ արտագնաց-գյուղացիները: Ըստ ուսումնասիրողի՝ նրանք չէին գրանցված որևէ տեղ և, հետևաբար, չէին կարող հաշվի առնվել Հայոց ազգային վարչության քննիչ մասնախմբի կողմից: Ուսումնասիրողը քննիչ մասնախմբի տվյալին գումարում է եկվոր համ մշակ զոհերի թիվը՝ 10000-15000՝ հասցնելով կոտորված հայերի թիվը 30000-ի³⁶: Ավելորդ է նշել, որ Հայոց ազգային վարչության քննիչ մասնախմբի հաշվարկում արդեն իսկ ներառված են պան-

³⁴ Շահպագեան, «Ինքնապաշտպանութիւնը Կիլիկեան աղէտին մէջ»:

³⁵ Տեն մասնավորապես Համբարյան Ա.Ս., «Կիլիկիայի 1909 թ. հայկական կոտորածները», Պատմա-քանասիրական հանդես (Երևան), 1988, №4, 24-25, Ռուբեն Գասպարյան, Կիլիկիահայությունը 20-րդ դարի սկզբին (Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ին-տ, Հայագիտակ, 1999 թ), 43-46, Kévorkian, *La Cilicie (1909-1921)*, 101:

³⁶ Տեն Համբարյան Ա.Ս., «Կիլիկիայի 1909 թ. հայկական կոտորածները», 25:

դուխտ մշակները, ինչը երևում է վիճակագրության բացվածքը քննելու միջոցով:

Մեկ այլ հայ ուսումնասիրող՝ Ա. Բաբլումյանը, կիլիկյան կոտորածների արդյունքում սպանված հայերի թիվը հաշվում է 30000-ից ավել, որից 18627-ը՝ միայն Ադանայում և շրջակա բնակավայրերում (ըստ երևույթին, նկատի է առնված զուտ Ադանայի գավառի տարածքը), 10000-ից ավելի՝ այլ բնակավայրերում³⁷: Մենք արդեն ցույց ենք տվել, որ ըստ սկզբնաղբյուրների, 18000-19000 զոհերի թիվը վերաբերվում է ոչ թե զուտ Ադանայի գավառին, այլ Ադանայի նահանգին ամբողջությամբ:

Հակառակ զոհերի թվաքանակի վերաբերյալ օսմանյան և հայկական աղբյուրների կողմից հաղորդվող տվյալների միջև առկա մեծ տարբերությանը՝ կոտորածներից առավելապես տուժած Ադանայի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ կոտորածներից առաջ և հետո օսմանյան և հայկական վիճակագրությունների համեմատությունը վկայում է այն մասին, որ կոտորածները չեն հանգեցրել նշված տարածքում հայկական ներկայության շոշափելի նվազմանը:

Այսպես, 1906/07 թթ. և 1914 թ. օսմանյան վիճակագրության համեմատությունը ցույց է տալիս, որ Ադանայի նահանգի հայ բնակչությունը նշված ժամանակաշրջանում աճել է շուրջ 5%-ով, ընդ որում՝ ջարդերից առավել տուժած Ադանայի գավառի բնակչությունը՝ շուրջ 8%-ով: Ջերել Բերեքթի գավառում, որտեղ, ըստ հայկական տվյալների, կոտորածի զոհերի թիվը մոտ 6000 էր, այսինքն՝ օսմանյան վիճակագրության կողմից գրանցված հայ բնակչության մոտ կեսը, 1907-ից առ 1914 թվականներն ընկած ժամանակաշրջանում բնակչությունը նվազել է մոտ 1%-ով: Օսմանյան վիճակագրությունը հայերի ներկայության առավել մեծ նվազումն արձանագրել է Մերսինի գավառում. 1914 թ-ին, 1907-ի համեմատ, այնտեղ հայ բնակչությունը պակասել է 1127 շնչով կամ մոտ 21%-ով (տե՛ս Աղյուսակ 4):

³⁷ Տե՛ս Արփինե Բաբլումյան, «1909թ. Ադանայի և Հալեպի վիլայեթներում տեղի ունեցած կոտորածների ժողովրդագրական հետևանքները», *Տեղապատմագիտական հանդես* (Երևան), 2013, I(1), 17:

Աղյուսակ 4. Ադանայի նահանգի հայ բնակչության թիվն ըստ օսմանյան կառավարության 1906/7 և 1914 թթ. վիճակագրական տվյալների

№	Վարչական միավոր	1906/07 (շունչ) ³⁸	1914 (շունչ) ³⁹	Հավելած /սվազում, %
1	Ադանայի գավառ	16325	17738	+ 7.9
2	Մերսինի գավառ	5391	4264	- 20.9
3	Ջերեյ Բերեքեթի գավառ	14132	13920	- 0.9
4	Կոզանի գավառ	18854	21556	+14.3
	Ընդամենը Ադանայի նահանգ	54702	57478	+5

Հայկական եկեղեցական-թեմական աղբյուրների հիման վրա կազմված 1902 թ. (Մ. Օրմանյան) և 1913 թ. («Մշակ») վերաբերող վիճակագրական տվյալների համեմատությունը (տես Աղյուսակ 5) ցույց է տալիս, որ նշված ժամանակահատվածում Ադանայի նահանգի հայ բնակչությունը աճել է մոտ 39%-ով, ընդ որում՝ ջարդերից առավել տուժած Ադանայի թեմի տարածքի հայ բնակչությունը՝ մոտ 47%-ով:

Բացի դրանից, ինչպես արդեն նշել էինք՝ XIX դարի վերջերին – XX դարի սկզբներին կիլիկիա հայության թվաքանակի աճ է արձանագրվել նաև Գրիգոր Չոհրապի կողմից՝ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1882 և 1912 թվականներին վերաբերող վիճակագրությունների համեմատության արդյունքում. ըստ արևմտահայ գործչի՝ նշված ժամանակաշրջանում Կիլիկիայի հայ բնակչության թվաքանակն աճել է մոտ 7%-ով՝ 380000-ից հասնելով 407000-ի⁴⁰:

³⁸ Կաթոլիկ և բողոքական հայերը ներառյալ (տես Karpat, *Ottoman population 1830-1914*, 162):

³⁹ Կաթոլիկ և բողոքական հայերը ներառյալ (նույն տեղում, 172):

⁴⁰ Stéu Léart, *La Question Arménienne à la Lumière des Documents*, 62:

Աղյուսակ 5. Ադանայի նահանգի հայ բնակչության թիվն ըստ 1902 թ. և 1913 թ. հայկական եկեղեցական-թեմական աղբյուրների հիման վրա կազմված վիճակագրության

№	Վարչական միավոր	1902 Օրմանյան (շունչ) ⁴¹	1913 «Մշակ» (շունչ) ⁴²	Հավելած / նվազում, %
1	Ադանայի թեմ (Ադանայի և Մերսինի գավառներ, Ջերբել-Բերբերթի գավառի Օսմանիեի, Բալսեի և Իսլահիեի գավառակներ)	37900	55603	+46.7
2	Փայասի թեմ (Ջերբել- Բերբերթի գավառի Դորթ-Յուլի (Էրզիսը ներառյալ) և Հասսայի գավառակներ)	11000	13050	+18.6
3	Սսի և Հաճընի թեմեր (Կոզանի գավառ)	30700	42673	+39
	Ընդամենը Ադանայի նահանգ	79600	111326	+39.8

1909 թ. կոտորածներից առաջ և հետո առանձին հայաբնակ բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրությունների բաղդատությունը ևս վկայում է այն մասին, որ ջարդերից առավել տուժած Ադանայի նահանգի հայ բնակչության ժողովրդագրական դինամիկայի մեջ էական բացասական միտում չի արձանագրվել՝ հայ բնակչության կորուստը ջարդին հաջորդած տարիներին վերականգնվել է, և նույնիսկ հայերի թվաքանակի ան է գրանցվել:

Այսպես, ըստ 1908 թ. օսմանյան վիճակագրության՝ Ադանայի

⁴¹ Կաթոլիկ և բողոքական հայերը ներառյալ (տե՛ս Malachia Ormanian, *The Church of Armenia: her history, doctrine, rule, discipline, liturgy, literature, and existing condition* (London, A. R. Mowbray & Cc., LTD., 1912), 241, տվյալների բաշխումն ըստ թեմերի մեր կողմից):

⁴² Տե՛ս «Հայերը Կիլիկիայում», *Մշակ* (Թիֆլիս), 1913, 31 հուլիսի, №166, 2 (տվյալների բաշխումն ըստ թեմերի՝ մեր կողմից):

գավառի հայ բնակչության թվաքանակը 19702 էր, որից 17844-ը՝ Ադանա քաղաքում բնակվող հայերն էին¹³:

Ադանայի կոտորածների հետևանքով այրիացած հայ կանանց օգնելու նպատակով ստեղծված Այրիախնամ հանձնաժողովի քննիչ-պատվիրակ Ժակ Սայապալյանի 1911-12 թթ. պատրաստած տեղեկագրի տվյալներով՝ Ադանայի գավառի հայ բնակչության թվաքանակը 1909 թ.՝ 21850, 1912 թ.՝ 20855 էր, այսինքն, երեք տարում հայ բնակչության թիվը նվազել էր 995-ով կամ մոտ 4.5%-ով, ընդ որում նվազումը վերաբերվում էր Ադանայի գավառի հայաբնակ գյուղերի բնակչությանը, քաղաքի հայ բնակչության թիվը մնացել էր անփոփոխ¹⁴:

Ֆրանսահայ ուսումնասիրողներ Ռ. Գևորգյանը և Փ. Փաբուջյանը, որպես աղբյուր նշելով Կիլիկիայի կաթողիկոսության տվյալների հիման վրա կազմված վիճակագրություն (պահվում է Փարիզի Նուբարյան գրադարանում), 1913-ին Ադանայի գավառի հայ բնակչության թիվը հաշվում են 27990 շունչ, այդ թվում՝ Ադանա քաղաքում՝ 26430¹⁵ (տես նաև Աղյուսակ 6):

Աղյուսակ 6. Ադանայի գավառի հայաբնակ բնակավայրերի հայ բնակչության թվաքանակը 1908 -1914 թթ. ըստ տարբեր վիճակագրությունների

	Բնակավայր	1908 Սերովբյան	1911 Սայապալյան		1914, Գևորգյան- Փաբուջյան
			1909 թ.	1911 թ.	
1	Ադանա քաղաք	17844	20000	20000	26430

¹³ Տես 1904-09 թթ. Ադանայի թեմի առաջնորդ Մուշեղ եպիսկոպոս Սերովբյանի «Հովիփն խրատները» գրքին կից գետնոված վիճակագրությունը, որը կրում է «Ատանայի թեմական քաղաքներու և գիւղերու հայ բնակչութիւնը ըստ նոր մարդահամարի» վերնագիրը (Մուշեղ եպիսկոպոս Սերովբեան, Հովիփն խրատները ողորդած Ատանայի ու ամբողջ թեմական ժողովուրդին (Կ.Պոլիս, տպագրութիւն Յ. Մաթթէոսեան, 1908), 171-176):

¹⁴ Տես Տեղեկագիր այրիախնամ Յանձնաժողովի, 78-83:

¹⁵ Տես Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman a la veille du Genocide*, 267-271:

2	Հայ-գյուղ	190	- ⁴⁶	-	190
3	Արդողլու	340	500	150	340
4	Ինչիրլիկ	250	400	150	250
5	Մսիս	500	400	50	480
6	Շեյխ Մուրադ	160	300	300	300
7	Ջեյհան (Համիդիե)	418	250	205	-
	Ընդամենը	19702	21850	20855	27990

Աղյուսակ 6-ում ներկայացված օսմանյան և հայկական տարրեր վիճակագրությունները բովանդակային քննության ենք ենթարկելու աշխատանքի՝ Ադանայի գավառի հայ բնակչության թվաքանակին նվիրված բաժնում. այստեղ ընդամենն անհրաժեշտ ենք գտնում արձանագրել, որ մենք որևէ հիմքեր չունենք կասկածի տակ առնելու՝ անգամ 1909 թ. եղեռնից առավել տուժած Ադանայի նահանգի Ադանայի և Ջերել-Բերեքթեթ գավառներում հայ բնակչության թվաքանակի համեմատաբար արագ վերականգնման և նույնիսկ որոշակի աճի մասին և՛ օսմանյան, և՛ հայկական վիճակագրություններում արտացոլված իրողությունը, որը կարելի է բացատրել հետևյալ հիմնական գործոններով.

1. Ըստ սկզբնաղբյուրների առավել արժանահավատ տվյալների՝ 1909 թ. Ադանայի կոտորածներին անմիջականորեն զոհ է գնացել շուրջ 15000-18000 հայ, որոնցից առնվազն մեկ երրորդը՝ 5000-7000 շունչ, իսկ որոշ, մեր կարծիքով ավելի իրականությանը մոտ տվյալներով՝ կեսը կամ ավելին՝ 8000-10000 շունչ, պանդուխտներ էին: Այսինքն, կոտորածների մարդկային կորուստների ծանրությունը հավասարապես բաշխվել է ինչպես կիլիկիահայության, այնպես էլ Արևմտյան

⁴⁶ Հայ-գյուղը (Գյավուրբյոյ) Ադանա քաղաքի արվարձաններից էր, ինչի պատճառով Ժ. Սայապալյանը հայերի թիվը հաշվում է Ադանա քաղաքի հայ բնակչության թվաքանակի մեջ:

Հայաստանի և Օսմանյան կայսրության այլ շրջաններից Կիլիկիա եկած հայերի վրա:

2. Կոտորածներից հետո Ադանան և Դաշտային Կիլիկիայի այլ շրջանները համեմատաբար արագ վերականգնեցին ենթակառուցների (Բեռլին-Բաղդադ երկաթգիծ), արդյունաբերության, առևտրի և գյուղատնտեսության տարբեր ճյուղերում խոշոր օտար ներդրումներով պայմանավորված տնտեսական զարգացման բնականոն ընթացքը⁴⁷, ինչը հանգեցրեց նրան, որ ջարդերից առավելապես տուժած Ադանա քաղաքի և գավառի հայ բնակչության կորուստը արագ լրացվեց հայ պանդուխտների նոր ներհոսքի միջոցով: Ինչպես արդեն նշել էինք՝ Այրիախնամ հանձնաժողովի քննիչ պատվիրակ Ժակ Սայապալյանն իր 1911-12 թթ. պատրաստած տեղեկագրում արձանագրում էր, որ Ադանա քաղաքի հայ բնակչությունը 20000 էր, այսինքն մոտավորապես նույնքան, որքան նախքան կոտորածները⁴⁸: 1913-14 թթ. հայկական տվյալներով Ադանա քաղաքն ուներ 26430 հայ բնակչություն⁴⁹: Դրսից եկածներով մասամբ վերականգնվել է նաև Ջերեկ-Բերեքեթի գավառի վարչական կենտրոն՝ Օսմանիեի հայ բնակչությունը, որը նախքան 1909 թ. ջարդը 150 տուն էր, ջարդից անմիջապես հետո՝ 30, իսկ 1912 թ.՝ 100 տուն⁵⁰: Ըստ 1913-14 թթ. տվյալների՝ Օսմանիեի հայ բնակչության թվաքանակը 720 էր⁵¹:
3. Շնորհիվ ինքնապաշտպանության՝ կոտորածներից խուսափեցին հոծ հայ բնակչություն ունեցող հայաբնակ բնակավայրերից և շրջաններից մի քանիսը, այդ թվում՝ Սիսը, Հաճընը, Կարս-Բազարը, Չորք-Մարգպանը:

⁴⁷ Տե՛ս «Տնտեսական շարժում Առանայի գաւառին մէջ. 1910-1911», *Ժամանակ, ժողովրդական օրաթերթ* (Կ.Պոլիս), 1911, մարտ 25 (ապրիլ 7), թիւ 752, 1-2:

⁴⁸ Տե՛ս *Տեղեկագիր այրիախնամ Յանձնաժողովի*, 80:

⁴⁹ Տե՛ս Kevorkian, Paboudjian, *Les Arméniens dans l'Empire ottoman a la veille du Genocide*, 267:

⁵⁰ Տե՛ս *Տեղեկագիր այրիախնամ Յանձնաժողովի*, 61:

⁵¹ Տե՛ս Kevorkian, Paboudjian, *Les Arméniens dans l'Empire ottoman*, 301:

Հատկապես վերջինում հասցրեցին ապաստան գտնել և մահից փրկվել ոչ միայն շրջակա Յոզերլի և Օճագլը գյուղերի հայերը, այլ նաև հարևան Բախչեի գավառակի հայաբնակ որոշ գյուղերի բնակիչներ⁵²: Նրանցից շատերը ջարդերից հետո անվտանգության նկատառումներից ելնելով գերադասեցին իրենց ընտանիքներով մնալ Չորը-Մարգապանում՝ այցելելով իրենց հայրենի բնակավայրերը միայն գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելու համար: Այսինքն, տեղի ունեցավ հայ բնակչության ներքին տեղաշարժ Ջեբել-Բերեքեթի գավառի մի գավառակից մյուսը, համապատասխանաբար՝ գավառի ընդհանուր հայ բնակչության թվաքանակը մնաց գրեթե անփոփոխ: Նույնը տեղի ունեցավ Ադանայի գավառի հայաբնակ գյուղերի հայ բնակչության պարագայում. կոտորածից փրկվածներից շատերը գերադասեցին ընտանիքներով տեղափոխվել Ադանա քաղաք՝ այցելելով իրենց հայրենի բնակավայրեր գյուղատնտեսական աշխատանքների ժամանակաշրջանին⁵³:

Բացի վերոնշյալ գործոններից, 1909 թ. ջարդերի ընթացքում հայ բնակչության կորուստների՝ օսմանյան և հայկական վիճակագրություններում չարտացոլվելը՝ պայմանավորված է նաև օսմանյան և հայկական վիճակագրական համակարգերի հիմքում ընկած խնդրով՝ դրանց կողմից հայ բնակչության ընդհանուր համակարգային թերհաշվառման հանգամանքով և դրանից բխող՝ հայ բնակչության գրանցված և իրական թվաքանակի միջև տարբերությամբ:

Այսպես, դեպքերին ժամանակակից քաջատեղյակ հեղինակներից Հ. Թերգյանը վկայում է, որ նախքան 1909-ի կոտորածները

⁵² Չորը-Մարգապանում էին ապաստանել, մասնավորապես, Բախչեի գավառակի Հասանբեյլի, Յանըկ Դեյիրմեն, Սավրանլը, Գըզըլաճ բնակավայրերի հայերի մի մասը (տես Erminio, «Ադանայի ջարդերը», *Հորիզոն*, 1910, № 66, տես նաև Յ.Տ. Մեյրոնեան, «Գաառական կենսը. Աղետի վայրեն», *Ազատամայտ, օրաթերթ* (Կ. Պոլիս), 1909, նոյեմբեր 8/22, 3»):

⁵³ Տես *Տեղեկագիր պրիսիմսալ Յանձնաժողովի*, 78-79:

Ադանա քաղաքի փաստացի հայ բնակչության թիվը մոտ 30000 էր (ներառյալ եկվոր պանդուխտները): Հեղինակը միաժամանակ հաղորդում է, որ համաձայն 1908 թ. օսմանյան պաշտոնական մարդահամարի տվյալների. արձանագրված հայերի թիվը 17844 էր⁵⁴:

Ջարդերից հետո հայ բնակչության վիճակագրական աճի երևույթը արձանագրվել է այլ հայաբնակ վայրերում ևս: Այսպես, Կ.Պոլսում հրատարակվող «Ժամանակ» թերթի խմբագիր Միսաք Գոչունյանը 1912 թ. դեկտեմբերի 16 (29)-ի «Հայերը փոքրամասնություն են միթե» խմբագրականում պատմում է մի ուշագրավ դեպքի մասին, որը տեղի է ունցել Համիդյան կոտորածներից հետո Ուրֆայում: Ըստ լրագրողի՝ «Երբ Եդեսիայի ջարդը պատահեցաւ (1895 թ. հոկտեմբեր - Ռ.Թ.), 4000-է աւելի հայեր զոհուեցան այդ անողորմ մարդագոհին: Տեղական իշխանութիւնը ջարդէն ետք հասկնալու համար, թէ որքան հայ պակասած է Եդեսիայէն, հայոց վիճակագրութիւնը ըրաւ և, զարմանալի բան, այդչափ հայ ջարդուելով հանդերձ, ոչ միայն չէր նուազել հայոց թիւը, այլև 5000-ի չափ ալ աւելցած էր»⁵⁵:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ կարելի է փաստել, որ Ադանա քաղաքի և կոտորածներից տուժած այլ հայաբնակ բնակավայրերի մշտական հայ բնակչության իրական թիվը նախքան 1909 թ. եղել է գրանցված թվից բարձր, յուրաքանչյուր ընտանիքում եղել են չհաշվառված անձիք, ինչը հնարավորություն է տվել 1909 թ. հետո հաշվառումների ընթացքում վիճակագրություն հավաքող պաշտոնյաներին զոհվածների փոխարեն գրանցել նախկինում չհաշվառված անձանց՝ դրանով անփոփոխ ցույց տալով բնակչության թիվը և ապահովելով տվյալ ընտանիքից գանձվող պետական հարկերի և տուրքերի շարունակական վճարումը:

⁵⁴ Տե՛ս Յ. Թեղեան, *Ատանայի կեանքը* (Կ.Պոլիս, 1909), 7:

⁵⁵ Տե՛ս Քալիմ (Միսաք Գոչունեան), *Օրուան մուսճումներ (1908-1913)* (Իսթանպուլ, «Ժամանակ», 2014), 434: Հեղինակը հավելում էր, որ «երևույթը նոյնն է ամէն նահանգի համար ալ» և մատնանշում դրա պատճառը. «Հասարակ ժողովուրդը, վախճանալով որ այս վիճակագրութեան տակէն զինտորագրութեան եւ կամ պետական տուրքերու նոր բաշխում մը երևան պիտի ելլէ, խոյս կու տար արձանագրուել» (նույն տեղում, 435):

V. Կիլիկիահայության թվաքանակի հաշվարկի մեթոդաբանությունը

Կիլիկիահայության թվաքանակի՝ մեր հաշվարկն իրականացվում է 1915-ի դրությամբ Կիլիկիայի տարածքում գոյություն ունեցող օսմանյան վարչատարածքային միավորների՝ գավառակ (կազա) -գավառ (սանջակ) -նահանգ (վիլայեթ) հաջորդականությամբ, հետևյալ մեթոդաբանության կիրառմամբ.

1. Մեր կողմից առանձնացվում և համադրման սկզբունքով ներկայացվում են տվյալ վարչատարածքային միավորի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ 1915-ին ժամանակագրական առումով առավել մոտ կանգնած ութ սկզբնաղբյուրների վիճակագրական տվյալները (Կ.Պոլսի Հայոց պատրիարքարան - Կիլիկիո Կաթողիկոսարանի՝ 1895, 1902 և 1912 թթ. կազմած վիճակագրություններ, «Մշակի» խմբագիր Հ. Առաքելյանի կողմից՝ 1910 և 1913 թթ. շրջանառության մեջ դրված վիճակագրություններ, հայ ուսումնասիրող Մ. Յիցիկյանի՝ 1913 թ. կազմած վիճակագրություն, 1914 թ օսմանյան վիճակագրություն, ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խմբի կողմից պատրաստած՝ 1914-ին վերաբերող վիճակագրություն):
2. Վերոնշյալ սկզբնաղբյուրների տվյալների հետ մեկտեղ ներգրավվում են տվյալ վարչատարածքային միավորի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկություններ պարունակող օժանդակ աղբյուրներից (հուշամատյաններ, ցեղասպանությունը վերապրածների վկայություններ, տարբեր ուսումնասիրություններ և այլն) քաղված տվյալներ, այդ թվում՝ ըստ հայաբնակ բնակավայրերի տվյալներ պարունակող վիճակագրություններ: Ըստ անհրաժեշտության՝ վերոնշյալ տվյալների հիման վրա կազմվում են տվյալ վարչատարածքային միավորի տարածքում 1915-ի դրությամբ գոյություն ունեցող հայաբնակ բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի համեմատական աղյուսակներ:

3. Վերոնշյալ երկու խումբ տվյալների համադրման և վերլուծության միջոցով կատարվում է տվյալ վարչատարածքային միավորի հայ բնակչության թվաքանակի հաշվարկ՝ առավել հավաստի և ժամանակագրական առումով 1915-ին առավել մոտ կանգնած մի քանի աղբյուրների տվյալներից միջին թիվ հանելու, որն է սկզբնաղբյուրի տվյալն առավել հավաստի՝ իրականությանը մոտ ճանաչելու և այլ մեթոդներով (այն դեպքում, երբ մեր հաշվարկի արդյունքում ստացված թիվը կլոր չէ, մենք այն կլորացնում ենք մինչև մոտակա տասնյակը):

Կիլիկիահայության թվաքանակի հաշվարկի մեջ ներառել ենք Օսմանյան կայսրության Ադանայի նահանգը՝ իր Ադանայի, Կոզանի (Սիս), Ջերեի-Բերեբեթի և Մերսինի գավառներով և դրանց կազմի մեջ մտնող գավառակներով (տարածությունը՝ մոտ 30000 քառ. կմ)¹, Մարաշի գավառը՝ Մարաշի, Ջեյթունի, Ալբիստանի, Գյոքսունի (Կոկիսոն) և Բազարջըղի գավառակներով (տարածությունը՝ մոտ 18400 քառ. կմ), Հալեպի նահանգի Այնթապի գավառը՝ Այնթապի, Քիլիսի և Հոռմկլայի գավառակներով (մոտ 7000 քառ. կմ տարածություն), ինչպես նաև Հալեպի նահանգի Հալեպի գավառի Աստիոքի, Ջիսր-ի Շուղուրի, Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակները (մոտ 4200 քառ. կմ տարածություն, ընդամենը մոտ 59600 քառ. կմ տարածություն)²:

Կիլիկիահայության թվաքանակի վերաբերյալ տվյալներ հաղորդող՝ մեր կողմից առանձնացված ութ վիճակագրական սկզբնաղբյուրներն են.

1. «Վիճակագրութիւն Կիլիկիոյ Հայոց» վերնագիրը կրող

¹ Բացառությամբ արևմուտքում ընկած, սակավ հայ բնակչություն ունեցող Իչկի գավառը: Ըստ տարբեր աղբյուրների՝ այստեղ ապրում էր 400-600 հայ (տես Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman*, 59, 287, Karayan, *Armenians in Ottoman Turkey*, 1914, 111-112):

² Տես նաև աշխատանքի «Կիլիկիայի տարածքի օսմանյան վարչական և հայկական եկեղեցական-թեմական բաժանումները (XIX դարի երկրորդ կես - 1914 թ.)» բաժինը:

վիճակագրությունը: Հրատարակվել է Մայր Աթոռի պաշտոնական «Արարատ» ամսագրի 1896 թ. հունվարի համարում³: Հայ բնակչության թվաքանակը տրված է ըստ Կիլիկիո կաթողիկոսության թեմական բաժանման՝ համագումար աղյուսակի տեսքով: Պարունակում է տվյալներ կաթողիկոսության ենթակայության տակ գտնվող յուրաքանչյուր թեմում հայ ընտանիքների թվաքանակի վերաբերյալ: Վիճակագրության վերջում տրվում է անձանց թիվը՝ մեկ տան վրա հինգ անձ հաշվարկով: Տեղեկություններ վիճակագրության պատրաստման հանգամանքների վերաբերյալ աղբյուրը չի պարունակում. կարելի է ենթադրել, որ վիճակագրությունը պատրաստվել է Կիլիկիո Հայոց կաթողիկոսարանի կողմից հրատարակմանը նախորդող տարում՝ 1895-ին:

2. Մաղաքիա արք. Օրմանյանի՝ «Հայոց եկեղեցին» (1910 թ.) աշխատության հավելվածում ներկայացված վիճակագրությունը: Հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները բաշխված են ըստ Կիլիկիո կաթողիկոսության թեմական բաժանման, տրվում են առանձին՝ առաքելական, կաթոլիկ և բողոքական հայերի թվաքանակի վերաբերյալ տվյալներ⁴: Տեղեկություններ վիճակագրության պատրաստման

³ Տես «Վիճակագրութիւն Կիլիկիոյ Հայոց» Արարատ, ամսագիր կրօնական-բարոյական, գրականական-պատմական, բանասիրական-մանկավարժական, ազգային և պաշտօնական (Ս. Էջմիածին), 1896-ՌՅԽԴ, տարի ԻԹ, յունուար, համար առաջին, 46:

⁴ Տես Malachia Ormanian, *L'Eglise arménienne, son histoire, sa doctrine, son régime, sa discipline, sa liturgie, sa littérature, son présent* (Paris, editeur: E. Leroux, 1910): 1911 թ. լույս է տեսել ուսումնասիրության հայերեն տարբերակը (տես Մաղաքիա Արք. Օրմանեան, *Հայոց եկեղեցին և իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը* (Կ.Պոլիս, հրատարակիչը՝ Վ. և Հ. Տէր-Ներսէսեան, 1911)), իսկ 1912 թ.՝ անգլերեն թարգմանությունը (Ormanian, *The Church of Armenia*): Օրմանյանի վիճակագրությունն օգտագործել է Յոհանես Լեփսիուսը ցեղասպանության ընթացքում հայերի կորուստները հաշվարկելու համար (տես Dr. Johannes Lepsius, *Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei* (Potsdam, 1916), 298-303), վիճակագրության՝ Կիլիկիային վերաբերող բաժինը տեղ է գտել Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության կողմից 1920 թ. հրատարակված «Հայաստան և

հանգամանքների վերաբերյալ աղբյուրը չի պարունակում: Վիճակագրության՝ առաքելական հայերի վերաբերյալ տվյալներն ամենայն հավանականությամբ հավաքվել են Օրմանյանի պատրիարքության օրոք (1896-1908)՝ 1906-ից ոչ ու՜⁵: (Մեր նախկին աշխատանքներից մեկում առաջ քաշած ենթադրությամբ՝ վիճակագրությունը կազմվել է 1902-ին Մ. Օրմանյանի կարգադրությամբ կազմակերպված արևմտահայության հաշվառման տվյալների հիման վրա⁶, այդ պատճառով սույն ուսումնասիրության մեջ, որպես Օրմանյանի վիճակագրության պատրաստման թվական, նշում ենք 1902-ը):

3. 1910 թ. վերաբերող «Կիլիկիայի հայ ազգաբնակչության թուահամարը» վերտառությամբ վիճակագրությունը: Շրջանառության մեջ է դրվել «Մշակ» թերթի խմբագիր Համբարձում Առաքելյանի կողմից՝ 1913 թ. հրատարակված «Թիրքահայ ժողովրդի վիճակագրութիւնը» ծավալուն ակնարկում⁷: Կիլիկիայի վիճակագրությունը պարունակում է ընդհանուր՝ առանց կրոնական պատկանելության, հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ, որոնք բաշխված են ըստ օսմանյան վարչական բաժանման՝ սանջակների: Տեղեկություններ վիճակագրության ծագման,

«Քուրդիստան» տեղեկագրում (տե՛ս *Armenia and Kurdistan, Handbooks Prepared Under the Direction of the Historical Section of the Foreign Office* (London, H. M. Stationery office, 1920), 7): Հաշվարկի համար մենք օգտագործում ենք Մ. Օրմանյանի աշխատության՝ ֆրանսերեն և անգլերեն հրատարակությունների մեջ գետեղված տվյալները (տե՛ս Ormanian, *The Church of Armenia*, 241):

⁵ Մեզ հայտնի առաջին աղբյուրը, որտեղ ներկայացված է Օրմանյանի վիճակագրությունը. բելգիացի դիվանագետ վան դեն Սթին «Ոչ մահմեդական օսմանսահպատակների իրավական դրությունը» երկն է, որը լույս է տեսել 1906-ին (տե՛ս van den Steen de Jehay F., *De La Situation Legale des Sujets Ottomans Non-Musulmans* (Bruxelles, Oscar Schepens & Co, 1906), 48-51):

⁶ Տե՛ս Թաթոյան, *Արևմտահայության թվաքանակի հարցը 1878-1914 թվականներին*, 89-90:

⁷ Տե՛ս Հ. Առաքելյան, «Թիրքահայ ժողովրդի վիճակագրութիւնը». *Արոր. միամենայ հանդէս. Ընդհանուր գրական, գիտական-ժողովրդական և խաղաղասիրական*, IV տարի, 1913 թ. դեկտեմբեր, 41-79. Կիլիկիայի հայ բնակչության վիճակագրությունը՝ էջ 73-ում:

դրա պատրաստման հանգամանքների վերաբերյալ Հ. Առաքելյանը չի հաղորդում: Կարելի է ենթադրել, որ այն կազմվել է Կիլիկիո կաթողիկոսարանի և/կամ հայկական եկեղեցական-թեմական այլ վիճակագրական աղբյուրների տվյալների հիման վրա Հ. Առաքելյանի կողմից: Չենք բացառում, որ վիճակագրության նախնական տարբերակում տվյալները բաշխված են եղել ըստ թեմերի, և դրանց վերաբաշխումն ըստ օսմանյան վարչական միավորների կատարել է ինքը՝ «Մշակի» խմբագիրը⁸:

4. 1912 թ. աշնանը Հայկական հարցի վերաբարձման կապակցությամբ՝ Կ .Պոլսի Հայոց պատրիարքարանին կից ստեղծված Ապահովության հանձնաժողով անունով կառույցի պատրաստած վիճակագրությունը: Պարունակում է տվյալներ ընդհանուր՝ առանց կրոնական պատկանելության, հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ: Վիճակագրությունը Արևմտյան Հայաստանի վեց նահանգների մասով շրջանառության մեջ է դրվել 1913 թ. սկզբներին, սակայն իր ամբողջ պարունակությամբ՝ Օսմանյան կայսրության, այդ թվում և Կիլիկիայի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներով, հրատարակվել է 1921 թ.⁹: Տվյալները բաշխված են ըստ եկեղեցական-թեմական բաժանման: Արևմտահայության (ներառյալ կիլիկիահայության) թվաքանակի վերաբերյալ տվյալներ պարունակող այս վիճակագրությունը մեր կողմից առանձնացված հայկական վիճակագրություններից միակն է, որի պատրաստումն ու

⁸ Հ. Առաքելյանի տվյալները կիլիկիահայության թվաքանակի սեփական հաշվարկների համար օգտագործել են ուսումնասիրողներ Շ. Թորոպյանը (տե՛ս Թորոպյան, *Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները*, 17) և (վերջինիս միջոցով) Գ. Բաղայանը (տե՛ս Բաղայան, «Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի վարչաժողովրդագրական պատկերը», 62):

⁹ Տե՛ս «Բաղդատական վիճակագրութիւն հայ բնակչութեան Օսմ. Կայսրութեան մէջ տեղահանութենէ առաջ եւ վերջ (Պատրաստուած 1 Ապրիլ 1921)», Թէոդիկ, *Ամէնուն տարևոցը*, ԺԶ տարի, 1922 (Կ.Պոլիս, տպ. Մ.Յովակիմեան, 1922), 261-263): Վիճակագրության կազման հանգամանքների մասին առավել մանրամասն տե՛ս Թաթոյան, *Արևմտահայության թվաքանակի հարցը*, 92-95:

շրջանատության մեջ դրվելը պաշտոնապես արտոնվել է Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից:

5. 1913 թ. ամռանը «Մշակ» պարբերականում հրատարակված վիճակագրությունը¹⁰: Պարունակում է ընդհանուր՝ առանց կրոնական պատկանելության, կիլիկիահայության թվաքանակի վերաբերյալ տվյալներ, որոնք խմբավորված են ըստ օսմանյան վարչական բաժանման՝ գավառների և գավառակների, սակայն ոչ կանոնակարգված կերպով (տվյալները դասավորված և խմբավորված չեն ըստ նահանգների հերթականության, մի դեպքում տրվում է սանջակի, մեկ այլ դեպքում՝ կազայի հայ բնակչությունը): Կարելի է ենթադրել, որ սկզբնապես տվյալները բաշխված են եղել ըստ Կիլիկիո կաթողիկոսարանի եկեղեցական-թեմական բաժանման, և միայն հետագայում են վերախմբավորվել և համապատասխանեցվել օսմանյան վարչատարածքային բաժանմանը, ընդ որում՝ բազմաթիվ սխալներով¹¹: Վիճակագրությունը պարունակող հոդվածը՝ այն կրում է «Հայերը Կիլիկիայում» վերնագիրը, անանուն է. ենթադրում ենք, որ հեղինակը նույն ինքը «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելյանն է: Որպես տվյալների աղբյուր՝ հոդվածագիրը նշում է Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը՝ լղոզված ձևակերպմամբ («պատրիարքարանի հասարած տեղեկությունները»)¹²:

¹⁰ Տես «Հայերը Կիլիկիայում», 2:

¹¹ Տես նաև 1913 թ. «Մշակի» վիճակագրության քննությունը առանձին վարչական միավորների վերաբերող համապատասխան բաժիններում:

¹² «Հայերը Կիլիկիայում», 2: «Մշակի» վիճակագրությունը բավականին ակտիվ շրջանավել է 1913-14 թթ. հայկական մամուլում (տե՛ս Թեղդիկ. *Ամէնուն տարեցոյցը*, Ը. տարի, 1914 (Կ. Պոլիս, հրատ. եւ տպ. Մ. Յովակիմեան, 1914), 322-323, տե՛ս նաև *Արսլաու, պաշտօնական ամսագիր հայրապետական արոտոյ Ս. Էջմիածնի*, 1915-ՌՅԿԴ, տարի ԽԹ, յունուար, համար Ա., 29)) և, անգամ, օգտագործվել կիլիկիահայության այլ վիճակագրություններ կազմելու համար: Մասնավորապես, «Մշակի» վիճակագրության օգտագործման կնիքն է կրում Մարտելում հրատարակվող «Արմենիա» լրագրի 1913 թ. սեպտեմբերի 10-ի համարում Տիրան-Թորգոմի թղթակցությամբ լույս տեսած Կիլիկիայի թեմերի հայ բնակչության վիճակագրությունը: Համեմատության համար ներկայացնենք երկու վիճակագրություններից բաղված մի

6. Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանող Միքայել Ցիցիկյանի՝ 1913 թ. կազմած վիճակագրությունը: Վիճակագրությունում տրված է ընդհանուր՝ առանց կրոնական բաժանման, հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ, որոնք բաշխված են ըստ օսմանյան վարչական բաժանման՝ գավառակների¹³: Հեղինակը, հայ ազգաբնակչության տնտեսական վիճակն ու կենցաղը տեղում ուսումնասիրելու նպատակով, 1913 թ. հատուկ ճանապարհորդություն է կատարել Կիլիկիա՝ շրջելով Ադանայի և Հալեպի նահանգների տարածքով. «Փոքր քաղաքներում ու բոլոր այդ գիւղերում, որտեղ աջողուեց ինձ լինել, ես ամենից առաջ հարց ու փորձ եմ արել ...տեղական քահանաներին (վերջիններս գիւղերի ազգաբնակչության քանակի մասին բառականաչափ ճիշտ տեղեկություններ են տուել) ու յետոյ ժողովրդական դպրոցների տեսուչներին և ուսուցիչներին: Մեծ քաղաքներում տեղեկությունները տուել են ինձ թեմական առաջնորդներն ու կոնսիստորիաները, որոնք ըստ ստուգած տպատրոթիներին, բառականաչափ տեղեակ էին երևում իրականության», - մասնավորապես հաղորդում է

բանի տվյալ. Սիս-Կոզանի վիճակ - «Մշակ»՝ 5600, Տիրան-Թորգոմ՝ 10600, Վահկա - «Մշակ»՝ 4948, Տիրան-Թորգոմ՝ 9948, Հանընի գավառակ - «Մշակ»՝ 26480, Տիրան-Թորգոմ՝ 36480, Օսմանիեյի գավառակ - «Մշակ»՝ 9832, Տիրան-Թորգոմ՝ 14832, Բախչե - «Մշակ»՝ 560, Տիրան-Թորգոմ՝ 1560, Ջեյհան - «Մշակ»՝ 886, Տիրան-Թորգոմ՝ 1886, Քիլիս - «Մշակ»՝ 7966, Տիրան-Թորգոմ՝ 12966 և այլն: Ըստ երևույթին Տիրան-Թորգոմը «Մշակի» տվյալների վրա մեզ անհայտ սկզբունքով, ամենայն հավանականությամբ՝ ըստ սեփական հայեցողության, թվեր է ավելացրել: «Արմենիա»-յի թղթակիցն անգամ կրկնել է տեղանունների գրության մեջ սկզբնաղբյուրի սխալները (օրինակ՝ «Մշակ»՝ «Երգինի-Սանջակ», Տիրան-Թորգոմ՝ «Երկինի վիճակ»)՝ Էրզին անվան աղավաղված ձևն է): Նշենք նաև, որ Տիրան-Թորգոմը, որպես իր կողմից ներկայացվող վիճակագրության աղբյուր նշում է ոմն «գերման միսիօնարներ»-ին (տե՛ս Տիրան-Թորգոմ, «Նամակ Թիւրքիաէն», *Արմենիա, լրագիր ազգային, քաղաքական և այլն* (Մարսելյ), 10 սեպտեմբերի 1913, ԻԹ. տարի, թի 6, 1-2): Տիգրան-Թորգոմի ուղնացված տվյալները, առանց դրանց նկատմամբ քննական մոտեցում ցուցաբերելու, կիլիկիահայրության թվաքանակի սեփական հաշվարկի համար օգտագործել է հայ ուսումնասիրող Գեղամ Բաղայանը (տե՛ս Բաղայան, «Հայ բնակչությունն Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս տարածաշրջաններում», 59):

¹³ Տե՛ս Ցիցիկեան, «Հայերը Կիլիկիայում», 1106-1109:

հեղինակը¹⁴: Որոշ դեպքերում 1913 թ. «Մշակի» և Մ. Ցիցիկյանի տվյալները նույնական են (տե՛ս առանձին վարչական միավորներին վերաբերվող աշխատանքի համապատասխան բաժինների համեմատական աղյուսակները). ըստ երևույթին, դրանց հիմքում նույն աղբյուրն է ընկած կամ էլ «Մշակի» վիճակագրության կազմողն օգտվել է Մ. Ցիցիկյանի տվյալներից (ուսումնասիրողի անունը հիշատակվում է վիճակագրությունը պարունակող «Մշակի» հոդվածում)¹⁵:

7. 1914 թվականին վերաբերող օսմանյան պաշտոնական վիճակագրությունը: Օսմանյան իշխանությունների կողմից շրջանառության մեջ է դրվել ֆրանսերեն լեզվով 1919 թ. հրատարակված պրակով, որը կրում է «1330 թվականի¹⁶ մարտի 1-ի (1914 թ. մարտի 14) դրությամբ Օսմանյան կայսրությունում բնակչության տարբեր տարրերի թվաքանակը ներկայացնող աղյուսակներ» վերնագիրը¹⁷: Վիճակագրությունը նախատեսված էր ներկայացվելու 1919 թ. հունվարին իր աշխատանքները սկսած Փարիզի հաշտության վեհաժողովի ուշադրությանը և կոչված էր հիմնավորելու, որ քրիստոնյա ժողովուրդները, և դրանցից հատկապես հայերը, Օսմանյան կայսրությունում ու նրա առանձին շրջաններում փոքրամասնություն են կազմել և դրանով իրավունք չունեն հավակնելու Օսմանյան կայսրության տարածքներին:

¹⁴ Նույն տեղում, 1108:

¹⁵ Կարելի է ենթադրել, որ «Մշակի» վիճակագրության հեղինակը Մ. Ցիցիկյանի վիճակագրությունից է վերցրել իր մոտ պակասող տվյալները՝ Կիլիկիայի տարածքի հայ բնակչության ամբողջական վիճակագրական պատկերը ստանալու համար:

¹⁶ Ըստ Օսմանյան կայսրությունում պաշտոնական ընդունված Ռումի օրացույցի (թուրքերեն՝ Rumi takvim), որն օգտագործվում էր 1839-1926 թթ. իսլամական (Hicri) օրացույցին զուգահեռ: Քանի որ Ռումի օրացույցը արևային էր, ապա ժամանակի ընթացքում տարբերությունը դրա և իսլամական տոմարների միջև գնալով մեծանում էր՝ 1910-ական թթ. կազմելով մոտ երկու տարի:

¹⁷ Տե՛ս *Tableaux indiquant le nombre des divers éléments de la population dans l'Empire Ottoman au 1er mars 1330 (14 mars 1914)* (Constantinople, 1919): Տե՛ս նաև Meir Zamir, "Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919", *Middle Eastern Studies*, Vol. 17, No. 1, Jan., 1981, 89-101, Shaw Stanford J., "The Ottoman Census System and Population, 1831-1914," *International Journal of Middle East Studies*, 1978, № 9, 336:

1919 թ. ֆրանսերեն պրակի աղյուսակներում տրվում է իսլամադավանների, հույների, հայերի (համագումար՝ առաքելական, կաթոլիկ և բողոքական), ինչպես նաև, համագումար կերպով, այլ տարրերի թվաքանակը: Տվյալները բաշխված են ըստ կազաների¹⁸:

8. ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խմբի կողմից պատրաստած վիճակագրությունը: Տեղեկատու փորձագիտական խումբը (The Inquiry) ստեղծվել էր 1917 թ. սեպտեմբերին՝ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի հրահանգով: Կառույցի նպատակն էր տվյալներ հավաքել Առաջին աշխարհամարտի ավարտից հետո կայանալիք հաշտության բանակցությունների համար: Վիճակագրությունը պատրաստվել է կառույցի փորձագետներից մեկի՝ պրոֆեսոր Դևիդ Մաժիի (David Magie) կողմից, և ամփոփված է 1918 թ. նոյեմբերի 15-ով թվագրվող «Ասիական Թուրքիայի բնակչությունը պատերազմի նախօրյակին» (“Population of Asiatic Turkey at the outbreak of the war”) վերնագիրը կրող տեղեկագրում: Ուսումնասիրողի կազմած վիճակագրությունը պարունակում է Օսմանյան կայսրության հիմնական էթնոկրոնական խմբերի (մուսուլմաններ, հույներ, հայեր, հրեաներ, այլ տարրեր) թվաքանակի վերաբերյալ տվյալներ, որոնք բաշխված են ըստ Օսմանյան կայսրության նահանգների և գավառների¹⁹:

¹⁸ Նշված պրակի վիճակագրության մեկ այլ տարբերակ օսմանյան արևիկներից պրպտել և հրատարակել է թուրք ուսումնասիրող Բենավ Կարպատը: Ուսումնասիրողի հրատարակած ցուցակում տվյալները բաշխված են ըստ կրոնական համայնքների՝ միլիթների, առանձին ներկայացվում են տվյալ վարչական միավորում առաքելական, կաթոլիկ և բողոքական հայերի, ինչպես նաև բոլոր քրիստոնեադավան այլ համայնքների թվաքանակի վերաբերյալ տվյալները: Սույն աշխատանքում օգտագործում ենք 1914 թ. օսմանյան վիճակագրության՝ Բ. Կարպատի կողմից հրատարակված տարբերակը (տե՛ս Karpav, *Ottoman population 1830-1914*, 170-189: 1914 թ. օսմանյան վիճակագրության մասին առավել մանրամասն տե՛ս Թաթոյան, *Արևմտահայության թվաքանակի հարցը*, 38-39):

¹⁹ ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խմբի վիճակագրության աղյուսակները տե՛ս Zamir, “Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919”, 102-106: Վիճակագրության մասին առավել մանրամասն տե՛ս Ռորերտ Թաթոյան, «Արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի բնակչության էթնիկական կազմի հարցերը Փարիզի հաշտության կոնֆերանսին (1919-1920 թթ.)»,

Վերոնշյալ ութ սկզբնաղբյուրների տվյալների հետ մենք համադրել ենք նաև ֆրանսահայ ուսումնասիրողներ Ռայմոն (Հարություն) Գևորգյանի և Փոլ (Պոդոս) Փաբուջյանի՝ կիլիկիահայության թվաքանակի հաշվարկը: Ուսումնասիրողները, օգտագործելով Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի հրահանգով 1913 թ. կազմակերպած արևմտահայության հաշվառման տվյալները՝ «1913 թ. վիճակացոյց» ի լրացված հարցաթերթերը (ձեռնարկը պատմագիտական գրականության մեջ նաև հայտնի է որպես Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. մարդահամար, քանի որ թեմերից Կ. Պոլիս վիճակագրական տվյալներ են ուղարկվել նաև հաջորդ՝ 1914 թվականին), կատարել է Օսմանյան կայսրության՝ նահանգ առ նահանգ հայ բնակչության թվաքանակի հաշվարկ: Ցավոք, ինչպես արդեն նշել էինք, հատկապես Ադանայի ու Հալեպի նահանգների և Մարաշի գավառի՝ 1913 թ. վիճակացոյցի լրացված հարցաթերթերը մեզ չեն հասել՝ կամ դրանք չեն ուղարկվել Հայոց պատրիարքարան և, մնալով Կիլիկիո կաթողիկոսարանի դիվանում, կորսվել են Հայոց ցեղասպանության տարիներին, կամ էլ, ինչն ավելի հավանական է, Կիլիկիո կաթողիկոսարանը տարբեր խնդիրների պատճառով ի վիճակի չի եղել կազմակերպել հաշվառման գործընթացը: Դրա հետևանքով՝ Ռ. Գևորգյանը և Փ. Փաբուջյանը կիլիկիահայության՝ սեփական հաշվարկում օգտագործում են 1913 թ. «Մշակի» վիճակագրության հիման վրա կազմված և Փարիզի Նուբարյան գրադարանի արխիվում պահվող մի ցուցակ, ինչպես նաև այլ աղբյուրներից քաղված տվյալներ (հեղինակները մասնավորապես նշում են Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի Տեղեկատու դիվանի արխիվը, եկեղեցական-թեմական աղբյուրներ, հայրենակցական միությունների հրատարակություններ-հուշամատյաններ և այլն)²⁰:

Ցեղասպանագիտական հանդես, 2016, 4 (1), 67-69:

²⁰ Տե՛ս Kevorkian, Paboudjian, *Les Arméniens dans l'Empire ottoman a la veille du Génocide*: Ադանայի նահանգի տվյալները՝ նույն տեղում, 265-304, Հալեպի (ներառյալ Մարաշ) նահանգի տվյալները՝ էջ 305-352): Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի հաշվարկի համագումար աղյուսակը տե՛ս նաև Kévorkian Raymond, *The Armenian Genocide*, 272-278, Ադանայի և Հալեպի նահանգների տվյալները տե՛ս նույն տեղում, 275: Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1913-1914 թթ. մարդահամարի մասին մանրամասն տե՛ս Թաթոյան, *Արևմտահայության թվաքանակի հարցը*, 95-100:

Մեր կողմից առանձնացված վերոնշյալ սկզբնաղբյուրներից՝ գուտ Կիլիկիո կաթողիկոսության իրավասության տակ գտնվող տարածքի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ են պարունակում «Արարատի» (1895 թ.), Հ. Առաքելյանի (1910 թ.), «Մշակի» (1913 թ.) և Մ. Ցիցիկյանի (1913 թ.) վիճակագրությունները: 1914 թ. օսմանյան պաշտոնական, Մ. Օրմանյանի՝ 1902 թ., Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի-Ապահովության հանձնաժողովի՝ 1912 թ. և ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խմբի՝ 1914 թ. վիճակագրությունները ներկայացնում են ամբողջ Օսմանյան կայսրության, ներառյալ նաև Կիլիկիայի նահանգների հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ:

Կիլիկիահայության՝ ըստ բնակավայրերի բաշխման տվյալներ վերոնշյալ վիճակագրություններից և որևէ մեկը չի պարունակում²¹:

Հայ բնակչության՝ ըստ օսմանյան վարչական բաժանման՝ կազաների (գավառակ) բաշխման տվյալներ է պարունակում 1914 թ. օսմանյան վիճակագրությունը և Մ. Ցիցիկյանի՝ 1913 թ. վիճակագրությունը:

1910 թ. Հ. Առաքելյանի և 1914 թ. ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խմբի վիճակագրություններում հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները տրվում են ըստ օսմանյան վարչական բաժանման՝ սանջակների (գավառ) բաշխմամբ:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի՝ 1902 թ., Հայոց պատրիարքարանի-Ապահովության հանձնաժողովի՝ 1912 թ., 1895 թ. «Արարատ»ի և 1913 թ. «Մշակի» վիճակագրություններում հայ բնակչության թվաքանակը բաշխված է ըստ Կիլիկիո կաթողիկոսության թեմական բաժանման՝ առավել կամ պակաս մանրամասնություններով:

Ըստ կառուցվածքի՝ Կիլիկիայի, Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության այլ շրջանների հայ բնակչության

²¹ Բացառություն են կազմում Ռ. Գևորգյանի և Փ. Փարոջյանի հաշվարկում Կիլիկիայի որոշ հայաբնակ բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տարբեր աղբյուրներից քաղված տվյալները:

թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալները կարելի է բաժանել երեք խմբի.

- գուտ տների (=ընտանիք, ծուխ, տնտեսություն)²² թիվը պարունակող տվյալներ,
- գուտ շնչերի (=անձ, հոգի) թիվը պարունակող տվյալներ,
- և տների. և շնչերի թիվը պարունակող տվյալներ:

Երբ աղբյուրը ներկայացնում է միայն տների թիվը, բնակչության թվաքանակը ստանալու նպատակով անհրաժեշտություն է առաջանում հաշվարկել մեկ տան վրա շնչերի միջին թիվը և բազմապատկել տների ընդհանուր թվին: XIX դ. վերջի - XX դ. սկզբի արևմտահայության ժողովրդագրական հարցերով զբաղվող ուսումնասիրողները որպես Արևմտյան Հայաստանի տարբեր տարածքներում բնակվող մեկ հայ ընտանիքի անդամների միջին թիվ ընդունել են 5, 6, 7, 8 կամ ավել: Կարծում ենք, որ Կիլիկիայի հայ բնակչության, հատկապես՝ Դաշտային Կիլիկիայի, ինչպես նաև քաղաքաբնակ կիլիկիահայերի պարագայում միանգամայն արդարացված է, ինչպես նաև տարբեր, իրարից անկախ աղբյուրների հաղորդած տեղեկություններից է բխում, որպես մեկ ընտանիքի անդամների միջին թիվ ընդունել 5-ը²³:

²² Ուշ միջնադարի և նոր շրջանի Հայաստանի պատմական ժողովրդագրությամբ զբաղվող մասնագետների շրջանում ընդունված է տարբերակել «ընտանիք» և «տուն» («ծուխ») հասկացությունները՝ այն հիմնավորմամբ, որ նահապետական նիստուկացի պայմաններում մեկ տան (ծխի) մեջ կարող էին բնակվել մի քանի ընտանիքներ: Դրան համապատասխան՝ տարբերակվում է մեկ ընտանիքին և ծխին ընկնող անդամների միջին թիվը («միջին մեծության գործակից»): Այսպես, օրինակ, ըստ հայ ուսումնասիրող Մ. Մալխասյանի՝ XVII դ. առաջին կեսին Հայաստանի տարածքում բնակվող հայ ընտանիքի և ծխի (տան) միջին մեծության գործակիցները համապատասխանաբար 7 և 10 էին (տես Միրայել Մալխասյան, *Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 16-րդ դարում - 17-րդ դարի առաջին կեսին* (Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2020), 120): Ցավոք, կիլիկիահայության թվաքանակի վերաբերյալ մեզ հասու վիճակագրությունները բավարար հիմք չեն տալիս «ընտանիք» և «ծուխ» հասկացությունները տարբերակելու և, համապատասխանաբար, տարբեր գործակիցներ կիրառելու համար: Դրա հետ մեկտեղ, արևմտահայությանը (ներառյալ կիլիկիահայությանը) վերաբերվող XIX դ. վերջերի - XX դ. սկզբերի վիճակագրական սկզբնաղբյուրների ուսումնասիրության արդյունքում մենք առավել հակված ենք կարծելու, որ հատկապես խոշոր բնակավայրերին (գյուղաքաղաք, քաղաք) վերաբերող տվյալների պարագայում, որպես «տուն» առավելապես նկատի է առնված ոչ թե ծուխը, այլ ընտանիքը:

²³ Այսպես, մեզ հասու է Անտիոքի (Անթաքիա) եպիսկոպոսական վիճակի

Դրա հետ մեկտեղ, աղբյուրները վկայում են, որ Լեոնային Կիլիկիայի տարածքի, հատկապես՝ Հաճընի, Ջեյթունի և հարակից շրջանների հայկական ընտանիքների անդամների միջին թիվը ավելի բարձր էր՝ 6-8 շունչ²⁴:

առաջնորդ Մովսես վարդապետ Ոսկերիչյանի կողմից 1911 թ. պատրաստված վիճակագրությունը, որտեղ ներկայացված են թեմի հայաբնակ բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ՝ բաշխված ըստ տների և անների: Համաձայն Մ. Ոսկերիչյանի վիճակագրության՝ Սվեդիո (Մուսա լեռ) վեց հայաբնակ բնակավայրերում կար 1338 տուն, 6283 շունչ հայ բնակչություն, այսինքն՝ մեկ տան անդամների միջին թիվը 4.7 էր, Լավոդիկեի, Աստիորի և Ջիսր-ի Շուդուրի (Քեսաբ) 26 հայաբնակ բնակավայրերում կար 3011 տուն, 15077 շունչ հայ բնակչություն, այսինքն՝ նշված շրջանների հայ ընտանիքի միջին մեծության գործակիցը 5 է (տե՛ս *Յուշասնտեան Մուսա լիրան*, խմբ. Մարտիրոս Անդրեասի Գուշագճեան, Պոդոս Մատուռեան (Պէյրութ, տպ. Ատլաս, 1970), 850):

²⁴ Տե՛ս օրինակ 1909 թ. Ադանայի ջարդի հետևանքով ամուսիններ կորցրած կանանց օգնելու նպատակով Այրիախնամ հանձնաժողովի պատվիրակ-տեսուչ Ժակ Սայապալյանի վկայությունը, որը 1911-1912 թթ. Կիլիկիա տեսչական այցով շրջագայության արդյունքում պատրաստած տեղեկագրում ներկայացնելով Հաճըն քաղաքի հայ բնակչության թիվն ըստ տների, պարզաբանում է, որ Կիլիկիայում բնակչությունը ընդհանրապես տուն զույս 5 հոգի է հաշվվում, սակայն Հաճընի համար միջինը առնվազն 7 պետք է հաշվել (տե՛ս *Տեղնկագիր սյրիսխնամ Յանձնաժողովի* 49):

VI. Կիլիկիահայության թվաքանակի հաշվարկ ըստ առանձին վարչատարածքային միավորների

1. Ադանայի նահանգի Ադանայի գավառ

Ադանայի նահանգի Ադանայի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ մեր կողմից առանձնացված վիճակագրական սկզբնաղբյուրների տվյալներն են (տե՛ս նաև Աղյուսակ 7).

1. 1895 թ. Կիլիկիո կաթողիկոսարանի վիճակագրություն՝ 3800 տուն, 19000 շունչ, այդ թվում Ադանա քաղաքն իր գյուղերով՝ 3600 տուն, 18000 շունչ, Մսիս՝ 200 տուն, 1000 շունչ¹:
2. 1902 թ. Մ. Օրմանյանի վիճակագրություն՝ 37900 շունչ, այդ թվում՝ 2000 կաթոլիկ և 900 բողոքական հայ (ներառյալ Մերսինի գավառի (Մերսին, Տարսոն) և Ջերեյ-Բերեքթեփի գավառի Օսմանիեի, Բախչեի և Իսլահիեի գավառակների հայ բնակչությունը)²:
3. 1910 թ. Հ. Առաքելյանի վիճակագրություն՝ 25000 շունչ (այլ մանրամասնություններ չի հաղորդվում)³:
4. 1912 թ. Հայոց պատրիարքարանի-Ապահովության հանձ-

¹ Տե՛ս «Վիճակագրութիւն Կիլիկիոյ Հայոց», 46:

² Տե՛ս Ormanian, *The Church of Armenia*, 241: Մ. Օրմանյանի աշխատության հայերեն հրատարակությունում զետեղված վիճակագրությունը Ադանայի թեմի տվյալների մասով ֆրանսերեն և անգլերեն հրատարակությունների համեմատ որոշակի տարբերություններ է պարունակում. ըստ հայերեն հրատարակության՝ Ադանայի թեմի հայ բնակչության թիվը 31200 է, որից 1000 կաթոլիկ և 200 բողոքական (տե՛ս Օրմանեան, *Հայոց եկեղեցին*, 263): Մի կողմից ֆրանսերեն և անգլերեն, մյուս կողմից՝ հայերեն հրատարակությունների տվյալների միջև այս տարբերությունը, գուցե, բացատրվում է նրանով, որ հայերեն հրատարակության տվյալն արտացոլում է միայն Ադանայի և Մերսինի գավառների հայ բնակչության թվաքանակը, մինչդեռ ֆրանսերեն և անգլերեն հրատարակությունների տվյալը ներառում է նաև Ջերեյ-Բերեքթեփի գավառի Օսմանիեի, Բախչեի և Իսլահիեի գավառակների հայերի թիվը (ինչպես մենք արդեն նշել էինք Կիլիկիայի տարածքի եկեղեցական-թեմական բաժանմանը վերաբերվող բաժնում, Բերեքթեփի թեմը փաստացի գտնվում էր Ադանայի առաջնորդարանի իրավասության տակ): Եթե մեր ենթադրությունը հիմնավոր է, ապա ըստ Մ. Օրմանյանի՝ Ջերեյ-Բերեքթեփի գավառի վերոնշյալ գավառակների հայ բնակչության թիվը 6700 է:

³ Տե՛ս Առաքելեան, «Թիրքահայ ժողովրդի վիճակագրութիւնը», 73:

նաժողովի վիճակագրություն՝ 79000 շունչ (ներառյալ Ադանայի նահանգի Մերսինի (Մերսին, Տարսոն) և Ջերե-Բերեքթի (Դորթ-Յոլ և Օսմանիե) գավառների հայ բնակչությունը)՝:

5. 1913 թ. «Մշակի» վիճակագրություն՝ 24121 շունչ, այդ թվում՝ Ադանա քաղաք և գավառակի գյուղեր՝ 23235, Ջեյհանի (Համիդիե) գավառակ՝ 886⁵:
6. 1913 թ. Մ. Ցիցիկյանի վիճակագրություն՝ 32450 շունչ, այդ թվում՝ Ադանայի գավառակ՝ 32350, Ջեյհան՝ 100⁶:
7. 1914 թ. օսմանյան վիճակագրություն՝ 17738 շունչ, որից 16850-ը⁷ Ադանա քաղաքում և Ադանայի գավառակի հայաբնակ բնակավայրերում, 888-ը⁸ Ջեյհան (Համիդիե), Կարայիսալի և Յումուրթալիկ գավառակներում⁹:
8. 1914 թ. ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խմբի վիճակագրություն՝ 35000 շունչ (ներառյալ Մերսինն ու Տարսոնը, ինչպես նաև Ջերե-Բերեքթի գավառի Օսմանիեի, Բալսեի և Իսլահիեի գավառակների հայ բնակչությունը)¹⁰:
9. 1914 թ. Ռ. Գևորգյանի և Փ. Փարուջյանի հաշվարկ՝ 27990 շունչ¹¹:

¹ Տես «Բաղդատական վիճակագրութիւն հայ բնակչութեան Օսմ. Կայսրութեան մէջ տեղահանութենէ առաջ եւ վերջ», 262:

⁵ Տես «Հայերը Կիլիկիայում», 2 (աղբյուրում Ադանայի հայ բնակչության թվաքանակի համար տվյալը 3235 է, ինչն ակնհայտորեն տպագրական վրիպակի արդյունք է. ուղղել ենք համապատասխան հանրագումար տվյալի):

⁶ Տես Ցիցիկեան, «Հայերը Կիլիկիայում», 1108-1109:

⁷ Այդ թվում՝ 888 կաթոլիկ և 1,006 բողոքական հայ:

⁸ Այդ թվում՝ 13 կաթոլիկ և 36 բողոքական հայ:

⁹ Տես Karpat, *Ottoman population 1830-1914*, 172-173:

¹⁰ Տես Zamir, "Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919", 102:

¹¹ Տես Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman*, 58, 267-271:

Աղյուսակ 7. Մեծ եղեռնի նախօրյակին Ադանայի գավառի հայ բնակչության թվաքանակն ըստ տարբեր վիճակագրական տվյալների

Գավառակներ	1895 Կիլիկիո կաթողիկոսարան	1902 Օրմանյան	1910 Առաքելյան	1912 Հայոց պատրիարքարան	1913 «Մշակ»	1913 Ցիցիկյան	1914 օսմանյան	1914 ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խումբ	1914 Գևորգյան-Փաբուջյան
Ադանա	19000 ¹²	-	-	-	23235	32350	16850	-	27990 ¹³
Ջելհան	-	-	-	-	886	100	348	-	-
Կարայիսալի	-	-	-	-	-	-	20	-	-
Յումուրթալիկ (Այաս)	-	-	-	-	-	-	520	-	-
Ընդամենը	19000	37900	25000	79000¹⁴	24121	32450	17738	35000¹⁵	27990

Վերոնշյալ վիճակագրություններից Հայոց պատրիարքարանի՝ 1912 թ. տվյալը (79000 շունչ հայ) Ադանայի գավառի հայ բնակչության թվաքանակի հաշվարկ կատարելու համար կիրառելի չէ, քանի որ դրա մեջ ներառված են նաև Ադանայի գավառից դուրս գտնվող տարածքներ: Ինչ վերաբերվում է 1902 թ. Մաղաքիա Օրմանյանի,

¹² Ներառյալ Մսիս՝ 200 տուն, 1000 շունչ հայ:

¹³ Այդ թվում, Ադանա քաղաք՝ 26430, Բրիստիանքոյ (Հայ-գյուղ)՝ 190, Ինջիլիկ՝ 250 շունչ, Շեյխ Մուրադ՝ 300, Մսիս՝ 480, Արդոլու՝ 340:

¹⁴ Ադանայի նահանգի Մերսինի և Ջեբել Բերեքթեթի գավառների հայ բնակչությունը ներառյալ (Մերսին, Տարսուս, Դորթ-Յոլ և Օսմանիե):

¹⁵ Ներառյալ Ջեբել-Բերեքթեթի և Մերսինի գավառները:

1914 թ. ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խմբի տվյալներին (համապատասխանաբար՝ 37900 և 35000 շունչ հայ), ապա դրանցից հանելով Մերսինի գավառի հայության մոտավոր թիվը՝ մոտ 5000-6000, ինչպես նաև Ջեբել-Բերեքեթի գավառի Օսմանիեի, Բախչեի և Իսլահիեի գավառակների հայ բնակչության թիվը՝ 6700 (Մ. Օրմանյան), 6000 (ԱՄՆ փորձագիտական խումբ), կարելի է ենթադրել, որ նշված վիճակագրությունները զուտ Ադանայի գավառի համար հաղորդում են մոտ 25000 հայ բնակչություն:

Համադրելով մնացած տվյալները՝ կարող ենք տեսնել, որ Ադանայի գավառի հայերի ամենացածր թիվը հաղորդում է օսմանյան վիճակագրությունը՝ 17738, ամենաբարձրը՝ Մ. Ցիցիկյանը՝ 32450¹⁶:

Ըստ հայաբնակ բնակավայրերի հայ բնակչության բաշխումը պարունակող օժանդակ վիճակագրական աղբյուրները փաստում են, որ Ադանայի գավառի մշտական հայ բնակչության ճնշող մեծամասնությունը (96-97%) կենտրոնացած էր Ադանա քաղաքում, մնացածը՝ Ադանայի գավառակի և ընդհանուր գավառի այլ բնակավայրերում և ագարակներում (դրանց թիվն ըստ 1908 թ. վերաբերող օսմանյան տվյալների, այսինքն՝ նախքան 1909 թ. Ադանայի կոտորածը՝ 9¹⁷, ըստ 1911 թ. Ժ. Սայապալյանի տեղեկագրի՝ 6 և ըստ Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի կողմից օգտագործված 1913 թ. եկեղեցական-թեմական վիճակագրական տվյալների՝ 5 էր¹⁸ (տե՛ս Աղյուսակ 8):

¹⁶ Չի կարելի բացառել, որ Մ. Ցիցիկյանի տվյալը շփոթմունքի արդյունք է. ըստ երևույթին, ուսումնասիրողն իր կողմից օգտագործված հայկական եկեղեցական-թեմական վիճակագրական աղբյուրի՝ Ադանայի թեմի համար հաղորդվող տվյալը սխալմամբ վերագրել է զուտ Ադանայի գավառին:

¹⁷ Տե՛ս Սերովբեան, *Հովիին խրատները*, 172-175: Նույն տվյալները, բաժանված ըստ Ադանայի նահանգի վարչական միավորների, տե՛ս Եղիայեան, *Առանայի հայոց պատմություն*, 150:

¹⁸ Տե՛ս Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman*, 58, 267-271:

Ադյուսակ 8. Ադանայի գավառի հայ բնակչության թվաքանակն ըստ հայաբնակ բնակավայրերի

	Հայաբնակ բնակավայրեր	1908	1911	1914
		Սերովբյան ¹⁹	Մայապալյան ²⁰	Գևորգյան-Փարուջյան ²¹
		Շունչ	Շունչ	Շունչ
1	Ադանա քաղաք	17844	20000	26430
2	Հայ-գյուղ (Բրիստոլանքոյ)	190		190
3	Ինջիրիկ	250	150 (30 տուն ²²)	250
4	Շեյխ-Մուրադ	160	300 (60 տուն)	300
5	Աբդողլու	340	150 (30 տուն ²³)	340
6	Մսիս	500	50 (10 տուն ²⁴)	480
7	Ջեյհան (Համիդիե)	418	205 (41 տուն ²⁵)	-
8	Կայըրլը	84	-	-
9	Գեմի-Սուրեն	37	-	-
10	Միհմանդար	23	-	-
11	Թանկերը-Վերդի և այլ 11 ագարակներ	95	-	-

¹⁹ Տե՛ս Մուշեղ եպս Սերովբեան, *Հովիվն խրատները*, 172-175:

²⁰ *Տեղեկագիր այրիսխնամ Յանձնածողովի*, 62 (Ջեյհան), 78-80 (Ադանա քաղաք և գյուղեր):

²¹ Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman*, 267-271:

²² Նախքան 1909 թ. ջարդերը գյուղն ուներ 80 տուն, 400 շունչ հայ բնակչություն:

²³ Նախքան 1909 թ. ջարդերը գյուղն ուներ 100 տուն, 500 շունչ հայ բնակչություն:

²⁴ Նախքան 1909 թ. ջարդերը գյուղն ուներ 80 տուն, 400 շունչ հայ բնակչություն:

²⁵ Նախքան 1909 թ. ջարդերը բնակավայրն ուներ 50 տուն, 250 շունչ հայ բնակչություն:

Ընդամենը	19941	20855	27990
----------	-------	-------	-------

Ադանա քաղաքի և գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ այլ աղբյուրների տվյալներն են.

1. 1909 թ., Հ. Թերզյան՝ 30000 (Ադանա քաղաքի հայ բնակչության թիվ, ներառյալ պանդուխտները, որոնք, ըստ հեղինակի, օսմանյան կառավարության կողմից չէին հաշվառվում և, համապատասխանաբար, նրանց թիվը չէր արտացոլվում տարբեր վիճակագրություններում): Հեղինակը միաժամանակ արձանագրում է, որ ըստ 1908 թ. օսմանյան պաշտոնական մարդահամարի տվյալների, հայերի թիվը 17844 էր²⁶:
2. 1909 թ. կոտորածների ականատես Հ. Աշճյան՝ 22000, որից 20000-ը առաքելական, 1500-ը՝ բողոքական և 500-ը կաթոլիկ հայեր (միայն Ադանա քաղաք)²⁷:
3. Սփյուռքահայ ուսումնասիրող Բյուզանդ Եղիայան, «Ատանայի Հայոց պատմություն» ուսումնասիրության հեղինակ՝ 30000-32000 (Ադանա քաղաք և շրջակա հայաբնակ բնակավայրեր)²⁸:
4. 1915 թ., «Արևմտահայ աշխարհ» աշխատության հեղինակ Ս. Ծոցիկյան՝ 25000 (միայն Ադանա քաղաքը)²⁹:

Ըստ «Ժամանակ» թերթի խմբագիր, ցեղասպանության վերապրող Սեպուհ Ակունու տվյալների՝ 1915-ին Ադանայի գավառից տեղահանվել էր 5000 տուն հայ, խուսափել էին տեղահանությունից և քաղաքում էին մնացել 1000 տուն հայ³⁰. այսինքն, 1915-ին Ադանայի

²⁶ Թերզյան, *Ատանայի կեսանքը*, 7:

²⁷ Տեն Աշճեան, *Ատանայի եղանքը*, 15:

²⁸ Տեն Եղիայան, *Ատանայի հայոց պատմություն*, 156 (ըստ երևույթին, ուսումնասիրողի համար հիմք է ծառայել Հ. Թերզյանի վերը նշված տվյալը):

²⁹ Տեն Ս. Մ. Ծոցիկյան, *Արևմտահայ աշխարհ* (Նիւ Եորք, տպագրություն Ա.Յ. Լեյլեկեան, 1947), 87:

³⁰ Ս. Ակունի, Միլիոն մը հայերու ջարդի պատմությունը (Կ.Պոլիս, տպագր. Յ. Ասատուրեան որդիք, 1920), 307:

գավառում նախքան տեղահանությունը կար մոտ 6000 տուն, 30000 շունչ հայ բնակչություն (մեկ տան վրա 5 շունչ հաշվարկով):

Համադրելով վերոնշյալ բոլոր տվյալները՝ գտնում ենք, որ միանգամայն հավաստի և առավել մոտ են իրականությանը Մեծ եղեռնի նախօրյակին Ադանայի գավառի հայ բնակչության թվաքանակը 25000-30000-ի սահմաններում հաշվող վիճակագրությունները (1902 թ. Մ. Օրմանյան, 1910 թ. Հ. Առաքելյան, 1913 թ. Մ. Ցիցիկյան, 1913 թ. Ռ. Գևորգյան և Փ. Փաբուջյան, 1914 թ. ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խումբ և այլն):

Ելնելով վերոնշյալից՝ Ադանայի գավառի հայ բնակչության մեր հաշվարկի համար որպես հիմք ենք ընդունում Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի տվյալները՝ պակասող շրջանների համար այն լրացնելով 1914 թ. օսմանյան վիճակագրության տվյալներով:

Այսպիսով, համաձայն վերոնշյալ մեթոդաբանությամբ կատարված հաշվարկի՝ Ադանայի գավառի հայ բնակչության թվաքանակը Հայոց ցեղասպանության նախօրյակին մոտ 28750 էր, որից մոտ 27850-ը բնակվում էր Ադանայի գավառակում (Ադանա քաղաք՝ 26500, Հայ-գյուղ՝ 200, Ինջիրլիկ՝ 300, Աբդողլու՝ 350, Մսխս՝ 500), 400-ը՝ Ջեյհանի գավառակում (օսմանյան վիճակագրության տվյալ) և 500-ը Յումուրթալիկի (Այաս) գավառակում (օսմանյան վիճակագրության տվյալ):

Ըստ 1914 թ. օսմանյան վիճակագրության՝ Ադանայի գավառում կար 122150 իսլամադավան (թուրքեր, չերքեզներ, քրդեր և այլն), 3345 հույն (հունադավան) և 1587 այլ էթնոկրոնական հարանվանություններին պատկանող ազգաբնակչություն³¹: Վերոնշյալ տվյալների հիման վրա համապատասխան հաշվարկը ցույց է տալիս, որ Հայոց ցեղասպանության նախօրյակին հայերը կազմում էին գավառի ազգաբնակչության շուրջ 20%-ը:

³¹ Karpat, *Ottoman population 1830-1914*, 172-173: Այլ տվյալներով հույն ու քրիստոնեադավան այլ ազգաբնակչության թիվը գավառում ավել է եղել: Այսպես, ըստ ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խմբի տվյալների՝ գավառում հույն ազգաբնակչության թիվը 1914 թ. մոտ 20,000 էր (տե՛ս Zamir, "Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919", 102):

2. Ադանայի նահանգի Կոզանի գավառ

Ադանայի նահանգի Կոզանի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ մեր կողմից առանձնացված վիճակագրական սկզբնաղբյուրները հաղորդում են հետևյալ տվյալները (տես նաև Աղյուսակ 9)։

1. 1895 թ. Կիլիկիո կաթողիկոսարանի վիճակագրություն՝ 6100 տուն, 30500 շունչ, այդ թվում՝ Սիս՝ 600 տուն, 3000 շունչ, Հաճըն իր գյուղերով՝ 5000 տուն, 25000 շունչ, Վահկա՝ 200 տուն, 1000 շունչ, Կարս-Բազար՝ 300 տուն, 1500 շունչ³²։
2. 1902 թ. Մ. Օրմանյանի վիճակագրություն՝ 30700 շունչ, որից 1000-ը կաթոլիկ, 700-ը՝ բողոքական հայ, այդ թվում Կոզանի, Ֆեքեի (Վահկա) և Կարս-Բազարի գավառակներ՝ 9500, որից 500-ը՝ բողոքական հայ, Հաճընի գավառակ՝ 21200, որից 1000-ը՝ կաթոլիկ և 200-ը՝ բողոքական հայ³³։
3. 1910 թ. Հ. Առաքելյանի վիճակագրություն՝ 47600 շունչ (տվյալի բաշխումն ըստ գավառակների բացակայում է)³⁴։
4. 1912 թ. Հայոց պատրիարքարանի-Ապահովության հանձնաժողովի վիճակագրություն՝ 39000 շունչ, որից Կոզանի, Կարս-Բազարի և Ֆեքեի գավառակներ՝ 18000, Հաճընի գավառակ՝ 21000³⁵։
5. 1913 թ. «Մշակի» վիճակագրություն՝ 42673 շունչ, այդ թվում Կոզանի գավառակ՝ 5600, Հաճընի գավառակ՝ 26480, Ֆեքեի գավառակ՝ 4948 և Կարս-Բազարի գավառակ՝ 5645³⁶։
6. 1913 թ. Մ. Ցիցիկյանի վիճակագրություն՝ 43073 շունչ, այդ թվում Կոզանի գավառակ՝ 6000, Հաճընի գավառակ՝ 26480,

³² Տես «Վիճակագրություն Կիլիկիոյ Հայոց», 46։

³³ Տես Ormanian, *The Church of Armenia*, 241 Օրմանյանի աշխատության հայերեն հրատարակությունում Հաճընի թեմի հայ բողոքականների թիվը նշված է 700, համապատասխանաբար՝ գավառակի ընդհանուր հայ բնակչության թիվը՝ 21700 (տես Օրմանյան, *Հայոց եկեղեցին*, 264)։

³⁴ Տես Առաքելյան, «Թիւրքահայ ժողովրդի վիճակագրութիւնը», 73։

³⁵ Տես «Բաղդատական վիճակագրութիւն հայ բնակչութեան Օսմ. Կայսրութեան մէջ տեղահանութենէ առաջ եւ վերջ», 262։

³⁶ Տես «Հայերը Կիլիկիայում», 2։

Ֆեքեի գավառակ՝ 4948 և Կարս-Բազարի գավառակ՝ 5645³⁷:

7. 1914 թ. օսմանյան վիճակագրություն՝ 21764 շունչ, այդ թվում 4067-ը³⁸ Կոզանի գավառակում, 13550-ը³⁹ Հաճընի գավառակում, 2940-ը⁴⁰ Ֆեքեի գավառակում և 1207-ը⁴¹ Կարս-Բազարի գավառակում⁴²:
8. 1914 թ. ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խմբի վիճակագրություն՝ 30000 շունչ (բաշխումն ըստ գավառակների բացակայում է)⁴³:
9. 1914 թ. Ռ. Գևորգյանի և Փ. Փարուջյանի հաշվարկ՝ 44043 շունչ, այդ թվում Կոզանի գավառակ՝ 5600, Հաճընի գավառակ՝ 27850, Ֆեքեի գավառակ՝ 4948 և Կարս-Բազարի գավառակ՝ 5645⁴⁴:

³⁷ Տե՛ս Ցիցիկեան, «Հայերը Կիլիկիայում», 1108:

³⁸ Այդ թվում՝ 62 կաթոլիկ և 146 բողոքական հայ:

³⁹ Այդ թվում՝ 1103 կաթոլիկ և 1,405 բողոքական հայ:

⁴⁰ Այդ թվում՝ 632 բողոքական հայ:

⁴¹ Այդ թվում՝ 99 բողոքական հայ:

⁴² Տե՛ս Karpat, *Ottoman population 1830-1914*, 172-173:

⁴³ Տե՛ս Zamir, "Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919", 102:

⁴⁴ Տե՛ս Kevorkian, Paboudjian, *Les Arméniens dans l'Empire ottoman*, 58, 290-300:

Աղյուսակ 9. Մեծ եղեռնի նախօրյակին Կոզանի գավառի հայ բնակչության թվաքանակն ըստ տարբեր վիճակագրական տվյալների

Գավառակներ	1895 Կիլիկիո կաթողիկոսարան	1902 Օրմանյան	1910 Առաքելյան	1912 Հայոց պատրիարքարան	1913 «Մշակ»	1913 Ցիցիկյան	1914 օսմանյան	1914 ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խումբ	1914 Գևորգյան-Փարության
Կոզան	3000	9500	-	18000	5600	6000	4067	-	5600
Ֆեքե	1000		-		4948	4948	2940	-	4948
Կարս-Բազար	1500		-		5645	5645	1207	-	5645
Հաճըն	25000	21200	-	21000	26480	26480	13550	-	27850
Ընդամենը	30500	30700	47600	39000	42673	43073	21764	30000	44043

Ինչպես կարող ենք տեսնել վերը ներկայացված տվյալներից՝ Կոզանի գավառի հայ բնակչության համար ամենացածր թիվը հաղորդում է 1914 թ. օսմանյան վիճակագրությունը՝ 21764 շունչ, ամենաբարձր թիվը պարունակում է «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելյանի՝ 1910 թ. վիճակագրությունը՝ 47600 շունչ: Կոզանի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ 1913 թ. Մ. Ցիցիկյանի և «Մշակի» վիճակագրությունները գրեթե նույնական են, ինչը ենթադրել է տալիս, որ դրանց հիմքում ընդհանուր աղբյուր է ընկած: Ռ. Գևորգյանի և Փ. Փարությունի տվյալները սերվում են 1913 թ. «Մշակի» վիճակագրությունից:

§1. Կոզանի գավառակ (կենտրոնական)

XX դարի սկզբներին Կոզանի գավառակի տարածքում մշտական հայ բնակչություն ուներ միայն Սիս (Կոզան) քաղաքը: Շրջակա բնակավայրերում հայերին էին պատկանում ցաքուցրիվ ագարակներ, որոնք հայաշատ էին դառնում հատկապես գյուղատնտեսական աշխատանքների ժամանակաշրջանում (գարուն–աշուն)՝ ծառայելով նաև որպես ամառանոցներ⁴⁵:

Սսի հայ բնակչությունը ավելանում էր ոչ միայն բնական աճի, այլ նաև ապահովության և անվտանգության նկատառումներով գավառի տարբեր գյուղական բնակավայրերից դեպի քաղաք հայերի տեղափոխման պատճառով. եթե 1895 թ. Կիլիկիո կաթողիկոսարանի տվյալներով քաղաքում կար՝ 600 տուն, 3000 շունչ հայ, ապա 1913 թ. վերաբերող «Մշակի» և Մ. Տիցիկյանի վիճակագրությունները հաղորդում են արդեն 5600-6000 հայ բնակչության առկայության մասին:

Շնորհիվ ինքնապաշտպանության՝ Սիս քաղաքի և շրջակայքի հայ բնակչությունը գրեթե չէր տուժել 1909 թ. կոտորածներից⁴⁶:

Կոզանի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ պարունակող հայկական օժանդակ աղբյուրները հիմնականում հաստատում են 1913 թ. «Մշակի» և Մ. Տիցիկյանի վիճակագրությունների տվյալները:

1. Այսպես, Հ. Թերզյանն իր «Կիլիկիո աղետը» աշխատությունում հաղորդում է, որ 1909թ. Սիս քաղաքն ուներ 1500 տուն հայ բնակչություն⁴⁷ (համեմատության համար՝ ըստ Ժ. Սալապալյանի, որը հիմնվում է օսմանյան իշխանությունների տվյալների վրա, 1911 թ. քաղաքում կար 800 տուն, 4000 շունչ հայ բնակչություն⁴⁸):
2. Համաձայն Առաջին աշխարհամարտից հետո Սիս վերադարձած հայերի ստեղծած կառույցի՝ Ազգային միության

⁴⁵ Տե՛ս Քելեշեան, *Սիս-Մասուն*, 218-219:

⁴⁶ Տե՛ս Շահպազեան, «Ինքնապաշտպանությունը Կիլիկեան աղէտին մէջ»:

⁴⁷ Տե՛ս Թերզեան, *Կիլիկիոյ աղետը*, 196:

⁴⁸ Տե՛ս *Տեղեկագիր այրիահինամ Յանձնաժողովի*, 53:

տվյալների՝ քաղաքը նախքան 1915 թ. տեղահանությունն ունեցել է մոտ 6000 շունչ հայ բնակչություն⁴⁹:

3. Մեկ այլ քաջատեղյակ հեղինակ՝ Ս. Ծոցիկյանը Սսի և Կարս-Բազարի հայ բնակչության թիվը միասին հաշվում է մոտ 10000 շունչ⁵⁰:
4. Համաձայն տարբեր սկզբնաղբյուրների տվյալների հիման վրա Սիս քաղաքի հայ բնակչության թվաքանակի հարցին հանգամանակից անդրադարձած սիյուոքահայ ուսումնասիրող Միսաք Քելեշյանի՝ Մեծ եղեռնի նախօրյակին Սսում կար մոտ 1500 տուն, 6000 շունչ հայ, իսկ հաշվի առնելով այլ շրջաններից քաղաք տեղափոխված եկվոր (այդ թվում՝ պանդուխտ) հայերին և թերհաշվառման գործոնը՝ 8000 շունչ⁵¹:

Հաշվի առնելով վերոնշյալ տվյալները, հատկապես Մ. Քելեշյանի հաշվարկը՝ գտնում ենք, որ Հայոց ցեղասպանության նախօրյակին Սիս քաղաքի և գավառակի մշտական հայ բնակչության թիվը մոտ 6000 էր (պանդուխտները ներառյալ՝ 8000):

§2. Կարս-Բազարի գավառակ

Մեր կողմից առանձնացված սկզբնաղբյուրներից (տե՛ս Աղյուսակ 9) Կարս-Բազարի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ առավել ցածր տվյալն է հաղորդում 1914 թ. օսմանյան վիճակագրությունը՝ 1207 շունչ, իսկ ամենաբարձր տվյալը պարունակում են 1913 թ. «Մշակի» և Մ. Ցիցիկյանի վիճակագրությունները՝ 5645:

Օժանդակ աղբյուրներից՝ Հ. Թերզյանը Կարս-Բազար ավանում

⁴⁹ Տե՛ս Լ. Աճեմեան, «Պտոյտներ Կիլիկիոյ մէջ», *Արև, ազգային շահերու օրկան* (Ադեքսանդրիա), 1920, հունվարի 28 №112 (727): Նշված թվից տարագրությունը վերապրել էր և 1919-20 թթ. ընթացքում Սիս էր վերադարձել 4200-ը (նույն տեղում):

⁵⁰ Ծոցիկեան, *Արևմտահայ աշխարհ*, 665:

⁵¹ Տե՛ս Քելեշեան, *Սիս-Մասունք*, 183: Ուսումնասիրողը պաշտպանում է Սսի հայ բնակչության թիվը 8000 հաշվելը՝ մատնանշելով քաղաքի մեջ «30-40 տարիներէ ի վեր հաստատուած» եկվորների և մարդահամարներում չարձանագրված հարյուրավոր մեթրում (ծածուկ) անձանց հանգամանքը (նույն տեղում):

1909 թ. ջարդերի նախօրյակին հաշվում է մոտ 200 տուն, 1000 շունչ հայ բնակչություն: Ըստ հեղինակի՝ քաղաքի հայերի մեծ մասը Հաճընից և Մարաշից առևտրական գաղթականներ էին, որոնք գալիս էին Կարս միայն ձմեռային ամիսներին և ամառը վերադառնում էին իրենց հայրենի բնակավայրեր⁵²: Հաջորդիվ նա ավելացնում է, որ 1909 թ. ապրիլյան ջարդի օրերին Կարս-Բազարում էին կենտրոնացել և ամրացել մոտ 800 ընտանիք, որից 600-ը (3000 հոգի)՝ շրջակա գյուղերից⁵³:

Ըստ 1910 թ. «Ազատամարտ» թերթում գետեղված տեղեկության՝ Կարս-Բազար գյուղաքաղաքն ունեցել է մոտ 200 տուն հայ բնակչություն⁵⁴:

Կարս-Բազարի գավառակի հայաբնակ բնակավայրերի մասին տեղեկություններ է հաղորդում նաև Մ. Քելեշյանը: Ըստ ուսումնասիրողի՝ Մեծ եղեռնի նախօրյակին Կարս-Բազարի գավառակում կար 12 հայաբնակ բնակավայր (ներառյալ ագարակները)՝ առնվազն 540 տուն հայ բնակչությամբ (տե՛ս Աղյուսակ 10)⁵⁵:

Բացի վերոնշյալ բնակավայրերից, դեպի հարևան Մարաշի գավառի Անտրոնի գավառակին էր հարում, սակայն վարչական առումով Կարս-Բազարի գավառակի կազմի մեջ էր մտնում նաև Նյուրփետ հայաբնակ գյուղը՝ մոտ 30 տուն հայ բնակչությամբ (կեսը՝ բողոքական հայեր)⁵⁶:

⁵² Տե՛ս Թ-երգեան, *Կիլիկիոյ սղէտը*, 213:

⁵³ Նույն տեղում, 216:

⁵⁴ Տե՛ս Մ.Ս.Գ. «Առանայի արեւելեան անկիւնը. Կարս-Պազար (վիճակագրական)», *Ազատամարտ, օրաթերթ* (Կ.Պոլիս), 1910, փետրուար 11/24. №207:

⁵⁵ Տե՛ս Քելեշեան, *Սիւ-Մստեան*, 221-222: Կարս-Բազարի գավառակի հայաբնակ բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ Քելեշյանի հաղորդած տվյալներն օգտագործում են նաև ֆրանսահայ ուսումնասիրողներ Ռ. Գևորգյանը և Փ. Փարոյանը (տե՛ս Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman*, 300), ինչպես նաև ամերիկահայ ուսումնասիրող Ս. Կարայանը (տե՛ս Karayan, *Armenians in Ottoman Turkey*, 1914, 100, 105):

⁵⁶ Բնակավայրի մասին տե՛ս մասնավորապես Տեղեկագիր այրիսինսա՛մ Յանձ-Նասժողովի, 56, տե՛ս նաև Գուտուլեան, *Կիլիկիան աշխարհագրութիւն*, 46:

**Աղյուսակ 10. Կարս-Բազարի գավառակի հայ բնակչության
 թվաքանակը XX դարի սկզբներին ըստ Մ. Քելեշյանի
 տվյալների**

	Հայաբնակ բնակավայր	Տուն	Շուն ⁵⁷
1	Կարս-Բազար	210 ⁵⁸	1050
2	Չոխախ	80	400
3	Ակդամ	70	350
4	Բողագ-դելիկ	70	350
5	Սիպի	- ⁵⁹	-
6	Գոյումճյանների ագարակ	15	75
7	Բալասանյան Գրիգորի ագարակ	-	-
8	Նալբանդենց ագարակ	70	350
9	Հոգի Հաճիի ագարակ	15	75
10	Կուսիկ Հակոբի ագարակ	10	50
11	Գյուլումճյան Ավետիսի ագարակ	- ⁶⁰	-

⁵⁷ Մ. Քելեշյանը հաղորդում է միայն տների թիվը, շների հաշվարկը մեր կողմից ընդունելով մեկ տան անդամների միջին թիվը 5 շուն:

⁵⁸ Մ. Քելեշյանը հաղորդում է, որ Կարս-Բազարի հայ և թուրք բնակչությունը միասին 400 ընտանիք, 1,800 հոգի էր՝ մեծամասնությունը հայեր, ուստի քաղաքի համար հաշվել ենք 210 տուն, 1,050 շունչ հայ: Ֆրանսահայ ուսումնասիրողներ Ռ. Գևորգյանը և Փ. Փարուջյանը, որոնք նույնպես օգտվել են Մ. Քելեշյանի տվյալից, սխալմամբ 1,800-ն ընդունում է որպես զուտ հայերի թիվ (տե՛ս Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman*, 300):

⁵⁹ Նախքան Համիդյան կոտորածներն ուներ 60 տուն հայ բնակչություն: Կոտորածներից հետո գյուղը լքվել է, բնակչությունը տեղափոխվել է Կարս-Բազար, Սիս և այլ շրջաններ՝ վերադառնալով բնակավայր գյուղատնտեսական աշխատանքների սեզոնին:

⁶⁰ Նշվում է որպես հայաբնակ, սակայն բնակչության թիվը չի տրվում:

12	Ֆերմանյան Արթին Քեհեայի ազարակ	.61	-
13	Քեչեքաշյանների ազարակ	.62	-
	Ընդամենը Կարս-Բազարի գավառակ	540	2700

Այսպիսով, Հայոց ցեղասպանության նախօրյակին Կարս-Բազարի գավառակի տարածքում աղբյուրների կողմից վկայված է մշտական հայ բնակչություն ունեցող 10 հայաբնակ բնակավայր (խոշոր ազարակների հետ միասին՝ 14)՝ մոտ 600 տուն հայ բնակչությամբ, որից մատ 200-210-ը՝ գավառակի կենտրոնական Կարս-Բազար գյուղաքաղաքում, 390-400-ը՝ գավառակի թվով 13 հայաբնակ բնակավայրերում: Որպես մեկ ընտանիքի անդամների միջին թիվ ընդունելով 5-ը՝ գավառակի համար ստանում ենք մոտ 3000 շունչ մշտական հայ բնակչություն (եթե հաշվի առնենք ազարակներում աշխատող պանդուխտ մշակներին, ապա հայ բնակչության թիվը գուցե ավել է եղել՝ հասնելով 4000-ի):

§3. Ֆեքեի գավառակ

Մեր կողմից առանձնացված վիճակագրական սկզբնաղբյուրներից (տե՛ս Աղյուսակ 9) Ֆեքեի (Վահկա) գավառակի հայ բնակչության թվաքանակի առավել ցածր տվյալ է հաղորդում 1895 թ. Կիլիկիո կաթողիկոսարանի վիճակագրությունը՝ 200 տուն, 1000 շունչ, առավել բարձր տվյալը կարելի է գտնել 1913 թ. «Մշակի» և Մ. Ցիցիկյանի վիճակագրություններում՝ 4948 շունչ:

Օժանդակ աղբյուրներից Ֆեքեի գավառակի հայաբնակ բնակավայրերի և դրանցում հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ են հաղորդում Մ. Քելեշյանը և «Հաճընի ընդհանուր պատմությունը» աշխատության հեղինակ Հ. Պողոսյանը:

1. Ըստ Մ. Քելեշյանի տվյալների՝ Մեծ եղեռնի նախօրյակին

⁶¹ Նշվում է որպես հայաբնակ, սակայն բնակչության թիվը չի տրվում:

⁶² Նշվում է որպես հայաբնակ, սակայն բնակչության թիվը չի տրվում:

գավառակն ուներ 10 հայաբնակ բնակավայր՝ 693 տուն հայ բնակչությամբ (տե՛ս Աղյուսակ 11)⁶³:

2. Հ. Պողոսյանը, որը 1913 թ. անձամբ շրջել է գավառակի տարածքով, հաղորդում է Վահկայի գավառակի 8 հայաբնակ բնակավայրի անուն՝ 653 տուն, 3117 շունչ հայ բնակչությամբ (տե՛ս Աղյուսակ 11)⁶⁴:

Երկու աղբյուրների կողմից հաղորդվող տվյալների համադրման միջոցով մեր հաշվարկը ցույց է տալիս, որ Հայոց ցեղասպանության նախօրյակին Ֆեքեի գավառակի տարածքում կար 11 հայաբնակ բնակավայր՝ մոտ 3510 շունչ հայ բնակչությամբ, որից 1500-ը՝ Ֆեքե (Վահկա) գյուղաքաղաքում⁶⁵, 2000-ը՝ գավառակի 10 հայաբնակ գյուղերում⁶⁶:

⁶³ Հաշվարկը կատարվել է մեր կողմից՝ ըստ ուսումնասիրողի հաղորդած տվյալների: Աղյուսակում գետեղել, բայց հաշվարկի մեջ չենք ներառել աղբյուրում նշվող, սակայն 1890-ական թթ. հայաթափված Սինանլը և Բաղնիք բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները (տե՛ս Քելեշեան, *Սիւ-Մստեան*, 222-225):

⁶⁴ Հաշվարկը մեր կողմից՝ ըստ ուսումնասիրողի տվյալների: Տվյալները տե՛ս Յակոբ Պողոսեան, *Հաճրնի ընդհանուր պատմությունը և շրջակայ Գօզան-տաղի հայ գիւղերը* (Lou Անճէլըս, Հաճրնի հայրենակցական վերաշինաց միութեան կեդրոնական վարչության հրատ., 1942), 21-67:

⁶⁵ Վահկայի փաստացի հայ բնակչությունը կարող էր հասնել մինչև 2000-ի՝ հաշվի առնելով գավառակի գյուղերից տեղափոխված հայերի գործոնը: Վահկայում տեղակայված էր մոտ 1000 հոգանոց թուրքական զորամաս, ինչը նախատրոյակներ էր ստեղծել այնտեղ արհեստների և առևտրի աշխուժացման համար:

⁶⁶ Գավառակի գյուղական բնակավայրերի փաստացի հայ բնակչությունը կարող էր լինել ավելի նվազ՝ մոտ 1,500՝ հաշվի առնելով գյուղերից Վահկա ավան հայերի գաղթը:

Աղյուսակ 11. Ֆեքեի գավառակի հայ բնակչության թվաքանակը Հայոց ցեղասպանության նախօրյակին

№	Բնակավայր	1914 Մ. Քելեշյան		1914 Հ. Պողոսյան		Մեր հաշվարկը
		Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Շունչ
1	Ֆեքե (Վահկա)	200	1000	300	1500 ⁶⁷	1500
2	Երեպագան	150	750	150	600	700
3	Գիսենիթ	42	210	10	50 ⁶⁸	50
4	Սինակը	80 ⁶⁹	-	-	-	-
5	Կալա Դերեսի (Բերդաձոր)	50	250	50	250	250
6	Սըփան Դերե	-	-	15	75 ⁷⁰	75
7	Բաղնիք	30 ⁷¹	-	-	-	-
8	Կըզըլ Յար	50	250	10	50 ⁷²	50

⁶⁷ Հեղինակը հաղորդում է, որ 1915-ին Վահկա գյուղաքաղաքի ամբողջ բնակչությունը մոտավորապես 2500-3000 էր, բաղկացած հայերից և թուրքերից, մեծամասնությունը՝ հայ: Ըստ վերոնշյալ տվյալի՝ հայ բնակչության թիվն ընդունում ենք 1500 շունչ (տե՛ս Պողոսեան, *Հաճընի ընդհանուր պատմությունը*, 37):

⁶⁸ Հեղինակը տալիս է միայն տների թիվը, մեկ տան վրա հաշվում ենք 5 շունչ: Հ. Պողոսյանը հաղորդում է, որ 1880-ական թթ. գյուղի հայ բնակչությունն ավելի մեծաթիվ է եղել, սակայն 1896-ի ջարդերից հետո հայերի մեծ մասը տեղափոխվել է Վահկա, մի քանիսն էլ՝ Հաճըն: Այս վկայությունից կարելի է ենթադրել, որ Մ. Քելեշյանի՝ Գիսենիթի համար հաղորդած 42 տուն հայությունը արտացոլում է 1880-ական թթ. իրողությունները:

⁶⁹ Համաճարակի պատճառով 1890 թ. Սինակըլի հայ բնակչությունը լքել էր գյուղը՝ տեղափոխվելով Կալա Դերե, Վահկա և Սիս:

⁷⁰ Հեղինակը տալիս է միայն տների թիվը, մեկ տան վրա հաշվում ենք 5 շունչ:

⁷¹ Մեծ եղեռնի նախօրյակին գյուղը հայաթափված էր: Հայերը ցրվել էին Վահկա, Հաճըն և Սիս:

⁷² Հ. Պողոսյանը տալիս է միայն տների թիվը, մեկ տան վրա հաշվել ենք 5 շունչ: Հեղինակը նաև հաղորդում է, որ Կըզըլ Յարի հայությունը խուսափել է 1896 թ. ջարդերից, սակայն հետագայում սկսել է գաղթել Վահկա և Սիս: 1915-ի դրությամբ

9	Քերլիբճի	5 ⁷³	25	-	-	25
10	Տափան (Տափարակ)	100 ⁷⁴	-	53	267 ⁷⁵	270 ⁷⁶
11	Կարաբոյ	43 ⁷⁷	171	65	325 ⁷⁸	325
12	Սազակ	15	61	-	-	75 ⁷⁹
13	Տիզնե	38	117	-	.. ⁸⁰	190 ⁸¹
	Ընդամենը	803	3334	653	3117	3510

§4. Հաճընի գավառակ

Մեծ եղեռնի նախօրյակին Հաճընի գավառակի տարածքում հայաբնակ էին Հաճըն գյուղաքաղաքը, Ռումլուի (Ուրումլու) գյուղախմբի

գյուղում փաստացի կար միայն մոտ 10 տուն հայություն (Պողոսեան, *Հաճընի ընդհանուր պատմությունը*, 58-59): Ըստ երևույթին Մ. Քելեշյանի կողմից Կըզըլ Յարի համար հաղորդվող 50 տուն հայ բնակչությունը արտացոլում է 1890-ական թթ., այսինքն՝ նախքան հայերի գաղթի իրողությունները, ուստի մեր հաշվարկի մեջ օգտագործել ենք Հ. Պողոսյանի տվյալը:

⁷³ Նախքան համիդյան կոտորածները գյուղում կար մոտ 20 տուն հայ, 1890-ական – 1900-ական թթ. գյուղի հայ բնակչության մեծ մասը տեղափոխվել է Վահկա և Սիս:

⁷⁴ Հեղինակը հաղորդում է, որ 1870-90-ական թթ. գյուղի հայ բնակչության մեծ մասը աստիճանաբար տեղափոխվել է Սիս և Վահկա (տե՛ս Քելեշեան, *Սիս-Մասունա*, 224)

⁷⁵ Ըստ օսմանյան հաշվառման տվյալների (տե՛ս Պողոսեան, *Հաճընի ընդհանուր պատմությունը*, 63): Հեղինակը հաղորդում է, որ 1915-ի դրությամբ գյուղում մշտապես ապրում էր միայն մի քանի հայ ընտանիք, մնացածները ճշումների հետևանքով կամ իլամացել էին, կամ տեղափոխվել Վահկա և Սիս:

⁷⁶ Հաշվառված հայ բնակչություն, Հայոց ցեղասպանության նախօրյակին գյուղում փաստացի կար 10-ից ոչ ավել հայ ընտանիք, մնացածները, փաստացի բնակվում էին Վահկայում և Սսում:

⁷⁷ Կարաբոյի և շրջանակի հայաբնակ գյուղերի համար աղբյուրը հաղորդում է և տների և շնչերի թիվը:

⁷⁸ Հեղինակը տալիս է միայն տների թիվը, մեկ տան վրա հաշվել ենք 5 շունչ:

⁷⁹ Հաշվարկի հիմքում դրել ենք Մ. Քելեշյանի կողմից հաղորդված 15 տուն հայ բնակչության մասին տվյալը՝ մեկ տան վրա հաշվելով 5 շունչ:

⁸⁰ Հեղինակը հաղորդում է, որ գյուղում կային հայ ընտանիքներ, սակայն դրանց թիվը նրան ճշտել չի հաջողվել (տե՛ս Պողոսեան, *Հաճընի ընդհանուր պատմությունը*, 66-67)

⁸¹ Հաշվարկի հիմքում դրել ենք Մ. Քելեշյանի հաղորդած 15 տուն հայ բնակչության մասին տվյալը՝ մեկ տան վրա հաշվելով 5 շունչ:

բնակավայրերը (Քյոռոզլու, Սեքի և Քյուչքայան) և Շար (Կոմանա) բնակավայրը⁸²:

Մեր կողմից առանձնացված վիճակագրական սկզբնաղբյուրներից (տե՛ս Աղյուսակ 9) Հաճընի գավառակի հայ բնակչության առավել ցածր թիվը պարունակում է 1914 թ. օսմանյան վիճակագրությունը՝ 13550, առավել բարձր տվյալը հաղորդում են Ռ. Գևորգյանը և Փ. Փաբուջյանը՝ 27850 շունչ:

Մեզ հասու օժանդակ աղբյուրների մեծ մասը գավառակի հայ բնակչության թվաքանակը հաշվում է 25000⁸³, 30000 և, անգամ, 35000 շնչի սահմաններում:

Այսպես, սփյուռքահայ հեղինակ Սոկրատ Թերզյանն իր «Հաճընի ութամսեայ դիցազնամարտը» երկասիրության մեջ, մեջբերումներ է կատարում տարբեր աղբյուրներից, համաձայն որոնց Հաճընն ունեցել է 28000-ից⁸¹ - 35000⁸⁵ շունչ հայ բնակչություն:

Մեկ այլ հեղինակ՝ Հակոբ Պողոսյանը, իր «Հաճընի ընդհանուր պատմությունը» աշխատության մեջ անդրադառնալով Հաճըն քաղաքի հայ բնակչության թվաքանակի հարցին և ներկայացնելով տարբեր աղբյուրներից քաղված վիճակագրական տվյալներ, ի թիվս այլոց մեջբերում է օսմանյան պետական ծառայության մեջ գտնվող հաճընցի Մարտիրոս Սեքսեյանի անտիպ հուշագրությունից մի հատված, համաձայն որի 1915-ին Հաճըն գյուղաքաղաքն ունեցել է 5000 տուն և ավելի քան 30000 շունչ հայ բնակչություն⁸⁶:

⁸² Տե՛ս Յարութիւն Գեորգեան, «Հաճընի տաղահանութիւնները 1915ին», *Հաճնոյ հերոսամարտի 90 ամեակի գիտաժողովի նիւթեր եւ վաւերագրեր ու յուսանկարներ*, կազմեց եւ խմբագրեց Դ.Ոկտ. Անդրանիկ Տազէսեան (Պլշրոթ, 2013), 18:

⁸³ Տե՛ս Ս. Ակունի, *Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը* (Կ.Պոլիս, 1920), 305:

⁸⁴ Տե՛ս Սոկրատ Յ. Թերզեան, *Հաճընի ութամսեայ դիցազնամարտը (պատկերագրող)*, առաջաբան՝ Մ. Փափագեան (Աթէնք, տպ. «Պարթենոն», 1937), 17:

⁸⁵ Նոյն տեղում, 37, 108: Անվանի պատմաբան Ռուբեն Սահակյանը ևս, հիմք ընդունելով Ս. Թերզյանի տվյալները, Հաճընի հայ բնակչության թիվը հաշվում է 30-35000-ի սահմաններում (տե՛ս Սահակյան, *Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան*, 166):

⁸⁶ Պողոսեան, *Հաճընի ընդհանուր պատմութիւնը*, 128: Նոյն թիվը տե՛ս Գնէլ եպս. Ճերեճեանի «Հաճընի դիցազնական ինքնապաշտպանութիւնը» հոդվածում (տե՛ս *Յուշամատեն Ամե կոնուի 1915-1965*, կազմող՝ Գերսամ Ահարոնեան (Պլշրոթ, «Զարթօսք» օրաթերթի հրատ., 1965), 868):

Նույնպես ըստ Հակոբ Պողոսյանի՝ Ռումլուի գյուղախումբն ունեցել է մոտ 600 շունչ⁸⁷ և Շար գուտ հայաբնակ բնակավայրը՝ մոտ 350 տուն, 2000 շունչ հայ բնակչություն⁸⁸:

Մեկ այլ տեղ հեղինակը հաղորդում է, որ Հաճընից և գավառակից 1915 թ. տարագրվել էր շուրջ 35000 հայ⁸⁹:

Համաձայն Ս. Ծոցիկյանի՝ Հաճընի հայ բնակչությունը 25000-30000 շունչ էր⁹⁰:

Վերոնշյալ տվյալները համահունչ են 1913 թ. «Մշակի» և Մ. Ցիցիկյանի վիճակագրությունների կողմից հաղորդվող թվերին, ինչը հիմք է մեզ տալիս Մեծ եղեռնի նախօրյակին Հաճընի գավառակի հայ բնակչության թիվը հաշվել շուրջ 27600 շունչ, որից 25000-ը՝ Հաճըն քաղաքում, 2600-ը՝ գավառակի հայաբնակ գյուղերում (600-ը՝ Ռումլուի գյուղեր, 2000-ը՝ Շար):

Հաճընը հայկական Կիլիկիայի զարգացող կենտրոններից էր, որի հայ բնակչությունը համալրվում էր ոչ միայն բնական աճի, այլ նաև հարևան՝ Վահկայի և Կարս-Բազարի գավառակներից հայերի ներգաղթի միջոցով: Ուստի չի կարելի բացառել, որ 1914 թ. Հաճընում փաստացի ապրող հայերի թիվը ավել է եղել՝ գուցե, հասնելով վերը հիշատակված որոշ աղբյուրների կողմից հաղորդվող 35000-ի⁹¹:

⁸⁷ Տե՛ս Պողոսեան, *Հաճընի ընդհանուր պատմությունը*, 75: Դրա հետ մեկտեղ՝ ըստ ուսումնասիրողի Ռումլուի շրջանը բացի Ռումլուից ուներ ևս երեք հայաբնակ բնակավայր, հետևյալ բնակչությամբ՝ Բույուր-Փունար՝ 150-200 տուն հայ, Ուրում-Կյոզիվ՝ 250-350 տուն հայ և Բյորուստեն՝ 250-350 տուն հայ (նույն տեղում): Այս վիճակագրական ցուցակում ներկայացված գյուղերի անունները այլ աղբյուրների կողմից չեն երկրորդվում:

⁸⁸ Նույն տեղում, 94: Շարի հայ բնակչության՝ մոտ 2000 լինելը վկայված է ոչ միայն Հ. Պողոսյանի, նաև այլ աղբյուրների կողմից: Այսպես, համաձայն հաճընցի Գրիգոր Թաթուլյանի՝ ցեղասպանության նախօրյակին Շարում ապրում էր 1,955 հայ (տե՛ս Գ. Թաթուլյանի «Շար եւ իր նահատակները» ակնարկը՝ Թե՛րզեան, *Հաճընի ութսունհայ դիցազնամարտը*, 46):

⁸⁹ Նույն տեղում, 593:

⁹⁰ Ծոցիկեան, *Արևմտահայ աշխարհ*, 367:

⁹¹ Ս. Կարայանի հաշվարկով՝ Հաճընի հայ բնակչության թիվը 38461 էր, որից 30043-ը՝ Հաճըն գաղաքում, 8418-ը՝ Հաճընի գավառակի 10 հայաբնակ գյուղերում (Karayan, *Armenians in Ottoman Turkey, 1914*, 101-102): Հատկապես Հաճընի գյուղերի հայ բնակչության թվաքանակի հաշվարկում հեղինակը հիմնվել է Հ. Պողոսյանի «Հաճընի ընդհանուր պատմությունը» աշխատանքում հաղորդվող առավել բարձր տվյալների

Կոզանի գավառի հայ բնակչության թվաքանակի հաշվարկի ամփոփում

Այսպիսով, համաձայն մեր հաշվարկի՝ Հայոց ցեղասպանության նախօրյակին Կոզանի գավառն ունեցել է մոտ 40110 շունչ հայ բնակչություն, այդ թվում Միս քաղաքում և գավառակում՝ 6000 շունչ, Կարս-Բազարի գավառակում՝ 3000 շունչ, Վահկայի գավառակում՝ 3510 շունչ և Հաճընի գավառակում՝ 27600 շունչ հայ:

Ըստ Վ. Քինեի տվյալների՝ 1880-ական թթ. վերջերին գավառի ընդհանուր ազգաբնակչության թիվը 60081 էր, որից 28081-ը՝ հայ, 32000-ը՝ իսլամադավան⁹²:

Ըստ օսմանյան վիճակագրության՝ 1914 թ. գավառում կար 67894 շունչ իսլամադավան ազգաբնակչություն⁹³:

ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խմբի տվյալներով՝ 1914 թ. գավառի մուսուլման ազգաբնակչության թիվը մոտ 65000 էր⁹⁴:

Ըստ վերոնշյալ տվյալների հիման վրա մեր հաշվարկի՝ Հայոց ցեղասպանության նախօրյակին հայերը կազմում էին Կոզանի գավառի ազգաբնակչության մոտ 37%-ը, ընդ որում, Հաճընի գավառակում հայերը բացարձակ մեծամասնություն էին՝ կազմելով ընդհանուր ազգաբնակչության մոտ 63%-ը, Կոզանի գավառակում՝ 25%, Ֆեքեի գավառակում՝ 20% և Կարս-Բազարի գավառակում՝ 14%:

վրա:

⁹² Cuinet, *La Turquie D'asie*, tome 2, 87:

⁹³ Karpat, *Ottoman population 1830-1914*, 172-173:

⁹⁴ Zamir, "Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919", 102:

3. Աղանայի նահանգի Ջերել-Բերեքերի գավառ

Աղանայի նահանգի Ջերել-Բերեքերի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ մեր կողմից առանձնացված վիճակագրական սկզբնաղբյուրները հաղորդում են հետևյալ տվյալները (տե՛ս նաև Աղյուսակ 12)։

1. 1895 թ. Կիլիկիո կաթողիկոսարանի վիճակագրություն՝ 5000 տուն, 25000 շունչ, այդ թվում՝ Չորք-Մարգպանս իր գյուղերով՝ 3000 տուն, 15000 շունչ, Հայ լեռը (Բախչե-Բուլանըղ) իր գյուղերով՝ 2000 տուն, 10000 շունչ⁹⁵։
2. 1902 թ. Մ. Օրմանյանի վիճակագրություն՝ Փայաս եպիսկոպոսական վիճակ (պարունակում էր Ջերել-Բերեքեր (Բերեքդաղ) սանջակը)՝ 11000 շունչ առաքելական հայ (այլ մանրամասնություններ չի հաղորդվում)⁹⁶։
3. 1910 թ. Հ. Առաքելյանի վիճակագրություն՝ 44750 շունչ (այլ մանրամասնություններ չի հաղորդվում)⁹⁷։
4. 1912 թ. Հայոց պատրիարքարանի-Ապահովության հանձնաժողովի վիճակագրության՝ Ջերել-Բերեքերի գավառին վերաբերվող տվյալները ներառված են Աղանայի գավառի ընդհանուր վիճակագրության մեջ։

⁹⁵ Տե՛ս «Վիճակագրութիւն Կիլիկիոյ Հայոց», 46։

⁹⁶ Տե՛ս Ormanian, *The Church of Armenia*, 241, տե՛ս նաև Օրմանեան, *Հայոց եկեղեցին*, 264։ Ինչպես արդեն նշել էինք Աղանայի գավառի հայ բնակչության թվաքանակի հարցին վերաբերվող ենթաբաժնում, հիմքեր կան ենթադրելու որ Մ. Օրմանյանի վիճակագրության՝ Աղանայի թեմի տվյալի մեջ ներառված է նաև Ջերել-Բերեքերի գավառի Օսմանիեի, Բախչեի և Իսլահիեի գավառակների հայ բնակչության թիվը՝ 6700, ուստի այստեղ Փայասի եպիսկոպոսական վիճակի հայ բնակչության թվաքանակի համար հեղինակի կողմից հաղորդվող 11000-ը, արտացոլում է միայն Դորթ-Յոլի գավառակի (էրզինը ներառյալ) հայ բնակչության թվաքանակը։ Համապատասխանաբար, ընդհանուր Ջերել-Բերեքերի գավառի հայ բնակչության թիվն ըստ Մ. Օրմանյանի պետք է լինի 17700։ Եթե մեր ենթադրությունը սխալ է, ապա կստացվի, որ օսմանյան վիճակագրությունը Մ. Օրմանյանի վիճակագրության համեմատ ավելի բարձր տվյալ է հաղորդում Ջերել-Բերեքերի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ, ինչը քիչ հավանական է՝ հաշվի առնելով, որ ցանկացած այլ շրջանի պարագայում Մ. Օրմանյանի հաղորդած տվյալն ավելի բարձր է։ Ընդհանրապես, Կիլիկիայի հայ բնակչության թվաքանակի համար Մ. Օրմանյանը 1914 թ. օսմանյան վիճակագրության համեմատ մոտ 50%-ով ավելի բարձր թիվ է հաղորդում։

⁹⁷ Տե՛ս Առաքելեան, «Թ-իւրքահայ ժողովրդի վիճակագրութիւնը», 73։

5. 1913 թ. «Մշակի» վիճակագրություն՝ 38442 շունչ, այդ թվում Օսմանիե⁹⁸ 9832, Յարփուզ⁹⁹ 15000, Բախչե (Բուլանըղ)¹⁰⁰ 560, Դորթ-Յոլ¹⁰¹ 12300, Էրզին¹⁰² 750¹⁰³:
6. 1913 թ. Մ. Ցիցիկյանի վիճակագրություն՝ 39042 շունչ, այդ թվում Օսմանիե¹⁰⁴ 9832, Յարփուզ¹⁰⁵ 15600, Բախչե (Բուլանըղ)¹⁰⁶ 560, Դորթ-Յոլ¹⁰⁷ 12300, Էրզին¹⁰⁸ 750¹⁰⁹:
7. 1914 թ. օսմանյան վիճակագրություն՝ 13920 շունչ¹¹⁰, այդ թվում 759-ը¹¹¹ Ջերեկ-Բերեքթեթի գավառակում, 500-ը¹¹² Իսլահիեի գավառակում, 4291-ը¹¹³ Բախչեի (Բուլանըղ) գավառակում, 7046-ը¹¹⁴ Դորթ-Յոլի գավառակում (Էրզինը ներառյալ) և 1324-ը¹¹⁵ Հասսայի գավառակում¹¹⁶:
8. 1914 թ. ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խմբի վիճակագրություն՝ 10000 շունչ (այլ մանրամասնություններ չի հաղորդվում)¹¹⁷:

⁹⁸ Բնագրում՝ «Օսմանիե-Սանջակ»:

⁹⁹ Բնագրում՝ «Վարփուզ»:

¹⁰⁰ Բնագրում՝ «Բախչե-Կազա»:

¹⁰¹ Բնագրում՝ «Ումրանիե (Դէօրթեօլ կամ Չօք Մարզվան)»:

¹⁰² Բնագրում՝ «Երզինի-սանջակ»:

¹⁰³ Տե՛ս «Հայերը Կիլիկիայում», 2:

¹⁰⁴ Բնագրում՝ «Օսմանիեի սանջակ»:

¹⁰⁵ Բնագրում՝ «Եարփուզի կազալ»:

¹⁰⁶ Բնագրում՝ «Բախչեի կազալ»:

¹⁰⁷ Բնագրում՝ «Ումրանիեի կամ Դորթ-Եօլի կազալ»:

¹⁰⁸ Բնագրում՝ «Երզինի սանջակ»:

¹⁰⁹ Տե՛ս Ցիցիկեան, «Հայերը Կիլիկիայում», 1108:

¹¹⁰ Այդ թվում՝ 1165 կաթոլիկ, 2282 բողոքական:

¹¹¹ Այդ թվում՝ 675՝ առաքելական, 4՝ կաթոլիկ, 80՝ բողոքական:

¹¹² Առաքելական:

¹¹³ Այդ թվում՝ 3691-ը՝ առաքելական, 600-ը՝ բողոքական:

¹¹⁴ Այդ թվում՝ 6672-ը՝ առաքելական, 8-ը՝ կաթոլիկ, 366-ը՝ բողոքական:

¹¹⁵ Այդ թվում՝ 770-ը՝ առաքելական, 269-ը՝ կաթոլիկ, 285-ը՝ բողոքական:

¹¹⁶ Տե՛ս Karpas, *Ottoman population 1830-1914*, 172-173:

¹¹⁷ Տե՛ս Zamir, "Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919", 102: Ինչպես արդեն նշել էինք նախորդիվ՝ հիմքեր կան ենթադրելու, որ Արանայի գավառի հայ

9. 1914 թ. Ռ. Գևորգյանի և Փ. Փարուջյանի հաշվարկ՝ 39928 շունչ, այդ թվում Ջերեկ-Բերերեթի (Յարփուզ), Իսլահիեի, Բախչեի (Բուլանըղ) և Օսմանիեի գավառակներ՝ 26878, Դորթ-Յուլի (Փայաս), Էրզինի և Հասսայի գավառակներ՝ 13050¹¹⁸:

Աղյուսակ 12. Մեծ եղեռնի նախօրյակին Ադանայի նահանգի Ջերեկ-Բերերեթի գավառի հայ բնակչության թվաքանակն ըստ տարբեր վիճակագրական տվյալների

Գավառակներ	1895 Կիլիկիո կաթողիկոսարան	1902 Օրմանյան	1910 Առաքելյան	1913 «Մշակ»	1913 Ցիցիկյան	1914 օսմանյան	1914 ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խումբ	1914 Գևորգյան-Փարուջյան
Ջերեկ-Բերերեթ (Օսմանիե)	-	-	-	24832 ¹¹⁹	25432 ¹²⁰	759	-	26878
Իսլահիե	-	-	-	-	-	500	-	
Բախչե (Բուլանըղ)	10000	-	-	560	560	4291	-	

բնակչության թվաքանակի՝ ԱՄՆ փորձագիտական խմբի տվյալի մեջ (35000) ներառված է նաև Ջերեկ-Բերերեթի գավառի Օսմանիեի, Բախչեի և Իսլահիեի գավառակների հայ բնակչության թիվը՝ մոտ 6000: Դրանից ելնելով՝ այստեղ որպես ամբողջ գավառի հայ բնակչության թիվ՝ 10000-ը վերաբերվում է միայն Դորթ-Յուլի (Էրզինը ներառյալ) գավառակին, հետևաբար՝ Ջերեկ-Բերերեթի գավառի ամբողջ տարածքի համար հայ բնակչության թիվը պետք է լինի 16000:

¹¹⁸ Sîu Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman*, 58, 300-303:

¹¹⁹ Այդ թվում Օսմանիե՝ 9832, Յարփուզ՝ 15000:

¹²⁰ Այդ թվում Օսմանիե՝ 9832, Յարփուզ՝ 15600:

Հասսա	-	-	-	-	-	1324	-	13050 ¹²¹
Դորթ-Յոլ	15000	-	-	13050 ¹²²	13050 ¹²³	7046	-	
Ընդամենը	25000	11000 ¹²⁴	44750	38442	39042	13920	10000 ¹²⁵	39928

Ինչպես կարող ենք տեսնել վերը ներկայացված վիճակագրություններից՝ Ջեբել-Բերեքեթի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ առավել ցածր տվյալը հաղորդում է օսմանյան վիճակագրությունը՝ 13920 շունչ, առավել բարձր տվյալը պարունակում է Հ. Առաքելյանի վիճակագրությունը՝ 44750 շունչ. այս երկու տվյալների միջև տարբերությունը շուրջ 300% է:

§1. Ջեբել-Բերեքեթի (Օսմանիե) գավառակ (կենտրոնական)

Հայոց ցեղասպանության նախօրյակին Օսմանիեի գավառակի տարածքում, ըստ աղբյուրների տվյալների, մշտական հայ բնակչություն ուներ չորս բնակավայր՝ կենտրոնական Օսմանիե գյուղաքաղաքը, Յարփուզը, Գայփագը¹²⁶ և Գարակետիկը¹²⁷:

1913-14 թթ. վերաբերող հայկական վիճակագրական սկզբնաղբյուրները (1913 թ. Մ. Ցիցիկյանի և «Մշակի» տվյալներ, դրանցից ածանցյալ Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի հաշվարկ) առանձնացնում են Օսմանիեի և Յարփուզի վիճակագրությունները՝

¹²¹ Հասսայի հայ բնակչությունը ներառյալ:

¹²² Այդ թվում Դորթ-Յոլ՝ 12300, Էրզին՝ 750:

¹²³ Այդ թվում Դորթ-Յոլ՝ 12300, Էրզին՝ 750:

¹²⁴ Միայն Դորթ-Յոլի գավառակը (Էրզինը ներառյալ): Ամբողջ գավառի հայ բնակչության թվաքանակի համար Մ. Օրմանյանի տվյալն է՝ 17700:

¹²⁵ Միայն Դորթ-Յոլի գավառակը (Էրզինը ներառյալ): Ամբողջ գավառի հայ բնակչության թվաքանակի համար ԱՄՆ փորձագիտական խմբի տեղեկագրի տվյալն է՝ 16000:

¹²⁶ Թերզյանը Գայփագը հիշատակում է Բախչեի գավառակի գյուղերի ցանկում (տես Թերզևան, *Կիլիկիոյ սոճեաթ*. 182):

¹²⁷ Հիշատակվում է Ժ. Սայապալյանի և Գ. Գուտուլեանի կողմից (տես *Տեղեկագիր այրիախնամ յանձնաժողովի*. 62, Գուտուլեան, *Կիլիկեան աշխարհագրություն*, 63):

առաջինի համար հաղորդելով 15000, երկրորդի համար՝ 9832 շունչ հայ բնակչություն (տե՛ս Աղյուսակ 12):

Ըստ գավառակի բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ պարունակող տարբեր վիճակագրություններ չեն հաստատում վերոնշյալ թվերը, վկայում են այն մասին, որ հայ բնակչության թիվը շատ ավելի ցածր է եղել:

1. Այսպես, համաձայն 1908 թ. օսմանյան վիճակագրության՝ Օսմանիեում, Յարփուզում և Գայփագում կար 978 շունչ հայ բնակչություն (բաշխումն ըստ բնակավայրերի տե՛ս Աղյուսակ 13)¹²⁸:
2. Ըստ Հ. Թերզյանի տվյալների՝ 1909 թ. ջարդի նախօրյակին Օսմանիե գյուղաքաղաքում կար 200 տուն հայ. բնակավայրի հայերի մեծ մասը ծնունդով Հաճընից էին¹²⁹: Գայփագում նույն աղբյուրը հաշվում է 8 տուն հայ¹³⁰ (տե՛ս նաև Աղյուսակ 13):
3. Ժ. Մայապալյանի տվյալներով՝ Օսմանիեի հայ բնակչությունը նախքան 1909 թ. ջարդերը 150 տուն էր, ջարդերից անմիջապես հետո նվազել էր 30-ի, 1911 թ. հասել 100-ի՝ շնորհիվ դրսից (ըստ երևոյթին՝ նույն Հաճընից) ներգաղթյալների նոր ներհոսքի¹³¹: Գարակետիկում, ըստ նույն աղբյուրի, 1911 թ. կար 10 տուն հայ բնակչություն¹³² (տե՛ս նաև Աղյուսակ 13):
4. Ըստ Ա. Գլուխանդանյանի (Erminio)՝ նախքան 1909 թ. ջարդերը Օսմանիեում կար 180 տուն, 900 շունչ հայ բնակչություն¹³³:
5. Համաձայն Գ. Գուտուլյանի՝ Օսմանիեի հայ բնակչության թիվը նախքան 1915 թ. 900 էր¹³⁴:

¹²⁸ Սերովբեան, *Հովիտն իրասունները*, 172:

¹²⁹ Տե՛ս Թերզեան, *Կիլիկիոյ աղէտը*, 170:

¹³⁰ Նույն տեղում, 182:

¹³¹ Տե՛ս *Տեղեկագիր այրիախնամ յանձնաժողովի*, 61:

¹³² Նույն տեղում, 62:

¹³³ Տե՛ս Erminio, «Աղանայի ջարդերը», *Հորիզոն*, 1910, № 66: Հեղինակը նաև ներկայացնում է Օսմանիեում ջարդերին զոհ գնացած հայերի վիճակագրությունը՝ 422 շունչ, որից 300 տղամարդ, 30 երեխա, 92 կին (մեծամասնությունը այրվել է եկեղեցիում), թալանվել և այրվել են բոլոր 180 տները և 77 խանութներ: Օսմանիեում և շրջակայքում նաև սպանվել է մոտ 160 դրսեցի մշակ (նույն տեղում):

¹³⁴ Տե՛ս Գուտուլեան, *Կիլիկեան աշխարհագրութիւն*, 63:

6. Ըստ 1919 թ. նոյեմբերին Օսմանիե այցելած Լ. Աճեմյանի վկայության՝ բնակավայր էր վերադարձել 480 շունչ հայ (100 տուն)¹³⁵:

Աղյուսակ 13. Ջերեկ-Բերեքերի գավառակի հայ բնակչության թվաքանակն ըստ տարբեր վիճակագրությունների

	Բնակավայր	1908 օսմանյան վիճակագրություն (շունչ)	1908 Թերզյան (շունչ)	1911 Սայապալյան (շունչ)
1	Օսմանիե	720 ¹³⁶	1000	500
2	Յարփուզ	233 ¹³⁷	-	-
3	Գայփազ	25	40	-
4	Գարակետիկ	-	-	50
	Ընդամենը	978	1040	550

Վերոնշյալ բոլոր տվյալները փաստում են, որ Հայոց ցեղասպանության նախօրյակին Օսմանիեի գավառակի տարածքում գոյություն ունեցող հայաբնակ երեք բնակավայրերի հայ բնակչության թվաքանակը մոտ 800-1000 շունչ էր (միջին կլորացված թիվ՝ 900):

1913 թ. «Մշակի» և Մ. Տիցիկյանի՝ իրար փոխկապակցված վիճակագրական տվյալները, որոնց համաձայն Օսմանիեում և Յարփուզում միասին կար 24832 - 25432 շունչ հայ բնակչություն (այդ թվում՝ Օսմանիե՝ 9832, Յարփուզ՝ 15000 («Մշակ») կամ 15600

¹³⁵ Տե՛ս Լ. Աճեմեան, «Պտոյտներ Կիլիկիոյ մէջ», Արև, ազգային շահերու օրկան (Ադեքսանդրիա), 1920, փետրվարի 27, №125 (740):

¹³⁶ Այդ թվում՝ 296 առաքելական և 424 բողոքական հայ:

¹³⁷ Ըստ աղբյուրի՝ 1908 թ. Յարփուզում բնակվող հայերը փոխադրվել են Էրզին (տե՛ս Սերոպբեան, Հովիտի իրասները, 172), ինչը կապված է Ջերեկ-Բերեքերի գավառի կենտրոնի՝ այդ քաղաք տեղափոխման հետ:

(Ցիցիկյան)), չեն հաստատվում այլ աղբյուրների կողմից: Կարելի է ենթադրել, որ տվյալը շփոթմունքի արդյունք է՝ պայմանավորված գավառի կենտրոնի՝ 1906 թ. Յարփուզից Էրզին, այնուհետև՝ 1909 թ., Էրզինից Օսմանիե տեղափոխման հետ:

Այն, որ մենք գործ ունենք շփոթմունքի հետ վկայում է այն իրողությունը, որ հրատարակված վիճակագրությունում Էրզինը հիշատակվում է որպես «Երզինի-Սանջակ», Օսմանիեն՝ «Օսմանիեյի սանջակ», «Օսմանիե-սանջակ», Յարփուզը՝ «Եարպուզի կազա», մինչդեռ, ինչպես հայտնի է, 1913-ին Ջեբել-Քերեքերի սանջակի վարչական կենտրոնն էր Օսմանիեն և ոչ Էրզինը, և, երկրորդը, 1906-ից հետո Յարփուզը որպես սանջակ կամ կազա դադարել է գոյություն ունենալուց՝ այն ներառվել է Օսմանիեի գավառակի կազմում որպես նահիե (գյուղախումբ)¹³⁸:

Վերոնշյալը հիմքեր է տալիս ենթադրելու, որ 1913 թ. «Մշակի» և Մ. Ցիցիկյանի վիճակագրություններում տվյալները նախապես բաշխված են եղել ըստ թեմերի և, ըստ երևույթին, վերաբերվել են տարբեր ժամանակաշրջաններին, սակայն նախքան հրատարակվելը վիճակագրությունը ենթարկվել է խմբագրման, որի նպատակն է եղել տվյալները ներկայացնել ըստ օսմանյան վարչական բաժանման: Խմբագիրը, անտեղյակ լինելով գավառի վարչական նոր փոփոխություններին, սխալ է բաշխել տվյալները՝ թույլ տալով կրկնահաշվարկ:

Չենք կարող նաև բացառել, որ Օսմանիեի և Յարփուզի համար 1913 թ. «Մշակի» և Մ. Ցիցիկյանի փոխկապակցված տվյալները (շուրջ 25000 հայ), արտացոլում են ոչ թե զուտ նշված շրջանների, այլ ամբողջ Ջեբել-Քերեքերի գավառի հայ բնակչության թվաքանակը: Եթե մեր ենթադրությունը համապատասխանում է իրականությանը, ապա Օսմանիեի համար վկայված 9832 հայ բնակչությունը վերաբերվում է Օսմանիեի, Բախչեի և Իսլահիեի գավառակների հայ բնակչության ընդհանուր թվաքանակին:

¹³⁸ Տե՛ս աշխատանքի՝ «Կիլիկիայի պատմաաշխարհագրական տարածքի օսմանյան վարչական և հայկական եկեղեցական-թեմական բաժանումները (XIX դարի երկրորդ կես - 1914 թ.)» բաժինը:

Ֆախսեի գավառակ

Օսմանիեից դեպի հյուսիս-արևելք գտնվող Բախսե (հայտնի է նաև Բուլանըղ, Հասանբեյլի, Հայ լեռ անուններով) գավառակը Ջերեկ-Բերեքերի գավառի հայաշատ շրջաններից մեկն էր՝ տասնյակից ավել հայաբնակ բնակավայրերով, որոնցից ամենախոշորը զուտ հայաբնակ Հասանբեյլին էր:

Մեզ հասու օժանդակ աղբյուրները հետևյալ տվյալներն են հաղորդում գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ.

1. Ըստ օսմանյան իշխանությունների 1908 թ. հաշվառման տվյալների՝ գավառակում բնակվում էր 4958 հայ (բաշխումն ըստ բնակավայրերի տե՛ս Աղյուսակ 14)¹³⁹:
2. Համաձայն «Կիլիկիո աղետը» աշխատության հեղինակ Հակոբ Թերզյանի տվյալների՝ 1909 թ. Կիլիկիո ջարդերի նախօրյակին Բախսեի գավառակն ուներ 1350 տուն, 6750 շունչ հայ բնակչություն (բաշխումն ըստ բնակավայրերի տե՛ս Աղյուսակ 14)¹⁴⁰:
3. Ըստ Ա. Գյուլխանդանյանի՝ 1909 թ. վերաբերող վիճակագրության՝ գավառակում կար 972 տուն, 5518 շունչ հայ բնակչություն (բաշխումն ըստ բնակավայրերի տե՛ս Աղյուսակ 14)¹⁴¹:
4. Ըստ Այրիախնամ հանձնաժողովի տեսուչ-պատվիրակ Ժակ Սայապալյանի տեղեկագրի տվյալների՝ Բախսեի 11 հայաբնակ բնակավայրերում 1911 թ. կար 955 տուն, 4775 շունչ հայ բնակչություն (մեկ տան վրա 5 շունչ հաշվարկով) (բաշխումն ըստ բնակավայրերի տե՛ս Աղյուսակ 14)¹⁴²:

Բախսեի գավառակի հայաբնակ բնակավայրերը մեծապես

¹³⁹ Տե՛ս Սերովբեան, *Հովիհն խրատները*, 174-175:

¹⁴⁰ Տե՛ս Թերզեան, *Կիլիկիոյ աղետը*, 181:

¹⁴¹ Տե՛ս Ermitio. «Ադանայի ջարդերը», *Հորիզոն*, 1910, №66 (տվյալների բաշխումն ըստ բնակավայրերի տե՛ս Աղյուսակ 14, գյուղերի մեծ մասի համար տրված է միայն հայ բնուսնիքների թիվը, մեկ տան վրա հաշվել ենք 5 շունչ):

¹⁴² Տե՛ս *Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի*, 57-59:

տուժել էին 1909 թ. ջարդի ժամանակ (համաձայն Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի Ազգային վարչության Քննիչ մասնախմբի տվյալների՝ գավառակից զոհվածների թիվը 2623 էր (ներառյալ պանդուխտներ), իսկ ընդհանուր Ջերեկ-Բերեքերի գավառի տարածքում զոհված հայերի թիվը 5371 էր¹⁴³), սակայն հետագայում վերապրած հայ բնակչության մեծ մասը վերադարձել էր հարազատ բնակավայրեր՝ որոշ չափով վերականգնելով ջարդից վնասված տնտեսությունները: 1909 թ. եղեռնից հետո Բախսեհի գավառակի հայ բնակչության թիվը վերականգնվել էր նաև ի հաշիվ պանդուխտ մշակների նոր ներհոսքի:

Աղյուսակ 14. Բախսեհի գավառակի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին ըստ տարբեր վիճակագրական աղբյուրների տվյալների

	Բնակավայր	1908	1909		1909		1911	
		Սերովբյան	Թերզյան	Գյուլյան-դանյան	Սայապալյան	Շունչ	Տուն	Շունչ
		Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ
1	Հասանբեյլի	1848	500 ¹⁴⁴	2500	365 ¹⁴⁵	2190	370	1850
2	Բախսեհ	722	120	600	128	824	80	400
3	Յանըկ Դեյիրմեն	-	75 ¹⁴⁶	375	29	145	30	150

¹⁴³ Տե՛ս Թերզեան, *Կիլիկիոյ աղէտը*, 244-245:

¹⁴⁴ Համեմատության համար՝ ըստ կիլիկիահայ ուսումնասիրող Գրիգոր Գոտտուլյանի տվյալների՝ 400 տուն հայ (տե՛ս Գրիգոր Գ. Գոտտուլեան, *Հայ լեռը. Կարմիր դրուագներ Կիլիկիոյ Աղէտէն* (Կ.Պոլիս, տպագր. Տ. Տօրամաճեան, 1912), 50):

¹⁴⁵ Այդ թվում՝ 65 տուն բողոքական հայ:

¹⁴⁶ Գ. Գոտտուլյան՝ 30 տուն հայ (տե՛ս Գոտտուլեան, *Հայ լեռը*, 55):

VI. Կիլիկիահայության բվարանակի հաշվարկ ըստ առանձին վարչատարածքային միավորների
 3. Արանայի նահանգի Ջերկ-Բերեքերի գավառ

4	Լափա- ճիլը (Լապճիլը)	490	120 ¹⁴⁷	600	124	620	120	600
5	Սավ- րակիլը	30	10	50	18	90	-	-
6	Քուրտ- լար (Գոյազ)	66	30	150	30	150	20	100
7	Գըզլիաճ	60	15 ¹⁴⁸	75	6	30	6	30
8	Քիշնեզ	150	40	200	39	265	30	150
9	Գյոք- չայիթ	208	75	375	15	114	14	70
10	Խառնի (Հարու- սիե)	524	130	650	178 ¹⁴⁹	890	170	850
11	Գուշճու Մուս- տաֆա	140	35	175	23	115	15	75
12	Սայ Բուռնու	-	-	-	17	85	-	-
	Ընդա- մենը	4958	1350	6750	972	5518	955	4775

Աղյուսակ 14-ում ներկայացված՝ ըստ բնակավայրերի վիճակագրությունները Բախչեի գավառակի հայ բնակչության թիվը տեղակայում են 5000-7000 սահմաններում: Անհրաժեշտ է արձանագրել, որ վերոնշյալ վիճակագրությունների հիմքում ընկած են օսմանյան հաշվառման տվյալները: Գավառակի առանձին հայաբնակ բնակավայրերին վերաբերող արժանահավատ այլ տվյալներ վկայում են, որ հայ բնակչության թիվն ավելի բարձր է եղել:

¹⁴⁷ Գ. Գուտուլյան՝ 200 տուն հայ (նույն տեղում, 52):

¹⁴⁸ Գ. Գուտուլյան՝ 9 տուն հայ (տե՛ս Գուտուլեան, Հայ լեռք, 54):

¹⁴⁹ Այդ թվում՝ 38 տուն բողոքական հայ:

1. 1919-1920 թթ. Կիլիկիայի տարբեր բնակավայրեր այցելած և դրանց վիճակի մասին արժեքավոր տեղեկություններ հաղորդած Լևոն Աճեմյանի վկայությամբ՝ Հասանբեյլիում նախքան տեղահանությունը կար 520 տուն, 2700 շունչ հայ բնակչություն¹⁵⁰:
2. Արևմտահայ մանկավարժ և բառարանագիր Սիմոն Գաբամաճյանն իր 1911 թ. հրատարակած «Գամեր. Փոքրիկ ճամբորդը Արևելքի մէջ» աշխարհագրական-հայրենագիտական ձեռնարկում Բախչեում հաշվում է 150, Լափաճըլում և Խառնիում՝ 200-ական տուն հայ բնակչություն¹⁵¹:
3. Ըստ կիլիկիահայ ուսումնասիրող Գրիգոր Գուտուլյանի՝ նախքան 1915 թ. Ամանուսի շրջանակի (մոտավորապես համապատասխանում է Բախչեի, Օսմանիեի և Իսլախիեի գավառակների տարածքին) հայաբնակ գյուղերում կար մոտ 10000 հայ բնակչություն, որից ցեղասպանությունը վերապրել և Առաջին աշխարհամարտից հետո Կիլիկիա էր վերադարձել 4000-ը¹⁵²:

Վերոնշյալ տվյալները հիմքեր են տալիս Հայոց ցեղասպանության նախօրյակին Բախչեի գավառակի հայ բնակչության թվաքանակը հաշվել մոտ 8000-ի սահմաններում:

Կարելի է նաև փաստել, որ 1913 թ. «Մշակի» և Մ. Յիցիկյանի փոխկապակցված տվյալները, որոնց համաձայն Բախչե (Բուլանըղ) գավառակում բնակվում էր 560 հայ, իրականից ցածր են: Ըստ երևույթին, ինչպես Օսմանիեի գավառակի պարագայում, այստեղ ևս մենք գործունենը 2 փոթմունքի հետ, որը պայմանավորված է վարչական

¹⁵⁰ Տես Տես Լ. Աճեմեան, «Պոտյոսներ Կիլիկիոյ մէջ», *Արև, ազգային շահերու օրկան* (Աղեքսանդրիա, 1920, մարտի 1), №126 (741): Նշված թվից տարագրությունը վերապրել էր և 1920 թ. բնակավայր էր վերադարձել շուրջ 1,000-ը (նույն տեղում):

¹⁵¹ Տես Սիմոն Գաբամաճեան, *Գամեր: Փոքրիկ ճամբորդը Արևելքի մէջ: Միակ ընթերցարանը հայուն զարդարուած բազմաթիւ նոր տեղացոյց պատկերներով և լուսանկ.: Համառօտ տեղեկութիւններ Ասիական Թորքիոյ վրայ և օգտակար գիտելիքներ* (Կ.Պոլիս, տպ. Սազաեան, 1911), 239:

¹⁵² Տես Գուտուլեան, *Կիլիկիան աշխարհագրութիւն*, 61:

սահմանների հաճախակի փոփոխության հանգամանքով¹⁵³: Չենք բացառում, որ նշված սկզբնաղբյուրներում Օսմանիեի գավառակի համար վկայված 9832 շունչ հայ բնակչության մեջ ներառված են նաև Բախչեի գավառակի հայերը: Եթե մեր ենթադրությունը համապատասխանում է իրականությանը, ապա միասին՝ Օսմանիեի և Բախչեի գավառակների հայ բնակչության թվաքանակի համար մեր հաշվարկը՝ 9000, մոտ է նշված սկզբնաղբյուրների կողմից հաղորդվող տվյալին՝ 9832:

§3. Իսլահիեի գավառակ

Հայոց ցեղասպանության նախօրյակին Իսլահիեի գավառակում աղբյուրները վկայում են մշտական հայ բնակչություն ունեցող երեք գյուղերի՝ Քելլեր, Էյնթիլի և Քյունես (Քյունեսլեր), գոյության մասին (Ժ. Սայապալյանի տեղեկագրում (1911 թ.), որպես Իսլահիեի գավառակին պատկանող, նշված է նաև Գուշճու բնակավայրը, որն այլ աղբյուրներն ընդգրկում են Բախչեի գավառակի կազմում¹⁵⁴): Բացի դրանցից, գավառակի տարածքում գոյություն ունեին բազմաթիվ չիֆթլիկ-ազարակներ (Քյուրդ-բախչե, Աբեդին փաշա և այլն)՝ յուրաքանչյուրը մի քանի տուն պանդուխտ մարաբա հայ բնակչությամբ¹⁵⁵:

Գավառակի հայությունը կորուստներ է կրել 1909 թ. կոտորածի ժամանակ՝ սպանվել է մշտական բնակչության մոտ 14%-ը (Քելլեր՝

¹⁵³ 1913 թ. վիճակագրության այս սխալը նկատել են նաև այն իրենց հաշվարկի հիմքում դրած Ռ. Գևորգյանն ու Փ. Փարոջյանը, որոնք, դրանից ելնելով, խուսափել են տալ առանձին Բախչեի գավառակի հայ բնակչության թիվը՝ փոխարենը ներկայացնելով Յարփուզի, Օսմանիեի, Իսլահիեի, Բախչեի գավառակների հայ բնակչության համագումար տվյալ (տես Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman*, 301)

¹⁵⁴ Տես *Տեղեկագիր Արիսիանամ Յանձնածողովի*, 73:

¹⁵⁵ Այսպես, Ա. Գյուլյանդանյանը հիշատակում է գավառակի Քյուրդ-բախչե, Աբեդին փաշա, Քյունեսլեր, Գուրֆալը ազարակները՝ 61 տուն հայ, Դալ-օղլու-Մահմեդ և Բոստան-աղա ազարակները՝ 12 տուն հայ, Գումարլու, Պալյան էֆենդի, Սարը մաղ և այլ ազարակները՝ 70 տուն, 400 հայ բանվորով. Դավիթ էֆենդիի ազարակները՝ 60 տեղացի և 70 դրսեցի բանվորներով (տես Erminio, «Արևմտյի ջարդերը», *Հորիզոն*, 1910, №66):

15, Էյնթիլիի՝ 38, Քյունես՝ 14, ընդամենը՝ 67 հոգի)¹⁵⁶, սակայն հետագա տարիներին որոշ չափով վերականգնվել է՝ պայմանավորված վերապրածների վերադարձով և այլ շրջաններից պանդուխտների ներհոսքով:

Ստորև Աղյուսակ 15-ում ներկայացնում ենք Իսլահիեի գավառակների հայաբնակ բնակավայրերի ցուցակը և հայ բնակչության թվաքանակն ըստ 1908 թ. Մուշեղ եպիսկոպոս Սերովբյանի «Հովիին խրատները» գրքի հավելվածում գետեղված օսմանյան վիճակագրություն¹⁵⁷, Հակոբ Թերզյանի «Կիլիկիոյ աղէտը» գրքում առկա ցուցակի (տվյալները վերաբերվում են 1909 թ. ջարդերի նախօրյակին)¹⁵⁸ և Ժակ Սայապալյանի տեղեկագրում ներկայացված տվյալների (1911 թ.)¹⁵⁹: Հ. Թերզյանի և Ժ. Սայապալյանի վիճակագրությունները պարունակում են միայն տների թիվը, մեկ տան վրա հաշվել ենք 5 շունչ:

Աղյուսակ 15. Իսլահիեի գավառակի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին ըստ տարբեր վիճակագրական աղբյուրների տվյալների

	Բնակավայր	1908	1909		1911	
		Սերովբյան	Տուն	Շունչ	Տուն	Շունչ
1	Իսլահիե	4	-	-	-	-
2	Գայա Պաշը	25	-	-	-	-
3	Քելլեր	178	45	225	40	200

¹⁵⁶ Տես Տեղեկագիր Այրիահինաս Զանձնատողովի, 72-74:

¹⁵⁷ Տես Սերովբեան, Հովիին խրատները, 174-175:.

¹⁵⁸ Տես Թերզեան, Կիլիկիոյ աղէտը, 182:

¹⁵⁹ Տես Տեղեկագիր Այրիահինաս Զանձնատողովի, 72-74:

4	Էյսթիլի	131	35	175	30	150
5	Քյունես (Քյունեսլեր)	60	-	-	10	50
6	Քյուրդ Բախչե ¹⁶⁰	26	10	50	10	50
7	Արեղին փաշա չիֆթլիկ ¹⁶¹	17	10	50		
8	Բոստան աղա չիֆթլիկ ¹⁶²	30	8	40	-	-
	Ընդամենը	471	108	540	90	450

Աղյուսակ 15-ում ներկայացված բոլոր երեք աղբյուրները հաղորդում են 20-րդ դարասկզբին Իսլահիեի գավառակում շուրջ 500 շունչ հայ բնակչության առկայության մասին:

1913 թ. «Մշակի» և Մ. Ցիցիկյանի վիճակագրությունները չեն պարունակում առանձին տվյալներ Իսլահիեյի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ՝ ըստ երևույթին, նշված աղբյուրներում այս վարչական միավորի հայ բնակչության թիվը ներառված է Օսմանիեի և Յարփուզի հայ բնակչության ընդհանուր տվյալի մեջ:

Վերոնշյալը մեզ հիմք է տալիս Մեծ եղեռնի նախօրկային Իսլահիեի գավառակի հայ բնակչության թվաքանակի մեր հաշվարկում օգտագործել 1914 թ. օսմանյան վիճակագրության տվյալը, համաձայն որի նշված վարչական միավորում ապրում էր մոտ 500 հայ:

§4. Դորթ-Յուլի (Չորք-Մարգպան) գավառակ

Չորք-Մարգպանը կամ Դորթ-Յուլը Ջերեկ-Բերեքերի գավառի

¹⁶⁰ Մարաբա հայեր:

¹⁶¹ Մարաբա հայեր:

¹⁶² Մարաբա հայեր:

առավել հայաշատ վարչական միավորն էր: Գավառակի տարածքում գրեթե ամբողջությամբ հայաբնակ էր համանուն գյուղաքաղաքը, խառը՝ թուրք և հայ բնակչություն ունեին Չորք-Մարգպանին հարակից՝ Յոզերլի ու Օճագլը բնակավայրերը¹⁶³: Հայոց ցեղասպանության նախօրյակին Չորք-Մարգպանի գավառակի վարչական սահմանների մեջ էր մտնում նաև Էրզինի գյուղախումբը՝ Նաջարլու գուտ հայաբնակ գյուղով (գտնվում էր Չորք-Մարգպանից մոտ 30 կմ դեպի հյուսիս-արևմուտք):

Չորք-Մարգպանի գավառակի՝ ըստ բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ օժանդակ աղբյուրների տվյալները համեմատաբար շատ են.

1. Ըստ Մուշեղ եպիսկոպոս Սերովբյանի կողմից բերվող օսմանյան վիճակագրության տվյալների՝ 1908 թ. Չորք-Մարգպանի գավառակի հայ բնակչության թվաքանակը 8286 էր¹⁶⁴ (բաշխումն ըստ բնակավայրերի տե՛ս Աղյուսակ 16):
2. Ըստ Այրիախնամ հանձնաժողովի քննիչ-պատվիրակ Ժակ Սայապալյանի վիճակագրության (նույնպես օգտագործել է օսմանյան տվյալները) 1911 թ. գավառակն ուներ 1750 տուն, 8750 շունչ¹⁶⁵ հայ բնակչություն¹⁶⁶ (բաշխումն ըստ բնակավայրերի տե՛ս Աղյուսակ 16):
3. Ըստ Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի տվյալների, որոնք հիմնված են 1913 թ. վերաբերող հայկական եկեղեցական-թեմական վիճակագրության վրա, գավառակում բնակվում էր 11855 հայ¹⁶⁷ (բաշխումն ըստ բնակավայրերի տե՛ս Աղյուսակ 16):
4. Համաձայն Հայոց ցեղասպանությունը վերապրած չորք-մարգպանցի Մելքոն Տեր-Մելքոնյանի՝ Մեծ եղեռնի նախօր-

¹⁶³ Տե՛ս Մինաս Խապրիկ, *Եթէ Չորք-Մարգպանը ինձի հետ խոսէր* (Պեյրուք, հրատարակութիւն Չորք-Մարգպանի հայրենակցական միութեան, 1983), 14:

¹⁶⁴ Տե՛ս Սերովբեան, *Հովիին խրատները*, 172-173:

¹⁶⁵ Մեկ տան վրա 5 շունչ հաշվարկով:

¹⁶⁶ Տե՛ս *Տեղեկագիր պրիսիմնաւ Յանձնաժողովի*, 57-59:

¹⁶⁷ Տե՛ս Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman*, 302-303:

յակին գյուղաքաղաքն իր հարակից բնակավայրերով ուներ շուրջ 16000 հայ բնակչություն¹⁶⁸:

5. Ս. Ակունին իր «Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը» գրքում (1920 թ.) հաղորդում է, որ Դորթ-Յուլից և հարակից շրջաններից տեղահանվել է շուրջ 20000 հայ (այս թիվը, գուցե, արտացոլում է ամբողջ Չորք-Մարզպանի եկեղեցական թեմի հայ բնակչության թիվը)¹⁶⁹: Նույն տվյալը երկրորդում է մեկ այլ վերապրած հեղինակ՝ Մինաս Խապրիկը (ծնունդով Օճագլըից)¹⁷⁰:
6. Ս. Ծոցիկյանը Դորթ-Յուլում և հարակից Փայասում հաշվում է մոտ 9000 հայ բնակչություն¹⁷¹:
7. Սփյուռքահայ ուսումնասիրող, «Պատմություն Չորք-Մարզպանի» աշխատության հեղինակ Մինաս Գոճայանի տվյալներով՝ Չորք-Մարզպանում Համիդյան կոտորածների նախօրյակին կար շուրջ 7000 հայ բնակչություն, Օճագլըում՝ 200 տուն հայ, Յոզերլիում՝ 120 տուն հայ¹⁷²:
8. Ըստ Բյուզանդ Եղիայանի՝ Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Չորք-Մարզպան էր վերադարձել տեղահանությունը վերապրած մոտ 12000 հայ¹⁷³: Անգամ եթե հաշվի առնենք, որ վերադարձածների որոշ մասը բնիկ չորքմարզապանացիներ չէին՝ միևնույնն է, այս թիվն արդեն իսկ մոտ երկու անգամ բարձր է, քան 1914-ի օսմանյան վիճակագրության կողմից գավառակի համար հաղորդվող շուրջ 7000 շունչ հայ բնակչությունը:

¹⁶⁸ Տեն Մելրոն Տեր Մելրոնեան, *Կեսնքի եւ մահուան միջև* (Պէյրութ, տպ. «Առաւօտ», 1939), 48:

¹⁶⁹ Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը 295:

¹⁷⁰ Տեն Խապրիկ, *Եթէ Չորք-Մարզպանը ինձի հետ խոսէր*, 7:

¹⁷¹ Տեն Ծոցիկեան, *Կրեմոսահայ աշխարհ*, 135, 737:

¹⁷² Տեն Մինաս Գոճայեան, *Պատմութիւն Չորք-Մարզպանի (Տէօրթ-Եոյ)*. գիղաքաղաք մը կիլիկիոյ մէջ (Լոս Անճելըս, 2005), 35, 38, 41:

¹⁷³ Տեն Եղիայեան, *Ժամանակակից պատմութիւն կարողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ*, 83:

Աղյուսակ 16. Չորք-Մարգպանի գավառակի հայ բնակչության թվաքանակն ըստ 1908-1913 թթ. վերաբերվող տարբեր վիճակագրական տվյալների

	Բնակավայր	1908 թ. Սերովբյան	1911 թ. Սայապալյան		1913 թ. Գևորգյան- Փարուջյան
		Շունչ	Տուն	Շունչ	Շունչ
1	Չորք-Մարգպան	4850	1000 ¹⁷⁴	5000	7000
2	Օջալիի (Օճագլը)	1940	350	1750	2545
3	Յոզերլի	1056	300	1500	1560
4	Նաջարլու (Նաճարլը)	440	100 ¹⁷⁵	500	750
	Ընդամենը	8286	1750	8750	11855

Այսպիսով, օժանդակ աղբյուրների տեղեկությունները հաստատում են 1913-14 թթ. հայկական եկեղեցական-թեմական տվյալների հիման վրա կազմված վիճակագրությունների (1913 թ. «Մշակ», 1913 թ. Մ. Ցիցիկյան և այլն) տվյալները, որոնց համաձայն Հայոց ցեղասպանության նախօրյակին Դորթ-Յոլի (Չորք-Մարգպան) գավառակում (առանց Հասսայի գավառակի) կար մոտ 11850 շունչ հայ բնակչություն, այդ թվում Դորթ-Յոլում (Չորք-Մարգպան)՝ 7000 շունչ, Օճագլըում՝ 2550 շունչ, Յոզերլիում՝ 1550 շունչ, Նաճարլըում՝ 750 շունչ հայ:

¹⁷⁴ Այդ թվում՝ 20-ը բողոքական:

¹⁷⁵ Ժ. Սայապալյանը հաղորդում է, որ Նաջարլիի հայ բնակչությունը 1909 թ. կոտորածների ժամանակ ապաստանել էր Չորք-Մարգպանում: Կոտորածներից հետո իրենց հայրենի բնակավայր էր վերադարձել մոտ 10-12 ընտանիք, մնացածները հաստատվել էին Չորք-Մարգպանում՝ զնալով Նաջարլը միայն գյուղատնտեսական աշխատանքների ժամանակաշրջանին՝ «հողերը հերկելու և հունձքը վերցնելու համար» (տե՛ս *Տեղեկագիր Այրիսիմեստ Յանձնաժողովի*, 59):

§5. Հասսայի գավառակ

Դորթ-Յոլից դեպի արևելք ընկած Հասսայի գավառակում աղբյուրները հիշատակում են վեց հայաբնակ բնակավայր¹⁷⁶, որոնցից ամենամեծ թվով հայ բնակչություն ուներ գավառակի կենտրոնական Էքքեզ գյուղաքաղաքը:

Հայկական եկեղեցական-թեմական վիճակագրությունների հիման վրա կազմված ցուցակները (1913 թ. «Մշակ», 1913 թ. Մ. Յիցիկյան) առանձին Հասսայի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ չեն հաղորդում (ըստ երևույթին այդ վարչական միավորի հայ բնակչության թիվն ընդգրկվել է Յարվուզի կամ Չորք-Մարզպանի վիճակագրության մեջ):

Ըստ բնակավայրերի վիճակագրություն պարունակող մեզ հասու աղբյուրները 20-րդ դարասկզբին Հասսայի գավառակի վեց բնակավայրերի հայ բնակչության թվաքանակը տեղակայում են 1000-ի սահմաններում: Այսպես, Համաձայն Մուշեղ եպիսկոպոս Սերովբյանի տվյալների (1908 թ.)՝ գավառակի հայ բնակչության թիվը 700 էր (ըստ բնակավայրերի վիճակագրության բաշխումը տե՛ս Աղյուսակ 17)¹⁷⁷:

Գավառակի հայաբնակ գյուղերից 1909 թ. կոտորածների ընթացքում առավելապես տուժել է Ֆասըլլըն կամ Այրի Պուճագը, որի 20 տուն հայերից 1911 թ. մնացել էր 10-ը¹⁷⁸:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայկական աղբյուրները Հասսայի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ այլ տվյալներ չեն հաղորդում, Հայոց ցեղասպանության նախօրյակին գավառակում բնակվող հայերի թվաքանակի հաշվարկի համար օգտագործում ենք 1914 թ. օսմանյան վիճակագրության տվյալը՝ 1324 շունչ հայ, որից 770-ը առաքելական, 269-ը կաթոլիկ և 285-ը բողոքական (կյորացված թիվ՝ 1320):

¹⁷⁶ Տե՛ս Սերովբեան, *Հովիտն խրատները*, 172-173, տե՛ս նաև Թերզեան, *Կիլիկիոյ աղէտը*, 245:

¹⁷⁷ Տե՛ս Սերովբեան, *Հովիտն խրատները*, 172-173:

¹⁷⁸ Տե՛ս *Տեղեկագիր այրիախնամ յանձնաժողովի*, 75:

Աղյուսակ 17. Հասսայի գավառակի հայ բնակչության թվաքանակն ըստ 1908 թ. օսմանյան վիճակագրության¹⁷⁹

	Բնակավայր	Շունչ
1	Էքբեզ (Կենտրոնական)	450
2	Ֆասըլլը (Այրի Պունագ)	70
3	Հաջիլար	40
4	Բյուրեջի	15
5	Դեմրեք	5
6	Թեյեք	120 ¹⁸⁰
	Ընդամենը	700

Ջերեյ-Բերեքերի գավառի հայ բնակչության թվաքանակի հաշվարկի ամփոփում

Այսպիսով, տարբեր աղբյուրների տվյալների համադրման և վերլուծության հիման վրա կատարված հաշվարկը փաստում է, որ Հայոց ցեղասպանության նախօրյակին Ջերեյ-Բերեքերի գավառի տարածքում գտնվող 34 հայաբնակ բնակավայրերում բնակվում էր շուրջ 22580 հայ, որից կենտրոնական Ջերեյ-Բերեքերի (Օսմանիե) գավառակի 4 հայաբնակ բնակավայրերում՝ 900, Բախչեի (Բուլանըղ) գավառակի 12 հայաբնակ բնակավայրերում՝ 8000, Իսլահիեի գավառակի 8 հայաբնակ բնակավայրերում՝ 500, Դորթ-Յոլի (Չորթ-Մարգպան) գավառակի 4 հայաբնակ բնակավայրում (ներառյալ Էրզինի գյուղախմբի հայաբնակ Նաճարլը բնակավայրը)՝ 11860 և

¹⁷⁹ Տե՛ս Սերոփեան, *Հովիտն խրատնկորը*, 172-173:

¹⁸⁰ Կաթոլիկադավան:

Հասսայի գավառակի 6 հայաբնակ բնակավայրերում՝ 1320¹⁸¹;

Ըստ 1914 թ. օսմանյան վիճակագրության՝ գավառում կար 54258 շունչ իսլամադավան ազգաբնակչություն¹⁸²:

ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խմբի տվյալներով՝ 1914 թ. գավառի մուսուլման ազգաբնակչության թիվը մոտ 60000 էր¹⁸³:

Հիմք ընդունելով վերոնշյալ տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ հայերը կազմում էին Ջերեկ-Բերեքթեի գավառի ընդհանուր ազգաբնակչության շուրջ 27%-ը, ընդ որում՝ հայերի հարաբերակցությունն առավել մեծ էր Դորթ-Յուլի գավառակի ընդհանուր ազգաբնակչության մեջ՝ 43%:

¹⁸¹ Համաձայն Սարգիս Կարայանի հաշվարկի՝ Ջերեկ-Բերեքթեի գավառում 1914 թ. բնակվում էր 27639 հայ: Ուսումնասիրողը գավառի հայ բնակչության հաշվարկի մեջ ընդգրկել է աղբյուրների կողմից հիշատակվող 40 հայաբնակ բնակավայր: Ս. Կարայանի հաշվարկը գերծ չէ ուղեագումներից. այսպես, հիմք ընդունելով երկրորդական աղբյուրներից մեկի (Գրիգորիս վոդ. Պալաքյան) տվյալը, նա Իսլահիե գյուղաքաղաքում հաշվում է 1500 շունչ հայ, մինչդեռ, այլ՝ առավել արժանահավատ աղբյուրների կողմից նման քանակի հայ բնակչություն այնտեղ վկայված չէ: Ուղեագցված է նաև Փայասի հայ բնակչության թիվը՝ 2500. 1914 թ. դրությամբ երբեմնի հայաշատ առափնյա այդ բնակավայրում մշտական հայ բնակչության առկայության մասին մեր տրամադրության տակ եղած առավել հավաստի աղբյուրները տվյալներ չեն հաղորդում (Ս. Կարայանի հաշվարկը տե՛ս Karayan, *Armenians in Ottoman Turkey, 1914*, 105-111):

¹⁸² Karpat, *Ottoman population 1830-1914*, 172-173:

¹⁸³ Zamir, "Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919", 102:

4. Ադանայի նահանգի Մերսինի գավառ
Ադանայի նահանգի Մերսինի գավառի հայ բնակչությունը կենտրոնացած էր Մերսին և Տարսոն քաղաքներում, զուտ հայաբնակ էր Տարսոնի հարևանությամբ գտնվող Քոզոլուք (Գոզ-Օլուգ) բնակավայրը:

Մեր կողմից առանձնացված վիճակագրական սկզբնաղբյուրները գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ հաղորդում են հետևյալ տվյալները (տե՛ս նաև Աղյուսակ 18).

1. 1895 թ. Կիլիկիո կաթողիկոսարանի վիճակագրություն՝ 950 տուն, 4750 շունչ, որից Տարսոն՝ 800 տուն, 4000 շունչ, Մերսին՝ 150 տուն, 750 շունչ հայ¹⁸⁴:
2. 1902 թ. Մ. Օրմանյանի վիճակագրության՝ Մերսինի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները ներառված են Ադանայի թեմի ընդհանուր տվյալի մեջ (տե՛ս Աղյուսակ 7): Կարելի է ենթադրել, որ աղբյուրը հաշվել է Մերսինի գավառի հայ բնակչության թիվը մոտ 5000-6000-ի սահմաններում:
3. 1910 թ. Համբարձում Առաքելյանի վիճակագրություն՝ 7400 շունչ (այլ մանրամասնություններ չկան)¹⁸⁵:
4. 1912 թ. Հայոց պատրիարքարան-Ապահովության հանձնաժողովի վիճակագրության՝ Մերսինի գավառի տվյալները ներառված են Ադանայի գավառի ընդհանուր տվյալի մեջ (տե՛ս Աղյուսակ 7): Ենթադրում ենք, որ աղբյուրը հաշվել է Մերսինի գավառի հայ բնակչության թիվը մոտ 5000-6000-ի սահմաններում:
5. 1913 թ. «Մշակի» վիճակագրություն՝ 6090 շունչ, այդ թվում Մերսինի գավառակ՝ 2250, Տարսոն՝ 3840 շունչ¹⁸⁶:
6. 1913 թ. Մ. Ցիցիկյանի վիճակագրություն՝ 6090 շունչ, այդ թվում Մերսինի գավառակ՝ 2250, Տարսոն՝ 3840 շունչ¹⁸⁷:

¹⁸⁴ «Վիճակագրութիւն Կիլիկիոյ Հայոց», 46:

¹⁸⁵ Տե՛ս Առաքելեան, «Թիրքահայ ժողովրդի վիճակագրութիւնը», 73:

¹⁸⁶ «Հայերը Կիլիկիայում», 2:

¹⁸⁷ Ցիցիկեան, «Հայերը Կիլիկիայում», 1109:

7. 1914 թ. օսմանյան վիճակագրություն՝ 4267 շունչ¹⁸⁸, այդ թվում 900-ը¹⁸⁹՝ Մերսինի, 3364-ը¹⁹⁰՝ Տարսոնի գավառակում¹⁹¹:
8. 1914 թ. ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խմբի վիճակագրության՝ Մերսինի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները ներառված են Ադանայի գավառի տվյալի մեջ (տես Աղյուսակ 7): Կարելի է ենթադրել, որ աղբյուրը հաշվել է Մերսինի գավառի հայ բնակչության թիվը մոտ 5000–6000-ի սահմաններում:
9. 1914 թ. Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի հաշվարկ՝ 6987 շունչ, այդ թվում Մերսին՝ 2297, Տարսոն՝ 4700 շունչ¹⁹²:

Աղյուսակ 18. Մեծ եղեռնի նախօրյակին Ադանայի նահանգի Մերսինի գավառի հայ բնակչության թվաքանակն ըստ տարբեր վիճակագրական տվյալների

Գավառակներ	1895 Կիլիկիո կաթողիկոսա- րան	1910 Առաքել- յան	1913 «Մշակ»	1913 Ցիցիկ- յան	1914 օսման- յան	1914 Գևորգյան- Փաբուջյան
Մերսին	750	-	2250	2250	900	2297
Տարսոն	4000	-	3840	3840	3364	4700
Ընդամենը	4750	7400	6090	6090	4264	6987

Ինչպես կարելի է տեսնել Աղյուսակ 18-ից՝ Մերսինի գավառի նախաեղեռնյան հայ բնակչության թվաքանակի համար հաղորդվող

¹⁸⁸ 164 կաթոլիկ և 381 բողոքական հայ:

¹⁸⁹ 42 կաթոլիկ և 68 բողոքական հայ:

¹⁹⁰ 122 կաթոլիկ և 313 բողոքական հայ:

¹⁹¹ Karpat, *Ottoman population 1830-1914*, 172-173:

¹⁹² Kevorkian, Paboudjian, *Les Arméniens dans l'Empire ottoman*, 58, 290-300:

ամենացածր թիվը 4264-ն է (օսմանյան վիճակագրություն), ամենաբարձրը՝ 7400 (Հ. Առաքելյան):

Մերսինի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ օժանդակ աղբյուրների տվյալներն են՝

1. Մուշեղ եպիսկոպոս Սերովբյան (ըստ 1908 թ. օսմանյան վիճակագրության)՝ 5726 շունչ, որից Մերսինում՝ 2297 շունչ, Տարսոնի գավառակում՝ 3429 շունչ (այդ թվում՝ Տարսոն քաղաքում՝ 3139, Գոզ-Օլուզ բնակավայրում՝ 290)¹⁹³,
2. Հ. Թերզյան (1908 թ.)՝ Տարսոն՝ 600 տուն, 3139 շունչ, Գոզ-Օլուզ 70 տուն¹⁹⁴,
3. Ժակ Սայապալյան (1911 թ.)՝ Տարսոն՝ 600 տուն (այդ թվում 100-ը՝ բողոքական, 30-ը՝ կաթոլիկ) և Գոզ-Օլուզ՝ 50 տուն (նախքան 1909 թ. ջարդերը՝ 80 տուն, այդ թվում 30-ը՝ բողոքական) (Մերսին քաղաքի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները բացակայում են)¹⁹⁵,
4. Ս. Ծոցիկյան՝ 6500 շունչ, որից Մերսինում՝ 2500, Տարսոնում՝ 4000 շունչ¹⁹⁶,

Ելնելով վերոնշյալից՝ կարելի է փաստել, որ «Մշակի» և Մ. Ցիցիկյանի՝ 1913 թ. վերաբերող տվյալները, համաձայն որոնց Մերսինի գավառակում կար 6000-7000 շունչ հայ բնակչություն, հաստատվում են օժանդակ աղբյուրների տվյալների միջոցով, ուստի, մեր կարծիքով, որպես Մեծ եղեռնի նախօրյակի դրությամբ Մերսինի գավառակի հայ բնակչության առավել արժանահավատ և իրականությանը մոտ թիվ կարելի է ընդունել 7000-ը¹⁹⁷:

¹⁹³ Տես Սերովբեան, *Հովիտն իրասունները*, 172-173:

¹⁹⁴ Թերզեան, *Կիլիկիոյ աղէտը*, 142, 145:

¹⁹⁵ Տես *Տեղեկագիր այրիախնամ Յանձնաժողովի*. 76-77:

¹⁹⁶ Տես Ծոցիկեան, *Արևմտահայ աշխարհ*, 420, 731:

¹⁹⁷ Ս. Կարայանի հաշվարկով (ըստ տարբեր աղբյուրների, ինչպես նաև վերապրածների կողմից տրամադրված տեղեկությունների) Մերսինի գավառում կար 9010 հայ, այդ թվում Մերսին՝ 3000, Տարսոն՝ 5000, Կոզ-Օլուզ՝ 260: Վկայակոչելով «Կիլիկիոյ աղէտը» գրքի հեղինակ Հ. Թերզյանի կողմից մի տվյալ՝ ամերիկահայ ուսումնասիրողը գավառի կազմում որպես հայաբնակ նշում և հաշվարկի մեջ ընդգրկում է Էլվանլը (66 տուն, 500 շունչ) և Լամբրոն (Նամրոն) բնակավայրերը (250 շունչ) (տես Karayan,

Ըստ օսմանյան վիճակագրության՝ 1914 թ. Մերսինի գավառն ուներ 88831 շունչ իսլամադավան և 3401 շունչ հույն ազգաբնակչություն¹⁹⁸: Հաշվի առնելով վերոնշյալ տվյալները՝ կարող ենք եզրակացնել, որ հայերը կազմում էին գավառի ընդհանուր ազգաբնակչության մոտ 7%-ը:

Armenians in Ottoman Turkey, 99-100): Էլվանլը բնակավայրի հայաբնակության մասին բացի Հ. Թերզյանից որևէ այլ աղբյուր տեղեկություններ չի հաղորդում, ինչը տարօրինակ է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գոյություն ունեն տվյալներ շատ ավելի փոքրաթիվ հայ բնակչություն ունեցող բնակավայրերի մասին (Էլվանլըի մասին Թերզյանի տեղեկությունների աղբյուրը Ադանայի կոտորածների ընթացքում այրված և քանդված շենքերի պաշտոնական օսմանյան վիճակագրությունն է, որը հրատարակվել է «Ժամանակ» օրաթերթի (Կ.Պոլիս) 1909 թ. 11 (24) հունիսի համարում (տե՛ս *Ժամանակ, ժողովրդական օրաթերթ* (Կ.Պոլիս), Ա. Տարի, թիւ 199, 11 (24) հունիս 1909, 3): Սա ենթադրել է տալիս, որ կամ Էլվանլըում մշտական հայ բնակչություն չի եղել, և 1909-ի կոտորածների ընթացքում այնտեղ տուժել են պանդուխտները, կամ էլ այլ տվյալը շփոթմունքի արդյունք է:

Ինչ վերաբերվում է Լամբրոն-Նամրունին, ապա 19-րդ դարի վերջին – 20-րդ դարի սկզբին այդ բնակավայրը մշտական հայ բնակչություն չի ունեցել, այլ ծառայել է Տարսուսի հայերի համար որպես ամառանոցային վայր: Այսպես, մի վկայության մեջ կարդում ենք հետևյալը. «*Տարսուսի հիսսասային արևելեան կողմը կ'իյնա... Լամբրոնի բերդը, որուն բոլորտիքը Հայոց և Թրքաց ամառանոցները կան, փոքրիկ այգիներու մէջ ցրուած, շատ գեղեցիկ տեսարանով, ուր Տարսուսի բնակիչք ամառուան տար օրերը նոյն հովասուն ու ջրաւիտ և առողջարար օդը ծծելով մնունդ կ'առնուն ու աշնան ժամանակ իրենց տունը բողբոլ ըստ մեծի մասին մէջի կարասեօքը ու Տարսուս դառնան» (տե՛ս «Բանախոսություն գեր. հայր Կ. Սիպիլեանի», *Արևելեան մամուլ* (Զմիռնիա), յուլիս. 1876, 170):*

¹⁹⁸ Karpat, *Ottoman population 1830-1914*, 172-173:

5. Մարաշի գավառ

Մարաշի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ մեր կողմից առանձնացված վիճակագրական սկզբնաղբյուրները հաղորդում են հետևյալ տվյալները (տես նաև Աղյուսակ 19)։

1. 1895 թ. Կիլիկիո կաթողիկոսարանի վիճակագրություն՝ 10800 տուն, 54000 շունչ, որից Մարաշի և Բագարջըղի գավառակներ՝ 3000 տուն, 15000 շունչ, Ալբիստան՝ 700 տուն, 3500 շունչ (այդ թվում Ալբիստանն իր գյուղերով՝ 500 տուն, 2500 շունչ, Եփեսոսը (Յարփուզ¹⁹⁹)՝ 200 տուն, 1000 շունչ), Չեյթուն՝ 4500 տուն, 22500 շունչ, Ֆոնուսի շրջանակի գյուղեր՝ 800 տուն, 4000 շունչ, Կոկիսոնի գավառակ՝ 1800 տուն, 9000 շունչ (Կոկիսոն իր գյուղերով՝ 1000 տուն, 5000 շունչ, Կապանի շրջանակի գյուղեր՝ 800 տուն, 4000 շունչ)²⁰⁰։
2. 1902 թ. Մ. Օրմանյանի վիճակագրություն՝ 65500 շունչ, որից Մարաշի արքեպիսկոպոսական վիճակ (Մարաշ, Բագարջըղ, Ալբիստան) 37500 (այդ թվում՝ 4000 կաթոլիկ և 3500 բողոքական հայ), Ուլնիայի (Չեյթուն) եպիսկոպոսական վիճակ՝ 21000 (այդ թվում՝ 500 կաթոլիկ և 500 բողոքական հայ) և Ֆոնուսի վանական թեմ՝ 7000²⁰¹։
3. 1910 թ. Հ. Առաքելյանի վիճակագրություն՝ 86800 շունչ (տվյալի բաշխումն ըստ գավառակների բացակայում է)²⁰²։
4. 1912 թ. Հայոց պատրիարքարանի-Ապահովության հանձնաժողովի վիճակագրություն՝ 69000 շունչ, այդ թվում Մարաշ (Բագարջըղն ու Ալբիստանը ներառյալ)՝ 28000, Չեյթուն՝ 28000, Ֆոնուս՝ 13000²⁰³։
5. 1913 թ. «Մշակի» վիճակագրություն՝ 70629 շունչ, այդ թվում Մարաշ (Բագարջըղը ներառյալ)՝ 31560, Ալբիստան՝ 5830, Չեյթուն՝ 22450, Կոկիսոն՝ 10789²⁰⁴։

¹⁹⁹ Չչիոթել Ջեթել-Բերնբեթի գավառի նույնանուն բնակավայրի հետ։

²⁰⁰ «Վիճակագրութիւն Կիլիկիոյ Հայոց», 46։

²⁰¹ Ormanian, *The Church of Armenia*, 241, Օրմանեան, *Հայոց եկեղեցիւն*, 264։

²⁰² Տես Առաքելեան, «Թիւրքահայ ժողովրդի վիճակագրութիւնը», 73։

²⁰³ Թեղդիկ, *Ամէնուն տարեցոյցը*, ԺՁ տարի, 1922, 262։

²⁰⁴ «Հայերը Կիլիկիայում», 2։

6. 1913 թ. Մ. Ցիցիկյանի վիճակագրություն՝ 50015 շունչ, այդ թվում Մարաշ (Բազարջըղը ներառյալ)՝ 20000, Ալբիստան՝ 1940, Չեյթուն՝ 25705, Կոկիսուն՝ 2370²⁰⁵:
7. 1914 թ. օսմանյան վիճակագրություն՝ 38433 շունչ²⁰⁶, այդ թվում Մարաշի գավառակ՝ 22040²⁰⁷, Բազարջըղ՝ 37, Ալբիստան՝ 2017²⁰⁸, Չեյթուն՝ 10718²⁰⁹, Գյոքսուն (Կոկիսուն)՝ 3621²¹⁰:
8. 1914 թ. ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խմբի վիճակագրություն՝ 55000 շունչ (բաշխումն ըստ գավառակների բացակայում է)²¹¹:
9. 1914 թ. Ռ. Գևորգյանի և Փ. Փարույանի հաշվարկ՝ 72143 շունչ, այդ թվում Մարաշի գավառակ՝ 32844, Բազարջըղ՝ 1500, Կոկիսուն (Գյոքսուն)՝ 9505, Չեյթուն՝ 22456, Ալբիստան՝ 5838²¹²:

²⁰⁵ Ցիցիկեան, «Հայերը Կիլիկիայում», 1108:

²⁰⁶ Այդ թվում՝ 4480 կաթոլիկ և 6111 բողոքական հայ:

²⁰⁷ Այդ թվում՝ 3808 կաթոլիկ և 4972 բողոքական հայ:

²⁰⁸ Այդ թվում՝ 372 կաթոլիկ և 445 բողոքական հայ:

²⁰⁹ Այդ թվում՝ 182 կաթոլիկ և 486 բողոքական հայ:

²¹⁰ Այդ թվում՝ 118 կաթոլիկ և 208 բողոքական հայ (տե՛ս Karpat, *Ottoman population 1830-1914*, 172-173):

²¹¹ Zamir, "Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919", 102:

²¹² Kevorkian, Paboudjian, *Les Arméniens dans l'Empire ottoman*, 58, 300-303:

Աղյուսակ 19. Մեծ եղեռնի նախօրյակին Մարաշի գավառի հայ բնակչության թվաքանակն ըստ տարբեր վիճակագրական տվյալների

Գավառակներ	1895 Կիլիկիո կաթողիկոսա- րան	1902 Օրման- յան	1910 Առա- քել- յան	1912 Հայոց պատ- րիար- բարան	1913 «Մշակ»	1913 Ցի- ցիկ- յան	1914 օս- ման- յան	1914 ԱՄՆ Տեղե- կատու փոր- ձակա- նական խումբ	1914 Գևորգ- յան- Փարու- ջյան
Մարաշ			-		31560	20000	22040	-	32844
Բա- զար- ջըղ	15000	37500	-	28000	-	-	37	-	1500
Ալբիս- տան	3500		-		5830	1940	2017	-	5838
Չեյթուն	26500		-		22450	25705	10718	-	22456
Գյոը- սուն (Կոկի- սուն)	9000	21000 7000	-	28000 13000	10789	2370	3621	-	9505
Ընդա- մենը	54000	65500	86800	69000	70629	50015	38433	55000	72143

Ինչպես կարող ենք տեսնել վերոնշյալ տվյալներից՝ Մեծ եղեռնի նախօրյակին գավառի հայ բնակչության թվաքանակի առավել ցածր թիվը պարունակում է 1914 թ. օսմանյան վիճակագրությունը՝ 38433 շունչ, առավել բարձր թիվը հաղորդում է Հ. Առաքելյանը՝ 86800 շունչ:

Կիլիկիայի այլ շրջանների համեմատ՝ Մարաշի գավառի և

հատկապես Մարաշի և Ջեյթունի գավառակների հայ բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական նյութը բավականին առատ է ներկայացված²¹³։ Դրա հետ մեկտեղ, շատ տվյալներ ընդհանուր են, և ուսումնասիրողի համար հաճախ դժվար է հասկանալ, թե արդյոք տվյալ աղբյուրը, նշելով Մարաշի կամ Ջեյթունի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ, նկատի ունի միայն կենտրոնական բնակավայրը, թե՛ շրջակա բնակավայրերը ևս, և, եթե տվյալը ներառում է նաև շրջակա բնակավայրերը, ապա որոնք են դրանք²¹⁴։ Սա հանգեցնում է շփոթի, որը հնարավոր է հաղթահարել ըստ Մարաշի գավառի առանձին գավառակների հայաբնակ բնակավայրերի ցուցակները կազմելու և դրանց վերաբերյալ վիճակագրական տվյալները համադրելու և վերլուծելու միջոցով։

§1 Մարաշի գավառակ (կենտրոնական)²¹⁵

Հայոց ցեղասպանության նախօրյակին Մարաշի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ ամենացածր տվյալը պարունակում է 1914 թ. օսմանյան վիճակագրությունը՝ 22040, ամենաբարձր թիվն առկա է 1913-14 թթ. վերաբերվող հայկական եկեղեցական-թեմական վիճակագրությունների հիման վրա Ռ.

²¹³ Տես, մասնավորապես, Գ.ր. Գալուստյանի «Մարաշ» և Հ. Պողոսյանի «Ջեյթունի պատմությունը» աշխատությունների համապատասխան բաժինները, որտեղ տրվում են Մարաշի և Ջեյթունի շրջանների հայ բնակչության թվաքանակին վերաբերող տարբեր աղբյուրներից բաղված տվյալներ (տես Հ. Մ. Պողոսյան, *Ջեյթունի պատմությունը* (Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1969), 32-41, Գալուստյան, *Մարաշ*, 32-38 (գլուխ Դ. «Մարաշի գավառը»), 39-84 («Մարաշ գաւառին հինգ գավառակներն ու անոնց գիւղերը»), 95-97 (Ջեյթուն), 242-243 (Մարաշ քաղաք))։

²¹⁴ Այսպես, օրինակ Հ. Մ. Պողոսյանն իր «Ջեյթունի պատմությունը» գրքում Ջեյթունի շրջակին պատկանող բնակավայրեր է համարում անգամ Ֆընդըջաքը և Շիվիկին, որոնք օսմանյան վարչական բաժանմամբ գտնվում էին, համապատասխանաբար, Մարաշի և Գյոքսունի գավառակների կազմում (տես Պողոսյան, *Ջեյթունի պատմությունը*, 38-40)։

²¹⁵ Գավառակի հայաբնակ բնակավայրերի վարչական պատկանելությունը ճշտել ենք ըստ Հայեպի նահանգի 1908 թ օսմանյան տարեգրքի (սախմամե) տվյալների, որոնց օսմաներենից թարգմանության հարցում մեզ օգնել է ՀՅԹԻ Հուշագրությունների, փաստաթղթերի և մամուլի ուսումնասիրության բաժնի վարիչ Միհրան Մինասյանը։

Գևորգյանի և Փ. Փաբուջյանի հաշվարկում՝ 32844 (ուսումնասիրողները գավառակի սահմանների մեջ ընդգրկում են և հաշվարկի մեջ ներառում են նաև Աստրոնի և Շիվիլիի շրջանակների հայաբնակ բնակավայրերը):

Ստորև (Աղյուսակ 20) մենք համադրում ենք ըստ Մարաշի գավառակի հայաբնակ բնակավայրերի հայ բնակչության բաշխումը պարունակող երեք վիճակագրական աղբյուրների՝ Այրիախնամ հանձնաժողովի քննիչ-պատվիրակ Ժակ Սայապալյանի տեղեկագրի (1911 թ.)²¹⁶, սիյուռքահայ ուսումնասիրողներ Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի²¹⁷ և Գրիգոր Գալուստյանի²¹⁸ կազմած վիճակագրությունների տվյալները:

Վերոնշյալ աղբյուրներից քաղված տվյալների համադրումը վկայում է այն մասին, որ Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի կողմից օգտագործված 1913-14 թթ. հայկական եկեղեցական-թեմական վիճակագրական տվյալները հիմնականում երկրորդվում են այլ վիճակագրական աղբյուրների կողմից, ինչը թույլ է տալիս ընդունել դրանք որպես հիմք Մարաշի գավառակի նախատեղեկության հայ բնակչության թվաքանակի հաշվարկի համար՝ լրացնելով դրանում չընդգրկված հայաբնակ բնակավայրերի մասին տվյալները Աղյուսակ 20-ում ներկայացված երկու այլ աղբյուրներից՝ Այրիախնամ հանձնաժողովի տեղեկագրից և Գ. Գալուստյանի աշխատությունից վերցված տվյալներով: Ըստ վերոնշյալ մեթոդով մեր կողմից կատարված հաշվարկի՝ Հայոց ցեղասպանության նախօրյակին Մարաշի գավառակի հայ բնակչությունը մոտ 31,230 էր, որից 22,500-ը բնակվում էր Մարաշ քաղաքում, 8730-ը՝ գավառակի հաշվարկի մեջ ընդգրկված 19 հայաբնակ բնակավայրերում²¹⁹:

²¹⁶ Տես *Տեղեկագիր այրիախնամ Յանձնաժողովի*, 29:

²¹⁷ Տես Kevorkian, Paboudjian, *Les Arméniens dans l'Empire ottoman*, 306-311 (1913-14 թթ. եկեղեցական-թեմական վիճակագրությունների հիման վրա):

²¹⁸ Տես Գալուստյան, *Մարաշ*, 39-59 (ուսումնասիրողի հիմնական աղբյուրը ցեղասպանությունը վերապրածներից ստացված տեղեկություններն են):

²¹⁹ Համաձայն Ս. Կարայանի հաշվարկի՝ 1914-ին Մարաշի գավառակում կար 5336 տուն, 38164 հայ բնակչություն, որից 4000 տուն, 30000 շունչը՝ Մարաշ քաղաքում, 1336 տուն, 8164 շունչը՝ հաշվարկի մեջ ընդգրկված 22 հայաբնակ բնակավայրերում (տես Karayan, *Armenians in Ottoman Turkey*, 1914, 131-132): Մեր կարծիքով՝ Մարաշ

Աղյուսակ 20. Մարաշի գավառակի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին

	Վարչական միավոր	1911 Սայապայան		1914 Գևորգյան-Փարոջյան	1914 Գալուստյան		Մեր հաշվարկը
		Տուն	Շունչ	Շունչ	Տուն	Շունչ	Շունչ
1	Մարաշ քաղաք	4000	20000	22500	5000	25000 ²⁰	22500
2	Քիչիֆլի	80	400	560	82	450	560 ²¹
3	Ֆընդըջաք	400	2000	2500	400	2500	2500 ²²
4	Դերեքոյ	90	450	1000	140	850	1000 ²³
5	Ջամուսթուլ	20	100	250	-	50	250

քաղաքում 30000 հայ բնակչություն հաշվելը չափազանցություն է, որը չի բխում առավել արժանահավատ սկզբնաղբյուրների տվյալներից:

²⁰ Հեղինակը ներկայացնում է տարբեր աղբյուրների տվյալներ, որոնց համաձայն Մարաշ քաղաքի հայ բնակչության թիվը 20000-30000-ի սահմաններում է, խուսափելով, սակայն, այդ թվերի վերաբերյալ սեփական կարծիքը հայտնելուց (տե՛ս Գալուստեան, *Մարաշ*, 242-243): Մարաշի հայ բնակչության՝ 25000 թվի համար հիմք ենք ընդունել 5000 տան մասին հեղինակի տվյալը և մեկ տան վրա հաշվելով 5 շունչ: Մարաշ քաղաքում շուրջ 25000 հայ բնակչություն է հաշվում (այդ թվից մեկ երրորդը կաթոլիկ և բողոքական) Մարաշի գավառին նվիրված «Արինաւեր հայկ. քաղաքներ», *Ճողովորդի ձայնը, քաղաքական և հասարակական օրաթերթ* (Կ. Պոլիս), 1920, մարտի 2, թիւ 422): Ընդհանուր Մարաշի գավառի հայ բնակչության թիվը տեղահանությունից առաջ, ըստ նույն հեղինակի, 60000 էր, որից 1920-ին վերադարձել էր մոտ 29000-ը (տե՛ս *Ճողովորդի ձայնը*, 1920, մարտի 3, թիւ 423):

²¹ 80 տունով 500 բնակիչ է հաշվում Քիչիֆլիում Ֆընտըջազի հերոսամարտի ականատես Դավիթ Աղամյանը (տե՛ս Դաւիթ Մ. Աղամեան, *Կիլիկիան դրոսագներ. Ֆնտըճազի հերոսամարտը (Յուշատուրէս քանի մը էջ)* (Փարիզ, տպագ. Կ.Յ. Ներսէս, 1921), 14:

²² Ըստ Դ. Աղամյանի՝ Ֆընդըջազն ուներ 300 տուն, 2200 շունչ գոտ հայ բնակչություն (Աղամեան, *Կիլիկիան դրոսագներ. Ֆնտըճազի հերոսամարտը*, 25):

²³ Ըստ մի տվյալի՝ Դերեքոյը Առաջին աշխարհամարտի նախօրյակին ունեցել է 127 տուն հայ բնակչություն, 1915 թ. բնակավայրից տարագրվել է 800 հայ, որից վերապրել է և 1919 թ. բնակավայր է վերադարձել 330-ը (տե՛ս «Մացորդ հայերը» (Սեփական թղթակցություն), *Կիլիկիա, օրաթերթ* (Ատանա), 1919, հունիսի 10): : Մեկ տան վրա 8 շունչ հաշվելու դեպքում գյուղի հայ բնակչության թիվը 1016 է:

6	Գյուլջիեզ (Գյուլջեյիզ)	24	120	-	-	-	120
7	Սարըլար	12	60	-	-	-	60
8	Դյոնգել (Դյոնկելեն)	90	450	1500	120	1000	1500
9	Եսիճեկալե (Մեծ գյուղ)	100	500	800	150	800	800
10	Մնջաձոր (Մուճուգդե-րեսի)	-	-	500	60	300	500
11	Արաբլար	8	40	100	15	100	100
12	Քյոթեքլի	-	-	150	20	150	150
13	Եղիալար-օպասը	14	70	150	20	150	150
14	Դավիթլի-օպասը	19	95	-	-	-	95
15	Չյուրյուրկոզ	25	125	300	60	300	300
16	Դենրեք	30	150	-	50	250	250
17	Փունարբաշի	-	-	100	20	100	100
18	Դիքիլիթաշ	-	-	100	20	100	100
19	Դեհրմենդերե	-	-	140	30	150	150
20	Կըզըլաղաշ	-	-	-	9	45	45
	Ընդամենը	4912	24560	30650	6196	32295	31230

§2. Գյոքսունի գավառակ

Հայոց ցեղասպանության նախօրյակին Գյոքսունի (Կակիսուն) կամ Անտրունի գավառակի կազմի մեջ էին մտնում Անտրունի գյուղախումբը, Կոկիսունը և շրջանակի գյուղերը, Կապանը և շրջանակի գյուղերը²²⁴:

²²⁴ Գավառակի հայաբնակ բնակավայրերի վարչական պատկանելությունը ճշտել ենք

Մեր կողմից առանձնացված սկզբնաղբյուրներից (տե՛ս Աղյուսակ 19) գավառակի հայ բնակչության թվաքանակի համար առավել ցածր թիվը պարունակում է 1914 թ. օսմանյան վիճակագրությունը՝ 3621, ամենաբարձրը՝ 1913 թ. «Մշակի» տվյալն է՝ 10789:

Գավառակի հայ բնակչության թվաքանակը հաշվարկելու նպատակով օգտագործել ենք ըստ բնակավայրերի վիճակագրությունն պարունակող չորս սկզբնաղբյուրի տվյալներ՝ 1) Ջեյթունի ինքնապաշտպանության առանցքային գործիչներից մեկի՝ Աղասիի (Կարապետ Թորսարգյան)՝ 1890-ական թթ. կազմած վիճակագրությունը²²⁵, 2) Ժակ Սայապալյանի տեղեկագրում զետեղված 1911 թ. վիճակագրական ցուցակը (հիմնված է օսմանյան տվյալների վրա)²²⁶, 3) Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի հաշվարկի հիմքում ընկած տվյալները (ըստ 1913-14 թթ. եկեղեցական-թեմական վիճակագրության²²⁷), Գ. Գալուստյանի տվյալները (ըստ ցեղասպանությունը վերապրածների տվյալների)²²⁸ (տե՛ս Աղյուսակ 21):

Կապանի շրջանակի հայ բնակչության թվաքանակի՝ մեր հաշվարկի հիմքում դրել ենք Գրիգոր Գալուստյանի հողորդած տվյալը՝ 550 տուն հայ, մեկ տան վրա հաշվելով 6 շունչ: Ստացված 3300 շունչ թիվը մոտ է Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի տվյալին (3,245):

Աստրունի գյուղախմբի հայ բնակչության թվաքանակի հաշվարկի հիմքում դրել ենք Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի վիճակագրությունը՝ լրացնելով պակասող հայաբնակ բնակավայրերի համար տվյալները Ժ. Սայապալյանի ցուցակի տվյալներից: Քանի որ Ժ. Սայապալյանի ցուցակում տրված է միայն տների թիվը, մեկ տան վրա հաշվել ենք 6 շունչ: Ըստ վերոնշյալ մեթոդաբանությամբ

ըստ Հալեպի նահանգի 1908 թ օսմանյան տարեգրքի (սալնամե) տվյալների, որոնց օսմաներենից թարգմանության գործում մեզ օգնել է ՀՅԹԻ Հուշագրությունների, փաստաթղթերի և մամուլի ուսումնասիրության բաժնի վարիչ Միհրան Մինասյանը:

²²⁵ Տե՛ս Աղասի. *Ջեյթուն և իր շրջակայքները* (Պեյրութ, 1968), 20-25:

²²⁶ Տե՛ս Տեղեկագիր *Այրիխանսալ Յանձնաժողովի*, 29:

²²⁷ Տե՛ս Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman*, 311-312:

²²⁸ Տե՛ս Գալուստեան, *Մարաշ*, 60-83:

կատարված հաշվարկի՝ Անտրոնի գյուղախմբի հայ բնակչության թիվը 2554 էր (կլորացված թիվ՝ 2550):

Կոկիսոնի շրջանակի հայ բնակչության թվաքանակի մեր հաշվարկի համար անփոփոխ վերցրել ենք Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի ցուցակի տվյալները, քանի որ դրանք ընդգրկում են շրջանակի բոլոր բնակավայրերը և առավել մոտ են 1915-ին:

Այսպիսով, համաձայն վերոնշյալ մեթոդաբանությամբ կատարված հաշվարկի՝ Հայոց ցեղասպանության նախօրյակին Կոկիսոնի գավառակի՝ հաշվարկի մեջ ընդգրկված 17 հայաբնակ բնակավայրերում կար 8750 շունչ հայ բնակչություն, որից Կապանի շրջանակի 4 հայաբնակ բնակավայրերում՝ 3300, Անտրոնի գյուղախմբի 6 հայաբնակ բնակավայրերում՝ 2550 և Կոկիսոնի շրջանակի 7 հայաբնակ բնակավայրերում՝ 2900 շունչ հայ:

Աղյուսակ 21. Գյոքսունի (Կոկիսոն) գավառակի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին

	Վարչական միավոր	1890-ական թթ. Աղասի	1911 Սայապալյան	1914 Գալուստյան	1914 Գևորգյան-Փաբուջյան	Մեր հաշվարկը
		Տուն	Տուն	Տուն	Շունչ	Շունչ
	Կապանի շրջանակ					
1	Կապան	250	300	400	3000	2400
2	Դեիրմենքաշ	-	20	-		
3	Չուքուրքոզ	-	35	-		
4	Պունտուզ	200	36	150	245	900

VI. Կիլիկիանի տարածքային զարգացման հարցերի ըստ առանձին վարչատարածքային միավորների
 5. Մարաշի գավառ

	Ընդամենը Կապանի շրջանակի գյուղեր	450	391	550	3245	3300
	Անտրոնի գյուղախումբ					
5	Տրդատլը (Տրդատենք)	80	40	-	280	280
6	Աջենի	-	12	-	84	84
7	Անաջըկ	-	40	-	-	240
8	Անտրուն	70	10	-	70	70
9	Թավուղլու	70	20	-	-	120
10	Շիվիկի	150	200	200	1760	1760
	Ընդամենը Անտրոնի շրջանակ	370	322	200	2194	2554
	Կոկիսոնի շրջանակ					
11	Կոկիսոն	80	75	600	380	2900
12	Ջամուսոյուկ	20	20		120	
13	-Բիրեջ	100	100		650	
14	Գյուլփունար	20	20		150	
15	Դեհրմենդերե	120	60		400	
16	Դաշուլուք	135	120		600	
17	Ագարակներ	-	-		600	

Ընդամենը Կոկիսոնի շրջանակի գյուղեր	475	395	600	2900	2900
Ընդամենը Կոկիսոնի գավառակ	1295	1108	1350	8339	8754

§3. Զեյթունի գավառակ

Զեյթունի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ մեր կողմից առանձնացված սկզբնաղբյուրներից առավել ցածր թիվը հաղորդում է 1914 թ. օսմանյան վիճակագրությունը՝ 10718, առավել բարձր տվյալը պարունակում է Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանին կից ստեղծված Ապահովության հանձնաժողովի 1912 թ. վիճակագրությունը՝ 28000:

Մեծ եղեռնի նախօրյակին Զեյթունի գավառակի սահմանների մեջ ընդգրկված էին Զեյթուն գյուղաքաղաքը և շրջակա գյուղերը, Արեգինը (Ալաբաշ) և Արեգինի շրջանակի գյուղ-ագարակները, Ավագկալը (Մխալ) և Ավագկալի շրջանակի գյուղ-ագարակները, Ֆոնուսը և Ֆոնուսի շրջանակի գյուղ-ագարակները²²⁹:

²²⁹ Գավառակի հայաբնակ բնակավայրերի վարչական պատկանելությունը ճշտել ենք ըստ Հայեպի նահանգի 1908 թ օսմանյան տարեգրքի (սախմամե) տվյալների, որոնց թարգմանության գործում մեզ օգնել է ՀՅԹԻ Հուշագրությունների, փաստաթղթերի և մամուլի ուսումնասիրության բաժնի վարիչ Միհրան Մինասյանը:

Զեյթունի գավառակի սահմանների մասին տե՛ս մասնավորապես Զեյթունցի, *Զեյթունի անցեալէն եւ ներկայէն. Ա. Բ. մաս յիսկատար* (Կ.Պոլիս, տպագրութիւն Վաղինակ Ս. Բիրատ, 1911), Գ-Դ, Մամիկոն Վարժապետեան, *Յուշկը Զեյթունի. պատկերագրող* (Մարզուան, տպագր. Ներսո եւ Սրապեան, 1912), 12-13, Սիսեռեան Միսաք (Մ. Ուլնեցի), *Պատմութիւն Զեյթունի (1409-1921)* (Լիբանան, 1996), 33-34, Լևոն Մկրտչյան, *Զեյթունի ապստամբությունը (1895-1896 թթ.)* (Երևան, 1995), 6):

Ռ. Գևորգյանը և Փ. Փարոջյանը, ըստ երևույթին, հետևելով օսմանյան ծառայության մեջ գտնվող բրիտանացի զինվորական Ռ. Հյուրերի՝ 1899 թ. քարտեզին, Զեյթունի գավառակի կազմում են ընդգրկում Յարփուզ գյուղաքաղաքը (չշփոթել Ջեբել-Բերեբեթ գավառի նույնանուն բնակավայրի հետ) (տե՛ս Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman*, 318, քարտեզը տե՛ս նույն տեղում, 304): Ս. Կարայանը, հիմք ընդունելով Վ. Բինեի «Ասիական Թուրքիա» գրքում գտնված քարտեզը, տեղակայում է բնակավայրը Ալբիստանի գավառակի կազմի մեջ (տե՛ս Karayan,

Ըստ գավառակի հայաբնակ բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի հաշվարկ կատարելու նպատակով համադրել ենք երեք վիճակագրական գյուղացուցակներ՝ 1) Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1878-1880 թթ.²³⁰, 2) Աղասիի (Կարապետ Թուրսարգյանի)՝ 1890-ական թթ.²³¹, 3) Ժ. Սայապալյանի՝ 1911 թ.²³² վիճակագրությունները (տես Աղյուսակ 22):

Վերոնշյալ աղբյուրներից՝ Ջեյթունի գավառակի հայ բնակչության թվաքանակի առավել ցածր տվյալն է պարունակում Ժ. Սայապալյանի վիճակագրությունը՝ 2866 տուն, 22928 շունչ, առավել բարձր տվյալը՝ 1878-80 թթ. Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրությունը՝ 27460 շունչ: Այս թվերն ըստ էության համահունչ են մեր կողմից առանձնացված այն սկզբնաղբյուրների տվյալներին, որոնք հաղորդում են Ջեյթունի գավառակում 22500-28000 շունչ հայ բնակչության առկայության մասին (1895 թ. Կիլիկիո կաթողիկոսարան՝ 26500, 1912 թ. Հայոց պատրիարքարան՝ 28000, 1913 թ. «Մշակ»՝ 22450, 1913 թ. Մ. Ցիցիկյան՝ 25705 (տես Աղյուսակ 19)):

Armenians in Ottoman Turkey, 1914, 135): Գ. Գալուստյանը որևէ տեղեկություն չի հաղորդում Յարփուզի վարչական պատկանելության վերաբերյալ (տես Գալուստեան, *Մարաշ, 67*): Ըստ սալամանների տվյալների՝ Յարփուզը և համանուն գյուղախումբը 1871-1918 թթ. անընդմեջ եղել են Ալբիստանի գավառակի կազմում (տես Sezen, *Osmanli Yer Adlari, 10*):

²³⁰ 1878-1880 թթ. վիճակագրությունը պահպանվել է հայր Ղևոնդ Ալիշանի «Սիսուան» ուսումնասիրությունում (տես Սիսուան: *Համագրությունի հայկական Կիլիկիոյ և Լեւոն Մեծագործ. հաւաքեալ ի Հ. Ղևոնդեայ Վ.Մ. Ալիշան (Վենետիկ, Ս. Ղազար, 1885), 180*): Անվանի հայ ուսումնասիրողն այս վիճակագրությունը ստացել էր Կ.Պոլսի Հայոց պատրիարք Ներսես արք. Վարժապետյանից՝ 1882 թ. (տես Հ. Սահակ Ճեմճեմեան, «Էջմիածնի եպիսկոպոսներու նամակներ առ Հ. Ղևոնդ Ալիշան», *Բազմավէպ, հայագիտական-քանասիրական-գրական հանդէս (Վենետիկ-Ս. Ղազար, 1991), 3-4, 372-373*):

²³¹ Տես Աղասի, *Ջեյթուն և իր շրջակաները, 9-20*: Աղասու տվյալներից օգտվել են Ջեյթունցին (Մասցական Սեներճյան (1840 - 1914), հայ հասարակական-քաղաքական գործիչ, գրող) (տես Ջեյթունցի, *Ջեյթունի անցեպէն և ներկայէն (Վիեննա, Մխիթարեան տպարան, 1900), 7, 156-157*), և (նրա միջոցով) Մամիկոն Վարժապետյանը (տես Վարժապետեան, *Յոշիկը Ջեյթունի, 12-13*), ինչպես նաև Գ. Գալուստյանը (տես Գալուստեան, *Մարաշ, 81-83*) և Միսաք Սիսեոյանը (տես Սիսեոեան, *Պատմութիւն Ջեյթունի, 64-67*):

²³² Տես *Տեղեկագիր Արիսիւսում Յանճնստորովի, 36-37*:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ Հայոց ցեղասպանության նախօրյակին Ջեյթունի գավառակի հայ բնակչության թիվը մոտ 25000 էր, որից մոտ 14000-15000-ը՝ Ջեյթուն գյուղաքաղաքում, 10000-11000-ը՝ գավառակի հայաբնակ գյուղերում և ագարակներում²³³:

Աղյուսակ 22. Ջեյթունի գավառակի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին ըստ տարբեր վիճակագրությունների

	Վարչական միավոր	1878-1880 Հայոց պատրիարքարան	1895 Աղասի		1911 Սայապալյան	
		Շունչ	Տուն	Շունչ ²³⁴	Տուն	Շունչ ²³⁵
1	Ջեյթուն գյուղաքաղաք	17600	2000	16000 ²³⁶	1614	12912
2	Վանքին գյուղ	-	-	-	104	832
3	Նորգյուղ	-	-	-	23	184
4	Ավագենք	160	-	-	28	224
5	Ղալըճենք	320	-	-	56	448

²³³ Ըստ օտարերկրյա միսիոներների տվյալների՝ Ջեյթունի և շրջակա բնակավայրերի հայ բնակչության թիվը ևս մոտ 25,000 է (տես *The treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-16: documents presented to Viscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs, by Viscount Bryce* (London, H.M.S.O., 1916), 484-485):

²³⁴ Աղբյուրը տալիս է միայն տների թիվը. շնչերի թիվը որոշել ենք մեկ տան վրա 8 շունչ հաշվարկով:

²³⁵ Աղբյուրը տալիս է միայն տների թիվը. շնչերի թիվը որոշել ենք մեկ տան վրա 8 շունչ հաշվարկով:

²³⁶ Հեղինակը հաղորդում է գյուղաքաղաքում և շրջակա գյուղերում 15000-18000 հայ բնակչության մասին (տես Աղասի, *Ջեյթուն և իր շրջակաները*, 9):

VI. Կիլիկիահայրության թվաքանակի հաշվարկ ըստ առանձին վարչատարածքային միավորների
 5. Մարաշի գավառ

6	Արեգինի (Ալաբաշ) շրջանակի գյուղեր և ագարակներ (Սազ - Օղլանենք, Չագր-Դերե, Վարդանենք, Իսիփենք, Գարաճինք, Պեհիսնեյենք, Մեթյունենք, Եկանենք, Թոփալենք, Մավենք և այլն ²³⁷)	3200	300	2400	218	1744
7	Ավագկալ (Մխալ) ²³⁸	2800	150	1200	88	704
8	Խարաղաջ	.. ²³⁹	70	560	43	344
9	Սիսնե	.. ²⁴⁰	30	240	25	200
10	Շատալաք (Չաթալ-աղբըր Երկնյուղ աղբյուր)	.. ²⁴¹	35	280	16	128
11	Ալապոզան (Անդրեասանք)	56	30	240	15	120
12	Ղալաճըզ (Ղալաջուլխ)	280	-	-	13	104
13	Հաջիդերե	320	50	400	53	424
14	Ղոզջուղազ	-	-	-	27	216

²³⁷ Արեգինն ուներ 45 ագարակներ (ցուցակը տե՛ս մասնավորապես Զէյթունցի, *Զէյթունի անցեալէն եւ ներկայէն*, 127):

²³⁸ Ներառյալ Ավագկալի (Մխալի) շրջանակի հայաբնակ 14 ագարակները (ցուցակը տե՛ս նույն տեղում):

²³⁹ Ավագկալի (Մխալի) շրջանակի բնակավայր:

²⁴⁰ Ավագկալի (Մխալի) շրջանակի բնակավայր: Այլ տվյալներով՝ վարչականորեն պատկանել է Գոբքսունի գավառակի Անտրունի գյուղախմբին (տե՛ս Աղասի, *Զէյթուն*, 23):

²⁴¹ Ավագկալի (Մխալի) շրջանակի բնակավայր:

VI. Կիլիկիախայրոյան թվարանակի հաշվարկ ըստ առանձին վարչատարածքային միավորների
5. Մարտի գալստ

15	Քյոմեսկյուտ (Քյոմեսյոյոթ)	-	-	-	58	464
16	Խընըխոզ	-	50	400	20	160
17	Յասթը Փունար	-	-	-	27	216
18	Ջերմիեն	-	-	-	73	584
19	Խեսայի (Ֆենկ)	144	25	200	25	200
20	Պեշեն	40	-	-	242	-
21	Սարըգյուզել	60	-	-	213	-
22	Ալիշար	40	-	-	241	-
23	Բեյթենուր	24	-	-	245	-
24	Գարաթոթ	16	-	-	246	-
25	Ֆոնուս (Խժոս) ²⁴⁷	2400	300	2400	220	1760
26	Թելենելիթ		80	640	45	360
27	Բոզողլաս		-	-	75	600
28	Պուղուրենթ		40	320		
29	Մաջարլը		35	280		
	Ընդամենը	27460	3195	25560	2866	22928

²⁴² 20-րդ դարասկզբի աղբյուրներում նշվում է որպես թուրքաբնակ (տե՛ս Զեյթունցի, *Զեյթունի անցեալն ու ներկայն*, 127):

²⁴³ 20-րդ դարասկզբի աղբյուրներում նշվում է որպես այլևս զուտ թուրքաբնակ (սույն տեղում):

²⁴⁴ 20-րդ դարասկզբի աղբյուրներում նշվում է որպես այլևս զուտ թուրքաբնակ (սույն տեղում):

²⁴⁵ 20-րդ դարասկզբի աղբյուրներում նշվում է որպես այլևս զուտ թուրքաբնակ (սույն տեղում):

²⁴⁶ 20-րդ դարասկզբի աղբյուրներում նշվում է որպես այլևս զուտ թուրքաբնակ (սույն տեղում):

²⁴⁷ Ներառյալ 15 ագարակները (ցուցակը տե՛ս սույն տեղում, 128):

§4. Ալբիստանի գավառակ

Մարաշից հյուսիս-արևելք գտնվող Ալբիստանի գավառակում համեմատաբար խոշոր հայ բնակչություն ուներ կենտրոնական Ալբիստան գյուղաքաղաքը: Փոքրաթիվ բնակչություն ունեին գավառակի 135 գյուղերից²⁴⁸ մի քանիսը (դրանցից մեզ հասու աղբյուրները հաղորդում են միայն Գյավուրքյոյի անունը²⁴⁹):

Մեր կողմից առանձնացված սկզբնաղբյուրներից գավառակի հայ բնակչության համար առավել ցածր թիվն է հաղորդում 1914 թ. օսմանյան վիճակագրությունը՝ 2017, առավել բարձրը 1913 թ. «Մշակի» տվյալներն են, որոնք օգտագործել են նաև Ռ. Գևորգյանը և Փ. Փաբուջյանը՝ 5830 (ֆրանսահայ ուսումնասիրողների մոտ՝ 5838):

Մեզ հասու օժանդակ աղբյուրներից Ս. Ծոցիկյանը հաղորդում է 1914 թ. դրությամբ Ալբիստան գյուղաքաղաքում մոտ 3000 հայ բնակչության մասին²⁵⁰:

Ըստ Գ. Գալուստյանի՝ տեղահանությունից առաջ Ալբիստանն իր գյուղերով ուներ 4000 հայ բնակչություն²⁵¹:

Ինչպես արդեն նշել էինք՝ Ալբիստանի գավառակի վարչական սահմանների մեջ էր մտնում նաև Յարփուզ բնակավայրը, որի հա-մար 1895 թ. Կիլիկիո կաթողիկոսարանի վիճակագրությունը հաղորդում է 200 տուն, 1000 շունչ հայ բնակչություն²⁵², իսկ Գ. Գալուստյանը նշում է, որ 1915-ի տեղահանությունից անմիջապես առաջ այնտեղ հայերի թիվը 2000 էր²⁵³:

Այսպիսով, օժանդակ սաղբյուրները վկայում են, որ Հայոց ցեղասպանության նախօրյակին Ալբիստանի գավառակում կար մոտ 5000-6000 հայ բնակչություն, որից 3000-4000-ը Ալբիստանի տարբեր գյուղերում, 2000-ը՝ Յարփուզում: Այս թիվը բավականին մոտ է

²⁴⁸ Տե՛ս «Արիւնաւեր հայկ. քաղաքներ. Գ. Մարաշի գաւառը», *Տողովորդի ձայնը*, 1920, մարտի 3, թիւ 423:

²⁴⁹ Տե՛ս Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman*, 318:

²⁵⁰ Տե՛ս Ծոցիկեան, *Արեւմտահայ աշխարհ*, 401:

²⁵¹ Տե՛ս Գալուստեան, *Մարաշ*, 70:

²⁵² Տե՛ս «Վիճակագրութիւն Կիլիկիոյ Հայոց», 46:

²⁵³ Տե՛ս Գալուստեան, *Մարաշ*, 67:

Ալբիստանի գավառակի հայ բնակչության թվաքանակի համար 1913 թ. «Մշակի» տվյալին՝ 5830 շունչ, ինչը մեզ հիմք է տալիս այն ընդունել որպես իրականությանը մոտ և օգտագործել մեր հաշվարկում:

§5. Բագարջըղի գավառակ

Ըստ 1914 թ. օսմանյան վիճակագրության՝ Բագարջըղի գավառակում կար ընդամենը 37 հայ: «Մշակի» և Մ. Յիցիկյանի՝ 1913 թ. վերաբերող վիճակագրությունները գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ որևէ տվյալ չեն պարունակում՝ ըստ երևույթին ընդգրկելով Բագարջըղի հայությունը Մարաշի գավառակի հայության վիճակագրության մեջ (տե՛ս Աղյուսակ 18):

Օժանդակ աղբյուրներից՝ գավառակի հայ բնակչության թվաքանակի՝ առանձին տվյալ է հաղորդում Գ. Գալուստյանը, ըստ որի այնտեղ կար մոտ 1500 հայ՝ գավառակի գյուղերով ցրված երկրագործ մշակներ²⁵⁴: Թեև հեղինակն իր այս տվյալի համար որևէ աղբյուր չի հաղորդում, այն օգտագործվել է հայկական այլ ուսումնասիրություններում (մասնավորապես, Բագարջըղի գավառակի հայ բնակչության թվաքանակի համար նույն 1500 թիվն են հաղորդում Ռ. Գևորգյանը և Փ. Փարուջյանը, ինչպես նաև Ս. Կարայանը)²⁵⁵:

Գ. Գալուստյանի տեղեկություններից կարելի է ենթադրել, որ Բագարջըղը չի ունեցել կայուն հայ բնակչություն, և նրա կողմից հաղորդվող 1500 թիվն իր մեջ ներառել է Մարաշի գավառակի և հարևան այլ շրջանների տարբեր գյուղերից Բագարջըղի տարածք տեղափոխված և այնտեղ գյուղատնտեսական և արհեստագործական աշխատանքներում ներգրավված մարաբա հայերին:

Վերոնշյալից ելնելով՝ Բագարջըղի գավառակի հայ բնակչության թվաքանակի համար ընդունում ենք օսմանյան վիճակագրության

²⁵⁴ Տե՛ս Գալուստեան, *Մարաշ*, 40:

²⁵⁵ Տե՛ս Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman*, 311, Karayan, *Armenians in Ottoman Turkey, 1914*, 136: Նույն տվյալը տես նաև հայկական տեղեկատու գրականության մեջ՝ Թ.Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ.Խ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղամտմների բառարան*, հատոր 2 (Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1986), 543:

տվյալները՝ 40 շունչ (տվյալը կլորացնում ենք մինչև 50-ի)՝ ենթադրելով, որ Գ. Գալուստյանի կողմից հաղորդվող 1500 հայը հաշվառվել է Մարաշի գյուղերում և Բազարջըղի գավառակի համար այդ թիվն զգտագործելը կհանգեցնի կրկնակի հաշվառման:

Մարաշի գավառի հայ բնակչության թվաքանակի հաշվարկի ամփոփում

Այսպիսով, վիճակագրական սկզբնաղբյուրների տվյալների համադրման և վերլուծության միջոցով կատարված մեր հաշվարկի համաձայն՝ Մեծ եղեռնի նախօրյակին Մարաշի գավառի հայ բնակչության թվաքանակը մոտ 70860 էր, որից Մարաշի գավառակում՝ 31230, Գյոքսունի (Կոկիսուն, Աստրուն) գավառակում՝ 8750, Ջեյթունի գավառակում՝ 25000, Ալբիստանում՝ 5830 և Բազարջըղի գավառակում՝ 50²⁵⁶:

Ըստ օսմանյան վիճակագրության՝ 1914 թ. Մարաշի գավառում կար 152645 շունչ իսլամադավան ազգաբնակչություն²⁵⁷:

ԱՄՆ տեղեկատու փորձագիտական խմբի տվյալներով 1914 թ. Մարաշի գավառակում մուսուլման ազգաբնակչության թիվը 146000 էր, որից թուրքեր՝ 82000, քրդեր՝ 56000, արաբներ՝ 8,000²⁵⁸:

Ըստ վերոնշյալ տվյալների հիման վրա մեր հաշվարկի՝ Մարաշի գավառում հայ ազգաբնակչության հարաբերակցությունը ընդհանուր ազգաբնակչության նկատմամբ շուրջ 32% էր, ընդ որում Ջեյթունի գավառակում հայերը կազմում էին բացարձակ մեծամասնություն՝ ազգաբնակչության 75%-ը, Մարաշի գավառակում՝ 39%-ը, Գյոքսունի գավառակում՝ 29%-ը, Ալբիստանի գավառակում՝ 8%-ը և Բազարջըղի գավառակում՝ 0,4%-ը:

²⁵⁶ Համեմատության համար՝ ըստ Ս. Ծոցիկյանի գավառի հայ բնակչության թիվը շուրջ 68000 էր, որից Մարաշ (Կոկիսունը, Բազարջըղն ու Ալբիստանը ներառյալ)՝ 40000, Ջեյթուն (Ֆրնուզը ներառյալ)՝ 28000 (տես Ծոցիկեան, *Արևմտահայ աշխարհ*, 396, 406):

²⁵⁷ Տես Karpal, *Ottoman population 1830-1914*, 188:

²⁵⁸ Տես Zamir, "Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919", 104:

6. Հայեպի նահանգի Այնթապի գավառ

Հայեպի նահանգի Այնթապի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ մեր կողմից առանձնացված վիճակագրական սկզբնաղբյուրներ տվյալներն են (տե՛ս նաև Աղյուսակ 23).

1. 1895 թ. Կիլիկիո կաթողիկոսարանի վիճակագրություն՝ 3000 տուն, 15000 շունչ, այդ թվում՝ Այնթապ՝ 2500 տուն, 12500 շունչ, Քիլիս՝ 500 տուն, 2500 շունչ²⁵⁹:
2. 1902 թ. Մ. Օրմանյանի վիճակագրություն՝ 35000 շունչ (Այնթապ և Քիլիս գավառակները միասին), այդ թվում առաքելական հայեր՝ 30000, բողոքական հայեր՝ 4000, կաթոլիկ հայեր՝ 1000²⁶⁰:
3. 1910 թ. Հ. Առաքելյանի վիճակագրություն՝ 84900 շունչ (Հայեպի, Անտիոքի, Ջիսր-ի Շուղուրի, Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակների հայ բնակչությունը միասին. ըստ գավառակների հայ բնակչության բաշխումը բացակայում է)²⁶¹:
4. 1912 թ. Հայոց պատրիարքարանի - Ապահովության հանձնաժողովի վիճակագրություն՝ 42000 շունչ, այդ թվում Այնթապ՝ 30000, Քիլիս՝ 12000²⁶²:
5. 1913 թ. «Մշակի» վիճակագրություն՝ 45426 շունչ հայ, այդ թվում Այնթապ՝ 36000, Քիլիս՝ 7966, Հռոմկլա՝ 1460²⁶³:
6. 1913 թ. Մ. Ցիցիկյանի վիճակագրություն՝ 27510 շունչ, այդ թվում Այնթապ՝ 20750, Քիլիս՝ 5300, Հռոմկլա՝ 1460²⁶⁴:
7. 1914 թ. օսմանյան վիճակագրություն՝ 25217 շունչ²⁶⁵, այդ թվում՝ Այնթապ՝ 19494²⁶⁶, Քիլիս՝ 4700²⁶⁷, Հռոմկլա՝ 1023²⁶⁸:

²⁵⁹ Տե՛ս «Վիճակագրութիւն Կիլիկիոյ Հայոց», 46:

²⁶⁰ Տե՛ս Ormanian, *The Church of Armenia*, 241, Օրմանեան, *Հայոց եկեղեցին*, 264:

²⁶¹ Տե՛ս Առաքելեան, «Թիւրքահայ ժողովրդի վիճակագրութիւնը», 73:

²⁶² Տե՛ս Թեղդիկ, *Ամենն տարեցոյցը*, ԺԶ տարի, 1922, 262:

²⁶³ Տե՛ս «Հայերը Կիլիկիայում», 2:

²⁶⁴ Տե՛ս Ցիցիկեան, «Հայերը Կիլիկիայում», 1108:

²⁶⁵ Այդ թվում՝ 5188 բողոքական և 1267 կաթոլիկ հայ:

²⁶⁶ Որից 14466 առաքելական, 4635 բողոքական և 393 կաթոլիկ հայ:

²⁶⁷ Որից 3934 առաքելական, 390 բողոքական և 376 կաթոլիկ հայ:

²⁶⁸ Որից 878 առաքելական, 108 բողոքական և 37 կաթոլիկ հայ (տե՛ս Karpat, *Ottoman*

8. 1914 թ. ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խմբի վիճակագրություն՝ 65000 շունչ (Հալեպի, Անտիոքի, Ջիսր-ի Շուդուրի, Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակների հայ բնակչությունը միասին. ըստ գավառակների հայ բնակչության բաշխումը բացակայում է)²⁶⁹:
9. 1914 թ. Ռ. Գևորգյանի և Փ. Փարոջյանի հաշվարկ՝ 45874 շունչ, այդ թվում Այնթապ՝ 36448, Քիլիս՝ 7966, Հոռմկլա՝ 1460²⁷⁰:

Աղյուսակ 23. Մեծ եղեռնի նախօրյակին Հալեպի նահանգի Այնթապի գավառի հայ բնակչության թվաքանակն ըստ տարբեր վիճակագրական տվյալների

Գավառակներ	1895 Կիլիկիո կաթո- ղիկո- սարան	1902 Օրման- յան	1912 Հայոց պատրիար- քարան	1913 «Մշակ»	1913 Ցիցիկ- յան	1914 օսման- յան	1914 Գևորգ- յան- Փարոջ- յան
Այնթապ	12500	35000	30000	36000	20750	19494	36448
Քիլիս	2500		12000	7966	5300	4700	7966
Հոռմկլա	-	-	-	1460	1460	1023	1460
Ընդա- մենը	15000	35000	42000	45426	27510	25217	45874

Հաշվարկից հանելով 1910 թ. Համբարձում Առաքելյանի և 1914 թ. ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խմբի տվյալները, որոնց մեջ ներառված է նաև Հալեպի, Անտիոքի, Ջիսր-ի Շուդուրի, Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակների հայ բնակչության թիվը՝ կարող ենք տեսնել, որ Այնթապի գավառի հայ բնակչության թվաքանակի

population 1830-1914, 176-177):

²⁶⁹ Տե՛ս Zamir, "Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919", 102:

²⁷⁰ Տե՛ս Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman*, 58, 318-323:

վերաբերյալ առավել ցածր տվյալը հաղորդում է 1914 թ. օսմանյան վիճակագրությունը՝ 25217 շունչ, առավել բարձրը՝ 1913 թ. «Մշակի» վիճակագրությունը՝ 45426 շունչ (վերջին տվյալից ածանցյալ է Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի հաշվարկը՝ 45874 շունչ), այսինքն՝ երկու սկզբնաղբյուրների հաղորդած տվյալների միջև տարբերությունը մոտ 180% է:

§1. Այնթապի գավառակ

Մեր կողմից առանձնացված վիճակագրական աղբյուրներից՝ Այնթապի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ առավել ցածր թիվը հաղորդում է 1914 թ. օսմանյան վիճակագրությունը՝ 19494 շունչ, առավել բարձր տվյալը պարունակում է 1913 թ. «Մշակի» վիճակագրությունը և դրանից ածանցյալ՝ Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի հաշվարկը՝ 36000 շունչ:

Այնթապը Կիլիկիայի և ամբողջ Օսմանյան կայսրության հայաբնակ խոշոր բնակավայրերից մեկն էր, արևմտահայության կարևոր կրթական-մշակութային կենտրոն: Դրանով պայմանավորված՝ քաղաքի և գավառակի Օրուլ և Քեֆեր Բոստան հայաբնակ բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ օժանդակ աղբյուրների տվյալները և տարբեր տվյալների հիման վրա ուսումնասիրողների հաշվարկները բավականին շատ են:

Այսպես, Այնթապի հայ բնակչության թվաքանակի հարցին հանգամանալից անդրադարձել է ծնունդով այնթապցի սփյուռքահայ ուսումնասիրող Գրիգոր Պողարյանը՝ իր «Վիճակագրական նօթեր»²⁷¹, «Անթապցիներու Թիւը»²⁷² և «Այնթապի Հայոց Թիւը Նախ Բան Համաշխ. Ա. պատերազմը»²⁷³ հոդվածներում: Քննե-

²⁷¹ Տե՛ս Գրիգոր Պողարեան, «Վիճակագրական նօթեր», *Պատմութիւն Անթէպի Հայոց*, Աշխատասիրեց ու խմբագրեց Գ. Սարաֆեան, Ա. հատոր (Լոս Անճէլէս, Գալիֆորնիա, 1953), 799-803:

²⁷² Տե՛ս Գ. Պողարեան, «Անթապցիներու Թիւը», *Հայ Անթէպ, պարբերաբերօ ամերիկաբնակ այնթապցիներու միութեան*, Ը. տարի, 1967, թիւ 1 (25), 6-9:

²⁷³ Տե՛ս Գ. Պողարեան, «Այնթապի Հայոց Թիւը Նախ Բան Համաշխ. Ա. պատերազմը», *Հայ Անթէպ, պարբերաբերօ ամերիկաբնակ այնթապցիներու միութեան*, Ժ. տարի, 1969, թիւ 6 (38), 59-61:

լով բազմաթիվ սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող տվյալներ՝ հեղինակը հանգում է այն եզրակացության, որ Հայոց ցեղասպանության նախօրյակին Այնթապ քաղաքի հայ բնակչության թվաքանակը շուրջ 30000 էր, որից առաքելական հայեր՝ 22500 շունչ, բողոքական հայեր՝ 6500 շունչ և կաթոլիկ հայեր՝ 1000 շունչ²⁷⁴։ Կարևոր սկզբնաղբյուրի՝ Այնթապի առաջնորդարանի՝ 1911 թ. հունիսի 25-ով թվագրվող նամակի տվյալների ներգրավմամբ ուսումնասիրողը հաղորդում է, որ Օրոլ գյուղն ուներ 65 տուն, 715 շունչ և Քեֆեր Բոստան գյուղը՝ 11 տուն, 62 շունչ հայ բնակչություն²⁷⁵։

Այնթապի հայ բնակչության թվաքանակի հարցին ընդարձակ անդրադարձ է կատարել ամերիկահայ ուսումնասիրող՝ Սարգիս Կարայանն իր «Հայերը Օսմանյան Թուրքիայում, 1914» աշխատությունում²⁷⁶։ Օգտագործելով Գրիգոր Պողարյանի և բազմաթիվ այլ հեղինակների տվյալները, ինչպես նաև ներգրավվելով նոր՝ այդ թվում թուրքական աղբյուրներից քաղված տեղեկություններ՝ հեղինակը նույնպես հանգում է այն եզրակացության, որ Այնթապ քաղաքի հայ բնակչության թիվը 1914-ին մոտ 30000 էր²⁷⁷։

Այնթապի հայ բնակչության թվաքանակի հարցին է անդրադարձել թուրք պատմաբան, Այնթապի հայերին նվիրված տարբեր ուսումնասիրությունների հեղինակ Ումիթ Քուրտը։ Այսպես, «Այնթապի հայերը։ Օսմանյան նահանգում ցեղասպանության տնտեսագիտությունը» աշխատությունում ուսումնասիրողը հաղորդում է, որ տարբեր հայկական, ֆրանսիական և բրիտանական աղբյուրներ հաշվարկներով Հայոց ցեղասպանության նախօրյակին Այնթապի հայ բնակչության թիվը 32000-37000-ի սահմաններում էր²⁷⁸՝ ի հիմնավորումն իր այս պնդման համապատասխան ընդարձակ ծանոթագրության մեջ ներկայացնելով տարբեր աղբյուրներից

²⁷⁴ Նույն տեղում, 59:

²⁷⁵ Նույն տեղում:

²⁷⁶ Sîu Karayan, *Armenians in Ottoman Turkey, 1914*, 121-129:

²⁷⁷ Նույն տեղում, 123:

²⁷⁸ Sîu Ümit Kurt, *Armenians of Aintab. The Economics of Genocide in an Ottoman Province* (Cambridge, Massachusetts: Harvard University Press, 2021), 83:

քաղված տեղեկությունները²⁷⁹: Մեկ այլ տեղ ուսումնասիրողը 1914-ին Այնթապի գավառում (Քիլիսը ներառյալ) 36000-40000 հայ բնակչություն է հաշվում²⁸⁰:

«Արևմտահայ աշխարհ» ուսումնասիրության հեղինակ Ս. Ծոցիկյանի տվյալներով՝ 1914-ին Այնթապ քաղաքի հայ բնակչության թիվը 30000 էր²⁸¹:

Գերմանական դիվանագիտական աղբյուրները նույնպես հաստատում են, որ Այնթապի հայ բնակչության թվաքանակը 30000 կամ ավել էր: Այսպես, 1910-1918 թթ. Հալեպում Գերմանիայի հյուպատոս Վալտեր Ռյոպերի՝ Կ.Պոլսում գերմանական դեսպանատուն ուղղված 1915 թ. հուլիսի 30-ի հաղորդագրության մեջ նշվում է, որ Այնթապը (ըստ երևույթին, գավառակի հայաբնակ բնակավայրերը ներառյալ) ուներ շուրջ 32000 հայ բնակչություն²⁸²:

Հիմք ընդունելով վերոնշյալ տարբեր աղբյուրների հաղորդած տեղեկությունները և ուսումնասիրողների հաշվարկները՝ գտնում ենք, որ Հայոց ցեղասպանության նախօրյակին Այնթապ քաղաքն ունեցել է մոտ 30000 հայ բնակչություն, իսկ գավառակի Օրոյ և Քեֆեր Բոստան հայաբնակ գյուղերում ապրում էր մոտ 800 հայ: Այսպիսով, համաձայն մեր հաշվարկի, 1914 թ. Այնթապի գավառակի հայ բնակչության թիվը շուրջ 30800 էր:

§2. Քիլիսի գավառակ

Քիլիսի գավառակի հայ բնակչությունը կենտրոնացած էր Քիլիս քաղաքում, որը XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին Այնթապի հետ մեկտեղ Կիլիկիայի առավել աշխույժ զարգացող և արագ աճող հայաշատ կենտրոններից էր: Մեր կողմից առանձնացված՝ 1914-ին մոտ կանգնած վիճակագրական աղբյուրներից Քիլիսի գավառա-

²⁷⁹ Նույն տեղում, 290-291:

²⁸⁰ Տես Kevork Baboian, *The Heroic Battle Of Aintab*, originally edited and prepared for publication by Kevork A. Sarafian, translated with a new introduction and annotations by Ümit Kurt (London, Gomidas Institute, 2017), xvi-xviii:

²⁸¹ Տես Ծոցիկյան, *Արևմտահայ աշխարհ*, 64:

²⁸² Տես *The Armenian Genocide: evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, Edited by Wolfgang Gust (Berghahn books, 2014), 275:

կի հայ բնակչության թվաքանակի համար առավել ցածր թիվը հաղորդում է 1914 թ. օսմանյան վիճակագրությունը՝ 4700 շունչ, առավել բարձր թիվը պարունակում է 1912 թ. Հայոց պատրիարքարանի-Ապահովության հանձնաժողովի վիճակագրությունը՝ 12000 շունչ:

Ըստ 1902 թ. Բերիո (Հալեպ) առաջնորդարանի կողմից պատրաստված տեղեկագրի տվյալների, որոնք քաղվել են օսմանյան կառավարության աղբյուրներից, Քիլիսի առաքելական հայ բնակչության թիվը ցույց է տրվում 600 տուն, 2556 շունչ, բողոքական հայերի թիվը՝ 60 տուն, 334 շունչ և կաթոլիկ հայերի թիվը՝ 70 տուն, 354 շունչ²⁸³:

1909 թ. քաղաքը գերծ էր մնացել կոտորածներից, միայն սպանվել էին այլ վայրերում գտնվող 9 քիլիսցիներ²⁸⁴:

Համաձայն Ժ. Սայապալյանի տեղեկագրի տվյալների՝ 1911 թ. Քիլիսի հայ բնակչությունը կազմում էր 920 տուն, որից 800-ը առաքելական, 60-ը կաթոլիկ և 60-ը բողոքական²⁸⁵:

Այլ աղբյուրներ Քիլիսի հայ բնակչության նախատեղեռնյան թվաքանակը տեղակայում են 6000-8000 շնչի սահմաններում:

Այսպես, ըստ «Յուզամատեան Քիլիսի Հայոց» աշխատության հեղինակներ Համբարձում Պերպերյանի և Խորեն ավագ քահանա Ներսեսյանի՝ Հայոց ցեղասպանության նախօրյակին քաղաքն ուներ 1050 տուն առաքելական, 50-60 տուն բողոքական և 50-60 տուն կաթոլիկ հայ բնակչություն: Հեղինակները որպես մեկ տան անդամների միջին թիվ ընդունում են 5՝ հաշվելով շուրջ 5250 շունչ առաքելական, 250-300 շունչ բողոքական և 250-300 կաթոլիկ հայ բնակչություն²⁸⁶: Ուսումնասիրողները հաջորդիվ

²⁸³ Տես Միհրան Մինասեան, «Պատմական անտիպ տեղեկագիր մը Բերիոյ (Հալեպի) թեմի հայութեան մասին», *Բանբեր Հայաստանի սրբիսմների* (Երևան, 2007), №1-2 (109-110), 22:

²⁸⁴ Տես Միհրան Մինասեան, «Անտիպ փաստաթուղթեր Կիլիկեան կոտորածներու օրերուն Քիլիսի հայութեան իրավիճակին մասին», *Հայկազեան Հայագիտական Հանդէս (Պէյրուք)*, 2017, հատոր 37, 528:

²⁸⁵ Տես *Տեղեկագիր այրիսինսամ Յանձնաժողովի*, 25:

²⁸⁶ Համբարձում Պերպերեան, Խորեն ավագ քահանա Ներսեսեան, *Յուզամատեան Քիլիսի Հայոց* (Պէյրուք, տպ. Սեւան, 1969), 2: Տես նաև նույն տվյալների հիման վրա Ալիշան Ա. Պայրամյանի հաշվարկը (Ալիշան Ա. Պայրամեան, *Կիլիզա. Հայկական*

հաղորդում են, որ տվյալները վերցրել են օսմանյան «տոմարական արձանագրություններից», և հայ կաթոլիկ ու բողոքական բնակչության իրական թիվն ավելի բարձր էր²⁸⁷:

1910-1918 թթ. Հալեպում Գերմանիայի հյուպատոս Վալտեր Ռյոպերը Կ.Պոլսի գերմանական դեսպանատուն հասցեագրված 1915 թ. հուլիսի 30-ի հաղորդագրության մեջ հաղորդում է, որ Քիլիսի հայ բնակչության թիվը շուրջ 6000 է²⁸⁸:

«Արևմտահայ աշխարհ» աշխատության հեղինակ Ս. Ծոցիկյանը, որպես աղբյուր նշելով բնիկ քիլիսցիներից ստացած տվյալները, հաղորդում է նախքան 1915-ի տեղահանությունը քաղաքում շուրջ 8000 հայ բնակչության առկայության մասին²⁸⁹:

Հիմք ընդունելով վերոնշյալ օժանդակ աղբյուրների կողմից հաղորդվող տվյալները՝ գտնում ենք, որ կարելի է որպես արժանահավատ ընդունել և կիլիկիահայրության մեր հաշվարկում օգտագործել 1913 թ. «Մշակի» վիճակագրության տվյալը, համաձայն որի Քիլիսում կար 7966 շունչ հայ բնակչություն (կլորացված թիվ՝ 7970):

Քիլիս: Պատմական ուրուագիծ (Վաղ Միջնադարէն -1922 թ.) (Երևան, Չանգակ-97 հրատ., 2001), 204-205): Համբարձում Պերպերյանի և Խորեն ավագ քահանա Ներսեսյանի տվյալների հիման վրա Ս. Կարայանի հաշվարկով 1914 թ. դրությամբ Քիլիսի հայ բնակչության թիվը 6900 է (տե՛ս Karayan, *Armenians in Ottoman Turkey, 1914*, 129-131):

²⁸⁷ Նույն տեղում, 3: Ինչպես կարելի է տեսնել վերը ներկայացված աղբյուրների հետ մամուլատությամբ՝ 1902-1914 թթ. ընթացքում առաքելական հայ բնակչության տների թիվը 600-ից հասել է շուրջ 1000-ի, մինչդեռ բողոքական և կաթոլիկ հայերի թիվը մնացել է անփոփոխ, ինչը քիչ հավանական է: Կարելի է ենթադրել, որ 12-13 տարիների ընթացքում առաքելական հայերի հետ համաչափ աճ են արձանագրել նաև բողոքական և կաթոլիկ հայերը:

Ըստ 1914 թ. օսմանյան վիճակագրության տվյալների՝ Քիլիսն ուներ 390 բողոքական և 376 կաթոլիկ հայ բնակչություն (տե՛ս Karpat, *Ottoman population 1830-1914*, 176-177):

²⁸⁸ *The Armenian Genocide: evidence from the German Foreign Office Archives*, 275: Նշված սկզբնաղբյուրից քաղված թիվն օգտագործում է նաև Ջոն Կիրակոսյանը (տե՛ս Կիրակոսյան, *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը*, 332-333):

²⁸⁹ Տե՛ս Ծոցիկյան, *Արևմտահայ աշխարհ*, 800:

§3. Հոռմկլայի (Ռումկալե) գավառակ

Հայոց ցեղասպանության նախաշեմին Հոռմկլայի (Ռումկալե) գավառակի տարածքում կար երկու խոշոր հայաբնակ բնակավայր՝ Էհնեշը (զուտ հայաբնակ) և Ջիբինը: Հայ բնակչություն ուներ նաև գավառակի կենտրոն Խելֆեթը (Հոռմկլա):

Ըստ 1898-ին վերաբերող մի վիճակագրության՝ Էհնեշն ուներ 75 տուն, 565 շունչ, Ջիբինը՝ 79 տուն, 630 շունչ հայ բնակչություն, որից 12 տուն, 60 շունչ բողոքական: Բացի դրանից՝ Ջիբինում ապրում էր 12 տուն, 60 շունչ կենկես (իսլամացած հայեր, որոնք շարունակում էին հետևել քրիստոնեության որոշ ծեսերին): Խելֆեթի հայերի թիվը մոտ 15 շունչ էր²⁹⁰:

Հետագա տարիներին և Էհնեշի և Ջիբինի հայ բնակչության թիվն աճել էր: Հայոց ցեղասպանության վերապրած, ծնունդով էհնեշցի Ներսես Մանուկյանի տվյալներով՝ 1915-ին Էհնեշն ուներ մոտ 200 տուն²⁹¹, Ջիբինը՝ մոտ 100 տուն հայ բնակչություն²⁹²:

Գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ 1913-14 թթ. օսմանյան և հայկական սկզբնաղբյուրների կողմից հաղորդվող տվյալները էականորեն չեն տարբերվում (տես Աղյուսակ 23), ուստի նշված վարչական միավորի հայ բնակչության թվաքանակի համար միանգամայն ընդունելի է 1913 թ. «Մշակի» վիճակագրության տվյալը՝ 1450:

Հալեպի նահանգի Այնթապի գավառի հայ բնակչության հաշվարկի ամփոփում

Այսպիսով, համաձայն մեր հաշվարկի՝ Հայոց ցեղասպանության նախօրյակին Այնթապի գավառակում կար 30800 շունչ, Քիլիսի

²⁹⁰ Տես Գ.Կ.Ո., «Հայք եղեպոյ թեմին», *Բիզանդիոն, հայաթերթ ամենօրեայ* (Կ. Պոլիս), 11/23 փետրուար 1898, Բ. Տարի, թիւ 395, 1:

²⁹¹ Տես Ներսես Մանուկեան, Վերադարձ դէպի հայրենի տուն (Պէյրոս, տպ. Տօսիկեան, 1973), 32: Էհնեշի մասին մանրամասն տես նաև Ներսես Մանուկեան, «Էհնեշ եւ շրջակայքը», Պատմութիւն Անթեպի Հայոց, Ա. Հատոր (Լոս Անճէլըս, Գալիֆորնիա, 1953), էջ 602-636:

²⁹² Տես Ներսես Մանուկեան, «Հոռմկլայ պատմութեան մէջ», *Հայ Անթեպ, պարբերաբերթ ամրիկայեանկ այնթապցիներու միութեան*, Թ. տարի, 1968, թիւ 1 (29), 63:

գավառակում՝ 7970 շունչ և Հոռմկլայի գավառակում՝ 1460 շունչ հայ, ընդամենը Այնթապի գավառում՝ 40230 շունչ հայ բնակչություն:

Համաձայն Վ. Քինեի տվյալների՝ 1880-ական թթ. վերջերին Այնթապի գավառակում իսլամադավան ազգաբնակչության թիվը 65085 էր (արաբ, թուրք և քուրդ), Քիլիսի գավառակում՝ 73520 (արաբ, թուրք, քուրդ, չերքեզ) և Հոռմկլայի գավառակում՝ 25677 (թուրք և քուրդ)²⁹³:

Ըստ 1914 թ. օսմանյան վիճակագրության՝ Այնթապի գավառակում կար 89769, Քիլիսի գավառակում՝ 78905 և Հոռմկլայի գավառակում՝ 29269 իսլամադավան ազգաբնակչություն²⁹⁴:

Հաշվի առնելով վերոնշյալ տվյալները, ինչպես նաև այն հանգամանքը, որ իսլամադավաններից և հայերից բացի այլ ազգությունների թիվը (ասորի, հույն, հրեա) նշված շրջաններում մեծ չէր (1-2% սահմաններում)՝ կարելի է եզրահանգել, որ Հայոց ցեղասպանության նախօրյակին ընդհանուր ազգաբնակչության նկատմամբ հայերի հարաբերակցությունը Այնթապի գավառակում մոտ 25%, Քիլիսի գավառակում՝ մոտ 8% և Հոռմկլայի գավառակում՝ մոտ 5% էր: Ընդհանուր Այնթապի գավառում հայերի մասնաբաժինը ընդհանուր ազգաբնակչության մեջ մոտ 17% էր:

²⁹³ Cuinet, *La Turquie d'Asie*, tome 2, 114:

²⁹⁴ Sönü Karpas, *Ottoman population 1830-1914*, 176-177:

7. Հալեայի նահանգի Հալեայի գավառի Անտիոքի, Ջիսը-ի Շուղուրի, Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակներ

Հալեայի նահանգի Հալեայի գավառի Անտիոքի (Անթաքիա), Ջիսը-ի Շուղուրի, Բեյլանի և Ալեքսանդրեթի (Իսկենդերուն) գավառակների հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ մեր կողմից առանձնացված հիմնական վիճակագրական սկզբնաղբյուրների տվյալներն են (տե՛ս նաև Աղյուսակ 24)։

1. 1895 թ. Կիլիկիո կաթողիկոսարանի վիճակագրություն՝ 2680 տուն, 13400 շունչ, այդ թվում Անտիոք իր գյուղերով՝ 2200 տուն, 11000 շունչ, Բեյլան իր գյուղերով՝ 400 տուն, 2000 շունչ և Ալեքսանդրեթ՝ 80 տուն, 400 շունչ²⁹⁵։
2. 1902 թ. Մ. Օրմանյանի վիճակագրություն՝ 37500 շունչ, որից Անտիոքի եպիսկոպոսական վիճակ (Անտիոքի և Ջիսը-ի Շուղուրի գավառակներ)՝ 15500 (այդ թվում բողոքական հայեր՝ 1500, կաթոլիկ հայեր՝ 2000), Բերիայի (Հալեայ) եպիսկոպոսական վիճակ (Հալեայ քաղաք, Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակներ)՝ 22000 (այդ թվում բողոքական հայեր՝ 2000, կաթոլիկ հայեր՝ 5000)²⁹⁶։
3. 1912 թ. Հայոց պատրիարքարան-Ապահովության հանձնաժողովի վիճակագրություն՝ 24000 շունչ, այդ թվում Անտիոքի և Ջիսը-ի Շուղուրի գավառակներ՝ 12000, Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակներ՝ 18000²⁹⁷։
4. 1913 թ. «Մշակի» վիճակագրություն՝ 38240 շունչ, այդ թվում Անտիոքի գավառակ՝ 10420, Ջիսը-ի Շուղուրի գավառակ՝ 13450, Բեյլանի գավառակ՝ 8000, Ալեքսանդրեթի գավառակ՝ 6370²⁹⁸։
5. 1913 թ. Մ. Ցիցիկյանի վիճակագրություն՝ 34624 շունչ, այդ թվում Անտիոքի գավառակ՝ 16089, Ջիսը-ի Շուղուրի գա-

²⁹⁵ Տե՛ս «Վիճակագրութիւն Կիլիկիոյ Հայոց», 46։

²⁹⁶ Տե՛ս Ormanian, *The Church of Armenia*, 241, Օրմանեան, *Հայոց եկեղեցիւն*, 264։

²⁹⁷ Տե՛ս Թեղիկ, *Ամէնուն տարեցոյցը*, ԺԶ տարի, 1922, 262։

²⁹⁸ Տե՛ս «Հայերը Կիլիկիայում», 2։

վառակ՝ 13450, Բեյլանի գավառակ՝ 2620, Ալեքսանդրերի գավառակ՝ 2465²⁹⁹:

6. 1914 թ. օսմանյան վիճակագրություն՝ 16134 շունչ, այդ թվում՝ Աստիոք 5581, Ջիսր-ի Շուդուր՝ 6694, Բեյլան՝ 2242, Ալեքսանդրեր (Իսկենդերուն)՝ 1617 շունչ³⁰⁰,
7. 1914 թ. Ռ. Գևորգյանի և Փ. Փարուջյանի հաշվարկ՝ 31268 շունչ, այդ թվում Աստիոքի գավառակ՝ 8532, Ջիսր-ի Շուդուրի գավառակ՝ 8736, Բեյլանի և Ալեքսանդրերի գավառակներ՝ 14000³⁰¹:

Աղյուսակ 24. Մեծ եղենի նախօրյակին Հալեպի նահանգի Հալեպի գավառի Աստիոքի, Շուդուրի, Բեյլանի և Ալեքսանդրերի (Իսկենդերուն) գավառակների հայ բնակչության թվաքանակն ըստ տարբեր վիճակագրական տվյալների

Գավառակներ	1895 Կիլիկիո կաթողիկոսարան	1902 Օրմանյան	1912 Հայոց պատրիարքարան	1913 «Մշակ»	1913 Ցիցիկյան	1914 օսմանյան	1914 Գևորգյան- Փարուջյան
Աստիոք	11000	15500	12000	10420 ³⁰²	16089 ³⁰³	5581	8532
Ջիսր-ի Շուդուր	-			13450	13450	6694	8736

²⁹⁹ Տես Ցիցիկեան, «Հայերը Կիլիկիայում», 1108:

³⁰⁰ Տես Karpat, *Ottoman population 1830-1914*, 176-177:

³⁰¹ Տես Kevorkian, Paboudjian, *Les Arméniens dans l'Empire ottoman*, 58, 341-351:

³⁰² Այդ թվում Անիտոք՝ 8820, Սվեդիա՝ 1600 շունչ:

³⁰³ Այդ թվում Աստիոք՝ 8820, Սվեդիայի (Մուսա լեռ) հայություն՝ 7269 շունչ:

Բեյլան	2000	22000 ³⁰⁴	18000	8000	2620	2242	14000
Ալեքսանդրիթ	400			6370	2465	1617	
Ընդամենը	13400	37500	30000	38240	34624	16134	31268

Ինչպես կարող ենք տեսնել՝ վերոնշյալ սկզբնաղբյուրներից Հալեպի նահանգի Հալեպի գավառի Անտիոքի, Ջիսր-ի Շուդուրի, Բեյլանի և Ալեքսանդրիթի գավառակների հայ բնակչության թվաքանակի համար առավել ցածր տվյալը հաղորդում է 1914 թ. օսմանյան վիճակագրությունը՝ 16134 շունչ, առավել բարձր թիվը պարունակում է 1913 թ. «Մշակի» վիճակագրությունը՝ 38240 շունչ³⁰⁵, այսինքն օսմանյան և հայկական վիճակագրական տվյալների միջև տարբերությունը 237% է: Բավականին մեծ են (առանձին դեպքերում՝ շուրջ երեք-չորս անգամ) տվյալների միջև տարբերությունները նաև առանձին գավառակների պարագայում:

§1. Անտիոքի գավառակ

Հայոց ցեղասպանության նախօրյակին Անտիոքի գավառակի տարածքում հայաբնակ էին կենտրոնական Անտիոք (Անթակիա) բնակավայրը և Սվեդիայի (Մուսա լեռ) գյուղամասի թվով վեց գյուղերը:

Անտիոքի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ մեր կողմից առանձնացված սկզբնաղբյուրներից առավել ցածր թիվը հաղորդում է 1914 թ. օսմանյան վիճակագրությունը՝ 5581 շունչ, առավել բարձր տվյալն առկա է Մ. Տիցիկյանի 1913 թ. վիճակագրության մեջ՝ 16089 շունչ: Մ. Տիցիկյանի տվյալն, ըստ

³⁰⁴ Ներառյալ Հալեպ քաղաքի հայ բնակչությունը:

³⁰⁵ Հաշվարկում չենք ընդգրկել 1896 թ. Կիլիկիո կաթողիկոսարանի վիճակագրությունը, քանի որ դրանում բացակայում են Քեսաբի հայ բնակչության թվաքանակի մասին տվյալները:

երևույթին, շփոթմունքի արդյունք է. ուսումնասիրողը ներկայացնում է նույն տարածքին վերաբերող երկու վիճակագրական տվյալ («Աստիոքի կազա»՝ 8820 շունչ, «Սվեդայի կազա»՝ 7269 շունչ: Ի դեպ, 1913 թ. «Մշակի» վիճակագրությունում ևս նույն վարչական միավորը ներկայացված է երկու տարբեր անուններով՝ որպես Աստիոքի և Սվեդիայի կազաներ և դրան համապատասխան երկու առանձին տվյալներով՝ Ասիտոք՝ 8820, Սվեդիա՝ 1600 շունչ (տե՛ս Աղյուսակ 24): Եթե կատարենք համապատասխան շտկումներ, ապա ըստ «Մշակի»՝ Աստիոքի գավառակում կար 8820 շունչ, ըստ Մ. Տիցիկյանի՝ 7269 շունչ հայ բնակչություն:

Որոշ աղբյուրներ XX դարի սկզբներին Աստիոք քաղաքում հաշվում են մոտ 5000 հայ բնակչություն³⁰⁶, ինչը չի հաստատվում այլ՝ առավել արժանահավատ սկզբնաղբյուրների տվյալներով: Այսպես, համաձայն Հ. Թերգյանի՝ 1909-ի կոտորածների նախօրյակին քաղաքն ունեցել է 800 հայ բնակիչ³⁰⁷, համաձայն մեկ այլ տվյալի՝ 100 տուն հայ³⁰⁸:

Քաղաքի հայությունը մեծապես տուժել էր 1909 թ. կոտորածի ժամանակ՝ տալով 190 զոհ (ներառյալ կոտորածի օրերին Աստիոքում գտնվող այլ շրջաններից պանդուխտ հայեր³⁰⁹): Ըստ երևույթին, Աստիոքի հայությանը չի հաջողվել լիովին վերականգնվել, և 1914 թ. հայերի թիվը ավելի ցածր էր, քան նախքան 1909 թ.³¹⁰:

Ստորև (Աղյուսակ 25) ներկայացնում ենք ըստ գավառակի հայաբնակ բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի բաշխումը պարունակող երեք վիճակագրություններ, որոնք են՝ Աստիոքի եկեղեցական-թեմական իշխանությունների կողմից 1911 թ.³¹¹ և

³⁰⁶ Տե՛ս Հ. Ս. Էփրիկեան, *Պատկերազարդ Բաշխարհիկ Բառարան*, Ա. հատոր, Բ. տիպ (Վենետիկ, Սբ. Ղազար, 1903), 220, Ծոցիկեան, *Արևմտահայ աշխարհ*, 76:

³⁰⁷ Տե՛ս Թերգյան, *Կիլիկիոյ Աղէտը*, 222:

³⁰⁸ Տե՛ս Ջորա Իսկէստէրեան, *Յուշեր Պատմութեան Համար* (Պէլքոյթ, տպարան Սեան, 1974), 24:

³⁰⁹ Սպանվածների ցուցակը տե՛ս Միհրան Մինասեան, «Աստիոյ փաստաթուղթեր 1909ի Աստիոքի հայոց կոտորածին մասին», *Յեղասպանագիտական հանդես* (Երևան), 2017, 5 (1), 149-162:

³¹⁰ Տե՛ս նույն տեղում, 143:

³¹¹ Տե՛ս *Յուշամատեն Մուսա լերան*, 850 (Վիճակագրությունը պատրաստել է

1913 թ.³¹² իրականացված հայ բնակչության հաշվառման, ինչպես նաև Ժակ Մայապալյանի 1911 թ. տեղեկագրում գետեղված տվյալները³¹³:

Վերոնշյալ երեք սկզբնաղբյուրների գյուղացուցակների տվյալների համադրությունը վկայում է, որ 1913-14 թթ. հայկական եկեղեցական-թեմական տվյալների հիման վրա կազմված վիճակագրությունները, համաձայն որոնց գավառակում կար 7000-9000 հայ բնակչություն, մոտ են իրականությանը: Դրանից ելնելով՝ գտնում ենք, որ Հայոց ցեղասպանության նախօրյակին Անտիոքի գավառակի հայ բնակչության թվաքանակի հաշվարկի համար կարելի է որպես արժանահավատ ընդունել 1913 թ. «Մշակի» վիճակագրության տվյալը՝ 8820 շունչ:

Աղյուսակ 25. Անտիոքի գավառակի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին

	Բնակավայր	1911 Մայապալյան		1911 Ոսկերիցյան		1913-14 Գևորգյան - Փարուջյան
		Տուն	Շունչ ³¹⁴	Տուն	Շունչ	Շունչ
1	Անտիոք	-	-	41	206	214
2	Բիթիաս	140	700	220	1110	980
3	Հաջի Հարիբի	300	1500	293	1366	2100

Անտիոքի թեմի (ընդգրկում էր Անտիոքի, Լաոդիկեայի, Ջիսր-ի Շուղուրի վիճակները) առաջնորդ Մովսես վարդապետ Ոսկերիցյանը, թվագրված է 1911 թ. սեպտեմբերի 30-ով: Ընդարձակ վիճակագրական ցուցակն ընդգրկում է բոլոր բնակավայրերի ընտանիքների անդամների անուններն ու տարիքը, բացառությամբ Յողուն-Օլուր և Բիթիաս բնակավայրերի, որոնց համար տրված է միայն ընտանիքների և շնչերի ընդհանուր թիվը): Տես նաև Գրիգոր Տունկեան, *Նիսիբեր Լաթաբիդի և շրջակայքի հայ ազգաբնակչության պատմություն* (Հալեպ, 1983), 10:

³¹² Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman*, 343-348:

³¹³ Տես *Տեղեկագիր Այրիսիանում Յանձնաժողովի*, 8-9:

³¹⁴ Աղբյուրում տրված է միայն տների թիվը, մեկ տան վրա հաշվել ենք 5 շունչ:

4	Յողուն-Օլուզ	240	1200	297	1241	1680
5	Խղրբեկ	195	975	189	993	1365
6	Վազըֆ	105	525	102	440	735
7	Քեբուսիե	230	1150	237	1133	1610
	Ընդամենը	1210	6050	1379	6489	8684

§2. Ջիսր-ի Շուղուրի գավառակ

Ջիսր-ի Շուղուրի գավառակի հայ բնակչությունը կենտրոնացած էր Քեսաբի հայկական գյուղերում: Այս վարչական միավորի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ մեր կողմից առանձնացված սկզբնաղբյուրներից առավել ցածր թիվը հաղորդում է 1914 թ. օսմանյան վիճակագրությունը՝ 6694, առավել բարձր տվյալը՝ 1913 թ. «Մշակի» վիճակագրությունը՝ 13450:

Մեծ եղեռնի նախօրյակին Ջիսր-ի Շուղուրի գավառակի հայ բնակչության թվաքանակը ճշտելու նպատակով համադրել ենք ըստ հայաբնակ բնակավայրերի տվյալներ պարունակող հինգ վիճակագրական ցուցակների տվյալներ, որոնք են՝ 1909 թ. կոտորածներից հետո տեսչական այցով Քեսապում գտնվող Վահան քահանա Կյուլտալյանի վիճակագրությունը³¹⁵, Աստիոքի թեմի առաջնորդ Մովսես վարդապետ Ոսկերիչյանի 1911 թ. սեպտեմբերի 30-ով թվագրված վիճակագրությունը³¹⁶, ֆրանսահայ ուսումնասիրողներ Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի հաշվարկի հիմքում ընկած վիճակագրությունը (1913 թ.)³¹⁷, Ժակ Սայապալյանի 1911 թ. տեղեկագրում զետեղված տվյալները և «Ալպում Քեսապի եւ

³¹⁵ Վավերագիրը հրատարակվել է Մ. Մինասյանի կողմից (տես Միհրան Մինասեան, «Աստիոք փաստաթուղթեր Քեսապի 1909ի կոտորածին մասին», *Հայկազգան Հայագիտական Հանդէս* (Պեյրոթ), 2018, հատոր 38, 670):

³¹⁶ *Յուշանատենն Մուսս յիբան*, 850: Նույն վիճակագրության հիման վրա Հակոբ Չոլաքյանի հաշվարկը Քեսաբի և գավառակի գյուղերի համար տես Յակոբ Չոլաքեան, *Քեսապ* (Ալքիթիաս, 2015), 129, տես նաև Յակոբ Չոլաքեան, *Քեսապի բարբառը* (Երեւան, ԵՊՀ հրատարակչութիւն, 2009), 7-8:

³¹⁷ Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman*, 348:

շրջակայից» գրքում գետեղված՝ 1914 թ. վերաբերող տվյալները³¹⁸: Նշված տվյալների հիման վրա մեր կողմից կատարվել է գավառակի հայ բնակչության թվաքանակի հաշվարկ՝ հետևյալ մեթոդաբանության կիրառմամբ: Այն դեպքում, երբ բնակավայրի հայ բնակչության թվաքանակի համար տվյալ է պարունակում մեկից ավելի աղբյուր, բնակչության թիվը որոշվել է տվյալներից միջին թիվը հաշվարկելու միջոցով: Այն դեպքում, երբ բնակավայրի հայ բնակչության թիվը պարունակում է միայն մեկ աղբյուր, ապա այդ աղբյուրի տվյալն ընդունվել է առանց փոփոխության: Հաշվարկից դուրս ենք թողել Ջիսր-ի Շուղուրի գավառակի վարչական սահմաններից դուրս գտնվող Լաթաքիա (Լավոդիկե) բնակավայրի և շրջանակի երկու հայաբնակ գյուղերի (Արամո, Ղընեմիե) հայ բնակչությունը (տե՛ս Աղյուսակ 26, բնակավայրեր 18-20), որոնք ըստ Մ. Ոսկերիչյանի 1911 թ. վիճակագրության ունեցել են 164 տուն, 945 շունչ հայ բնակչություն³¹⁹:

Վերոնշյալ մեթոդաբանությամբ կատարված հաշվարկի արդյունքում Մեծ եղեռնի նախօրյակին Ջիսր-ի Շուղուրի գավառակի հայ բնակչության թվաքանակի համար մեր ստացած թիվն է 8659 շունչ (կլորացված թիվ՝ 8660)³²⁰:

³¹⁸ Տե՛ս Դերենիկ Եսյա. Փոլատեան, *Ալպում Քեսասյի եւ Շրջակայից* (Հրատ. Քեսասյի Ուսումնասիրաց Միության Պեյրութի Մասնաճիւղ. Պեյրութ, տպ. Սեւան, 1955):

³¹⁹ Ըստ օսմանյան վարչական բաժանման նշված բնակավայրերը պատկանել են Բեյրութի նահանգի Լազիկե գավառի համանուն գավառակին և 1914 թ. օսմանյան վիճակագրությամբ ունեցել են 481 շունչ հայ բնակչություն (տե՛ս Karpaz, *Ottoman Population*, 176):

³²⁰ Համեմատության համար՝ Ս. Ծոցիկյանն իր «Արևմտահայ աշխարհ» ուսումնասիրությունում հաղորդում է, որ Քեսաք գյուղաքաղաքը և շրջակա 13 հայաբնակ գյուղերը Մեծ եղեռնի նախօրյակին ունեցել են մոտ 9000 հայ բնակչություն (այդ թվից 6000-ը՝ Քեսաք քաղաքում) (տե՛ս Ծոցիկեան, *Արևմտահայ աշխարհ*, 795, 797): Ծնունդով քեսապցի Ալպեր Թեմիրյանն իր «Քեսապ (1909-1946)» աշխատությունում որպես 1914 թ. դրությամբ Քեսաքի և շրջակա հայաբնակ գյուղերի հայ բնակչության թիվ ընդունում է 8000-ը (տե՛ս Ալպեր Ս. Թեմիրեան, *Քեսապ (1909-1946)* (Պեյրութ, 1956, 30)): Ըստ Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանի՝ Քեսաքում Մեծ եղեռնի նախօրյակին կար մոտ 9000 հայ բնակչություն (տե՛ս «Տեղեկություններ Սուրիոյ Հայ գաղթականութեան մասին», *Հայաստանի Կոչնակ* (Նիւ Յորք), 1923, նոյեմբեր 17, №43, 1459):

**Աղյուսակ 26. Ջիսր-ի Շուդուրի գավառակի հայ բնակչության
 թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին**

	Բնակա- վայր	1909 Կյուլտալ- յան ³²¹		1911 Սայապալ- յան ³²²		1911 Ոսկերիչ- յան		1913 Գևորգ- յան - Փա- րուջ- յան	1914 Ալպոմ -Բեսա- պի և շրջա- կայից	Մեր հաշ- վար- կը
		Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Շունչ	Շունչ	Շունչ
1	Բեսաք	800	4000	680	3400	541	2786 ³²³	4760	3170	3623
2	Կարա- դու- րան (Գարա- տու- րան)	212	1060	215	1075	236	1286 ³²⁴	1505	1290	1243
3	Բյորբ- յունե	66	330	75	375	67	342 ³²⁵	525	180	350
4	Չընար- ճրք (Չիևար)	44	220	35	175	37	177 ³²⁶	350	210	226

³²¹ Բնագրում տրված է միայն տների թիվը, շնչերի թիը մեր կողմից՝ մեկ տան վրա 5 շունչ հաշվարկով:

³²² Վիճակագրությունը պարունակում է միայն տների թիվը, մեկ տան վրա հաշվում ենք 5 շունչ:

³²³ Ըստ Հ. Չոլաքյանի՝ 543 տուն, 2797 անձ (մարդահամարի ցանկերը տնն Չոլաքեան, *Քեսասյ*, 570 -598):

³²⁴ Ըստ Հ. Չոլաքյանի՝ 237 տուն, 1290 անձ (մարդահամարի ցանկերը տնն Չոլաքեան, *Քեսասյ*, 599 -612):

³²⁵ Ըստ Հ. Չոլաքյանի՝ 67 տուն, 338 շունչ (մարդահամարի ցանկերը տնն Չոլաքեան, *Քեսասյ*, 613 -616):

³²⁶ Ըստ Հ. Չոլաքյանի՝ 38 տուն, 176 շունչ (մարդահամարի ցանկերը տնն Չոլաքեան, *Քեսասյ*, 616 -618):

VI. Կիլիկիահայության թվաքանակի հաշվարկ ըստ առանձին վարչատարածքային միավորների
 7. Հայկաի նահանգի Հայկաի գավառի Անախոքի, Ջիսր-ի Շուղուրի, Բեյլանի և
 Ալեքսանդրիեի գավառակներ

5	Էսկյուրեն և Խայիթ	45	225	50	250	33	179 ³²⁷	245	95	199
6	Դյուզաղան	24	120	20	100	23	113 ³²⁸	532	40	181
7	Էրիզ-Օլուզ	70	350	80	400	59	312 ³²⁹	560	320	388
8	Կայաջըկ (Սև Աղբյուր)	76	380	76	380	71	435 ³³⁰	119	280	319
9	Չակալջըկ	30	150	17	85	25	143 ³³¹	140	65	117
10	Բաղնաղազ Վարի (Ֆակը Հասան)	40	200	-	-	52	260	-	310	260
11	Բաղնաղազ Վերի	-	-	-	-	22	121 ³³²	-		121
12	Պաշուրտ	-	-	-	-	13	85	-	40	85
13	Յաղուբին	-	-	-	-	152	691	-	-	691

³²⁷ Ըստ Հ. Չոլաքյանի՝ 33 տուն, 178 շունչ (մարդահամարի ցանկերը տե՛ս Չոլաքեան, *Քեսասյ*, 618 -620):

³²⁸ Ըստ Հ. Չոլաքյանի՝ 22 տուն, 113 շունչ (մարդահամարի ցանկերը տե՛ս Չոլաքեան, *Քեսասյ*, 620 -621):

³²⁹ Հ. Չոլաքյանի մոտ նույնը (մարդահամարի ցանկերը տե՛ս Չոլաքեան, *Քեսասյ*, 622 -625):

³³⁰ Հ. Չոլաքյանի մոտ նույնը (մարդահամարի ցանկերը տե՛ս Չոլաքեան, *Քեսասյ*, 625 -630):

³³¹ Ըստ Հ. Չոլաքյանի (տե՛ս Չոլաքեան, *Քեսասյ*, 523, մարդահամարի ցանկը՝ նույն տեղում):

³³² Հ. Չոլաքյանի մոտ նույնը (մարդահամարի ցանկերը տե՛ս Չոլաքեան, *Քեսասյ*, 630 -631):

VI. Կիլիկիա հայտնության թվարանակի հաշվարկ ըստ առանձին վարչատարածքային միավորների
 7. Հայեպի նահանգի Հայեպի գավառի Աստիոքի, Ջիսր-ի Շուդուրի, Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակներ

14	Ղընիե	-	-	-	-	120	610	-	-	610
15	Արֆալը	-	-	-	-	23	118	-	-	118
16	Յամադի	-	-	-	-	5	32	-	-	32
17	Գյոչու	-	-	-	-	14	96	-	-	96
18	Լաթա- քիա (Լավո- դիկե)	-	-	-	-	30	200	-	-	-
19	Արամո	-	-	-	-	62	353	-	-	-
20	Ղընեմիե	-	-	-	-	72	392	-	-	-
	Ընդա- մենը	1407	7035	1248	6240	1657	8731	8736	6000	8659

§3. Բեյլանի գավառակ

Բեյլանի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ մեր կողմից առանձնացված վիճակագրական սկզբնաղբյուրներից առավել ցածր թիվը հաղորդում է 1914 թ. օսմանյան վիճակագրությունը՝ 2242, առավել բարձր տվյալը պարունակում է 1913 թ. «Մշակի» վիճակագրությունը՝ 8000³³³:

Ըստ սփյուռքահայ ուսումնասիրող Հակոբ Չոլաքյանի՝ Հայոց ցեղասպանության նախօրյակին Բեյլանի և հարևան Ալեքսանդրեթի գավառակների տարածքում գոյություն ունեին մոտ երկու տասնյակ մանր հայաբնակ բնակավայրեր, որոնց հայ բնակչությունը հիմնականում կազմված էր Բեյլան գյուղաքաղաքից վերաբնակիչներից³³⁴, սակայն մեզ հասու աղբյուրները պարունակում են Բեյլանի գավառակի հայաբնակ յոթ բնակավայրի (Բեյլան, Կըր-

³³³ Հաշվարկից դուրս ենք հանել 1902-08 թթ. Մ. Օրմանյանի, 1912 թ. Հայոց պատրիարքարան-Ապահովության հանձնաժողովի տվյալները, որոնք չեն պարունակում առանձին Բեյլանի գավառակի վերաբերյալ տվյալներ:

³³⁴ Տե՛ս Չոլաքեան, *Քուսսույ*, 78:

ըկ Խսան, Կանլը Դերե, Աթըզ, Սովուք-Օլուք, Կյուզեյի, Նարկիզլիք) և Ալեքսանդրեթի գավառակի հինգ բնակավայրի (Ալեքսանդրեթ, Աքչայ, Ղըշլա, Գարա Աղաջ և Ֆարթընլը) վիճակագրությունը:

Մեծ եղեռնի նախօրյակին Բեյլանի գավառակի հայ բնակչության թվաքանակի հաշվարկ կատարելու նպատակով մենք համադրել ենք երեք վիճակագրական գյուղացուցակների՝ Հալեպի առաջնորդարանի կողմից 1902 թ. պատրաստված վիճակագրության³³⁵, 1913 թ. վերաբերող վիճակագրության³³⁶, ինչպես նաև սփյուռքահայ ուսումնասիրող Ս. Ծոցիկյանի «Արևմտահայ աշխարհ» ուսումնասիրությունում գետեղված վիճակագրական տվյալները (հեղինակը որպես իր տվյալների աղբյուր նշում է վերապրածներից ստացված տեղեկությունները)³³⁷ Աղյուսակ 27-ում ներկայացված հատկապես 1913-14 թթ. վերաբերող տվյալները վկայում են, որ Հայոց ցեղասպանության նախօրյակին Բեյլանի գավառակն ունեցել է մոտ 2800-3000 շունչ հայ բնակչություն (կլորացված միջին թիվ՝ 2900):

Աղյուսակ 27. Բեյլանի գավառակի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին

	Բնակավայր	1902		1913	1914
		Հալեպի առաջնորդարան		Գևորգյան-Փարոջյան	Ծոցիկյան
		Տուն	Շունչ	Շունչ	Շունչ
1	Բեյլան	200	1000	1791	1500
2	Կըրըկ Խսան	50	300	176	800

³³⁵ 1902 թ. վիճակագրությունը տես Մինասեան, «Պատմական անտիպ տեղեկագիր մը Բերիոյ (Հալեպի) թեմի հայութեան մասին», 23):

³³⁶ Տնւ Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman*, 349-351:

³³⁷ Տնւ Ծոցիկեան, *Արևմուտսայ աշխարհ*, 247:

3	Կանյը Դերե	7	49	127	-
4	Աթըզ	24	168	231	150
5	Սովուր-Օլուր	45	315	174	350
6	Կյուզեյի			121	-
7	Նարկիզլիբ ³³⁸			180	200
	Ընդամենը	326	1832	2800	3000

§4. Ալեքսանդրիայի գավառակ

Մեր կողմից առանձնացված վիճակագրական սկզբնաղբյուրներից Ալեքսանդրիայի (Իսկենդերուն) գավառակի համար առավել ցածր թիվը պարունակում է 1914 թ. օսմանյան վիճակագրությունը՝ 1617, առավել բարձր թիվը՝ 1913 թ. «Մշակի» վիճակագրությունը՝ 6370:

Ալեքսանդրիայի գավառակում բացի կենտրոնական Ալեքսանդրեթ քաղաքից փոքրաթիվ հայ բնակչություն ունեին Արջայ, Ղըշա, Գարա Աղաջ և Ֆարթընլը բնակավայրերը³³⁹:

Ըստ ֆրանսահայ ուսումնասիրողներ Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի կողմից օգտագործված 1913 թ. եկեղեցական-թեմական վիճակագրության՝ Ալեքսանդրիայի հայ բնակչության թիվը 1950 էր, իսկ Ֆարթընլըում և Ղըշայում համապատասխանաբար ապրում էր 200 և 60 հայ³⁴⁰:

Սփյուռքահայ ուսումնասիրող Ս. Կարայանը, որպես աղբյուր վկայակոչելով Ալեքսանդրիայից Բեյրութում ապաստանած վերապ-

³³⁸ Այլ տվյալներով՝ Ալեքսանդրիայի գավառակի կազմում էր:

³³⁹ Ալեքսանդրիայի գավառակի հայաբնակ գյուղերի ցանկը և 1909 թ. ջարդի ընթացքում հայերի կրած մարդկային ու նյութական կորուստները տես Թերզեան, *Կիլիկիոյ աղէտը*, 267: Տես նաև Միհրան Միխասեան, «Անտիպ փաստաթուղթեր 1909ի Կիլիկեան կոտորածներու օրերուն Ալեքսանտրիայի հայութեան վիճակին մասին», Սուրիոյ հայերը: Գիտաժողովի Նիսիթեր (24-27 մայիս 2015), Խմբ. Անդրանիկ Տազուեան (Beirut, Haigazian University Press, 2018), 118:

³⁴⁰ Տես Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman*, 350:

րաժների հարցումները, նույնպես քաղաքի հայ բնակչության թիվը հաշվում է 2000-ի սահմաններում³⁴¹:

Հաշվի առնելով գավառակի այլ հայաբնակ բնակավայրերի հայ բնակչության թիվը՝ գտնում ենք, որ Մեծ եղեռնի նախօրյակին գավառակում բնակվել է շուրջ 2500 հայ: Այս թիվը բավականին մոտ է Մ. Ցիցիկյանի 1913 թ. վիճակագրության տվյալին, որն է՝ 2465 շունչ հայ բնակչություն:

Ալեքսանդրեթը Կիլիկիայի զարգացող և աճող քաղաքներից էր, որտեղ չէր դադարում այլ շրջաններից պանդուխտ հայերի ներհոսքը³⁴², հետևաբար չի կարելի բացառել, որ հայերի թիվն այնտեղ ավել է եղել: Այսպես, ըստ Ս. Ծոցիկյանի՝ 1915 թ. տեղահանությունից առաջ Ալեքսանդրեթում կար 4500 հայ³⁴³:

Հալեպի նահանգի Հալեպի գավառի Անտիոքի, Ջիսր-ի Շուղուրի, Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակների հայ բնակչության թվաքանակի հաշվարկի ամփոփում

Այսպիսով, համաձայն մեր հաշվարկի՝ Հայոց ցեղասպանության նախօրյակին Անտիոքի գավառակն ուներ 8820, Ջիսր-ի Շուղուրի գավառակը՝ 8660, Բեյլանի գավառակը՝ 2900 և Ալեքսանդրեթի գավառակը 2500 շունչ հայ բնակչություն:

Ըստ 1914 թ. օսմանյան վիճակագրության՝ Անտիոքի գավառակի իսլամադավան ազգաբնակչության թիվը 78054 էր, շոշափելի թիվ էր կազմում հույն ազգաբնակչությունը՝ 7531 շունչ: Ջիսր-ի Շուղուրի գավառակում կար 26435 շունչ իսլամադավան, 1489 շունչ հույն ազգաբնակչություն: Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակներում իսլամադավանների թիվը համապատասխանաբար 10506 և 14140 շունչ էր (վերջինում նույնպես շոշափելի ներկայություն ունեին հույները՝ 2586 շունչ)³⁴⁴:

³⁴¹ Տես Karayan. *Armenians in Ottoman Turkey, 1914*, 117:

³⁴² Ալեքսանդրեթի զարգացմանը, մասնավորապես, նպաստել էր Բեռլին-Բաղդադ երկաթգծի հանգույցներից մեկի՝ այնտեղ կառուցումը (տես «Տնտեսական շարժում Առանայի գառառին մէջ. 1910-1911», 2):

³⁴³ Տես Ծոցիկեան, *Արևմտահայ աշխարհ*, 245:

³⁴⁴ Տես Karpap, *Ottoman population 1830-1914*, 176-177:

Ըստ վերոնշյալ տվյալների հիման վրա մեր հաշվարկի՝ հայերը կազմել են Անտիոքի գավառակի ընդհանուր ազգաբնակչության մոտ 9%-ը (հույների հետ միասին՝ մոտ 17%-ը), Ջիսր-ի Շուդուրի գավառակի ընդհանուր ազգաբնակչության մոտ 26%-ը (հույն ազգաբնակչության հետ միասին՝ մոտ 30%-ը), Բեյլանի գավառակի ընդհանուր ազգաբնակչության մոտ 20%-ը և Ալեքսանդրեթի գավառակի ընդհանուր ազգաբնակչության մոտ 13%-ը (հույն ազգաբնակչության հետ միասին՝ մոտ 26%-ը), ընդամենը նշված տարածքներում հայ բնակչության մասնաբաժինն ընդհանուր ազգաբնակչության մեջ մոտ 14% էր:

VII. Կիլիկիահայության թվաքանակի հաշվարկի ամփոփում և եզրակացություններ

Այսպիսով, համաձայն XIX դարի վերջերին - XX դարի սկզբներին վերաբերող հայկական, օսմանյան և արևմտյան մի շարք վիճակագրական սկզբնաղբյուրների, ինչպես նաև բազմաթիվ օժանդակ աղբյուրների տվյալների առանձնացման, համադրման և վերլուծության միջոցով մեր կողմից կատարված հաշվարկի՝ Հայոց ցեղասպանության նախօրյակին Կիլիկիայի Ադանայի նահանգի, Մարաշի գավառի, Հալեպի նահանգի Այնթապի գավառի, Հալեպի գավառի Անտիոքի, Ջիսր-ի Շուղուրի, Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակների տարածքում բնակվում էր շուրջ 232410 հայ, այդ թվում Ադանայի նահանգում՝ 98440, Մարաշի ինքնուրույն գավառում՝ 70860, Հալեպի նահանգի Այնթապի գավառում՝ 40230 և Հալեպի գավառի Անտիոքի, Ջիսր-ի Շուղուրի, Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակներում՝ 22880 հայ: Հաշվարկի մեջ ընդգրկվել է 180 հայաբնակ բնակավայր: Հայերը կազմել են նշված տարածքի ազգաբնակչության մոտ 21%-ը կամ մեկ հինգերորդը:

Ըստ ընդհանուր ազգաբնակչության մեջ հայերի մասնաբաժնի՝ հայերը առավելապես ներկայացված են եղել Ջեյթունի և Հաճընի գավառակներում, որտեղ նրանք բնակչության բացարձակ մեծամասնություն են կազմել (համապատասխանաբար՝ 75% և 63%): Այլ ազգությունների նկատմամբ հայերը համեմատական մեծամասնություն են կազմել Դորթ-Յուլի և Մարաշի գավառակներում, համապատասխանաբար՝ 43% և 39%:

Գավառի (սանջակ) մակարդակով հայերի մասնաբաժինն ընդհանուր ազգաբնակչության մեջ առավելագույնն էր Կոզանի, Մարաշի և Ջեբել-Բերեբեթի գավառներում՝ համապատասխանաբար մոտ 37% (ընդհանուր ազգաբնակչության մոտ երկու հինգերորդը), 32% (ընդհանուր ազգաբնակչության մոտ մեկ երրորդը) և 26%:

Ըստ հաշվարկի մեջ ներառված վարչական միավորների հայաբնակ բնակավայրերի թիվը, հայ բնակչության թվաքանակը և ընդհանուր ազգաբնակչության մեջ հայերի մասնաբաժնի՝ մեր

հաշվարկված տվյալները ներկայացվում են ստորև (տես Աղյուսակ 28):

Աղյուսակ 28. Կիլիկիահայության թվաքանակը և ընդհանուր ազգաբնակչության մեջ հայերի մասնաբաժինը Հայոց ցեղասպանության նախօրյակին (համագումար տվյալներ)

№	Վարչական միավոր	Հայաբնակ բնակավայրեր	Շունչ	Ընդհանուր ազգաբնակչության մեջ հայերի տեսակարար կշիռը
1	Ադանայի նահանգի Ադանայի գավառ			
1.1	Ադանայի գավառակ	5	27850	26%
1.2	Ջեյհանի գավառակ	1	400	7%
1.3	Յումուրթալիկի գավառակ	1	500	7%
	Ընդամենը Ադանայի գավառ	7	28750	20%
2	Ադանայի նահանգի Կոզանի գավառ			
2.1	Կոզանի գավառակ	1	6000	25%
2.2	Հաճընի գավառակ	5	27600	63%
2.3	Ֆերեի գավառակ	11	3510	20%
2.4	Կարս-Բազարի գավառակ	12	3000	14%

VII. Կիլիկյանայության թվաքանակի հաշվարկի ամփոփում և ներակայություններ

	Ընդամենը Կողանի գավառ	29	40110	37%
3	Ջերել-Բերերթի գավառ			
3.1	Ջերել-Բերերթի գավառակ	4	900	6%
3.2	Հասսայի գավառակ	6	1320	13%
3.3	Իպահիեի գավառակ	8	500	4%
3.4	Բախչեի գավառակ	12	8000	35%
3.5	Դորթ-Յոլի գավառակ	4	11860	43%
	Ընդամենը Ջերել-Բերերթի գավառ	34	22580	26%
4	Ադանայի նահանգի Մերսինի գավառ			
4.1	Մերսինի գավառակ	1	2300	7%
4.2	Տարսուսի գավառակ	2	4700	7%
	Ընդամենը Մերսինի գավառ	3	7000	7%
	Ընդամենը Ադանայի նահանգ	73	98440	22%
5	Մարաշի գավառ			
5.1	Մարաշի գավառակ	20	31230	38%
5.2	Բագարջըղի գավառակ	1	50	04%

VII. Կիլիկիախաղաղության թվաքանակի հաշվարկի ամփոփում և եզրակացություններ

5.3	Ալբիստանի գավառակ	3	5830	11%
5.4	Ջեյթունի գավառակ	22	25000	75%
5.5	Գյոյրսունի գավառակ	17	8750	29%
	Ընդամենը Մարաշի գավառ	63	70860	32%
6	Հալեպի նահանգի Այնթապի գավառ			
6.1	Այնթապի գավառակ	3	30800	25%
6.2	Քիլիսի գավառակ	1	7970	8%
6.3	Հոռմկլայի գավառակ	4	1460	5%
	Ընդամենը Հալեպի նահանգի Այնթապի գավառ	8	40230	17%
7	Հալեպի գավառ			
7.1	Աստիֆրի գավառակ	7	8820	9%
7.2	Ջիսր-ի Շուդուրի գավառակ	17	8660	26%
7.3	Բեյլանի գավառակ	7	2900	20%
7.4	Ալեքսանդրեթի գավառակ	5	2500	13%

	<p>Ընդամենը Հալեայի գավառի Աստիոքի, Ջիսր-ի Շուդուրի, Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակներ</p>	<p>36</p>	<p>22880</p>	<p>14%</p>
	<p>Ընդհանուր գումար</p>	<p>180</p>	<p>232410</p>	<p>21%</p>

Ինչպես արդեն նշել էինք՝ ըստ գավառակների և դրանց կազմի մեջ մտնող բնակավայրերի՝ կիլիկիահայության թվաքանակի հաշվարկ են կատարել ֆրանսահայ ուսումնասիրողներ Ռ. Գևորգյանը և Փ. Փաբուջյանը¹, ինչպես նաև ամերիկահայ ուսումնասիրող Ս. Կարայանը²: Համաձայն Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի հաշվարկի՝ մեր կողմից առանձնացված տարածքում Հայոց ցեղասպանության նախօրյակին կար 175 հայաբնակ բնակավայր՝ 269833 հայ բնակչությամբ: Նույն տարածքի համար Ս. Կարայանի տվյալն է՝ 230 հայաբնակ բնակավայր՝ 277656 հայ բնակչությամբ (բաշխումն ըստ վարչական միավորների տես Աղյուսակ 29):

¹ Տես Kevorkian, Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman*, 265-303 (Ադանայի նահանգ), 305-318 (Մարաշի գավառ (այս վարչական միավորն ուսումնասիրողն ընդգրկում է Հալեայի նահանգի կազմում)), 318-351 (Հալեայի նահանգ):

² Տես Karayan, *Armenians in Ottoman Turkey, 1914*, 91-112 (Ադանայի նահանգ), 113-146 (Հալեայի նահանգ, ներառյալ Մարաշի գավառը՝ 131-141):

Աղյուսակ 29. Հայոց ցեղասպանության նախօրյակին կիլիկիահայության թվաքանակն ըստ տարբեր ուսումնասիրողների տվյալների

№	Վարչական միավոր	Գևորգյան-Փարուջյան		Կարայան		Մեր հաշվարկը	
		Հայաբնակ բնակավայրեր	Շունչ	Հայաբնակ բնակավայրեր	Շունչ	Հայաբնակ բնակավայրեր	Շունչ
1	Աղանայի նահանգի Աղանայի գավառ						
1.1	Աղանայի գավառակ	6	26990 ³	25	33881 ⁴	5	27850 ⁵
1.2	Ջեյհանի գավառակ	-	-	1	750	1	400
1.3	Յունուրթալիկի գավառակ	-	-	1	2000	1	500
	Ընդամենը Աղանայի գավառ	6	27990	27	36631	7	28750
2	Աղանայի նահանգի Կոզանի գավառ						
2.1	Կոզանի գավառակ	11	5600	10	12220	1	6000

³ Այդ թվում Աղանա քաղաքի հայ բնակչությունը՝ 26430:

⁴ Այդ թվում Աղանա քաղաքի հայ բնակչությունը՝ 32000:

⁵ Այդ թվում Աղանա քաղաքի հայ բնակչությունը՝ 26500:

VII. Կիլիկիսահայրթյան թվարանակի հաշվարկի ամփոփում և եզրակացություններ

2.2	Հաճրնի գավառակ	5	27850	11	38461	5	27600
2.3	Ֆերեի գավառակ	8	4948	11	3000	11	3510
2.4	Կարս- Քազարի գավառակ	6	5645	1	1800	12	3000
	Ընդամենը Կողանի գավառ	30	44043	33	55481	29	40110
3	Ադանայի Նահանգի Ջերբել- Բերեբերի գավառ						
3.1	Ջերբել- Բերեբեր					4	900
3.2	Հասսա	25	26878	34	11939	6	1320
3.3	Իսլահիե					8	500
3.4	Բախչե					12	8000
3.5	Դորթ-Յոլ					4	11860
	Ընդամենը Ջերբել- Բերեբերի գավառ	29	39928	38	27639	34	22580
4	Ադանայի Նահանգի Մերսինի գավառ						
4.1	Մերսինի գավառակ	1	2297	1	3000	1	2300

VII. Կիլիկիա հայրենի թվաքանակի հաշվարկի ամփոփում և եզրակացություններ

4.2	Տարտոնի գավառակ	2	4690	5	6010	2	4700
	Ընդամենը Մերսինի գավառ	3	6987	6	9010	3	7000
	Ընդամենը Ադանայի նահանգ	68	118948	104	128761	73	98440
5	Մարաշի գավառ						
5.1	Մարաշի գավառակ	23	32844	23	38164	20	31230
5.2	Բազարջըղի գավառակ	1	1500	1	1500	1	50
5.3	Ալբիստանի գավառակ	4	5838	4	6350	3	5830
5.4	Չեյթունի գավառակ	18	22456	38	32300	22	25000
5.5	Գյոքսունի գավառակ	18	9505	16	8435	17	8750
	Ընդամենը Մարաշի գավառ	64	72143	82	86749	63	70860
6	Հալեպի նահանգի Այնթապի գավառ						
6.1	Այնթապի գավառակ	3	36448	4	30825	3	30800
6.2	Քիլիսի գավառակ	1	7966	1	6900	1	7970

VII. Կրիկի հաստատության թվաքանակի հաշվարկի ամփոփում և եզրակացություններ

6.3	Հոռմկայի գավառակ	4	1460	4	2989	4	1460
	Ընդամենը Հալեայի նահանգի Այնթապի գավառ	8	45874	9	40714	8	40230
7	Հալեայի գավառ						
7.1	Աստիոքի գավառակ	8	8532	8	6587	7	8820
7.2	Ջիսր-ի Շուղուրի գավառակ	9	8736	11	6000	17	8660
7.3	Բեյլանի գավառակ					7	2900
7.4	Ալեքսանդրեթի գավառակ	16	14000	14	6295	5	2500
	Ընդամենը Հալեայի գավառի Աստիոքի, Ջիսր-ի Շուղուրի, Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակներ	33	31268	33	18882	36	22880
	Ընդհանուր գումար	173	268233	228	275106	180	232410

Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի և մեր հաշվարկի արդյունքներ

րի համեմատությունը ցույց է տալիս, որ առավել մեծ տարբերությունը (շուրջ երկուսուկես անգամ) առկա է Ջերեյ-Բերեքեթի գավառի Ջերեյ-Բերեքեթի, Հասսայի, Իսլահիեի և Բախչեի գավառակների տվյալների (Գևորգյան-Փաբուջյան՝ 26878, մեր հաշվարկը՝ 10720), ինչպես նաև Հալեպի գավառի Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակների տվյալների (Գևորգյան-Փաբուջյան՝ 14000, մեր հաշվարկը՝ 5400) միջև: Մեր աշխատանքի՝ նշված վարչական միավորներին նվիրված բաժիններում մենք արդեն արձանագրել ենք, որ 1913 թ. «Մշակի» տվյալները, որոնց հիման վրա ֆրանսահայ ուսումնասիրողները կատարել են իրենց հաշվարկը, չեն հաստատվում ըստ հայաբնակ բնակավայրերի տարբեր վիճակագրություններով:

Կիլիկիահայության թվաքանակի՝ Ս. Կարայանի և մեր հաշվարկի արդյունքների միջև տարբերությունն ըստ շրջանների ավելի համաչափ է բաշխված, միայն մեկ դեպքում է (Կոզանի գավառակ) Ս. Կարայանը հաշվարկել մոտ 2 անգամ բարձր թիվ՝ 12000, որից 10000-ը Սիս քաղաքում (մեր հաշվարկը՝ 6000), ինչը նրա կողմից հղվող աղբյուրի տեղեկությունը սխալ հասկանալու արդյունք է⁶: Մեր կարծիքով ուռճացված՝ իրականից բարձր են Հանճնի, Մարաշի և Ջեյթունի գավառակների հայ բնակչության թվաքանակի՝ Ս. Կարայանի հաշվարկները (համապատասխանաբար՝ 38461, 38164 և 32300. մեր հաշվարկը՝ 26600, 31230 և 25000):

Օսմանյան վիճակագրական տվյալների ուղղման սեփական մեթոդաբանության հիման վրա ըստ նահանգների Օսմանյան կայսրության հայ բնակչության հաշվարկ է կատարել ամերիկացի ուսումնասիրող Ջասթին Մըք-Բարթին: Համաձայն ուսումնասիրողի՝ 1914 թ. Ադանայի նահանգում կար 74490, Մարաշի ինքնուրույն գավառում՝ 45051 և Հալեպի նահանգում՝ 58007 հայ, ընդամենը՝ 177548 հայ (համեմատության համար՝ նույն տարածքի համար 1914 թ. օսմանյան վիճակագրության տվյալն է 145605): Հայոց ցեղասպանության իրողությունը ժխտող ուսումնասիրողի այս հաշ-

⁶ Հակոբ Թերզյանը, որին հղում է ուսումնասիրողը, հաղորդում է 10000 թիվը որպես Սիս քաղաքի ընդհանուր բնակչություն, որից երեք չորրորդն էր, ըստ ուսումնասիրողի, հայ (7500):

վարկը, միայն մեկ սկզբնաղբյուրի վրա հիմնված լինելու փաստով արդեն իսկ արատավոր է, սակայն կարևոր է նրա կողմից օսմանյան վիճակագրության՝ հայերի թերհաշվառման փաստն ընդունելը և այդ հիմքով օսմանյան տվյալների համեմատ մոտ 20%-ով կիլիկիահայության թիվն ավելացնելը (թեև, ըստ Մըք-Քարթիի, թերհաշվառվել են ոչ միայն հայերը, այլ նաև մուսուլմանները)⁷:

Ստորև (Աղյուսակ 30) համեմատում ենք կիլիկիահայության թվաքանակի՝ մեր հաշվարկի արդյունքները մեր կողմից առանձնացված ութ վիճակագրական սկզբնաղբյուրների (1895 թ. Կիլիկիո կաթողիկոսարան, 1902 թ. Մ. Օրմանյան, 1910 թ. Հ. Առաքելյան, 1912 թ. Կ.Պոլսի Հայոց պատրիարքարան, 1913 թ. «Մշակ» թերթ, 1913 թ. Մ. Ցիցիկյան, 1914 թ. օսմանյան, 1914 թ. ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խումբ) տվյալների հետ: Ինչպես կարելի է տեսնել՝ նշված տարածքի համար հայ բնակչության թվաքանակի առավել ցածր տվյալը հաղորդում է 1914 թ. օսմանյան վիճակագրությունը՝ 137470, առավել բարձր տվյալը պարունակում է 1910 թ. Հ. Առաքելյանի վիճակագրությունը՝ 296450: Մեր կողմից հաշվարկված թիվն (232410) առավել մոտ է Մ. Ցիցիկյանի հաշվարկը՝ 232204, թեև առանձին վարչական միավորների համար տվյալները էականորեն տարբերվում են (Զենել-Բերեքեթի գավառ՝ Մ. Ցիցիկյան՝ 38442, մեր հաշվարկ՝ 22580, Մարաշի ինքնուրույն գավառ՝ Մ. Ցիցիկյան՝ 50015, մեր հաշվարկ՝ 71720, Հալեպի գավառի Անտիոքի, Ջիսր-ի Շուդուրի, Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակներ. Մ. Ցիցիկյան՝ 34624, մեր հաշվարկ՝ 22880):

Մեր հաշվարկի արդյունքում ստացված տվյալները բավականին մոտ են Հայոց պատրիարքարանի 1912 թ. և 1913 թ. «Մշակի» վիճակագրությունների կողմից Ադանայի նահանգի Կոզանի գավառի, Մերսինի գավառի, Մարաշի ինքնուրույն գավառի, ինչպես նաև Հալեպի նահանգի Այնթապի գավառի համար հաղորդվող տվյալներին, դրա հետ մեկտեղ՝ էականորեն տարբեր են Ադանայի

⁷ Զ. Մըք-Քարթիի՝ կիլիկիահայության հաշվարկը տես McCarthy, *Muslims and Minorities*, 78-79:

Նահանգի Ջերեկ-Բերեքեթի գավառի և Հալեայի նահանգի Հալեայի գավառի Անտիոքի, Ջիսր-ի Շուդուրի, Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակների համար նշված աղբյուրների հաղորդվող տեղեկություններից⁸:

Աղյուսակ 30. Կիլիկիահայության թիվը Հայոց ցեղասպանության նախօրյակին (հանրագումար տվյալներ)

Վարչական միավոր	1895 Կիլիկիո կաթողիկոսարան	1902 Օրմանյան	1910 Առաքելյան	1912 Կ.Պոլսի Հայոց պատրիարքարան	1913 «Մշակ»	1913 Ցիցիկյան	1914 օսմանյան	1914 ԱՄՆ Տեղեկատու փորձագիտական խումբ	Մեր հաշվարկը
Ադանայի գավառ	19000	37900 ⁹	25000	79000 ¹⁰	24121	32450	17738	35000 ¹¹	28750
Մերսինի գավառ	4750		7400		6090	6090	4264		7000
Ջերեկ-Բերեքեթի գավառ	26000		11000		44750	38442	38442		13920

⁸ Ինչպես արդեն նշվել է համապատասխան բաժիններում, 1912-1914 թթ. եկեղեցական-թեմական վիճակագրության ելակետային տվյալներ պարունակող գյուղացուցակները ներկա դրությամբ բացակայում են, իսկ այլ աղբյուրներից քաղված՝ ըստ բնակավայրերի վիճակագրությունները չեն հաստատում նշված վարչական միավորների համար վերոնշյալ սկզբնաղբյուրների տվյալները

⁹ Ներառյալ Ջերեկ-Բերեքեթի գավառի Օսմանիեի, Բալսեի և Իսլահիեի գավառակների հայ բնակչությունը:

¹⁰ Ադանայի նահանգի Մերսինի և Ջերեկ Բերեքեթի նահանգների հայ բնակչությունը ներառյալ (Մերսին, Տարսոն, Դորթ-Յոլ և Օսմանիե):

¹¹ Ներառյալ Մերսինն ու Տարսոնը:

VII. Կիլիկիահայության թվաքանակի հաշվարկի ամփոփում և եզրակացություններ

Կողանի գավառ	30500	30700	47600	39000	42673	43073	21764	30000	40110
Ընդամենը Ադանայի նահանգ	80250	79600	124750	118000	111326	120055	57686	75000	98440
Մարաշի գավառ	54000	65500	86800	69000	70629	50015	38433	55000	70860
Ընդամենը Ադանայի նահանգ և Մարաշի գավառ	134250	145100	211550	187000	181955	170070	96119	130000	169300
Հալեպի նահանգի Այսթապի գավառ	15000	35000		42000	45426	27510	25217		40230
Հալեպի գավառի Անտիոքի, Ջիսր-ի Շուղուրի, Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակներ	13400 ¹³	27500 ¹⁴	84900	30000	38240	34624	16134	55000 ¹²	22880

¹² Սկզբնաղբյուրում տրված է Հալեպի նահանգի ընդհանուր հայ բնակչության թիվը: Չուտ Հալեպի գավառի Անտիոքի, Ջիսր-ի Շուղուրի, Բեյլանի և Ալեքսանդրեթի գավառակների հայերի թիվը ստանալու համար տվյալից հանել ենք 10000՝ ըստ տարբեր աղբյուրների մոտավորապես այդքան էր Հալեպի հայության թվաքանակը:

¹³ Առանց Ջիսր-ի Շուղուրի:

¹⁴ Սկզբնաղբյուրի՝ Բերիայի եպիսկոպոսական վիճակի տվյալում (22000) ներ-

VII. Կիլիկիահայության թվաքանակի հաշվարկի ամփոփում և եզրակացություններ

Ընդ- հանուր գումար	162650	207600	296450	259000	265621	232204	137470	185000	232410
--------------------------	--------	--------	--------	--------	--------	--------	--------	--------	--------

կայացվում է Հալեպի, Ալեքսանդրեթի և Բեյլանի գավառակների ընդհանուր հայ ազգաբնակչության թիվը: Միայն Բեյլանի և Ալեքսանդրեթի հայերի թիվը ստանալու համար տվյալից հանել ենք 10000՝ ըստ տարբեր աղբյուրների մոտավորապես այդքան էր Հալեպի հայության թվաքանակը:

VIII. Ցեղասպանության հետևանքով կիլիկիահայության կրած մարդկային կորուստները, զոհերի և վերապրածների թիվ (վերջաբանի փոխարեն)

Ինչպես և արևմտահայության այլ հատվածները, Կիլիկիայի հայ բնակչությունը ևս 1915 թվականին ենթարկվեց բռնագաղթ: Սակայն, ի համեմատ Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչության, որը գրեթե ամբողջությամբ բնաջնջվեց քաղաքի ճանապարհին կամ Միջագետքի քաղաքակայաններում, կիլիկիահայության կորուստները ավելի փոքրաթիվ էին¹:

Դա պայմանավորված էր Սիրիայի ու Միջագետքի քաղաքակայանների՝ Կիլիկիային համեմատաբար մոտ գտնվելու, Կիլիկիայի և Սիրիայի կլիմայական պայմանների նմանությամբ, տարագրության ճանապարհին չեթեական խմբավորումների գրոհներից, քրդական ու այլ ցեղերի հարձակումներից կիլիկիահայերի քարավանների զերծ մնալու հանգամանքներով²: Ռոշակի դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրության ռազմածովային ուժերի նախարար և համատեղության կարգով՝ Սիրիայի ընդհանուր կառավարիչ Ջեմալ փաշան, որը Ադանայի կուսակալի պաշտոնը վարելու շրջանից (1909-1911 թթ.) կապեր էր պահպանել տեղացի հայ երևելիների հետ, թույլ տվեց քաղաքում կիլիկիահայերից շատերին տեղավորվել Սիրիայի բնակավայրերում (Հալեպ, Դամասկոս, Հարան, Համա, Հոմս և այլն)³:

¹ Տես Եսփունճեան, *Հայ ժողովուրդին սնկախտի տեսան պայքարը Կիլիկիոյ մէջ*, 102:

² Տես Արզուման. «Հայերուն գերակշռութիւնը Կիլիկիոյ մէջ. ինչ կ'ըսեն թիւերը», *Ճակատամարտ. օրաթերթ* (Կ.Պոլիս), 1919, օգոստոսի 16, թիւ 264 (2055):

³ Տես Ջալէն Արքեպս., *Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ և վկայութիւններ* (Գահիրէ, 1947), 279: Դրա հետ մեկտեղ, Ադանայի ազգային միության ատենապետ Կարապետ Աբրահամյանը արձանագրում էր, որ «բնաջնջումէն զերծ մնացած են ստանկապէս բարեկեցիկները, որոնք կրցած են իրենց դրամի ուժովը մնալ Հալեպ կամ Դամասկոսի շրջանը, իսկ աշխատատու դասը քշուելով Տէր-Ջորի կողմերը բնաջնջուած է» (Արզուման, «Հայերուն գերակշռութիւնը Կիլիկիոյ մէջ»):

Ռոշակի հետաքրքրություն է ներկայացնում Հայոց ցեղասպանության տարիներին կիլիկիահայության՝ համեմատաբար քիչ կորուստների հանգամանքը բացատրելու Հայկազուն Արամյանի փորձը, որը բերում ենք ստորև. «Դեռ չենք կրցած հասկնալ

Ըստ դեպքերին ժամանակակից ուսումնասիրողների հաշվարկների՝ ցեղասպանությունը վերապրել էր կիլիկիահայության շուրջ կեսը: Այսպես, Ադանայի ազգային միության ատենապետ Կարապետ Արբահամյանը 1919 թ. օգոստոսի 16-ին Պոլսո «Ճակատամարտ» օրաթերթին տված իր հարցազրույցում արձանագրում էր, որ *«մինչդեռ միս շրջաններուն մեջ հայ սզգաքնակութեան 75 տոհարիորը բնաջնջուած է, Կիլիկիան հազիւ 50 տոհարիորը կորննցուցած է»*⁴:

Ըստ մեկ այլ քաջատեղյակ հեղինակ՝ Հայկազուն Արամյանի⁵ տվյալների՝ եղեռնը վերապրել էր մոտ 90000 կիլիկիահայ (նա Կիլիկիայի տարածքի մեջ ներառում է Ադանայի նահանգը, Մարաշի գավառը և Հալեպի նահանգի Այնթապի գավառը, նախքան տեղահանությունը նշված տարածքներում, ըստ ուսումնասիրողի, կար 230000 հայ բնակչություն)⁶:

Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության կրած պարտությունը և անգլո-ֆրանսիական զորքերի մուտքը Կիլիկիա բարենպաստ պայմաններ ստեղծեցին վերապրած կիլիկիահայության հայրենադարձության համար: Դեպի Կիլիկիա հայերի զանգվածային ներգաղթը շարունակվեց մինչև 1919 թ. վերջերը: Ներգաղթյալները տեղաբաշխվեցին Կիլիկիայի տարբեր, հատկապես առափնյա քաղաքների մեջ. մեծ մասը տեղավորվեց Ադանայում, որտեղ ավելի

այն պատճառները, որով Իթթիհատականները Կիլիկիան և Սուրիան չկրցան կամ չուզեցին ի սպառ փճացնել: Կարծիքներ շատ կան: Ոմանք կ'ըսեն թէ երկաթուղիի երկայնքին գործատր պէտք էր, և թէ օտար աչքեր կային. ուրիշներ... կ'ըսեն թէ այդ կողմերը սապատակող սազակ Քիւրտերու պակասութիւնը պատճառ մը եղաւ, որ շատ ջարդեր տեղի չունեցան: ...Ճամբան ալ կարճ ըլլալով շատ մը ընտանիքներ իսկոյն Սուրիոյ այլ և այլ կեդրոնները հաստատուեցան, և պէտք է խոստովանիլ թէ, Սուրիոյ քաղքենի արաբ բնակչութիւնը, թրիատունայ, թէ իսլամ, մարդասպանութիւն չըրաւ, որոսած ըլլալով որ այն շրջաններուն Արաքները սոսկալի կերպով կ'առեին թուրք բնակչութիւնը» (Արամեան, «Հայ կեանքը Կիլիկիոյ մէջ», 111):

⁴ Արզուման, «Հայերուն գերակշռութիւնը Կիլիկիոյ մէջ»:

⁵ Նա՝ որպես Կիլիկիայի կաթողիկոսարանի նախածեռնությամբ Հայեպոմ 1918 թ. դեկտեմբերին ստեղծված «Ազգային միության» և նրա հովանու ներքո Հալեպում վերապրած հայության բեկորներից կազմված թվով 32 զանազան հայրենակցական միությունները համակարգող կառույցի՝ «Միջգավառային միության» ատենապետ, անմիջականորեն զբաղվել է վերապրած արևմտահայության հաշվառման հարցերով:

⁶ Տես Հայկազուն Արամեան, «Հայ կեանքը Կիլիկիոյ մէջ», *Հայաստան, պաշտօնաթերթ* Հայ Ազգային Ազատական Միութեան (Փարիզ), 1919, նոյնմբերի 15, թիւ 13, 112:

լայն հնարավորություններ կային ապրուստի միջոցներ հայթայթելու համար⁷:

Ադանայի Հայ ազգային միության ատենապետ Կարապետ Աբրահամյանը 1919 թ. օգոստոսի դրությամբ Կիլիկիա վերադարձած հայերի թիվը հաշվում է մոտ 150000-ի սահմաններում, որը բաշխված էր հետևյալ կերպ. Ադանա՝ 35000, Տարսոն՝ 5000, Մերսին՝ 3000, Սիս՝ 4000, Հաճըն՝ 8000, Մարաշ՝ 35000, Այնթապ՝ 20000 և Կիլիկիայի այլ շրջաններ՝ 40000⁸:

Ըստ Հայկազուն Արամյանի տվյալների՝ 1919 թ. նոյեմբերի դրությամբ Կիլիկիայում էր հաստատվել 140000 հայ, որից 90000-ը վերապրած կիլիկիահայերն էին, մնացածը՝ Օսմանյան կայսրության այլ շրջաններից գաղթականներ (այսինքն, Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Կիլիկիայի տարածքում ապաստանած հայերի միայն երկու երրորդն էին բնիկ կիլիկեցիներ)⁹: Կիլիկիա վերադարձած այդ 140000 հայությունը բաշխվում էր հետևյալ կերպ. Ադանա՝ 36000, Մերսին՝ 4000, Տարսոն՝ 6000, Սիս՝ 3000, Մամեստիա (Մսիս)՝ 1000, Չորք-Մարգպան՝ 5000, Հասանբեյլի՝ 3000, Ջերեկ-Բերեքթթթ գավառի այլ մասեր՝ 4000, Հաճըն՝ 8000, Ջեյթուն և իր շրջակայք՝ 5000, Մարաշ՝ 25000, Այնթապ՝ 10000, Բիլիս՝ 3000, Հալեպ սպասող՝ 25000, այլ բնակավայրեր՝ 2000¹⁰ (ըստ շրջանների հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տարբեր հեղինակների կողմից հաղորդվող տվյալների անհամապատասխանությունները հետևանք են ինչպես հաշվառման անկատարության, այնպես էլ հայերի հաճախակի տեղաշարժերով մի շրջանից մյուսը՝ պայմանավորված անվտանգության և այլ նկատառումներով):

Ըստ ժամանակակից տարբեր ուսումնասիրողների հաշվարկների՝ 1920 թ. սկզբների դրությամբ Կիլիկիա հայրենադարձված հայերի թիվը մոտավորապես նույնն էր՝ 120000 (Ավետիս Յափուճյան¹¹)

⁷ Տևն Եափուճեան, *Հայ ժողովուրդին անկախութեան պայքարը Կիլիկիոյ մէջ*, 250:

⁸ Տևն Արզուման, «Հայերուն գերակշռութիւնը Կիլիկիոյ մէջ»:

⁹ Արամեան, «Հայ կեանքը Կիլիկիոյ մէջ», 112:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Եափուճեան, *Հայ ժողովուրդին անկախութեան պայքարը Կիլիկիոյ մէջ*, 250, 252:

- 150000-ի (Ռուբեն Սահակյան¹², Բյուզանդ Եղիայեան¹³) սահմաններում:

Աղյուսակ 31-ում ներկայացնում ենք ըստ շրջանների Կիլիկիայում վերահաստատված հայության Բ. Եղիայանի տվյալները¹⁴ և, համեմատության կարգով, նշված շրջանների նախատեղեռնյան հայ բնակչության թվաքանակի մեր հաշվարկը՝

Աղյուսակ 31. Կիլիկիայի հայ բնակչության թիվը 1914 և 1920 թթ.

Բնակավայր (շրջան) ¹⁵	1914 թ. մեր հաշվարկը (շունչ)	1920 թ. Բ. Եղիայան (շունչ)
Ադանա	26700	40000
Ինջիրլիկ	300	1250
Մսիս և շրջակայքը	1400	1500
Աբդոլլու	350	1500

Նույն թիվը տես նաև Կիլիկիայում ֆրանսիական վարչական վերահսկողության ղեկավար գնդապետ Էդուարդ Բրեմոնի հուշերում (E. Bremond, *La Cilicie en 1919-1920* (Paris, 1921), 11-12, 72):

¹² Սահակյան, *Թուրք-ֆրանսիական հարստությունները և Կիլիկիան*, 120-121:

¹³ Բիզանդ Եղիայեան, *Ճամնասկակից պատմություն Կաթողիկոսության Հայոց Կիլիկիոյ 1914-1972* (Անթիլաս, 1975), 83: Մեկ այլ ուսումնասիրող՝ Շմավոն Թորոսյանը, վկայակոչելով մի քանի հեղինակների տվյալներ, հատկապես՝ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1921 թ. ապրիլի 1-ի տեղեկագիրը (տես «Բաղդատական վիճակագրություն հայ բնակչության Օսմ. Կայսրության մէջ տեղահանութենէ առաջ եւ վերջ», 261-263) առավել հավանական է համարում Կիլիկիա հաստատված հայերի՝ 180-200 հազար թիվը (տես Թորոսյան, *Կիլիկիայի հայերի սազային-սազատագրական շարժումները*, 89):

¹⁴ Այս տվյալները հիմնված են տարբեր հայկական աղբյուրներից քաղված տեղեկությունների վրա: Ինչպես նշում է ինքը՝ հետազոտողը, «*Դժբախտաբար, որևէ չման ու վստահելի ցուցակի մը չհամոզիպեցանք՝ ճշդերու համար 1919-ին Կիլիկիոյ Հայութեան ընդհանուր թիւը, և ուստի կը գոհանանք պատահական ցրուած յիշատակութեանց խիսերը թով-թովի բերելով*» (Եղիայեան, *Ճամնասկակից պատմություն Կաթողիկոսության Հայոց Կիլիկիոյ*, 83):

¹⁵ Բ. Եղիայանը տալիս է միայն բնակավայրերի ցանկը համապատասխան թվերով, բաշխումն ըստ վարչական միավորների՝ մեր կողմից:

VIII. Ցեղասպանության հետևանքով կիլիկիահայության կրած մարդկային կորուստները.
 գոհերի և վերապրածների թիվ (վերջաբանի փոխարեն)

Ընդամենը Ադանայի գավառի տարածք	28750	44250¹⁶
Տարսուն	2300	15000
Մերսին	4700	15000
Ընդամենը Մերսինի գավառի տարածք	7000	30000¹⁷
Հաճըն	27600	8000
Միս (ներառյալ Կոզանի գավառի այլ շրջաններ)	12510	8500
Ընդամենը Կոզանի գավառի տարածք	40110	16500
Հասանբեյլի և շրջակայքը	10720	1500
Օսմանիե, Բախչե և շրջակայքը		1600
Դորթ-Յոլ	11860	12000
Նաճարը		1000
Ընդամենը Ջերեկ-Բերեբերի գավառի տարածք	22580	16100
Մարաշ և Բազարջըղ	31280	25000
Չեյթուն, Անտրուն, Ալքիստան	39580	1800
Ընդամենը Մարաշի գավառ	70860	26800
Այնթապի գավառ (Այնթապ և շրջակայքը)	30800	22000
Ընդհանուր գումար	200100	155650

¹⁶ Մեծամասնությունը՝ Կիլիկիայի այլ շրջաններից, ինչպես նաև Օսմանյան կայսրության այլ տարածքներից գաղթականներ:

¹⁷ Ճշող մեծամասնությունը՝ Կիլիկիայի այլ շրջաններից, ինչպես նաև Օսմանյան կայսրության այլ տարածքներից գաղթականներ:

Սակայն արդեն 1920 թ. սկզբներին կիլիկիահայության տունդարձի գործընթացը գրեթե կանգ առավ. հետզհետե սկսեցին թափ հավաքել հակառակ՝ Կիլիկիայում հաստատված հայերի արտագաղթի միտումները, որոնք պայմանավորված էին քեմալականների ուժգնացող գրոհներով¹⁸:

1920 թ. փետրվարին Մարաշի անկումն ուղեկցվեց այնտեղ վերադարձած հայ բնակչության զանգվածային կոտորածներով: 1920 թ. մարտ-հոկտեմբեր ամիսներին ընթացավ Հաճընի հայ բնակչության դիմադրությունը, որի անհաջողությունը ևս հանգեցրեց հայերի կոտորածի: 1920 թ. հունիսին հայերը ստիպված եղան թողնել Սիսը՝ տեղափոխվելով Դաշտային Կիլիկիայի առափնյա բնակավայրեր: Դրությունը սրվեց նաև Դաշտային Կիլիկիայում՝ երկարատև պաշարման մեջ վերցվեց Այնթապը, 1920 թ. հունիս-հուլիս ամիսներին քեմալական ջոկատներն արդեն սպառնում էին Ադանային՝ կազմակերպելով տեղի մուսուլման բնակչության ընդվզումը¹⁹:

Ի վերջո, Ֆրանսիան, ելնելով իր շահերից, գերադասեց համաձայնության գալ քեմալական աճող ուժի հետ: 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում ստորագրված ֆրանս-թուրքական պայմանագրով Կիլիկիայի տարածքը հանձնվեց քեմալականների լիակատար վերահսկողությանը:

Հայերը և երկրամասի քրիստոնյա այլ տարրերը ստիպված եղան հետնել Կիլիկիայից՝ նահանջող ֆրանսիական բանակին՝ 1921 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում հապճեպորեն հեռանալով հայրենի բնակավայրերից և գաղթելով Սիրիա, Լիբանան, Պաղեստին, Կիպրոս և այլ վայրեր²⁰: Ըստ Հայ

¹⁸ Եղիայեան, *Ժամանակակից պատմություն Կաթողիկոսության Հայոց Կիլիկիոյ*, 83:

¹⁹ Տես *Հայոց պատմություն*, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945), Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010, 224-231:

²⁰ Ինչպես նշում է հայ ուսումնասիրող Ռ. Սահակյանը, Կիլիկիայի և նրա մերձակա շրջանների էվակուացիան ֆրանսիական զինվորական իշխանությունների կողմից լրիվությամբ ավարտվել էր 1922 թ. հունվարի 4-ին (տես Սահակյան, *Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան*, 263):

ազգային պատվիրակության վիճակագրության²¹ նշված ժամանակահատվածում Կիլիկիայի տարածքից տարհանված հայերի թիվը մոտ 70000 էր²²:

1922 թ. նոյեմբերի դրությամբ Կիլիկիայի տարածքում դեռևս մնացել էր մոտ 15000 հայ²³. հետագա տարիներին կիլիկիահայության այդ խլյակները ևս լքեցին քեմալական թուրքական պետության մաս դարձած իրենց հայրենի բնակավայրերը:

Կիլիկիահայության և ամբողջ արևմտահայության հայրենագրկումն ամրագրվեց 1923 թ. հուլիսի 24-ին քեմալական Թուրքիայի և Անտանտի տերությունների միջև կնքված Լոզանի պայմանագրով: Պայմանագրին նախորդող բանակցությունների ընթացքում թուրքական պատվիրակությունը կտրականապես մերժեց արևմտահայերի համար Կիլիկիայի տարածքում «ազգային օջախ» ստեղծելու գաղափարը:

²¹ Պատրաստվել է 1922 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին և պարունակում է Հայոց ցեղասպանությունից վերապրած արևմտահայության թվաքանակի վերաբերյալ տվյալներ: Ըստ երևույթին, նախատեսված էր Լոզանի կոնֆերանսին Անտանտի երկրների պատվիրակների ուշադրությանը ներկայացվելու համար:

